



IOM • OIM

Միգրացիայի միջազգային կազմակերպություն



Եվրոպական միություն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՅԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ



IOM•OIM

Միգրացիայի միջազգային
կազմակերպություն



Եվրոպական միություն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՑԱՐԱՆՈՎ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Երևան

Դեկտեմբեր 2013

Հայաստանի Հանրապետությունում օտար երկրացիների համար կացարանով ապահովման հատուկ Հ 247 կենտրոնների վերաբերյալ կարիքների գնահատում.- Եր.: Տիգրան Մեծ, 2014.- 178 էջ:

Գնահատումը պատրաստվել է Եվրոպական հանձնաժողովի և Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) Զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող՝ ՏԱջակցություն Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում հեղինդունման գործընթացի արդյունավետ կառավարման մեխանիզմների սրբեղծմանը՝ ծրագրի և ՄՄԿ Զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող՝ ՏՀայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում հեղինդունման և վերադարձի գործընթացի արդյունավետ կառավարման կարողությունների զորացում՝ ծրագրի շրջանակներում

Սույն զեկույցում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակներին և, պարտադիր չէ, որ արտացոլեն Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) տեսակետները: Զեկույցում օգտագործվող տեղանունները և նյութերի ներկայացումները չեն ենթադրում ՄՄԿ-ի կողմից որևէ տեսակետի արտահայտում՝ կապված որևէ երկրի, տարածքի, քաղաքի կամ վայրի կամ դրանց իշխանությունների իրավական կարգավիճակի, կամ դրանց սահմանների հետ:

ՄՄԿ-ն հավատարիմ է այն սկզբունքին, որ քաղաքակիրթ ու կանոնակարգված միգրացիան շահավետ է միգրանտների և հասարակության համար: ՄՄԿ-ի՝ որպես միջկառավարական մարմնի փոխգործակցությունը միջազգային հանրության իր գործընկերների հետ ուղղված է միգրացիայի ոլորտում առկա մարտահրավերների լուծմանը, միգրացիայի հետ կապված հարցերի վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացմանը, միգրացիայի միջոցով սոցիալ-տնտեսական զարգացման խթանմանը, ինչպես նաև միգրանտների մարդկային արժանապատվության արժևորմանն ու բարեկեցության ապահովմանը:



Հրատարակիչ՝ Միգրացիայի միջազգային կազմակերպություն. Հայաստանում ՄՄԿ առաքելություն
ՄՄԿ-ի գրասենյակ, Պետրոս Ադամյան փ. 14, 1-ին հարկ,
Երևան 0010, Հայաստան
Հեռախոս՝ (+374 10) 58 56 92
Ֆաքս՝ (+374 10) 54 33 65
<http://www.iom.int>

Զեկույցը պատրաստել են Ադրիան Լոքսթոնը և Կատարինա Լուգինոֆերը

© 2013 ՄԻԳՐԱՑԻԱՑԻ ՄԻԶԱԶԳԱՑԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՄՄԿ), 2014

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Սույն հրատարակման ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահվել տեղեկատվական-որոնողական համակարգում, կամ փոխանցվել որևէ ձևով կամ միջոցով՝ էլեկտրոնային, մեխանիկական, լուսապատճենահանման, գրառման կամ այլ կերպ՝ առանց հրատարակչի նախնական գրավոր համաձայնության:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ


Գնահատման թիմը ցանկանում է երախտիքի խոսք ուղղել այս գնահատման ընթացքում Հայաստանի Հանրապետության Կառավարության և դրա պաշտոնյաների կողմից ցուցաբերված աջակցության և համագործակցության համար: Առանց նրանց համբերատարության և մասնակցություն ունենալու ու աջակցություն ցուցաբերելու հարցում նրանց պատրաստակամության՝ հնարավոր չէր լինի իրականացնել այս զեկույցը: Գնահատման թիմը նաև շնորհակալություն է հայտնում այնպիսի միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին, ինչպիսիք են՝ Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) գրասենյակի, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ), Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագրի (ՄԱԿ ԶԾ) ներկայացուցիչներին և մյուսներին իրենց համագործակցության համար: Եվ վերջապես, փորձագետները խորապես երախտապարտ են ՄՄԿ Հայաստանի առաքելության ՄՄԿ անձնակազմի անդամներին՝ մասնավորապես Քրիստինա Գալստյանին և Իլոնա Տեր-Մինասյանին՝ գնահատման ընթացքում իրենց խորհրդատվության ու աջակցության համար:



Բովանդակություն

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ	7
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	10
1.1 Գնահատման նպատակները	10
1.2 Շրջանակը և մեթոդաբանությունը	10
1.3 Աշխարհագրական, տնտեսական և քաղաքական նկատառումները	13
2. ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ	15
2.1 Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների հիմնական մեխանիզմները	18
3. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ	21
3.1 Քաղաքականության շրջանակը Հայաստանում	21
3.2 Միգրացիայի կառավարման մասով Հայաստանի վարչարարական համակարգը	23
3.3 Օրենսդրական գնահատումը	25
3.4 Ապաստանը	34
3.5 Ձերբակալումը և ձերբակալման այլընտրանքային միջոցները	35
3.6 Արտաքսումը և ելքը	39
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ	41
4.1 Ազատագրված վայրերում պահվող անձինք օտարերկրացիները	41
4.2 Ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահելու գործընթացը	42
4.3 Դատապարտյալների փոխանակումը և հեռացումը	42
4.4 Քրեակատարողական հիմնարկի մոնիթորինգը	43
4.5 Ապաստան հայցողների համար ընդունման հաստատությունները	44
4.6 Ձերբակալման կառավարումը. գնահատումը	45
5. ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄԸ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	47
Սահմանները	47
5.1 Բազրատաշենի սահմանային անցման կետը	47
5.2 «Զվարթնոց» միջազգային օդանավակայան, Երևան	49
5.3 Բազրատաշենի ՍԱԿ-ի վերափոխումը	51
5.4 Ձերբակալման գործընթացը Բազրատաշենում. գնահատում	52
5.5 Բազրատաշենի ՍԱԿ-ում տեղակայված կացարանով ապահովման հատուկ կենտրոնի կառուցվածքը	54
5.6 Կառուցվածքի նկարագրությունը	55
5.7 «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի հատուկ կացարանը	58
5.8 Ձերբակալման գործընթացը «Զվարթնոց» օդանավակայանում. գնահատումը	59
6. ԵՐԿՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄԸ	63
6.1 Իրավակիրառ գործունեությունն ու ձերբակալումը	63
6.2 Իրավակիրառ գործունեությունը. ներկայիս իրավիճակը	65
6.3 Կացարանով ապահովման հիմնական կենտրոնի անհրաժեշտությունը	66
7. ԿԱՑԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ	68
7.1 Նախագծման սկզբունքները	68
7.2 Կացարանով ապահովման հիմնական հատուկ կենտրոնի տեղակայումը եվ դասավորվածությունը	70
7.3 Դասավորվածություն և նախագծման մանրամասները	71
7.4 Վարչական բաժանմունքը և ընդունարանը	71
7.5 Բժշկական կենտրոնը	73
7.6 Տեսակցությունների կենտրոնը	75
7.7 Բնակելի միավորներ տղամարդկանց համար	76
7.8 Բնակելի միավոր կանանց և ընտանիքների համար	80
7.9 Բնակելի միավոր ընդունումը և առանձնացումը	82
7.10 Ընդհանուր օգտագործման հարմարությունները	83
7.11 Տեխնիկական շինությունը	84
7.12 Սարքավորումների խիստ ռեժիմով հսկվող պահեստը	85
7.13 Ընդհանուր օգտագործման բացօթյա տարածքը	85
7.14 Դեկավարումը և անձնակազմի կառուցվածքը	86
8. ԿԱՑԱՐԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՆԱՄՔԸ	88
8.1 Անձնակազմի վերապատրաստումը	88
8.2 Անձնակազմի և կացարանում բնակվող անձանց միջև հարաբերությունները	89
8.3 Ներգաղթին հասցեավորված օգնությունը	89
8.4 Ահաբեկումը	90
8.5 Ինքնասպանությունը և ինքնավնասումը	91
8.6 Երեխայի խնամքը և երեխայի պաշտպանությունը	91
8.7 Դավանանքը և բազմազանությունը	92
8.8 Անձնական գույքը	92
8.9 Հազուստի, անկողնային և հիգիենայի պարագաները	93
8.10 Գործունեությունը	94
8.11 Ուժի կիրառումը և առանձնացումը	95
8.12 Հանրային սնունդը	96

8.13 Սոցիալական ապահովությունը	97
8.14 Դիտանցումը.....	97
9. ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	98
ՀԱՎԵԼՎԱԾ Ա.....	100
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ.....	100
ՀԱՎԵԼՎԱԾ Բ.....	102
ՀԱՏՈՒԿ ԿԱՑԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԻՄԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՈԼՈՐՏԱՑԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ.....	102
ՀԱՎԵԼՎԱԾ Գ.....	111
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԻ ՎԻՋԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ	111
ՀԱՎԵԼՎԱԾ Դ.....	112
ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՑԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՆԴԱՐՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ	112
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	113
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	114
1. ԿԱՑԱՐԱՆԸ	116
2. ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ԱՐՁԱԿՈՒՄԸ	119
3. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ.....	124
4. ԳՈՐԾԵՐԻ ԴԻՏԱՆՑՈՒՄՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՄԱՍՈՎ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ	126
5. ՄՆԵՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.....	128
6. ՀԱԳՈՒՍԸ.....	131
7. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ.....	132
Նամակագրությունը	132
Հեռախոսային զանգերը.....	133
Էլեկտրոնային փոստն ու ինտերնետը	135
Այցելությունները (սոցիալական, իրավական և պաշտոնական)	136
8. ԲՈՂՈՔՆԵՐԸ	138
9. ՀԱՇՄԱՆ ԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ՝ ԿԱՑԱՐԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂՆԵՐԸ	140
10. ԵՐԵԽԱՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ.....	142
11. ԿԱՑԱՐԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ՝ ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ.....	144
12. ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐԸ ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ	145
13. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ.....	147
Կացարանում բնակվողների հետ հաղորդակցումը.....	147
Բժշկական անձնակազմը՝ որակավորումներն ու վերապատրաստումը	147
Կենտրոնի տարածքում առողջապահական ծառայություններից օգտվելը	148
Առողջապահությունը	149
Մասնագիտացված առողջապահական ծառայություններից ու երկրորդային խնամքի ծառայություններից օգտվելը	150
Ինքնասպանությունը, ինքնավնասումը և խոչտանգումը	151
Հիվանդության պատմությունը	151
Դեղատնային ծառայությունը.....	152
14. ՀԻԳԻԵՆԱՆ	153
15. ԲԱՆԱԿՈՐ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	154
16. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ.....	155
17. ՈՒՍԱՅԱԿԱՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԻԱՐԳԵԼՈՒՄԸ.....	157
18. ԺԱՄԱՆՑԱՑԻՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.....	158
Կրթությունը՝ մեծահասակները.....	158
Գրադարանը՝ մեծահասակները.....	158
Ֆիզիկական կրթությունը՝ մեծահասակները	159
Ժամանցը՝ մեծահասակները	160
Կրթության, ֆիզիկական կրթության և խաղերի համար հնարավորությունը՝ ընտանիքները և երեխաները	161
19. ԿՐՈՆԸ	162
20. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ	163
Ահաբեկումը.....	163
Ինքնասպանությունը և ինքնավնասումը	164
21. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ.....	166
Կառավարումը, հետախուզական տեղեկությունների հավաքումը և ընթացակարգերը	166
Հաշվետվությունը և հսկողությունը.....	168
Ուղեկցումը.....	170
Բանալիները և կողպեքները	172
Տեխնիկական սպասարկման գործիքներն ու սարքավորումները	173
Խուզարկությունը.....	174
22. ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄԸ.....	176
23. ՈՒԺԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ.....	177



ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ԱԼԳ	Արևելյան գործընկերության նախաձեռնություն
ԱՄՊՄՀՎ	Անօրինական միգրացիայի դեմ պայքարի և միջազգային համագործակցության վարչություն
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԱՎՎ	(Ոստիկանության) Անձնագրային և վիզաների վարչություն
ԳՏՀ	Գաղտնի տեսահսկողության համակարգ
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵՀՔ	Եվրոպական հարևանության քաղաքականություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԿԱՀԿ	Կացարանով ապահովման հատուկ կենտրոն
ԿՏՀ	Կառավարման տեղեկատվական համակարգեր
ՀԱՊ	Համայնքի անվտանգության հարցերով պաշտոնյա
ՀԱՊԿ	Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀԿԱՀԿ	Հարավային Կովկասում սահմանների համալիր կառավարում (Ծրագիր)
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՐ	Հրամանատար
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագիր
ՄԱԿ ՓԳՀ	Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար
ՄՄԿ	Միգրացիայի միջազգային կազմակերպություն
ՄՊԾ	Միգրացիոն պետական ծառայություն
ՍԱԸ	Ստանդարտ աշխատանքային ընթացակարգեր
ՍԱԿ	Սահմանի անցման կետ
ՍԿՏՀ	Սահմանային կառավարման տեղեկատվական համակարգ
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիա
NBIBM	Հայաստանի և Վրաստանի միջև Նինոծմինդա-Բավրա սահմանի անցման կետում սահմանի կառավարման կարողությունների մակարդակի բարձրացում (Ծրագիր)

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Գնահատման ընդհանուր նկարագրություն

Գնահատումը ՄՄԿ-ի կողմից ղեկավարվող և ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում իրականացված աշխատանքների վերջին տարրն է, որի նպատակը Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում հետընդունման արդյունավետ կառավարմանն աջակցելն է: Գնահատման միջոցով ուսումնասիրվում է Հայաստանում կացարանով ապահովման հատուկ կենտրոնների անհրաժեշտությունը¹ որպես սահմանների համալիր կառավարումը զարգացնելու տարր: Ներկայումս Հայաստանում գործում է կացարանով ապահովման երկու կենտրոն՝ Բագրատաշենի սահմանային անցման կետում և «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում: Միգրանտների նկատմամբ վարչական ձերբակալումը ներկայումս հազվադեպ է կիրառվում, ինչը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, որ այն անձինք, որոնց մուտքը մերժվում է սահմանին, միանգամից հեռացվում են Հայաստանի տարածքից, որը զուգակցվում է ներպետական մակարդակում իրավակիրառ գործունեության բացակայությամբ: Այդ գործընթացը բարդանում է միգրանտներին հետևելու և կառավարման տեղեկատվական համակարգերի բացակայությամբ, ինչը խոչընդոտում է անօրինական մուտքի ծավալների, առանց թույլտվության աշխատանքի և թույլատրված ժամկետից ավելի երկար գտնվելու պատշաճ գնահատումը: Այն ընկալումը, որը միգրացիոն համակարգում Հայաստանը միգրանտների համար ծագման երկիր է, այլ ոչ թե նպատակակետ, հանգեցրել է որոշ չափի ինքնաբավարարության, որը որոշ առումով դանդաղեցրել է միջազգային չափանիշներին համապատասխան ներգաղթի հսկողության մեխանիզմների ներմուծումը:



1 Հատուկ կացարանները արգելանքի տակ վերցված միգրանտների ընդունման կառույցներ են:



Քաղաքականությունը և օրենսդրությունը

Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) և Արևելյան գործընկերության (ԱԷԳ) նախաձեռնության շրջանակներում Եվրոպական ինտեգրման հետ մեկտեղ՝ նախանշվել են միգրացիայի ոլորտի նոր առաջնահերթություններ, որոնք հիմնված են անկանոն միգրացիայի ձևերում փոփոխությունների վրա: Կառավարության կողմից 2010 թվականի դեկտեմբերին հաստատված՝ Հայաստանում միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգով (այսուհետ՝ Հայեցակարգ) նախանշվում են միգրացիայի կառավարման հարցերում առաջընթացարժանագրելու համար անհրաժեշտ առաջնահերթ հարցերն ու մեխանիզմները: Հայեցակարգը լրացվել է Գործողությունների ծրագրով, որի համաձայն անկանոն միգրացիայի կարգավորումը գերակա հարցերից մեկն է, այդ թվում՝ օտարերկրացիներին կալանքի տակ պահելու վերաբերյալ դրույթները:

Հայաստանի Հանրապետության տարածքում հատուկ կացարանի գործունեության և ձերբակալված օտարերկրացիներին այնտեղ պահելու կարգը, «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում արտաքսման նպատակով ձերբակալված օտարերկրացիներին հատուկ կացարան ընդունելու և կացարանում պահելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են 10 հուլիսի 2008 թ. ՀՀ կառավարության թիվ 872-Ն որոշմամբ, համաձայն որի վերոնշյալ կացարանը կազմավորվում և գործում է ՀՀ կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում: Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում ու տարանցիկ գոտիներում հատուկ կացարանների գործունեության և օտարերկրացիներին այնտեղ պահելու կարգը, կանոնները և հատուկ կացարաններից օտարերկրացիների ազատման հետ կապված հարաբերությունները արդեն իսկ կարգավորվել են ՀՀ կառավարության 18 հուլիսի 2013 թվականի թիվ 783-Ն որոշմամբ: Նշված կացարանները գործում են ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության համակարգում:

Ձերբակալման կառավարումը

Անկանոն կարգավիճակով միգրանտներին ձերբակալման հետևանքով մինչև 72 ժամ անազատության մեջ պահելու պարտականությունը դրված է Ազգային անվտանգության ծառայության վրա՝ սահմաններին, և Ոստիկանության վրա՝ երկրի ներսում: 72 ժամից հետո հանցագործությունների համար կալանավորված օտարերկրացիներին, դատարանների որոշմամբ, սովորաբար տեղափոխում են Արդարադատության նախարարության կողմից ղեկավարվող՝ քրեակատարողական համակարգում գործող կալանավորվածներին պահելու վայրեր: Այնուամենայնիվ, միգրանտների վարչական ձերբակալումը քրեակատարողական հիմնարկներում շատ հազվադեպ է տեղի ունենում, եթե չասենք, որ ընդհանրապես գոյություն չունի: Կառավարությունը, իր որոշումներով, ընդունել է օտարերկրացիների համար կացարանով ապահովման հատուկ հիմնական կենտրոնի և ՍԱԿ-ներում առանձին կացարանների անհրաժեշտությունը: Նախատեսվում է, որ սահմաններին ձերբակալված անկանոն կարգավիճակով միգրանտները սահմանի անցման կետերի կացարանով ապահովման հատուկ կենտրոնում կտեղավորվեն ոչ ավելի, քան 72 ժամով: Սահմանին տեղակայված հա կացարանով ապահովման հատուկ կենտրոնների կառավարման օրինական պարտականությունը վերապահվել է ԱԱԾ-ին, իսկ առաջարկվող կենտրոնական կացարանի կառավարումը՝ Ոստիկանությանը:



Ձերբակալումը գործառնական համատեքստում

«Բագրատաշեն» անցման կետում ժամանակավոր պահման կացարան չկա: անցման կետի շենքի առաջին հարկում տեղակայված խոհանոցն ու հանգստի սենյակը նախատեսված են միայն անձնակազմի սննդի և հանգստի համար: Միգրանտներին 24 ժամից ավելի կացարանում պահելու դեպքեր չեն հաղորդվել, և նրանք սովորաբար կան վերադարձվել են սահմանով, տեղափոխվել ԱԱԾ-ի Երևանի կենտրոնակայան, կամ ազատ են արձակվել՝ ավելի ուշ ԱԱԾ-ի ներկայանալու նպատակով: Այնուամենայնիվ, պլաններ են մշակվել՝ Վրաստանի հետ երեք ՍԱԿ-ներում² կացարանով ապահովման հատուկ կենտրոններ կառուցելու նպատակով, որոնք կկրկնեն գործող կացարանը «Զվարթնոցի» օդանավակայանում, որը համապատասխանում է միջազգային չափանիշներին: Որպես սահմանների համալիր կառավարումը զարգացնելու մաս՝ միգրանտներին կացարանով ապահովման ավելի լավ հաստատությունները հնարավորություն կտան հետաքննել ներգաղթի մասով արձանագրված չարաշահումները առավել մանրակրկիտ, մասնավորապես, քանի որ մուտքի հսկողության մասով հիմնական սպառնալիքը կեղծ կամ կեղծված փաստաթղթերով ճամփորդողներն են: Չնայած որ երկրի ներսում իրավակիրառ գործունեությունը փաստացի այս պահին առկա չէ, կացարանով ապահովման նոր հատուկ հիմնական կենտրոնը կարող էր հնարավորություններ ընձեռել ներգաղթային իրավախախտներին հետևելու և արգելանքի տակ վերցնելու հարցում՝ առավել նախաձեռնողական քաղաքականության ի հայտ գալու հետ մեկտեղ:

Միգրանտների կացարանով ապահովման հիմնական կենտրոնի ստեղծումը

Միգրանտների համար կենտրոնական կացարանի բացակայությունը հնարավորություն է տալիս նախագծելու անկանոն կարգավիճակով միգրանտների համար նախատեսված նպատակային փակ կենտրոն, որն ամբողջությամբ կհամապատասխանի միջազգային չափանիշներին՝ տարածքի, ծառայությունների և հարմարությունների տեսանկյունից՝ համակցված խնամքի ռեժիմով, որով պաշտպանվում են միգրանտների իրավունքները և ճանաչվում է նրանց կարգավիճակը՝ ոչ քրեահրավական հիմքով վարչական ձերբակալման ենթարկված անձ: Նախագծման մասով առաջարկությունները կարծիքների համակցություն է՝ վերցված աշխարհում գոյություն ունեցող հաստատություններից և գնահատման թիմի անձնական փորձառությունից: Մինչդեռ տրամադրվելիք ծառայությունների և հարմարությունների վերաբերյալ առաջարկները ամբողջությամբ համապատասխանում են միջազգային գործելակերպին, ընդունվում է, որ դրանց տրամադրման մակարդակը կթելադրվի ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահելու միջին ժամանակահատվածով և ձերբակալման վայրի տարածքի մասով առկա պահանջով: Կացարանի մոդելի մասով առաջարկվող կառուցվածքը ներկայացվում է որպես օգնություն նախագծողների համար և նպատակ չունի լինելու հստակ հայեցակարգային նախագիծ:

2 Բավրա, Գոգավան, Բագրատաշեն:



1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1.1 Գնահատման նպատակները

Այս գնահատումը ԵՄ կողմից ֆինանսավորվող՝ «Աջակցություն՝ Հայաստանում, Ադրբեյջանում և Վրաստանում հետընդունման արդյունավետ կառավարման ստեղծմանը» տարածաշրջանային ծրագրի մաս է կազմում: Այն նախապատրաստվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության համար, ղեկավարվել է Միգրացիայի միջազգային կազմակերպության և ֆինանսավորվել Եվրոպական միության կողմից:

Ծրագրի՝ միգրանտներին կացարանով ապահովման վերաբերյալ կարիքների գնահատման տարրի առաջնային նպատակն է վերանայել Հայաստանում անկանոն կարգավիճակով միգրանտներին կացարանում տեղավորման և ձերբակալման գործող ընթացակարգերը՝ առկա և նախագծված պահանջների մասով՝ նախանշելու բացերը կարողությունների հարցերում և տրամադրելու խորհրդատվություն և առաջարկություններ կացարանների բարելավման և ապահովման համար: Երկրորդային նպատակն է կացարաններով ապահովման հատուկ կենտրոնների համար համապարփակ ստանդարտ աշխատանքային ընթացակարգերի նախապատրաստումը:

1.2 Շրջանակը և մեթոդաբանությունը

Լայն իմաստով գնահատումը կենտրոնանում է՝

- Անկանոն միգրացիայի ձևերի և դրանցից բխող հարցերի վրա՝ ձերբակալման մասով ներկա և ծրագրված պահանջները որոշելու համար
- Հայաստանում միգրացիայի կառավարման վրա՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն հարցերին, թե ինչպես է ներկայումս ղեկավարվում օտարերկրացիների ու անկանոն կարգավիճակով միգրանտների ձերբակալումը՝ թե սահմանի անցման կետերում (ՍԱԿ), և թե՛ երկրի ներսում իրավակիրառ գործունեության արդյունքում
- Ձերբակալման բոլոր հայեցակետերը կանոնակարգող քաղաքականության և օրենսդրության վրա՝ ներառելու ներկայիս իրավիճակը և ընթացքի մեջ գտնվող նախաձեռնություններ քաղաքականության ու օրենսդրական ոլորտներում, որոնք վերաբերում են ձերբակալմանը՝ թե՛ ուղղակիորեն, և թե՛ անուղղակիորեն
- Գործող և առաջարկվող կացարանով ապահովման հատուկ կենտրոնների տարողության, մասշտաբների, շահագործման ու ղեկավարման վրա
- Կացարանների ամենօրյա գործունեությունը կանոնակարգող գործառնական ընթացակարգերի, ձերբակալման մասով անվտանգության անհրաժեշտության ու ապահովության հավասարակշռման, կացարաններում տեղավորված անձանց բարեկեցության ու մարդու իրավունքների վրա
- Կառավարման տեղեկատվական համակարգերի (ԿՏՀ) վրա, որոնք ներկայումս օգտագործվում են անկանոն միգրացիան և հետագա պահանջները մոնիթորինգի ենթարկելու համար՝ տեղեկացնելու ձերբակալման մասով պլանավորման և միջազգային չափանիշներին համապատասխան կացարաններ ապահովելու համար

Ուսումնասիրությունը մեկնարկել է հանրամատչելի աղբյուրների հետազոտությամբ, որն ընդգրկում է ՄՄԿ Երևանի առաքելության կողմից տրամադրված՝ օրենսդրության, քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի, զեկույցների ու ուսումնասիրությունների, ինչպես նաև Հայաստանում միգրացիային և ապաստանին վերաբերող վեբկայքերի վերանայումը: Դրան հաջորդել է երկրի ներսում իրականացված հնգօրյա ծրագիր՝ 2013 թվականի սեպտեմբերի 16–ից սեպտեմբերի 20–ը, որոնք ներառել են միգրացիոն ոլորտում իրավասու պետական մարմինների և այդ ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների հետ հանդիպումներ (Հավելված Ա):



Առանց կրկնօրինակելու աշխատանքները՝ գնահատման միջոցով փորձ է արվում հիմնվել Հայաստանում ՄՄԿ-ի կողմից, Հայաստանի Հանրապետության Կառավարության, Շվեդիայի միգրացիոն խորհրդի, Իտալիայի Կառավարության և ԵՄ-ի հետ համագործակցությամբ, իրականացված նախկին ու ներկայիս միգրացիոն ծրագրերի վրա՝ ներառյալ

- «Տեղեկացված միգրացիա. Հարավային Կովկասի ու ԵՄ-ի միջև ազգային կարողությունների ձևավորման ու միջտարածաշրջանային երկխոսության միջոցով օրինական միգրացիային նպաստելուն ուղղված համալիր մոտեցում»
- «Հայաստանում աշխատանքային միգրացիայի գիտավերլուծական կառավարման հզորացում»
- «Հայաստանում և Վրաստանում անօրինական միգրացիայի վերացում ու օրինական միգրացիայից դրական ազդեցության մակարդակի բարձրացում»
- «Տեխնիկական աջակցություն Հայաստանի Հանրապետության Կառավարությանը՝ աշխատանքային միգրացիայի սխեմաների նախաձեռնման գործում»

Ի լրումն Հայաստանի օրենսդրության՝ գնահատման համար հիմք են ծառայել հետևյալ ծրագրերի ներքո ներկայացված ՄՄԿ զեկույցները՝

- «Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի կառավարման ոլորտի ուսումնասիրություն»³
- «Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի կառավարման ոլորտում զարգացումների ակնարկ. առաջընթացի գնահատում»⁴
- «Հայաստանի Հանրապետությունում տվյալների հավաքում, մշակում և համօգտագործում»⁵
- «Աշխատանքային միգրացիան Հայաստանում. առկա միտումները և քաղաքականության տարբերակները»⁶
- «ԵՄ-ում ընդունված չափանիշներին համապատասխանելիության տեսանկյունից Հայաստանի միգրացիոն օրենսդրության և պրակտիկայի վերլուծություն»⁷

Երկրի ներսում իրականացված այցերը ներառել են հարցազրույցներ Երևանում Միգրացիոն պետական ծառայության, Արդարադատության նախարարության, Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագրի (ՄԱԿ ԶԾ), Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Արտաքին գործերի նախարարության (ԱԳՆ), Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության, Փաստաբանների պալատի, Գլխավոր դատախազության, Ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ), Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ), Առողջապահության նախարարության, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) և Հայաստանի Հելսինկյան կոմիտեի ներկայացուցիչների հետ: Բացի դրանից՝ այցելություններ են կատարվել Բագրատաշենի ՍԱԿ,

3 Պիեր Ռոսսի Լոնգի, Թերեզ Լինդստրյոմ, Քրիստինա Գալստյան, 2008 թվականի մարտ՝ ֆինանսավորված Շվեդիայի միգրացիոն խորհրդի կողմից:

4 Քրիստինա Գալստյան, Պիեր Ռոսսի Լոնգի, Ֆրանց Փրուչ, 2011 թվական՝ ֆինանսավորված ԵՄ-ի և ՄՄԿ Զարգացման հիմնադրամի կողմից:

5 Մարինա Մանկե, Թոմաս Մորթենսեն, 2010 թվականի դեկտեմբեր՝ ֆինանսավորված Իտալիայի Կառավարության կողմից:

6 Ալեքսանդր Դեվիլյարո, 2012՝ ֆինանսավորված ՄՄԿ Զարգացման հիմնադրամի կողմից:

7 Մարիա Տեմեշվարի, Կրիստինա Վասալա Կոկկինակի, իրականացվել է Եվրոպական միության և ՄՄԿ-ի Զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորված՝ «Հայաստանում աշխատանքային միգրացիայի գիտավերլուծական կառավարման հզորացում» ծրագրի շրջանակներում:



«Զվարթնոց» միջազգային օդանավակայան և «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ (նախատեսված կանանց և անչափահասների համար):

Հայաստանի ՍԱԿ-ներում ներկայումս կացարանով ապահովման հատուկ կենտրոնները գործում են երկու վայրում՝ Բագրատաշենի ՍԱԿ-ում և «Զվարթնոց» օդանավակայանում: Կենտրոնական կացարան գոյություն չունի, և հետազոտության, հարցազրույցների և այցելությունների արդյունքում պարզ է դարձել, որ անկանոն կարգավիճակով միգրանտներին անազատության մեջ պահելը, առնվազն մի քանի ժամից ավելի, շատ հազվադեպ է տեղի ունենում: Դրա համար կան մի շարք պատճառներ, բայց դրանցից ամենաառաջինը Հայաստանի՝ միգրանտների համար որպես ծագման, այլ ոչ թե նպատակակետ երկրի դիրքն է, ինչն առաջ է բերում այն ընկալումը, որ անկանոն կարգավիճակով միգրանտները կարծես աշխատանքի փնտրողների մեջ են Ծոցի կամ Արևմուտքի միջև ճանապարհին, որտեղ առկա են ավելի լավ տնտեսական հեռանկարներ: Մակերեսային մակարդակում պաշտոնական վիճակագրությունը ավելի հակված է այն մոտեցմանը, որ առավել մեծ տնտեսական խթաններ են առկա միգրանտների համար Հայաստանը լքելու, քան այնտեղ մուտք գործելու առումով՝ լինի դա կանոնավոր, թե անկանոն: Ստորև նշված աղյուսակում ներկայացված են Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված թվերը՝⁸

ՏԱՐԻ	ԱՐՏԱԳԱՂԹՈՂՆԵՐ	ՆԵՐԳԱՂԹՈՂՆԵՐ
2007	7500	1100
2008	6700	900
2009	4800	900
2010	3300	900
2011	2600	1300

Դրա հետ մեկտեղ գործազրկության մակարդակը 27.5% է,⁹ որը, եթե դիտարկվի առանձին, թվում է, թե հնարավոր կլինի բացատրել բացասական միգրացիայի պատճառը և հիմնավորել, գոնե մասնակի, միգրացիայի կառավարման հարցում Հայաստանի իշխանությունների որդեգրած անսովոր մակերեսային մոտեցումը: Այնուամենայնիվ, այս պատճառաբանությունը շատ հասարակ է. այսպիսի բարձիթողի ու չմիջամտելու քաղաքականությունը հանգեցրել է ավելի շատ արձագանքող, քան նախաձեռնողական ներգաղթային հսկողության: Դա ավելի շատ դրսևորվում է թույլատրված ժամկետից ավելի երկար գտնվողների նկատմամբ համապատասխան մարմինների կողմից տուգանքների կիրառմամբ, երբ նրանք լքում են երկիրը, քան ժամանման պահին հնարավոր խնդիրները նախանշելով կամ երկրի ներսում իրավակիրառ գործունեություն ձեռնարկելով, որի միջոցով կկանխվի անօրինական միգրացիային և դրան առնչվող այլ իրավախախտումներ: Բացի դրանից՝ աշխատանքի թույլտվության փոխկապակցված համակարգի բացակայությունը նշանակում է, որ քիչ վստահություն կարելի է ունենալ միգրանտների հաշվառման պաշտոնական թվերի առնչությամբ, և ուստի նույնիսկ անկանոն կարգավիճակով միգրանտների մոտավոր թվերն են անհայտ: Կացության հետ կապված պաշտոնական թվերի մասով շփոթությունը բարդություններ է առաջացնում վիճակագրական տարեգրքում գրանցվածների թվի և Ոստիկանության Կացության թույլտվության գրանցամատյաններից (2012 թվականի փետրվարի 15) վերցված թվերի միջև անհամապատասխանության մասով, ըստ որի 2010 թվականի հունիսի 1-ի և 2011 թվականի դեկտեմբերի 31-ի միջև ընկած ժամանակահատվածում տրամադրվել է ընդամենը 6314 ժամանակավոր և մշտական կացության թույլտվություն: Դրանցից, առաջին երեք տեղերում են համապատասխանաբար

⁸ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012:

⁹ ԱՎԾ, Հայաստանի տնային տնտեսություններում իրական գործազրկության մակարդակի վերլուծություն, 2010:



Իրանը, Ռուսաստանը և Հնդկաստանը: Բոլոր երեքի դեպքում էլ առավելապես տրամադրվել են ուսման նպատակով ժամանակավոր թույլտվություններ:¹⁰

Հայաստանում միգրացիայի կառավարման առջև ծառայած խնդիրներին անդրադարձ է կատարվել վերը նշված բոլոր հինգ զեկույցներում՝ մասնավորապես «Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի կառավարման ոլորտի ուսումնասիրություն» փաստաթղթում և դրան հաջորդած՝ «Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի կառավարման ոլորտում զարգացումների ակնարկ. առաջընթացի գնահատման» զեկույցում: Բազմաթիվ առաջարկություններ են արվել համակարգը առավել սերտորեն միջազգային գործելակերպին համապատասխանեցնելու և միգրացիոն կառուցվածքը կառավարելու նպատակով կարողությունները բարձրացնելու վերաբերյալ, որոնց թվում են կացարանով ապահովման հատուկ կենտրոնների ստեղծումը բոլոր ՍԱԿ-ներում և կենտրոնական մակարդակով՝ Երևանում: Մինչդեռ ներկայիս կառավարման կառուցվածքով, գործառնական սովորույթով, քաղաքականությամբ ու օրենսդրությամբ առաջարկվում է, որ միգրանտի համար նախատեսված կացարանը իրական խնդիր չէ, երբ զեկույցներում արտացոլված առաջարկություններն ամբողջությամբ գործարկվում են, և Հայաստանի կողմից միգրացիայի կառավարումը ավելի շատ է համապատասխանում միջազգային չափանիշներին, անհրաժեշտ կլինի, որպեսզի ձեռքբերված մասով քաղաքականությունը և միգրանտին կացարանով ապահովումն անբաժանելի մաս լինեն: Այս գնահատման համար կիրառված մեթոդաբանությունը հետևաբար ավելի շատ ապագային է միտված, քան կենտրոնանում է առկա կարիքների վրա՝ նախատեսելով, թե ամրապնդմանն ուղղված մյուս միջոցներն ինչ հնարավոր ազդեցություն կարող են ունենալ:

1.3 Աշխարհագրական, տնտեսական և քաղաքական նկատառումները

Աշխարհաքաղաքական ու տնտեսական իրավիճակին Հայաստանում համապարփակ եղանակով անդրադարձ է կատարվել «Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի կառավարման ոլորտի ուսումնասիրություն» զեկույցում, այնպես որ այս բաժինն ամփոփ նկարագիր է՝ դրանից հեշտությամբ օգտվելու համար, որն անհրաժեշտության դեպքում պարունակում է թարմացված վիճակագրական տվյալներ: Այն նաև հնարավորություն կտա ընդհանուր պատկերացում կազմելու միգրացիոն միտումների վրա ազդեցություն ունեցող գործոնների վրա, որը կարտացոլվի, միայն անուղղակիորեն, միգրանտների համար նախատեսված կացարանների մասով հնարավոր կարիքների վրա:

Հայաստանի Հանրապետությունը անկախություն է ձեռք բերել Խորհրդային Միությունից 1991 թվականին: Այն դեպի ծով ելք չունեցող երկիր է, որի տարածքը կազմում է 29.800 քառակուսի կիլոմետր՝ սահմանափակ բնական ռեսուրսներով և ներկայումս օգտագործում է միայն Վրաստանի և Իրանի ցամաքային տարածքները՝ արտաքին աշխարհի հետ կապ հաստատելու համար: Բնակչությունը մոտ 3.274.300 մարդ է,¹¹ մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) 5900 դոլար է: Կայուն տնտեսական աճ ապահովելուց հետո ՀՆԱ-ն 14%-ոց կտրուկ անկում արձանագրեց 2009 թվականին, սակայն այն ժամանակվանից արձանագրվել է աճ՝ 2.2%, 4.7% և 7.2% համապատասխանաբար 2010, 2011 և 2012 թվականների համար: ՀՆԱ-ին նպաստող հատվածներն են գյուղատնտեսությունը (21.1%), արդյունաբերությունը (37.7%) և ծառայությունները (41.2%):¹²

10 ՄՄԿ զեկույց, Աշխատանքային միգրացիան Հայաստանում. առկա միտումները և քաղաքականության տարբերակները, 2012:

11 Հայաստանի վիճակագրություն, Ազգային վիճակագրական տարեգիրք, 2012:

12 Կենտրոնական հետախուզական վարչության համաշխարհային տեղեկատու:



Հայաստանը սահմանակից է Վրաստանին՝ հյուսիսից, Իրանին՝ հարավից, Թուրքիային՝ արևմուտքից և Ադրբեջանին՝ արևելքից: Սահմանի ընդհանուր երկարությունը կազմում է 1728 կիլոմետր՝ առանձին համապատասխանաբար 265, 45, 328 և 1090 կիլոմետր:¹³ Չնայած աշխարհի գրեթե բոլոր երկրների հետ ունեցած բարիդրացիական հարաբերություններին՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ առկա երկարամյա վեճերը հանգեցրել են այդ սահմանների փակմանը 1990–ական թվականներից: Հայաստան/Թուրքիա սահմանի ամբողջ երկարությունը փշալարերով է առանձնացված, և գործող ՍԱԿ–ներ առկա չեն: Այդ սահմանը, ինչպես նաև Հայաստան/Իրան սահմանը վերահսկվում է ռուս սահմանապահների կողմից, որն արտացոլում է այն փաստը որ երկու սահմաններն էլ նախկին Սովետական Միության արտաքին սահմանի մաս են կազմել: 45 կիլոմետր ձգվող Հայաստան/Իրան սահմանը նույնպես փշալարերով է առանձնացված: Մեղրի Կարչևանում գործում է մեկ ՍԱԿ, որտեղ միջսահմանային հարաբերությունները նկարագրվում են որպես գերազանց: Հայաստան/Ադրբեջան սահմանին հերթապահություն են իրականացնում Հայաստանի զինված ուժերը՝ ի տարբերություն Ազգային անվտանգության ծառայության, և այնտեղ ՍԱԿ–ներ չեն գործում: Վրաստանի հետ ցամաքային սահմանին առկա է 4 անցման կետ՝ Բագրատաշենում, Բավրայում, Գոգավանում և Այրումի երկաթուղային կայարանը: ՍԱԿ–ներ են գործում նաև Երևանի «Ջվարթնոց» միջազգային օդանավակայանում, Երևանի Էրեբունի, Գյումրու, Ստեփանավանի և Գավառի օդանավակայաններում:

Հայաստանն Արևելյան գործընկերության գործընկեր երկիր է, որի նպատակն է առավել սերտացնել այդ երկրների հարաբերությունները ԵՄ–ի հետ և բարձրացնել այդ երկրների քաղաքական, տնտեսական և մշակութային կապերը ԵՄ–ի հետ: Հայաստանի Հանրապետության Կառավարությունը նաև հայտարարել է Մաքսային միությանը, որի անդամ պետություններն են Բելառուսը, Ղազախստանը և Ռուսաստանը, անդամակցելու և առաջարկվող Եվրասիական միությանը հետագայում միանալու մտադրության մասին:¹⁴

Մինչդեռ գործազրկության բարձր մակարդակը կարող է բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի՝ տնտեսական միգրանտների համար որպես նպատակակետ երկրի գրավչության վրա, ավելացող տնտեսական վերականգնումը, համաշխարհային անկման լույսի ներքո, կարող է ի վերջո որպես խթան հանդիսանալ ներգնա միգրացիայի համար: Առավել սերտ տնտեսական կապերը ԵՄ–ի հետ կամ անդամակցությունը Եվրասիական միությանը կարող են նաև խթանել ՀՆԱ–ն և վեճերի լուծումը հարևան երկրների հետ, այնուամենայնիվ, չնայած որ ներկայումս դա անհավանական է թվում, բայց այն կարող է էականորեն փոխել Հայաստանում միգրանտների ձևերի դինամիկան և արդյունքում միգրացիայի կառավարումը:

13 Թվերն արտացոլում են Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության սահմանները՝ բացառելով Հայաստանի փաստացի վերահսկողության ներքո գտնվող տարածքները:

14 Ազատ Եվրոպա/Ազատություն ռադիոկայան, «Հայաստանի Կառավարությունը հաստատում է Մաքսային միությանն անդամակցելու ճանապարհային քարտեզ», 2013 թվականի սեպտեմբերի 19, հասանելի է հետևյալ հասցեով՝ <http://www.rferl.org/content/armenia-road-map-customs-union/25111122.html>



2. ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Նախքան ուսումնասիրելը, թե ներկայումս ինչպես է գործառնական տեսանկյունից կազմակերպվում ու կառավարվում միգրանտների ձերբակալումը, անհրաժեշտ է ընդգծել միգրանտների ձերբակալումը կանոնակարգող ընդհանուր միջազգային սկզբունքները:

Քանի որ թե՛ կանոնավոր, և թե՛ անկանոն կարգավիճակով միգրանտների թիվն ամբողջ աշխարհում աճում է,¹⁵ երկրները մշտապես ուղիներ են փնտրում միգրացիան կարգավորելու ու կառավարելու համար: Ներգաղթողների ձերբակալումը գնալով ավելի շատ է կիրառվում պետությունների կողմից անկանոն միգրացիան վերահսկելու և անկանոն կարգավիճակով միգրանտների արդյունավետ վերադարձն ապահովելու համար,¹⁶ որի ապացույցը կարող է լինել, ի թիվս այլ գործոնների, առանձին երկրներում ձերբակալման ծավալների աճը:¹⁷

Անկանոն կարգավիճակով միգրանտների ձերբակալման վերաբերյալ քաղաքականության հարցերին առնչվելիս նշվում են տարբեր միջազգային մարմինների կողմից մշակված չափանիշներ, այդ թվում՝ դրանց մի մասը պարտադիր բնույթ ունի, որոնք երաշխավորում են ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանությունը: Այդ **պարտադիր չափանիշներից են** «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիան և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, որոնց բոլորին էլ Հայաստանը Կողմ է հանդիսանում:

Կարևոր է նշել, որ արտաքսումից առաջ իրականացվող ձերբակալումը համարվում է *ազատությունից զրկում*, մինչդեռ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցները, ինչպիսիք են՝ կացության/բնակության սահմանափակումները, պարբերաբար ներկայանալը կամ էլեկտրոնային մոնիթորինգը *տեղաշարժի իսկական սահմանափակում* է:

ՄՄԿ-ն միգրանտներին ձերբակալումը **սահմանում է** թե՛ վարչական, և թե՛ քրեական գործով ձերբակալման դեպքերում, որպես «անազատության մեջ պահելու միջոցով տեղաշարժվելու ազատության սահմանափակում՝ վարչական կամ դատական մարմնի հրամանով»:¹⁸

Միգրանտներին ձերբակալելու համար կատարման ենթակա *հիմնական սկզբունքները* ներառում են՝

- **Ձերբակալման օրինական ու իրավաչափ հիմքերը**

Դա նշանակում է, որ ազատությունից զրկելու հիմքերը պետք է սպառնիչ կերպով օրենքով հստակ ամրագրվեն: Բացի դրանից՝ ձերբակալման օրինականությունը պետք է ստուգել միջազգային իրավունքի, մասնավորապես վերը նշված պարտադիր բնույթ ունեցող փաստաթղթերի տեսանկյունից:

15 Միավորված ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական հարցերի վարչության համաձայն՝ միգրանտների թիվն ամբողջ աշխարհում աճել է 150 միլիոնից 1990 թվականին մինչև 232 միլիոն 2013 թվականին:

16 Ձերբակալման միջազգային կոալիցիան (ՁՄԿ) անցկացրել է տարածաշրջանային ու ազգային խորհրդակցություններ իր անդամների ու շահառուների հետ 2011-2012 թվականներին, որոնք հիմնավորում են այս փաստարկը:

17 Ձերբակալման մասով կարողությունները արտահայտությունը նշանակում է այն անձանց թիվը, որոնք կարող են ձերբակալվել ցանկացած ժամանակ ձերբակալման ազգային հաստատություններում:

18 ՄՄԿ, Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, Միջազգային միգրացիոն իրավունք, Թիվ 25, երկրորդ հրատարակություն, 2011, էջ 27:



• **Անհրաժեշտությունն ու համաչափությունը**

Նախքան ձեռքարկումը՝ որևէ չափիչ մեխանիզմով պետք է համոզվել, որ ձեռքարկումը անհրաժեշտ է և համաչափ՝ գործի առանձին հանգամանքների առնչությամբ: ՄԱԿ-ի կամայական ազատագրկման հարցերով աշխատանքային խումբը¹⁹ նշել է, որ ապաստան փնտրողների ու անկանոն կարգավիճակով միգրանտների ձեռքարկումը պետք է որպես վերջին միջոց դիտարկել և գնահատել յուրաքանչյուր առանձին դեպքում:²⁰ Ավելին, Ազատագրկման հարցերով աշխատանքային խմբի կարծիքով՝ «երկիր անօրինական մուտք գործելը քրեականացնելը գերազանցում է անկանոն միգրացիան վերահսկելու ու կարգավորելու պետությունների շահերը և հանգեցնում է անհարկի ձեռքարկման:»²¹

• **Ընթացակարգային երաշխիքները**

Ձեռքարկման վերաբերյալ յուրաքանչյուր որոշում պետք է ընդունվի ու հաստատվի դատավորի կողմից՝ պարբերական դատական վերանայման հետ զուգահեռ: Բացի դրանից՝ պետք է հնարավորություն լինի վիճարկելու ձեռքարկման վերաբերյալ որոշումը դատարանում և օգտվելու փաստաբանի ծառայություններից: Այդ երաշխիքներով նաև պետք է հնարավորություն տրվի, ձեռքարկումն անօրինական լինելու դեպքում, որպեսզի անձը ձեռքարկումից ազատվի ու փոխհատուցում ստանա վնասի համար:²²

Ձեռքարկված անձանց իրավունքները ներառում են ձեռքարկման պատճառի մասին իրենց համար հասկանալի լեզվով տեղեկացված լինելու ու արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքը (ընտանիքի անդամներ, հասարակական կազմակերպություններ, փաստաբաններ)՝ հեռախոսով կամ փոստով:²³ Հաղորդակցման դժվարությունների դեպքում, ձեռքարկված անձին տրամադրվում է բանավոր թարգմանիչ: Բացի դրանից՝ չափազանց կարևոր է, որը ձեռքարկված անձը հնարավորություն ունենա օգտվելու բժշկի ծառայություններից:²⁴

19 ՄԱԿ-ի Կամայական ազատագրկման հարցերով աշխատանքային խումբը ստեղծվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով նախկին հանձնաժողովի 1991/42 բանաձևով և այդ Խմբի մանդատի մեջ է մտնում՝ ա) կամայական եղանակով ազատությունից զրկելու դեպքերը հետաքննելը, բ) տեղեկատվություն պահանջել և ստանալ Կառավարություններից ու միջկառավարական և հասարակական կազմակերպություններից, ինչպես նաև տեղեկատվություն ստանալ համապատասխան անհատներից, գ) քայլեր ձեռնարկել իրենց ներկայացված տեղեկատվության մասով, դ) Կառավարության հրավերով տեղում առաքելություններ իրականացնել, ե) քննարկումներ ծավալել ընդհանուր հարցերի շուրջ, զ) տարեկան զեկույց ներկայացնել Մարդու իրավունքների կոմիտե:

20 Կամայական ազատագրկման հարցերով աշխատանքային խմբի կողմից ընդունված եզրակացություն, 2010 թվականի մարտի 2, Ս.Ն. Doc. A/HRC/13/30/Add.1:

21 Կամայական ազատագրկման հարցերով աշխատանքային խումբ, 2008 թվականի հունվարի 10-ի տարեկան զեկույց, .N.Doc A/HRC/7/4, կետ 53:

22 Մարդու իրավունքների հարցերով կոմիտե, Ս.Ն. Doc. CCPR/C/78/D/1014/2001 (2003):

23 Միգրանտների իրավունքների հարցերով հատուկ զեկուցողի զեկույց, 2010 թվականի օգոստոս 4, կետ 87(ե):

24 Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) համաձայն՝ անազատության մեջ պահելու հաստատությունների համար նվազագույն պահանջն է այդ հաստատությունում բուժքույրի որակավորմամբ անձի ամենօրյա ներկայությունը, որը կիրականացնի նախնական բժշկական զննում, բժշկի այցելության հարցումներ կստանա, կապահովի նշանակված դեղերի տրամադրումն ու բաշխումը, կվարի բժշկական փաստաթղթաշրջանառությունն ու կվերահսկի հիգիենայի ընդհանուր պայմանները:



Ձերբակալված անձանց պահելու հաստատություններում պետք է վարել ձերբակալված անձանց գրանցամատյան²⁵ (անձի տվյալների գրանցում, անազատության մեջ պահելու հիմքերը, անազատության մեջ պահելու հրաման արձակած իրավասու մարմինն ու ընդունման ու ազատման ժամն ու ամսաթիվը):

Բացի դրանից՝ ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահելու *առավելագույն ժամանակահատվածը* պետք է սահմանվի, և պետք է բացառվեն անորոշ ժամկետով ձերբակալելու դեպքերը: Ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահելու նախատեսված ժամանակահատվածը լրանալուց հետո, ձերբակալված անձը պետք է ազատ արձակվի:²⁶ Ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահելու ընթացքում, պարբերական վերանայման մեխանիզմ պետք է կիրառվի՝ համոզվելու համար, որ անազատության մեջ պահելը դեռ անհրաժեշտ է:

Ազատությունից զրկված անձանց պետք է մարդասիրաբար վերաբերվել ու հարգել նրանց արժանապատվությունը:²⁷ Կարևորն այն է, որ պետությունները պատասխանատու լինեն ձերբակալված անձանց նկատմամբ այդպիսի վերաբերմունք դրսևորելու համար, նույնիսկ այն դեպքերում, երբ այդ կենտրոնները կառավարվում են մասնավոր ընկերությունների կողմից:²⁸ Բացի դրանից, միգրացիոն նպատակներով նախատեսված կացարանները/ ձերբակալման վայրերը չպետք է նմանվեն բանտային հաստատությունների, իսկ այնտեղ աշխատող անձնակազմին պետք է ցուցումներ տրվեն, և նրանք պետք է մարդու իրավունքների, մշակութային տարբերությունների ու այլ հարցերի, ինչպիսիք են՝ մեծահասակների նկատմամբ վերաբերմունքը, վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ անցնեն: Ձերբակալված անձանց պահելու հաստատությունները պետք է պարբերաբար վերահսկվեն մարդու իրավունքների պաշտպանների կամ մարդու իրավունքների հարցերով զբաղվող այլ հաստատությունների կողմից՝ իշխանությունների ու հանրության առջև բարձրացնելով ցանկացած հակասության հետ կապված հարց:

Օտարերկրացիների որոշ կատեգորիաներ, ինչպիսիք են՝ առանց ուղեկցության կամ առանձնացված երեխաները,²⁹ ոտնձգությունների ենթարկված կանայք կամ կերակրող կանայք,³⁰ չպետք է պահվեն ձերբակալման կենտրոններում:

ԵՄ մակարդակում միգրանտների ձերբակալման հարցը կարգավորվում է *Վերադարձ- նելու մասին հրահանգով*,³¹ որով սահմանվում են ընդհանուր չափանիշներ անդամ պետությունների համար անկանոն ներգաղթային կարգավիճակ ունեցող երրորդ երկրի քաղաքացիներին վերադարձնելու, հեռացնելու, հարկադրանքի միջոցների կիրառելու, ձերբակալելու և մուտքի արգելքի վերաբերյալ: Հրահանգով սահմանվում է, որ ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահելը կարող է այնքան երկար տևել, որքան

25 Քննարկում N 5, Հավելված II, Կամայական կալանավորման հարցերով աշխատանքային խումբ, 1999 թվականի դեկտեմբերի 28, UN Doc. E/CN.4/2000/4:

26 Կամայական կալանավորման հարցերով աշխատանքային խումբ, Տարեկան զեկույց, 2010 թվականի հունվարի 15, կետ 61:

27 «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (ԲԲԻՄԴ) 10-րդ հոդված:

28 UN. Doc CCPR/C/78/D/1020/2001 (2003):.

29 «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն, «երեխա» է համարվում 18 տարին չլրացած անձը:

30 Միգրանտների իրավունքների հարցերով հատուկ զեկուցողի զեկույց, Հավելված, 2008 թվականի մարտի 5, §121:

31 «Անօրինական հիմունքներով գտնվող երրորդ երկրի քաղաքացիներին վերադարձնելու համար անդամ պետություններում ընդհանուր չափանիշների և ընթացակարգերի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 16-ի 2008/115/ԵՀ հրահանգ:



խիստ անհրաժեշտ է վերադարձը նախապատրաստելու կամ հեռացման գործընթացն իրականացնելու համար, և չպետք է, որևէ դեպքում, տասնութ ամսից ավելի լինի. 15/1 հոդվածում նաև մատնանշվում է, որ ձերբակալման կիրառումը պետք է դիտարկվի որպես վերջին միջոց, երբ հնարավոր չէ կիրառել «նվազ հարկադրանքի» միջոցներ: Այդ դրույթը ընդգծում է նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով կոմիտեն, որը եզրակացրել է, որ «*ձերբակալման հեղինակությունը անազատության մեջ պահելը չպետք է շարունակվի այն ժամանակահատվածից ավելի, որի համար պետությունը կարող է պարզաճ հիմնավորում ներկայացնել*»: Օրինակ, անօրինական մուտքի փաստը կարող է հեղինակության անհրաժեշտություն առաջացնել, ինչպես նաև անհատին բնորոշ այլ գործոններ կարող են լինել, ինչպիսիք են՝ խուսափելու հավանականությունը և համագործակցելու բացակայությունը, որոնցով կարող է արդարացվել որոշ ժամանակահատվածով ձերբակալելու փաստը: Առանց այդպիսի գործոնների՝ ձերբակալումը կարող է համարվել կամայական, նույնիսկ եթե մուտքը եղել է անօրինական:³²

Վերջերս, շատ երկրներ սկսել են բարեփոխել ձերբակալման վերաբերյալ իրենց քաղաքականությունն ու օրենսդրությունը՝ **ձերբակալմանն այլընտրանք հանդիսացող միջոցներ** նախատեսելու համար, այդ թվում՝ համայնքի մակարդակով վերահսկողությունը, ներկայանալը և գործերի վարումը, ապաստարանի մոդելները և էլեկտրոնային մոնիթորինգը:

Ձերբակալմանն այլընտրանք հանդիսացող միջոցները համարժեք չեն ոչ պայմանական ազատ արձակմանը, քանի որ դրանցով կիրառվում են տեղաշարժի ազատության սահմանափակումներ: Հետևաբար, ձերբակալմանն այլընտրանք հանդիսացող միջոցների դեպքում, հիմնարար իրավունքների նկատմամբ կիրառված ցանկացած սահմանափակում պետք է համապատասխանի ազգային, ինչպես նաև միջազգային ու մարդու իրավունքների վերաբերյալ օրենսդրությանը: Ընտրված այլընտրանքային միջոցը պետք է հիմնված լինի միգրանտի անհատական գնահատման վրա, խտրականության բացառման սկզբունքին՝ պարբերաբար ուսումնասիրված իրավական վերանայման միջոցով, սահմանի միգրանտին իրավական խորհրդատվության շրջանակ:

Ձերբակալմանն այլընտրանք հանդիսացող միջոցների վերաբերյալ հաջողված ծրագրերն ընդհանուր առմամբ նմանատիպ արդյունք են ապահովում, այդ թվում՝ միջինը գրեթե 80%-ի ծախսերի խնայողություն՝ համեմատած ձերբակալման հետ, և միջինը 95%՝ համապատասխանության մակարդակի տեսանկյունից:³³

2.1 Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների հիմնական մեխանիզմները

Ձերբակալմանն ամենաբնորոշ այլընտրանքային միջոցը միգրանտներին/ապաստան հայցողներին կիսաբաց ռեժիմով ընդունման հաստատություն տեղավորելն է, որտեղ գտնվելու պահանջ կա, բայց նաև կենտրոնը լքելու հնարավորություն: Դա տարբերվում է բնակության/կացության ստանդարտ կենտրոններից, որտեղ ապաստան հայցողները կարող են լքել կենտրոնը առավել երկար ժամանակահատվածով: Ապաստան հայցողների/միգրանտների համար կիսաբաց ռեժիմով ընդունման հաստատություններում առկա են վերահսկման մեխանիզմներ՝ կենտրոններում ներկայությունն ապահովելու համար, ինչպիսիք են՝ ամեն օր ներկայանալու պահանջները, որոշակի ժամերին որոշակի վայրում գտնվելու պահանջը և (կամ) կենտրոն մուտք գործելիս և այնտեղից դուրս գալիս ստորագրելը և ճամփորդական փաստաթղթերը հանձնելը: Այնուամենայնիվ, կենտրոնում և դրանից դուրս տեղաշարժվելու ընդհանուր ազատությունը պետք է պահպանվի՝ ապահովելու համար, որպեսզի դա չդառնա ձերբակալման ձև:

32 CCPR/C/D/59/560/1993 կետ 9.4 և C. v. Australia (900/1999), ICCPR/C/76/D/900/1999(2002 թվականի հոկտեմբերի 28, կետ .8.2

33 IDC, Առկա են այլընտրանքային միջոցներ, 2011:



- **Ազատ արձակումը՝ գրանցելով**

Այս միջոցն ապահովում է միգրանտի (ապաստան հայցողի) ազատ տեղաշարժը, սակայն նա պարտավոր է համապատասխան մարմիններում գրանցել բնակության/կացության վայրը, որով որոշ դեպքերում կարող են սահմանվել անձը հաստատող փաստաթղթերի ներկայացումը:

- **Համայնքի կողմից վերահսկողությունը**

Համայնքի կողմից վերահսկողության ծրագրերը սովորաբար ներառում են իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու, գործի առավել խորը կառավարման, և պահանջները չկատարելու հետևանքների վերաբերյալ իրազեկվածության հիմնական տարրերը: Համայնքի կողմից վերահսկողության ծրագրերում ընդգրկված անձանց թույլատրվում է ապրել ընտանիքի անդամների հետ և (կամ) նույն եկեղեցու հետևորդների հետ կամ այլ համայնքի կազմակերպության անդամների հետ, ինչպես նաև նրանց թույլատրվում է աշխատել, իսկ նրանց երեխաները կարող են հաճախել դպրոց և այցելել բժշկի:

- **Ներկայանալու պահանջները**

Այս միջոցով սահմանվում են միգրանտի (ապաստան հայցողի) ներկայանալու պարտավորությունները՝ ոստիկանություն (ներգաղթի հարցերով պաշտոնյայի մոտ) կամ անձամբ ներկայանալով, կամ հեռախոսով, կամ գրավոր ծանուցելով: Ներկայանալու հաճախականությունը կարող է տատանվել շաբաթը մեկ անգամ ներկայանալուց կամ նվազ հազվադեպ: Ներկայանալու այլընտրանքը հաճախ կիրառվում է ճամփորդական փաստաթղթերը հանձնելու հետ համակցմամբ:

- **Գրավով (երաշխավորությամբ) ազատ արձակելը**

Դա համեմատաբար հազվագյուտ միջոց է, քանի որ դրանով պահանջվում է որոշակի գումարի չափով գրավ՝ անհատի ազատ տեղաշարժը ապահովելու համար և երաշխավորելու նրա ներկայանալը իր ներգաղթային գործով վարույթներին:

- **Կոնկրետ վայրում բնակվելու պարտավորությամբ ազատ արձակումը**

Այս միջոցով ապաստան հայցողները (միգրանտները) կարող են ազատ արձակվել այն պայմանով, որ նրանք բնակվեն կոնկրետ հասցեում կամ սահմանված վարչական տարածքում, որը կարող է ավելի բարենպաստ լինել, քան կիսաբաց ռեժիմով կենտրոններում բնակվելու պարտավորությունը: Դրանով դեռ սահմանվում են էական սահմանափակումներ համապատասխան անձի ազատ տեղաշարժի մասով: Որոշ երկրներում այս համակարգը կիրառվում է որպես ապաստան հայցողներին երկրի տարածքում հավասարապես բաշխելու և այդ բեռը բոլոր տարածաշրջանների կողմից հավասար կրումն ապահովող գործիք:

- **Վերահսկվող ազատ արձակումը**

Անհատների, ընտանիքի անդամների, հասարակական կազմակերպությունների, կրոնական կազմակերպությունների կողմից վերահսկվող ազատ արձակում: Այդ անձինք պետք է ցանկություն հայտնեն հանդես գալու որպես երաշխավորներ և ստանձնեն պարտականություն՝ երաշխավորելու, որ ապաստան հայցողը (միգրանտը) կկատարի իր բոլոր պարտավորությունները ապաստանի (ներգաղթի) վերաբերյալ օրենսդրության համաձայն, ինչպես նաև պետք է վճարի տուգանք, եթե ապաստան հայցողը (միգրանտը) չկատարի այդ պահանջները:



- **Էլեկտրոնային մոնիթորինգը**

Այս տեխնիկական պահանջներով այլընտրանքային միջոցը հիմնականում կիրառվում է այն դեպքերում, երբ անձը ազատվում է պայմանական՝ գրավով, քրեական վարույթի շրջանակներում. այդ անձի դաստակին կամ արմունկին ամրացվում է սարքավորում, սակայն դա չի կիրառվում այն դեպքերում, երբ անձը կատարել է վարչական իրավախախտումներ: Այս այլընտրանքային միջոցով ապահովվում է համապատասխան անձի տեղաշարժման հնարավոր ամենաարդյունավետ մոնիթորինգը, սակայն միևնույն ժամանակ դա ամենազգայուն տարբերակն է, քանի որ դրա կիրառումը կարող է ազդեցություն ունենալ ոչ միայն անձի տեղաշարժվելու ազատության, այլ նաև մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի վրա: Այնուամենայնիվ, դա չպետք է խնդիրներ առաջացնի, եթե ձերբակալված անձը կամավոր կերպով ընտրում է էլեկտրոնային սարքի ամրակցումը, և ոչ թե ձերբակալումը:



3. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Գնահատման այս մասում անդրադարձ կկատարվի ընդհանուր առմամբ ներգաղթի վերաբերյալ Հայաստանի քաղաքականությանն ու օրենսդրությանը, ու մասնավորապես հատուկ ուշադրություն կդարձվի միգրանտներին ձերբակալման վրա:

3.1 Քաղաքականության շրջանակը Հայաստանում

Միգրացիայի կառավարման վերաբերյալ պետական առաջին համապարփակ քաղաքականությունն ընդունվել է 2000 թվականին, երբ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը հաստատեց առաջին՝ «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգը»: Այս Հայեցակարգային փաստաթուղթը վերանայվել ու ընդունվել է 2004 թվականին, որը պայմանավորված է Հայաստանում միգրացիոն իրավիճակի փոփոխություններով: Վերանայված քաղաքականության փաստաթուղթը հաշվի էր առնում Հայաստանում ժողովրդագրական իրավիճակը, ազգային անվտանգության, ինչպես նաև մարդկային զարգացման հետ կապված հարցեր: Ի լրումն նախորդ Հայեցակարգում նախատեսված գերակայություններին՝ դրանում ավելացվել էր երկու նոր գերակայություն՝

- Կանխարգելել Հայաստանի Հանրապետությունից սկիզբ առնող անօրինական միգրացիան և աջակցել արտերկրում անօրինական հիմունքներով ապրող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վերադարձին և հայրենիքում նրանց հետագա վերաինտեգրմանը
և
- Կանխարգելել մարդկանց մաքսանենգությունն ու թրաֆիքինգը Հայաստանի Հանրապետությունից և մշակել զոհերի պաշտպանության մեխանիզմներ:

Չնայած Հայեցակարգում արձանագրված էական առաջընթացի՝ նշվել է, որ որոշ հայեցակետեր բացակայում են, ինչպես օրինակ՝ գործողությունների ծրագիրը. անհրաժեշտ է նշել այն փաստը, որ Հայեցակարգը չի գնահատվել ֆինանսական տեսանկյունից և միգրացիոն քաղաքականության գործընթացի մոնիթորինգի մեխանիզմներն ու արդյունավետության գնահատումը չեն սահմանվել:³⁴

Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) և Արևելյան գործընկերության (ԱԷԳ) նախաձեռնության շրջանակներում Եվրոպական ինտեգրման հետ մեկտեղ՝ նախանշվել են միգրացիայի ոլորտի նոր առաջնահերթություններ: Դրանք հիմնված էին անկանոն միգրացիայի ձևերում աննշան փոփոխությունների վրա՝ ներառյալ մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հարցերը: Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության նոր հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ) հաստատվել է Կառավարության 2010 թվականի արձանագրային որոշմամբ՝ դրանում նախանշելով 14 գերակա հարցեր և մեխանիզմներ այդ ոլորտներում առաջընթացի հասնելու համար: 2010 թվականի Հայեցակարգով լրացվում էին տարբեր միջազգային շահառուների, ինչպիսին է՝ ՄՄԿ-ն, կողմից ավելի վաղ նախանշված միգրացիայի կառավարման ոլորտում առկա բացթողումները:³⁵ 2010 թվականի հայեցակարգը լրամշակվել է՝ այն ԵՄ-ի առջև ստանձնած պարտավորություններին ներդաշնակեցնելու

34 CARIM East, Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) միգրացիոն քաղաքականության շրջանակի վերաբերյալ, էջ 2:

35 ՄՄԿ, Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի կառավարման ոլորտում գրանցված առաջընթացի վերանայում: Միգրացիայի կառավարման վերաբերյալ 2008 թվականի գնահատման զեկույցի առնչությամբ ձեռնարկված քայլեր, 2011:



նպատակով:³⁶ Դա լրացվել է 2012-2016 թվականների Գործողությունների ծրագրով՝ դրա իրականացումն ապահովելու համար: Գործողությունների ծրագրի նպատակն էր միգրացիան կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտի և վարչական համակարգի համապատասխանության ապահովումը ԵՄ-ի օրենսդրությանն ու լավագույն ինստիտուցիոնալ կառուցվածքներին՝ հաշվի առնելով ազգային պետական շահերը: Անկանոն միգրացիայի կարգավորման հետ կապված հարցերը նշված են 7-րդ հիմնախնդրի ներքո, իսկ կալանքի տակ պահելու հետ կապված հարցերը՝ 7.4.3 հիմնախնդրի ներքո:³⁷ 2011 թվականի Գործողությունների ծրագրով անդրադարձ է կատարվում անկանոն միգրացիային այլ վերնագրերի ներքո և, օրինակ Հիմնախնդիր 1-ում,³⁸ որտեղ 1.4 ենթաուղղությամբ նախատեսվում են համապատասխան պետական մարմինների միջև տեղեկատվության հավաքման ու համօգտագործման միջոցով մուտքի ռեժիմը խախտած օտարերկրացիներին բացահայտելու մեխանիզմներ:

2011 թվականին Հայաստանի Հանրապետության Կառավարությունն ընդունել է Հայաստանի Հանրապետությունից սկիզբ առնող անկանոն միգրացիայի երևույթի ուսումնասիրության և կանխարգելման վերաբերյալ հայեցակարգ: Այնուամենայնիվ, Հայաստանն առավելապես դիտարկվում էր որպես միգրացիայի ծագման երկիր, և ուստի Հայեցակարգով ուսումնասիրվում էր Հայաստանից սկիզբ առնող անկանոն միգրացիան և ոչ թե տարանցման հոսքերը:

Անկանոն միգրացիայի դեմ պայքարը, մարդկանց թրաֆիքինգը, հետընդունումն ու ինքնության և ճամփորդական փաստաթղթերի անվտանգությունը, ինչպես նաև սահմանների կառավարումը համարվում են գերակա ուղղություններ ԵՄ-Հայաստան Շարժունակության շուրջ գործընկերության փաստաթղթում:³⁹

Բացի դրանից՝ Աշխատանքային պայմանավորվածությունը, որը Հայաստանը ստորագրել է Եվրոպական միության անդամ պետությունների արտաքին սահմաններին գործառնական համագործակցության կառավարման եվրոպական գործակալության (Frontex) հետ, իր նպատակների շարքում նախանշում է անկանոն միգրացիայի և սահմանահատումներին վերաբերող հանցագործությունների դեմ պայքարը:⁴⁰

Ինչ վերաբերում է սահմանների կառավարման քաղաքականությանը, ապա 2010 թվականին ընդունվել է Սահմանային անվտանգության ռազմավարությունը, իսկ 2011 թվականի ապրիլին ընդունվել է Սահմանային համալիր կառավարման (ՍՀԿ)

36 Նույն տեղում:

37 Օտարերկրացիները պետք է քրեակատարողական հիմնարկներից առանձնացված վայրերում կալանքի տակ պահվեն, առավելագույն ժամկետի սահմանման վերաբերյալ «Քրեական օրենսգրքում և այլ օրենսդրական ակտերում փոփոխությունների ու լրացումների իրականացում: Գործողությունների ծրագրով նաև նախատեսվում է, որ համապատասխան փոփոխություններ պետք է կատարվեն «Քրեական օրենսգրքում՝ ապահովելու համար, որպեսզի սահմանները ապօրինաբար հատելու համար նախատեսվի վարչական, և ոչ թե քրեական պատասխանատվություն:

38 Գործողությունների ծրագրի հիմնախնդիր 1՝ «Միգրացիան կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտի և վարչական համակարգի մոտարկում ԵՄ համապատասխան օրենսդրության և ԵՄ անդամ երկրների լավագույն ինստիտուցիոնալ կառուցվածքների հետ՝ հաշվի առնելով ազգային պետական շահերը»:

39 Եվրոպական միության և Հայաստանի միջև շարժունակության շուրջ գործընկերության վերաբերյալ համատեղ հայտարարություն, 2011 թվական:

40 Աշխատանքային պայմանավորվածություն, որով սահմանվում է գործառնական համագործակցություն Եվրոպական միության անդամ պետությունների արտաքին սահմաններին աշխատանքային համագործակցության կառավարման եվրոպական գործակալության (Frontex) և Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության միջև: 2012 թվական:



ապահովմանն ուղղված 2011-2015 թվականների միջոցառումների ծրագիրը, որի հիմնական նպատակը՝ սահմանային անցման կետերի արդիականացումն է:

ԵՄ-Հայաստան հետընդունման մասին համաձայնագրով կարգավորվում է սեփական և երրորդ երկրի քաղաքացիների հետընդունման հարցը. այդ փաստաթուղթը վերջերս վավերացվել է և, ակնկալվում է, որ այն ուժի մեջ կմտնի 2013 թվականի դեկտեմբերին:

Ինչ վերաբերում է **ձերբակալման վերաբերյալ կոնկրետ քաղաքականությանը** և մարդու իրավունքների պահպանմանը, ապա գործող որևէ փաստաթուղթ առկա չէ, այնուամենայնիվ, սույն գնահատման օրենսդրության վերաբերյալ բաժնում վերլուծության կենթարկվի բավականին լայնընդգրկուն օրենսդրությունը, որով երաշխավորվում է միգրանտների տեղաշարժվելու ազատությունը:

3.2 Միգրացիայի կառավարման մասով Հայաստանի վարչարարական համակարգը

Չնայած որ ներկայումս գործում է միգրացիոն քաղաքականության մշակման, համակարգման, վերահսկման ու իրականացման համար կենտրոնական մարմին, այնուամենայնիվ միգրացիայի կառավարման հարցում համընդհանուր վարչական կառուցվածքը շարունակում է բավականին ապակենտրոնացված մնալ:

- **Միգրացիոն պետական ծառայություն (ՄՊԾ)**

Միգրացիոն պետական ծառայությունը միգրացիոն քաղաքականության իրականացումը մշակող, համակարգող ու մոնիթորինգի ենթարկող հիմնական պատասխանատու մարմինն է: ՄՊԾ-ի իրավասությունների մեջ են մտնում նաև ապաստան հայցողների և փախստականների կենտրոնացված հաշվառումը, ապաստանի դիմումների մշակումն ու որպես առաջին առյուծի՝ ապաստանի վերաբերյալ որոշումների կայացումը: Միգրացիոն պետական ծառայությունը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության հատուկ հանրային գործառնական գործակալություն է:

- **Արտաքին գործերի նախարարություն (ԱԳՆ)**

ԱԳՆ-ն, իր Հյուպատոսական վարչության, Միգրացիայի հարցերով բաժնի և Իրավաբանական վարչության միջոցով, պատասխանատու է վիզաների⁴¹ ու անձնագրերի տրամադրման, ինչպես նաև հետընդունման մասին համաձայնագրերի կիրարկման համար:

- **Ոստիկանություն**

Ոստիկանության անօրինական միգրացիայի դեմ պայքարի և միջազգային համագործակցության վարչության ամենակարևոր նպատակն է պայքարել անօրինական միգրացիայի դեմ ու ապահովել միջազգային համագործակցությունն այդ հարցերում: Ոստիկանության կազմում այս նոր ստորաբաժանումը նաև անօրինական միգրացիայի դեմ պայքարի կենտրոնական մարմինն է: Անօրինական միգրացիայի դեմ պայքարի և միջազգային համագործակցության վարչությունը նաև Հանցագործությունների դեմ պայքարի ԱՊՀ անդամ պետությունների համատեղ գործողությունների վերաբերյալ միջպետական ծրագրի, Անկանոն միգրացիայի դեմ պայքարի ԱՊՀ անդամ պետությունների համագործակցության ծրագրի և երրորդ աշխարհի երկրների քաղաքացիների անկանոն միգրացիայի դեմ պայքարի

41 Տրամադրվելիք մուտքի վիզաների վերաբերյալ որոշումն ընդունվում է ԱԳՆ-ում:



հավաքական համակարգի ձևավորման վերաբերյալ ՀԱՊԿ անդամ պետությունների գործողությունների ծրագրի իրականացնող մարմինն է: Անօրինական միգրացիայի դեմ պայքարի և միջազգային համագործակցության վարչությունը տարեկան կտրվածքով կազմակերպվող ՀԱՊԿ Նելեգալ միջոցառման համակարգող մարմինն է,⁴² որի նպատակն է ՀԱՊԿ անդամ պետությունների տարածքում ՀԱՊԿ անդամ չհանդիսացող պետություններից անօրինական միգրանտների հայտնաբերումն ու խափանումն է: Այդ միջոցառումներն անցկացվում են տարեկան երկու անգամ, մեկ անգամ գարնանը և մեկ անգամ՝ աշնանը, և իրականացվում է բոլոր ՍԱԿ-ներում՝ ԱԱԾ-ի հետ համագործակցությամբ:

Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը պատասխանատու է Հայաստանում օտարերկրյա քաղաքացիներին մուտքի վիզաներ, կացության թույլտվություններ տրամադրելու և հաշվառելու համար: Այն նաև շահագործում է Հայաստանի քաղաքացիների անձնագրերի տվյալների բանկը: Բացի թույլատրված ժամկետից ավելի երկար գտնվողների նկատմամբ տուգանքներ կիրառելուց՝ Ոստիկանությունը ներգրավված չէ անկանոն կարգավիճակով միգրանտներին ձերբակալելու աշխատանքներում:

- **Ազգային անվտանգության ծառայություն (ԱԱԾ)**

Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) զբաղվում է սահմանների կառավարման և հսկողության հարցերով ու ներգրավված է անկանոն միգրացիայի դեմ պայքարի վերաբերյալ քաղաքականության իրականացման աշխատանքներում: Բացի դրանից՝ ԱԱԾ-ն վարում է կացության թույլտվություններ ունեցող օտարերկրացիների տվյալներ: ԱԱԾ աշխատակիցները իրավասու են անազատության մեջ պահելու անկանոն կարգավիճակով միգրանտներին երեք ժամ նախնական ժամանակահատվածով՝ առանց տրամադրելու իրավական ծանուցման որևէ ձև: Եթե հարցերը չեն կարգավորվում այդ ժամանակահատվածում, անկանոն կարգավիճակով միգրանտները տեղափոխվում են Երևանում գտնվող ԱԱԾ կենտրոնակայան, որտեղ նրանք պահվում են, և մեկնարկում ու ամփոփվում են իրավական գործընթացները: Ազգային անվտանգության ծառայության **Սահմանապահ զորքերը** պատասխանատու են սահմանների կառավարման ու վերահսկողության, ինչպես նաև Սահմանային կառավարման տեղեկատվական համակարգի (ՍԷԿ) տվյալների բանկի վարման համար:

- **Արդարադատության նախարարություն**

Արդարադատության նախարարությունը վերահսկում է քրեակատարողական համակարգը, որով Հայաստանի տարածքում գտնվելիս հանցագործություն կատարած օտարերկրացիները տեղավորվում են քրեակատարողական հաստատությունների հատուկ բաժնում: Հայաստանում գործում են 12 քրեակատարողական հաստատություններ, որոնք բոլորն էլ գործում են Արդարադատության նախարարության (ԱՆ) ենթակայության ներքո, այդ թվում՝ կալանավորման այլընտրանք միջոցները, ինչպիսիք են՝ տնային կալանքը և (կամ) պրոբացիան կիրառելով: Միակ հանգամանքը, որի դեպքում անկանոն կարգավիճակով միգրանտները կարող են պահվել քրեակատարողական հիմնարկում, Հայաստան անօրինական եղանակով մուտք գործելն է: Դա պայմանավորված է նրանով, որ անօրինական մուտքը հանցագործություն է, որը պատժվում է մինչև երեք տարի ազատազրկմամբ:

42 Երևանում 2013 թվականի սեպտեմբերին տեղի ունեցած գնահատման այցի ընթացքում, Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը տեղեկացրել է ՄՄԿ-ին, որ ՆԵԼԵԳԱԼ միջացառումն անցկացվում է տարեկան երկու անգամ, մեկ անգամ գարնանը և մեկ անգամ աշնանը:



• **Առողջապահության նախարարություն**

Առողջապահության նախարարությունը պատասխանատու է Հայաստանի բոլոր 7 ՍԱԿ-ներում առողջության հետ կապված հարցերի համար. դրանցից յուրաքանչյուրում առկա են որոշ տեսակի առողջապահական կետեր: Առողջապահության նախարարությունը ռազմավարական դերակատարություն ունի առողջությանը սպառնացող վտանգների ու համավարակ հիվանդությունների վերաբերյալ ՍԱԿ-ներ տեղեկատվություն ուղարկելու հարցում և առողջապահական բաժինների հայեցողությանն է թողնում տակտիկական մակարդակում այդ հարցերին արձագանքելու վերաբերյալ որոշում կայացնելու հարցը: Սահմանի անցման կետերում աշխատող բժշկական անձնակազմն ուղղակիորեն վերահսկվում է Առողջապահության նախարարության ստորաբաժանման կողմից, որի անվանումն է Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչություն, և որը պատասխանատու է ՍԱԿ-ների մասով Առողջապահության համաշխարհային կազմակերպության ցուցումների պահպանումն ապահովելու համար:

3.3 Օրենսդրական գնահատումը

Մուտքը

Հայաստանի Հանրապետության Կառավարության N 884 որոշմամբ ստեղծվել է իրավական հիմք սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու համար՝ մատնանշելով դրա առանցքային նպատակները, տվյալների հավաքման ու մշակման համար անհրաժեշտ կանոններն ու կանոնակարգերը: ԱԱԾ-ն սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի համակարգող մարմինն է և պատասխանատու է դրա պահպանման, մշակման ու ՍԷԿՏ համակարգի օգտվողի իրավունքներ ունեցող այլ պետական մարմինների հետ աշխատանքը համակարգելու համար: Այս տվյալների բանկի հիմնական նպատակն է ապահովել սահմանների արդյունավետ վերահսկողություն, այդ թվում՝ անկանոն միգրացիայի բացահայտումը, և միևնույն ժամանակ դյուրացնել իսկական ճամփորդողների մուտքը: Համակարգի հիմնական գործառույթներից է ՍԷԿՏ համակարգում՝ ներառյալ ահազանգման տարբեր ցուցակներում Հայաստան մուտք գործող և այնտեղից մեկնող անձանց անձնագրերի ու մուտքի վիզաների ստուգումը:

Սահմանների հսկողության և մուտքի վերաբերյալ հիմնական օրենսդրությունը «Օտարերկրացիների մասին», «Պետական սահմանի մասին»⁴³ և «Սահմանապահ զորքերի մասին»⁴⁴ օրենքներն են: «Օտարերկրացիների մասին» 2006 թվականի օրենքով⁴⁵ կարգավորվում են Հայաստան օտարերկրացիների օրինական մուտքը, տարանցումը, այնտեղ գտնվելը և ելքը, ինչպես նաև օտարերկրացիներին վերաբերվող այլ ոլորտներ:

«Օտարերկրացիների մասին» օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ օրինական մուտքը տեղի ունենում, երբ օտարերկրացին մուտք է գործում՝

- վավերական անձնագրով,
- վավերական մուտքի վիզայով, կամ
- վավերական կացության փաստաթղթով:

43 «Պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի պաշտոնական տեղեկագիր, թիվ 41(173), 2001 թվականի դեկտեմբերի 25 (այսուհետ՝ «Պետական սահմանի մասին» օրենք):

44 «Սահմանապահ զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի պաշտոնական տեղեկագիր, թիվ 41(173), 2001 թվականի դեկտեմբերի 25:

45 «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի 25-ին և փոփոխվել 2010 թվականի փետրվարի 2-ին:



Վավերական անձնագիրը

«Օտարերկրացիների մասին» օրենքով միայն տրվում է «անձնագիր բառի սահմանումը, սակայն օրենքով չի սահմանվում, թե երբ է անձնագիրը համարվում վավերական: Անձնագիրը կամ ճամփորդական փաստաթուղթը սահմանվում է որպես միջազգայնորեն ճանաչված՝ անձը հաստատող ճամփորդական փաստաթուղթ, որը տրված է օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից և իրավունք է տալիս հատելու պետական սահմանը:

Վավերական մուտքի վիզա. մուտքի վիզայի մասով պահանջները

Վավերական մուտքի վիզայի մասով պահանջը նախատեսված է «Օտարերկրացիների մասին» 6-րդ հոդվածով՝ որպես թույլտվություն Հայաստանի պետական կառավարման մարմնի կողմից. այդ փաստաթուղթն իրավունք է տալիս օտարերկրացուն կամ մուտք գործելու Հայաստանի տարածք, գտնվելու Հայաստանի տարածքում, դուրս գալու Հայաստանի տարածքից՝ մուտքի վիզայում սահմանված ժամկետում: Այնուամենայնիվ, ներկայիս մուտքի վիզան չի պարունակում կենսաչափական տվյալներ և չի էլ ծրագրվում ներդնել այդպիսի տվյալներ:⁴⁶

Վիզայի համակարգի վերաբերյալ անհրաժեշտ է ներկայացնել շատ կարճ նկարագրություն՝ համակարգը հստակեցնելու համար: Հայաստանում մուտքի վիզա ստանալու կարգը ներկայացված է 1-ին հավելվածում:

ա) Առանց մուտքի վիզայի ռեժիմը

Որոշ երկրների քաղաքացիների համար անհրաժեշտ չէ ներկայացնել մուտքի վիզա Հայաստան մուտք գործելիս, և նրանց թույլատրվում է գտնվել Հայաստանի տարածքում առավելագույնը 180 օր ժամկետով՝ մեկ տարվա ընթացքում:⁴⁷ Ներկայումս, Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) երկրների քաղաքացիների (բացառությամբ Թուրքմենստանի քաղաքացիների), ԵՄ քաղաքացիների և Շենգենյան գոտու երկրների քաղաքացիների համար չի պահանջվում մուտքի վիզա Հայաստան մուտք գործելիս: Առանց մուտքի վիզայի ռեժիմը սահմանվել է փոխադարձության սկզբունքի հիման վրա:⁴⁸ Բացի դրանից՝ N 1650-Ն որոշման համաձայն՝ առանց մուտքի վիզայի այցելության ռեժիմ է սահմանված Հանրապետության Նախագահի հրամանագրով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհված և դեռևս Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր չստացած անձանց համար:

բ) Հրավերի հիման վրա մուտքի վիզայի մասով պարտավորությունը

Ներկայումս 64 երկրների քաղաքացիներ կարող են մուտքի վիզա ստանալ արտերկրում

46 Գնահատման այցելություն Երևան, 2013 թվականի սեպտեմբեր:

47 Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 4-ի N 1255-Ն որոշմամբ՝ ԵՄ անդամ պետությունների և Շենգենյան կանոնագրքի (Acquis) պետությունների քաղաքացիների համար սահմանվել է առանց մուտքի վիզայի այցելությունների ռեժիմ 2013 թվականի հունվարի 10-ից: Բացի դրանից, առանց մուտքի վիզայի այցելությունների ռեժիմ է գործում նաև ԱՊՀ երկրների հետ, որը նախատեսվել է «ԱՊՀ երկրների քաղաքացիների համար անդամ պետությունների տարածքում առանց մուտքի վիզայի տեղաշարժման ազատության մասին» համաձայնագրով՝ վավերացված Բիշքեկում, Ղրղզստան, 1992 թվականի հոկտեմբերի 9-ին: Հայաստանը ստորագրել է երկկողմ համաձայնագիր Վրաստանի հետ 1993 թվականին իրենց քաղաքացիների համար առանց մուտքի վիզայի այցելությունների ռեժիմ:

48 Եվրոպական պառլամենտը վավերացրել է ԵՄ-Հայաստան վիզայի տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագիրը, որն ակնկալվում է, որ ուժի մեջ կմտնի 2013 թվականի դեկտեմբերի 1-ին: Նոր կանոններով վիզայի տրամադրման ընթացակարգերը կլինեն ավելի արագ, էժան և նվազ բյուրոկրատական:



գործող Հայաստանի դեսպանությունների հյուպատոսական բաժիններում՝ հրավերի հիման վրա:⁴⁹ Արտաքին գործերի նախարարությունը պատասխանատու է այդ մուտքի վիզաների տրամադրման համար, իսկ այդ հրավերների հաստատումն ու հաշվառումը կարգավորվում է 62-Ն որոշմամբ: Մուտքի վիզայի համար դիմողը, մյուս կողմից, կարող է չներկայացնել այլ օժանդակ փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ կացարանը, ճամփորդության նպատակը մատնանշող փաստաթղթեր, կացության բավարար միջոցների վերաբերյալ ապացույց կամ բժշկական ապահովագրություն, որը չի համապատասխանում միջազգային լավագույն գործելակերպին:

գ) Առանց հրավերի անհրաժեշտության մուտքի վիզայի մասով պարտավորությունը 2008 թվականի հոկտեմբերի 8-ի N 1154-Ն որոշման համաձայն՝ որոշ դեպքերում օտարերկրացիները կարող են ստանալ մուտքի վիզա հատուկ պայմաններով (մուտքի վիզայի համար դիմելիս հրավերի անհրաժեշտություն չկա), եթե օտարերկրացիները հետևյալ կատեգորիաներից մեկին են պատկանում՝

- Օտարերկրյա պետության՝ ազգությամբ հայ քաղաքացիները՝ հայկական ծագումը հաստատող կրոնական և համայնքային կառույցների, ինչպես նաև պետական մարմինների կողմից տրամադրվող փաստաթղթերի հիման վրա.
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և օտարերկրյա պետության՝ ծագումով հայ քաղաքացիների մերձավոր ազգականները (ծնող, եղբայր, քույր, ամուսին, զավակ, տատ, պապ, թոռ)՝ անմիջական ազգակցությունն ապացուցող պաշտոնական փաստաթղթերի հիման վրա.
- օտարերկրյա պետության դիվանագիտական և ծառայողական (պաշտոնական, հատուկ) անձնագրեր ունեցող քաղաքացիները, եթե չի գործում տվյալ օտարերկրյա պետության հետ այդ անձանց առանց մուտքի վիզայի այցելությունների ռեժիմը.
- օտարերկրյա պետության պաշտոնական պատվիրակությունների անդամները՝ օտարերկրյա պետության արտաքին գործերի նախարարության կամ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության գտնվելու վայրի նստավայր պետությունում հավատարմագրված օտարերկրյա պետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի հայտագրի հիման վրա.
- օտարերկրյա պետության այն քաղաքացիները, ովքեր աշխատում են դիվանագիտական կարգավիճակ ունեցող միջազգային կազմակերպություններում՝ այդ կազմակերպությունների գլխակայանների կամ ներկայացուցչությունների հայտագրերի հիման վրա.
- օտարերկրյա պետության այն քաղաքացիները, որոնց գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում նպաստում է տնտեսական կյանքի զարգացմանը.
- Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի ղեկավարի հայեցողությամբ՝ առանց հրավերի Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա կարող է տրվել նաև ԱՄՆ-ում, Ավստրալիայում, Կանադայում, Ճապոնիայում, Միացյալ Թագավորությունում, Նոր Զելանդիայում,

49 Հայաստանի Հանրապետության Կառավարության 2008 թվականի ապրիլի 4-ի 329-Ն որոշում, այն պետությունների ցանկը հաստատելու մասին, որոնց քաղաքացիները Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա ստանալու համար կարող են դիմել միայն օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններ և հյուպատոսական հիմնարկներ և միայն հրավերի հիման վրա, Հայաստանի պաշտոնական տեղեկագիր թիվ 24 (614), 2008 թվականի ապրիլի 23՝ հետագայում փոփոխված 2011 թվականի հուլիսի 14-ի թիվ 966-Ն որոշմամբ, 2012 թվականի հունիսի 28 թիվ 823-Ն որոշմամբ, 2012 թվականի հուլիսի 26-ի թիվ 941-Ն որոշմամբ (այսուհետ՝ Կառավարության թիվ 329-Ն որոշում)



Շենգենի համաձայնագրի երկրներում (բացառությամբ Հունաստանի, Իսպանիայի և Պորտուգալիայի) և Շվեյցարիայի Համադաշնությունում մշտական բնակչի կարգավիճակ ունեցող՝ օտարերկրյա պետությունների (բացառությամբ Աֆրիկայի մայրցամաքի (բացառությամբ Եգիպտոսի), Աֆղանստանի, Պակիստանի և Սաուդյան Արաբիայի) քաղաքացիներին.

- այլ կատեգորիայի անձանց՝ համաձայն օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության միջև ձեռք բերված պայմանավորվածության:

Ազգությամբ հայ լինելու հանգամանքը, N 1/1199-Ն հրամանի համաձայն, պետք է հիմնավորվի որոշակի փաստերով, ինչպիսիք են՝ անձնագիրը, հայերենի իմացությունը, հայկական անունը և մկրտության մասին վկայականը:⁵⁰ Ներկայումս, որևէ դրույթով չի կարգավորվում «հայկական ծագում/էթնիկ պատկանելություն» հասկացությունը: Սփյուռքի ներկայացուցիչների կողմից քաղաքացիություն ձեռք բերելու վերաբերյալ օրենքի նախագիծը ներկայումս մշակման փուլում է և ծրագրվում է, որ դրանում հստակ կտրվի հայկական ծագում/էթնիկ պատկանելություն» հասկացության սահմանումը:

դ) Սահմանին ստացվող մուտքի վիզաները և էլեկտրոնային մուտքի վիզաները

Մուտքի վիզաները սահմանին տրամադրվում են Ոստիկանության կողմից մոտ 20 երկրների քաղաքացիներին, որոնց շարքում են, օրինակ, ԱՄՆ-ի քաղաքացիները: Այդ քաղաքացիները նաև իրավունք ունեն մուտքի վիզայի համար դիմելու էլեկտրոնային եղանակով (էլ. մուտքի վիզաներ): Հայաստանը ներդրել է էլ. մուտքի վիզաները 2002 թվականին և առաջին երկրներից էր, որ ներդրեց այդ համակարգը: Դիմումի քննարկման գործընթացը սովորաբար տևում է 2 օր:

Ընթացակարգը հետևյալ տեսքն ունի՝

Օտարերկրացին մուտքի վիզայի համար դիմում է տանը → վճարում է մուտքի վիզայի վճարը → առցանց հետևում է իր դիմումին եզակի համարի միջոցով՝ տեսնելու, թե արդյոք որոշումը դրական է → տպում է մուտքի վիզայի հաստատումն ու ներկայացնում այն ժամանելիս: Էլ. մուտքի վիզան արդեն ՍԷԿՏ համակարգում է և նաև ստուգվում է ՍԷԿՏ ահազանգման ցանկում:

Գոյություն ունի հայկական մուտքի անձնագրերի չորս կատեգորիաներ՝

- **այցելության մուտքի վիզա՝** տրամադրվում է, երբ օտարերկրացին մտադիր է մուտք գործել Հայաստան կարճաժամկետ հիմունքներով երկրում գտնվելու համար՝ զբոսաշրջության, հարազատներին կամ այլ անձանց այցելելու, գործարար նպատակներով, փոխադրումներ իրականացնելու, այլ մասնագիտական հետաքրքրությունների ու բուժման նպատակով: Այցելության մուտքի վիզա կարող է տրամադրվել մեկանգամյա մուտքի կամ մինչև մեկ տարի վավերականության ժամկետով բազմակի մուտքի համար:
- **պաշտոնական մուտքի վիզա՝** պաշտոնական կամ ծառայողական անձնագիր կրող անձանց համար՝ բազմակի կամ մեկ մուտքի հնարավորությամբ:
- **դիվանագիտական մուտքի վիզա՝** դիվանագիտական անձնագիր կրող կամ դիվանագիտական կարգավիճակ ունեցող անձանց համար՝ բազմակի կամ մեկ մուտքի հնարավորությամբ:
- **տարանցիկ մուտքի վիզա՝** մեկ մուտքի կամ մեկ տարի վավերականության ժամկետով

⁵⁰ Ազգությամբ հայ լինելու հանգամանքը հիմնավորող փաստաթուղթը օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ ներկայացնելու և ներկայացված փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի կողմից հաստատելու կարգ:



բազմակի մուտքի համար մինչև 3 օր գտնվելու ժամկետով՝ առավելագույնը մինչև 4 օր երկարաձգելու հնարավորությամբ:

ԱԳՆ-ն տրամադրում ու երկարաձգում է պաշտոնական ու դիվանագիտական մուտքի վիզաները, էլ. մուտքի վիզաները և խմբակային մուտքի վիզաները, Ոստիկանության անձնագրային ու վիզաների վարչությունը տրամադրում է անհատներին այցելության ու տարանցիկ մուտքի վիզաներ:

Վավերական կացության փաստաթուղթը. կացության թույլտվությունների մասով պահանջները

Կացության թույլտվությունը տրամադրվում է Հայաստանի իշխանությունների կողմից մուտքի վիզայի վավերականության ժամկետը լրանալուց հետո, և եթե պահպանվել են մյուս նախապայմանները:

Գոյություն ունեն կացության կարգավիճակի երեք տարբեր տեսակներ⁵¹

- **Ժամանակավոր կացության կարգավիճակը** տրվում է Ոստիկանության կողմից (ուսման, աշխատանքի, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով, ինչպես նաև Հայաստանի քաղաքացու հետ ամուսնանալու կամ Հայաստանի քաղաքացու մերձավոր ազգականին, և տրվում է ժամանակավոր կացության քարտ առավելագույնը մեկ տարի վավերականության ժամկետով՝ ժամկետի երկարաձգման հնարավորությամբ:
- **Մշտական կացության կարգավիճակը** տրվում է Ոստիկանության կողմից (Հայաստանի Հանրապետությունում մերձավոր ազգականներ, այն անձանց, որոնք ապահովված են բնակարանով ու գոյության միջոցներով, եթե երեք տարի բնակվել են Հայաստանի Հանրապետությունում),⁵² որը հիմնավորվում է մշտական կացության կարգավիճակի տրամադրմամբ 5 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ նույն ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ:
- **Հատուկ կացության կարգավիճակ**⁵³ (տրվում է ազգությամբ հայ օտարերկրացիներին, ինչպես նաև նաև Հայաստանի Հանրապետությունում տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալող այլ օտարերկրացիների), որը հիմնավորվում է հատուկ անձնագիր տրամադրելով՝ տասը տարի ժամկետով. այն կարող է տրվել մեկից ավելի անգամ:

Եթե օտարերկրացին ցանկանում է Հայաստանում կատարել վարձատրվող աշխատանք, ապա «Օտարերկրացիների մասին» օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ նա պետք է այդ աշխատանքը կատարի աշխատանքի թույլտվության հիման վրա: Օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ որոշ դեպքերում օտարերկրացիներն ազատվում են աշխատանքի թույլտվության պահանջից, մասնավորապես այն դեպքերում, երբ օտարերկրացիներին տրամադրվել է մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ, կամ եթե օտարերկրացին Հայաստանի Հանրապետության քաղաքացու մերձավոր ազգականն է կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու մերձավոր ազգականը:

Չնայած որ Հայաստանում գործում է օտարերկրացիների զբաղվածության վերաբերյալ

51 «Օտարերկրացիների մասին» օրենքի 14-18-րդ հոդվածներ:

52 «Օտարերկրացիների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, թույլտվությունը կարող է տրամադրվել նաև ազգությամբ հայի կամ Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող օտարերկրացու:

53 Տրվում է Ոստիկանության կամ արտերկրում գտնվող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի կողմից՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի որոշման հիման վրա:



օրենսդրություն, այնուամենայնիվ աշխատանքի թույլտվություն տրամադրելու ընթացակարգերի ու պայմանների վերաբերյալ երկրորդային օրենսդրության բացակայության պատճառով՝ «Օտարերկրացիների մասին» օրենքի 4-րդ գլուխը⁵⁴ մինչ այժմ չի կիրարկվել:⁵⁵

Գործնականում Ոստիկանությունը օտարերկրացիներին տրամադրում է ժամանակավոր կացության քարտեր աշխատանքի նպատակով, երբ հնարավոր միգրանտ աշխատողը հովանավորվում է գործատուի կողմից, որը նշանակում է, որ օտարերկրացու կողմից աշխատանքային շուկա մուտք ունենալու գործընթացը չի վերահսկվում կամ կարգավորվում, իսկ աշխատանքային շուկան ամբողջությամբ բաց է օտարերկրյա քաղաքացիների համար՝ բացառությամբ Հայաստանի քաղաքացիների համար նախատեսված պաշտոններից: Հետևաբար, շարունակում է գերակայություն մնալ աշխատանքի թույլտվության համակարգի վերաբերյալ երկրորդային օրենսդրության ընդունումը:⁵⁶

Անօրինական հիմունքներով երկրում գտնվող օտարերկրացիներին աշխատանքի ընդունած գործատուների նկատմամբ պատժամիջոցներին վերաբերող օրենսդրությունը սահմանափակ է, իսկ գործատուն պարտավորություն չունի իր մոտ պահելու օտարերկրացու կացության քարտի կամ աշխատանքի թույլտվության պատճենը, ոչ էլ ծանուցելու համապատասխան մարմիններին օտարերկրյա քաղաքացու զբաղվածության մասին: Ինչ վերաբերվում է անօրինական հիմունքներով աշխատանքի ընդունված օտարերկրացիներին, ապա չի գործում ոչ մի մեխանիզմ, որը նրանց հնարավորություն կտար երաշխավորելու չկատարված վարձատրության վճարումը:

Օտարերկրացուն մուտքի վիզայի տրամադրումը, ժամկետի երկարաձգումը մերժվում է, տրամադրված մուտքի վիզան ուժը կորցրած է ճանաչվում կամ մուտքը Հայաստանի Հանրապետություն արգելվում է կոնկրետ դեպքերում, որոնք նշված են «Օտարերկրացիների մասին» օրենքի 8-րդ հոդվածով: Դրանք հետևյալ դեպքերն են՝

- օտարերկրացին արտաքսվել է Հայաստանի Հանրապետության տարածքից կամ զրկվել է կացության կարգավիճակից, և արտաքսման կամ կացության կարգավիճակից զրկելու մասին որոշման ուժի մեջ մտնելու պահից չի անցել երեք տարի.
- օտարերկրացին «Օտարերկրացիների մասին» օրենքը խախտելու համար ենթարկվել է վարչական պատասխանատվության և չի կատարել վարչական ակտով իր վրա դրված պարտականությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական պատասխանատվության ենթարկվելու պահից անցել է մեկ տարի.
- գոյություն ունեն հավաստի տվյալներ, որ օտարերկրացին իրականացնում է այնպիսի գործունեություն, մասնակցում, կազմակերպում կամ հանդիսանում է այնպիսի կազմակերպության անդամ, որի նպատակն է՝ վնաս պատճառել Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը, տապալել սահմանադրական կարգը, թուլացնել պաշտպանունակությունը, իրականացնել ահաբեկչական գործունեություն, սահմանով ապօրինաբար (առանց համապատասխան թույլտվության) տեղափոխել զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր, ռադիոակտիվ նյութեր, թմրանյութեր, հոգեներգործուն նյութեր կամ իրականացնել մարդկանց առևտուր (թրաֆիքինգ) և (կամ) անօրինական սահմանափակումներ.
- օտարերկրացին տառապում է վարակիչ հիվանդությամբ, որը սպառնում է բնակչության առողջությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ նա մուտք է գործում Հա-

54 «Օտարերկրացիների մասին» օրենքի 4-րդ գլուխ, «Օտարերկրացիների աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում»:

55 ՄՄԿ, Աշխատանքային միգրացիան Հայաստանում. առկա միտումները և քաղաքականության տարբերակները, Երևան, 2012, էջ 17:

56 Նույն տեղում, Աշխատանքային միգրացիան Հայաստանում, էջ 17:



յաստանի Հանրապետություն՝ նման հիվանդությունը բուժելու նպատակով.

- օտարերկրացին մուտքի թույլտվություն հայցելիս ներկայացրել է իր մասին կեղծ տեղեկություններ կամ չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթեր, կամ գոյություն ունեն տվյալներ այն մասին, որ նրա մուտքը կամ գտնվելը Հայաստանի Հանրապետությունում ունի այլ նպատակ, քան հայտարարվածը, կամ
- գոյություն ունեն օտարերկրացու կողմից Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը կամ հասարակական կարգին այլ լուրջ և հիմնավոր սպառնալիքներ.
- օտարերկրացին դատապարտվել է Հայաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով չի հանվել կամ մարվել:

Բացի վերը նշված պատճառներից՝ օտարերկրացուն տրամադրված մուտքի վիզան ուժը կորցրած է ճանաչվում, եթե նա աշխատանքի է անցել Հայաստանի Հանրապետությունում առանց աշխատանքի թույլտվության:

Մուտքի վիզայի տրամադրման, մուտքի վիզայի ժամկետի երկարաձգման, մերժման, մուտքի վիզան ուժը կորցրած ճանաչելու կամ մուտքի մերժման մասին օտարերկրացու անձնագրում կատարվում է գրառում, իսկ անձանց մասին տվյալները մտցվում են ԱԱԾ-ի կողմից վարվող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում անցանկալի համարվող օտարերկրացիների տվյալների բանկ:⁵⁷ ԱԱԾ-ի համաձայն՝ 2013 թվականի հունվարի ու 2013 թվականի սեպտեմբերի միջև ընկած ժամանակահատվածում արձանագրվել է մուտքի մերժման 190 դեպք:⁵⁸

Կարևոր է նշել, որ «Օտարերկրացիների մասին» օրենքով չի նախատեսվում օտարերկրացու մուտքը մերժած սահմանային հսկողություն իրականացնող մարմինների որոշումների բողոքարկումը, որը չի համապատասխանում միջազգային գործելակերպերին:

Ինչ վերաբերում է անդրազգային հանցավորությանը, ապա Հայաստանը հանդիսանում է «Անդրազգային հանցավորության դեմ պայքարի» ՄԱԿ-ի կոնվենցիայի, ինչպես նաև դրա երկու արձանագրությունների կողմ պետություն, որոնցով թիրախավորվում են մարդկանց մաքսանենգ ճանապարհով տեղափոխման ու թրաֆիքինգի հետ կապված հարցերը:⁵⁹ Բացի դրանից՝ Հայաստանը ստորագրել է «Անօրինական միգրացիայի դեմ պայքարում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագիրը, ինչպես նաև մասնակցում է անկանոն միգրացիայի դեմ պայքարին միտված՝ ԱՊՀ մասնակից երկրների մյուս աշխատանքներին, ինչպիսիք են՝ վերը նշված Նելեգալ միջոցառումները:

Ինչ վերաբերում է անկանոն միգրացիային, ապա դրան վերաբերող սահմանում Հայաստանի օրենսդրությամբ տրված չէ: Հայաստանի քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերում անկանոն միգրացիային տրվող սահմանումը հետևյալն է՝

57 «Օտարերկրացիների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մաս:

58 Տեղեկատվությունը ձեռք է բերվել գնահատման այցի ընթացքում:

59 «Ցամաքով, ծովով և օդով միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխման դեմ» արձանագրություն և Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, խափանման և պատժի մասին արձանագրություն:



- «Այն անձինք, որոնք մուտք են գործել համապատասխան երկիր առանց թույլտվության
- Այն անձինք, որոնք մուտք են գործել համապատասխան երկիր օրինական հիմունքներով, բայց, այնուամենայնիվ՝ չեն երկարաձգել իրենց աշխատանքի թույլտվության ժամկետը, մնացել են երկրում ապաստանի վերաբերյալ իրենց դիմումը մերժելուց հետո, որոնց գտնվելը տվյալ երկրում չի համապատասխանում մուտքի թույլտվության մեջ սահմանված նպատակին, որոնք գտնվում են համապատասխան երկրում ավելի երկար, քան նշված է մուտքի թույլտվությունում կամ օրենքով սահմանված ժամկետն է:»⁶⁰

Ապօրինի սահմանահատումների հետ կապված դեպքերը սահմանված են Քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածով՝ որպես «Առանց սահմանված փաստաթղթերի կամ առանց պատշաճ թույլտվության Հայաստանի Հանրապետության պահպանվող պետական սահմանը հատելը»:

Քրեական օրենսգրքի համաձայն՝ անկանոն միգրացիային վերաբերող, բացի անօրինական մուտքից, մյուս իրավախախտումներն են՝

- առանց համապատասխան կացության կարգավիճակի (աշխատանքի թույլտվության) ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը:⁶¹
- խարդախությունը,⁶² փաստաթղթերը, դրոշմները, կնիքները հափշտակելը և վնասելը:⁶³
- փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, տրանսպորտային միջոցների պետհամարանիշներ կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը:⁶⁴
- պաշտոնական փաստաթղթեր կամ պետական պարգևներ ապօրինի ձեռք բերելը կամ իրացնելը:⁶⁵
- Այն օտարերկրացիները, որոնք ապօրինաբար սահմանահատում են կատարել պետական սահմանային անցման կետից դուրս կամ ծայտյալ եղանակով (օրինակ բեռնատարներում թաքնված):⁶⁶

Ինչ վերաբերում է սահմանը ապօրինի հատելուն, ապա այս իրավախախտման համար պատժամիջոցը անհամաչափ բարձր է՝ առավելագույնը մինչև երեք տարի ժամկետով ազատազրկում: Գնահատման այցի ընթացքում նշվել է, որ հետապնդում է իրականացվել սահմանն ապօրինի հատելու գրեթե 50 դեպքի մասով, իսկ իրավախախտները հիմնականում հայեր են եղել: Միգրանտների մաքսանենգությունը քրեականացված չէ, չնայած որ արդեն առկա է Քրեական օրենսգրքի 329.1 հոդված պարունակող նախագիծ, որը կոչվում է «Անօրինական միգրացիայի կազմակերպումը», որն ուժի մեջ կմտնի 2014 թվականին:⁶⁷ Սահմանումը, այնուամենայնիվ, ամբողջությամբ չի համապատասխանում «Ցամաքով, ծովով և օդով միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխման դեմ» ՄԱԿ-ի արձանագրությունում (այսուհետ՝ Մաքսանենգության մասին արձանագրություն) տրված սահմանմանը, որի 3-րդ հոդվածում տրված է հետևյալ սահմանումը՝ «գնում՝ **ստանալու**

60 Քաղվածք, Նիստի արձանագրություններ, Հայաստանի Հանրապետության Կառավարություն, Հայաստանի Հանրապետությունից սկզբից առնող անօրինական միգրացիայի ուսումնասիրման ու կանխարգելման վերաբերյալ հայեցակարգ:

61 Քրեական օրենսգրքի 188-րդ հոդված:

62 Քրեական օրենսգրքի 178-րդ հոդված:

63 Քրեական օրենսգրքի 324-րդ հոդված:

64 Քրեական օրենսգրքի 325-րդ հոդված:

65 Քրեական օրենսգրքի 326-րդ հոդված:

66 Քրեական օրենսգրք, Բաժին 12, «Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ», Գլուխ 32 «Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ» և Հոդված 329 «Պետական սահմանն ապօրինի հատելը»:

67 Տեղեկատվությունը ստացվել է գնահատման այցի ընթացքում 2013 թվականի սեպտեմբերին, Հարցազրույց Ոստիկանությունում ու Գլխավոր դատախազությունում:



համար, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, ֆինանսական կամ այլ նյութական օգուտ, այն անդամ պետություն որևէ անձի անօրինական մուտքից, որի քաղաքացին կամ մշտական բնակիչը չի հանդիսանում այդ անձը»:

Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծում 329.1 հոդվածը⁶⁸ պարունակում է հետևյալ բովանդակությունը՝ առանց մատնանշելու «շահադիտական նպատակ» հասկացության իմաստը և պատժամիջոց սահմանելով նաև, բացի մուտքից, տարանցման, գտնվելու և ելքի համար:

- «1. Անձի Հայաստանի Հանրապետություն մուտքը, Հայաստանի Հանրապետությունից ելքը, Հայաստանի Հանրապետությունում գտնվելը կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությանը պարանցումը շահադիտական նպատակով կազմակերպելը պարժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացու Հայաստանի Հանրապետությունից ելքը, Հայաստանի Հանրապետություն մուտքը կամ Հայաստանի Հանրապետությունից ելքը կամ Հայաստանի Հանրապետությունում գտնվելը շահադիտական նպատակով կազմակերպելը պարժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:
3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված գործողությունը, որը կատարվել է՝
 - 1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ.
 - 2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ.
 - 3) մարդու կյանքի կամ առողջության համար վրանգավոր կամ անձի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող պայմաններում.
 - 4) պաշտոնական դիրքն օգտագործելով՝ պարժվում է ազատազրկմամբ երեքից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

Առաջարկվում է, որպեսզի կիրառվեն վարչական, և ոչ թե քրեական պատժամիջոցներ սահմանն ապօրինի հատելու համար, եթե չի հաստատվել քրեական բնույթի որևէ դիտավորություն, և նախատեսել նաև Քրեական օրենսգրքում «միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխման» վերաբերյալ դրույթ՝ Մաքսանենգության մասին արձանագրության իմաստով:

Սահմանն ապօրինի հատելու փորձերի մեծ մասը կապված է փաստաթղթերի կեղծման հետ և արձանագրվում է Երևանի մերձակայքում գտնվող «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում: Մյուս ՍԱԿ-ներում, ԱԱԾ-ի համաձայն, արձանագրվել են աննշան թվով սահմանն ապօրինի հատելու դեպքեր, որոնցում ներգրավված են հիմնականում Հայաստանի քաղաքացիներ, որոնք դուրս են գալիս երկրից կեղծ փաստաթղթերով (վիզաներով): Ներկայումս «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում արձանագրված՝ սահմանն ապօրինի հատելու գործողությունները կատարվում են Իրանի քաղաքացիների կողմից, որոնք մուտք են գործում Հայաստան կեղծ անձնագրերով: Եթե նրանք չեն կարողանում ներկայացնել անձը հաստատող իրենց իսկական փաստաթղթերը, նրանց սովորաբար վերադարձնում են ծագման (տարանցման) երկիր՝ ավիաընկերության միջոցով՝

⁶⁸ Հայերենից ոչ պաշտոնական թարգմանություն, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում (2003 թվականի ապրիլի 18-ի) լրացում կատարելու մասին օրենքի նախագիծ, լրացվել է Հոդված 329.1-ով:



փոխադրողի պարտավորության վերաբերյալ համաձայնագրերին համապատասխան:⁶⁹ Հետաքրքիր է, որ կեղծ փաստաթղթերով ճամփորդող օտարերկրացիները հիմնականում չեն ձերբակալվում: Կեղծ փաստաթղթերն առգրավվում են, և հենց որ նրանք ներկայացնում են անձը հաստատող իրենց իսկական փաստաթղթերը, նրանց թույլ է տրվում շարունակել իրենց ճամփորդությունը:⁷⁰

3.4 Ապաստանը

Կարևոր է նշել, որ «Օտարերկրացիների մասին» օրենքը չի տարածվում այն անձանց վրա, որոնք դիմում են միջազգային պաշտպանության համար Հայաստանում,⁷¹ այլ ՀՀ Սահմանադրությունը, «Քաղաքական ապաստանի մասին» ՀՀ օրենքը և «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքն է սահմանում Հայաստանում ապաստան հայցողներին և փախստականներին ապաստան տրամադրելու և նրանց նկատմամբ վերաբերմունքի հետ կապված իրավական հիմքը:

«Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ հոդվածի համաձայն՝ ապաստանի համար կարելի է դիմել սահմանին և Հայաստանի տարածքում: 2013 թվականի սեպտեմբերին գնահատման այցի ընթացքում Միգրացիոն պետական ծառայությունում անցկացված հարցազրույցներից պարզ դարձավ, որ վերջին 13 տարիների ընթացքում առավելագույնը հինգ դիմում է ներկայացվել ապաստանի համար սահմանային անցման կետերում:⁷² Ապաստանի համար դիմումը կարելի է ներկայացնել գրավոր կամ բանավոր:⁷³ Տարբեր ընթացակարգեր են գործում սահմանին ապաստան հայցողների, Հայաստանի տարածքում անօրինական գտնվող անձանց և Հայաստանի տարածքում օրինական հիմունքներով գտնվող անձանց համար: Սահմանին ապաստանի համար դիմելու դեպքում, սահմանապահները հաշվառում են ապաստանի համար դիմումը և տեղեկացնում են այդ մասին ՄՊԾ-ին: Ապաստան հայցողներին ուղղորդում են կամ ինքնուրույն այցելել ՄՊԾ, կամ ՄՊԾ-ն է նրանց տեղափոխում՝ իրենց աշխատանքային տարածքում դիմումը հաշվառելու համար: Մինչդեռ այն ապաստան հայցողները, որոնք օրինական հիմունքներով են մուտք գործել Հայաստան, տեղավորվում են Ապաստան հայցողների ընդունման կենտրոններում և օգտվում են ազատ տեղաշարժվելու իրավունքից, առանց վավերական մուտքի վիզայի կամ վավերական ճամփորդական փաստաթղթի Հայաստանում անօրինական հիմունքներով գտնվողները կարող են պահվել հատուկ կացարանում մինչև 72 ժամ տևողությամբ, որից հետո նրանք պետք է տեղափոխվեն սույն օրենքի 46-րդ հոդվածով սահմանված ժամանակավոր տեղավորման կենտրոն:⁷⁴ Գործում են նաև ծագումով հայ ապաստան հայցողների համար հատուկ ընթացակարգեր. այդ դեպքում, չի պահանջվում անցնել կարգավիճակի որոշման այդ ամբողջ ընթացակարգով:⁷⁵

«Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 28-րդ հոդվածով նաև նշվում է, որ ապաստան հայցողները Հայաստանի Հանրապետություն ապօրինի մուտք գործելու կամ գտնվելու համար չեն ենթարկվում քրեական կամ վարչական պատասխանատվության: Այնուամենայնիվ, չհաստատված որոշ հաղորդումների համաձայն՝ եղել են դեպքեր, երբ

69 Տեղեկատվությունը ստացվել է ԱԱԾ-ից գնահատման այցի ընթացքում 2013 թվականի սեպտեմբերին:

70 Տեղեկատվությունը ստացվել է ԱԱԾ-ից գնահատման այցի ընթացքում 2013 թվականի սեպտեմբերին:

71 «Օտարերկրացիների մասին» օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մաս:

72 Տեղեկատվությունը ստացվել է գնահատման այցի ընթացքում, ՄՄԿ, 2013 թվականի սեպտեմբեր, Երևան:

73 Կարող է օգտագործվել նաև ժեստերի լեզուն:

74 «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 47-րդ հոդված:

75 Հարցազրույց Հայաստանում ՄԱԿ ՓԳՀ-ի հետ, 2013 թվականի սեպտեմբեր, Երևան:



ապաստան հայցողներ պահվել են «Վարդաշեն» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում՝ անօրինական մուտքի պատճառով: Որոշ դեպքերում, նրանք ազատ չեն արձակվել, քանի դեռ չեն ստացել փախստականի կարգավիճակ:⁷⁶

3.5 Ձերբակալումը և ձերբակալման այնտրանքային միջոցները

Օտարերկրացիները պահվում են հատուկ հաստատություններում, մինչև պարզվում է նրանց ինքնությունը, այն դեպքերում, երբ հնարավոր չէ վերադարձնել նրանց ծագման (տարանցման) պետություն, քանի որ նրանք չունեն իսկական ճամփորդական փաստաթղթեր, կամ քանի որ սահմանի անցման կետում նրանց մերժվել է մուտքի վիզայի տրամադրումը կամ մուտքն առհասարակ: Բացի դրանից՝ անկանոն կարգավիճակով միգրանտները ձերբակալվում են սահմանն ապօրինի հատելու համար, որ Հայաստանի քրեական օրենսգրքով պատժելի հանցագործություն է:

Ինչ վերաբերում է սահմանի անցման կետերում կարճ ժամանակով ձերբակալման հետևանքով միգրանտներին անազատության մեջ պահելուն, ապա Հայաստանի Հանրապետության Կառավարությունը 2013 թվականի հուլիսին ընդունել է որոշում Հայաստանի Հանրապետության սահմանային անցման կետերում և տարանցիկ գոտիներում հատուկ կացարանների գործունեության մասին:⁷⁷ Այդ որոշումն ուժի մեջ է մտել 2013 թվականի օգոստոսին:

Որոշմամբ կարգավորվում է սահմանային անցման կետերում օտարերկրացիներին կարճ ժամանակով տեղավորելու, պահելու և ազատելու վերաբերյալ ընթացակարգը:⁷⁸ Ինչպես նախատեսված է «Օտարերկրացիների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ սահմանապահները օտարերկրացիներին ուղեկցում են հատուկ կացարան: Սահմանի անցման յուրաքանչյուր կետում պետք է լինի հատուկ կացարան՝ օտարերկրացիների նույնականացումն ու նախնական ստուգումը դյուրացնելու և համապատասխան վերաբերմունք ու ուղղորդում ապահովելու համար:⁷⁹ Ներկայումս օտարերկրացիների ընդունման վայրեր են գործում սահմանի անցման երկու կետում, մեկը՝ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում, իսկ մյուսը՝ Բագրատաշենի ՍԱԿ-ում, որը ներկայումս վերանորոգվում է ԵՀ կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում:⁸⁰ Այս ծրագրով իրականացվելու է նաև Վրաստանի հետ մյուս երկու ՍԱԿ-ների (Բավրա և Գոգավան) վերակառուցումը, այդ թվում՝ կացարանով ապահովման հատուկ կենտրոնների կառուցումը, որն ավարտին կհասցվի 2015 թվականի վերջում:

Ինչ վերաբերում է ձերբակալված օտարերկրացիների իրավունքներին, ապա այդ իրավունքները պետք է լինեն նույնն ինչ այն իրավունքները, որոնք սահմանված են «Օտարերկրացիների մասին» օրենքի 39-րդ հոդվածով: Այդ իրավունքները ներառում են՝

- օտարերկրացուն հասկանալի լեզվով կամ թարգմանչի միջոցով իմանալ իր ձերբակալման և պահման պատճառների մասին,

76 Հարցազրույց ՄԱԿ ՓԳՀ-ի հետ, 2013 թվականի սեպտեմբեր, Երևան:

77 «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում ու տարանցիկ գոտիներում հատուկ կացարանների գործունեության և օտարերկրացիներին այնտեղ պահելու կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության N 783-Ն որոշում:

78 Կացարանով ապահովման հատուկ կենտրոններում օտարերկրացիներին պահելու համար նախատեսվում է առավելագույնը 72 ժամ:

79 Ապաստան հայցողների դեպքում, նրանք տեղավորվում են հատուկ կացարանում, մինչև նրանց ապաստանի դիմումն ընդունվում ու հաշվառվում է. տես N 788-Ն որոշման հավելվածը:

80 ՄԱԿ ԶԾ-ի կողմից ղեկավարվող ծրագիր, որը կոչվում է «Հայաստանի Հանրապետության Բագրատաշեն, Բավրա և Գոգավան սահմանի անցման կետերի արդիականացում»:



- բողոքարկել դատարանի՝ իր վերաբերյալ կայացրած ցանկացած որոշում,
- իրավական ներկայացուցչի (ներառյալ՝ հասարակական կազմակերպությունների), ծագման պետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի պաշտոնյայի այցելության,
- դիմել դատարան իրեն ազատ արձակելու դիմումով, և
- ստանալ անհրաժեշտ բժշկական օգնություն:

Բացի դրանից՝ կացարանով ապահովման հատուկ կենտրոնում պահվող օտարերկրացիների կողմից ներկայացվող առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկվում են օրենքով սահմանված կարգով:⁸¹

Ինչ վերաբերում է անվճար իրավաբանական օգնությանը՝ ապա «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսվում են դեպքեր, երբ հասանելի է անվճար իրավաբանական օգնությունը, սակայն ո՛չ անկանոն կարգավիճակով միգրանտները, և ո՛չ էլ ապաստան հայցողները այդ օգնությունից օգտվողների շարքում նշված չեն: Ներկայումս, ապաստան հայցողներին անվճար իրավաբանական օգնություն է տրամադրում Երիտասարդ իրավաբանների ընկերակցություն հասարակական կազմակերպությունը, որի աշխատակիցները վերապատրաստվել են ՄԱԿ ՓԳՀ կողմից և սերտորեն համագործակցում են Հանրային պաշտպանի գրասենյակի հետ:

Ինչ վերաբերում է հենց բուն պահելու կառույցներին, ապա սահմանին տեղակայված ընդունման հատուկ հաստատությունները փակ տիպի ընդունման կենտրոններ են: N 783-Ն որոշման համաձայն՝ այդ կառույցները պետք է պարունակեն առանձնացված կացարաններ՝ ըստ սեռի, քաղաքացիության կամ կրոնի, ինչպես նաև առանձին կացարաններ ընտանիքների ու հիվանդ (հաշմանդամ) անձանց համար:⁸²

Օտարերկրացիները հատուկ կացարաններում պահվում են սահմանապահ զորքերի սահմանային վերահսկողության ստորաբաժանման պետի կամ նրան փոխարինող անձի որոշման հիման վրա, իսկ դրա վերաբերյալ գրանցում է կատարվում համապատասխան մատյաններում՝⁸³ այդ մասին ծանուցելով հատուկ կացարաններում տեղավորված անձանց: Բացի դրանից՝ հատուկ կացարաններում պահվող օտարերկրացիների նկատմամբ հսկողությունն իրականացվում է սահմանային վերահսկողության ստորաբաժանման հերթափոխի անձնակազմի կողմից՝ հերթափոխի պետի պատասխանատվությամբ:⁸⁴

Նախքան օտարերկրացիների այդ կացարաններում տեղավորելը՝ պետք է անցկացվի բժշկական ստուգում ՄԱԿ-ում տեղակայված բժշկական ու սանիտար-կարանտինային կետի կողմից, պարզելու վարակիչ հիվանդությամբ վարակված օտարերկրացիներին և տրամադրելու անհրաժեշտ բժշկական աջակցություն (բժշկական օգնություն):

Ինչ վերաբերվում է այն օտարերկրացիների կատեգորիաներին, որոնք պետք է տեղավորվեն սահմանին գտնվող հատուկ կացարաններում, ապա դրանք այն օտարերկրացիներն են, որոնք չեն կարող վերադարձվել ծագման (տարանցման) երկիր, և

- որոնք ժամանել են ՄԱԿ առանց անձնագրի կամ անվավեր անձնագրով.
- որոնց մուտքի վիզան մերժվել է ՄԱԿ-ում.
- որոնք մուտքի թույլտվություն չեն ստացել սահմանային հսկողություն իրականացնող մարմնի կողմից.

81 N 783-Ն որոշման հավելվածի 23-րդ կետ:

82 N 783-Ն որոշման հավելվածի 8-րդ կետ:

83 N 783-Ն որոշման հավելվածի 4-րդ կետ:

84 N 783-Ն որոշման հավելվածի 14-րդ կետ:



- ապաստան հայցողները, որոնք դիմում են ապաստանի համար սահմանին: Առանց ուղեկցության երեխաները հստակ կերպով նշված են որոշման մեջ որպես օտարերկրացիների կատեգորիաներ, որոնք չեն կարող պահվել այդպիսի կացարաններում:⁸⁵

Ինչ վերաբերում է սննդին ու առաջին անհրաժեշտության պարագաներին, ապա դրանք պետք է ապահովվեն պետական բյուջեի միջոցներից, որով առաջարկվում է, որ ՍԱԿ-ում սննդի հետ կապված ծառայություններ մատուցող ընկերության հետ համաձայնագրերը պետք է կնքվեն ԱԱԾ-ի կողմից:

Հատուկ կացարաններից օտարերկրացիները բաց են թողնվում հանգամանքները կամ անձանց ինքնությունը պարզվելուց հետո: Բաց թողնելիս օտարերկրացիների տարբեր կատեգորիաների համար նախատեսված են կոնկրետ ընթացակարգեր⁸⁶

- **Ապաստան հայցողները՝** Ապաստան հայցող անձանց ՄՊԾ-ին հանձնելիս՝ սահմանապահները կազմում են հանձնման (փոխանցման) ակտ և համապատասխան գրառում են կատարում ապաստան հայցողների գրանցամատյանում:⁸⁷
- **Այն օտարերկրացիները, որոնց փաստաթղթերը (գույքը) առգրավվել է՝** Հատուկ կացարաններից օտարերկրացիներին բաց թողնելիս՝ սահմանապահները վերադարձնում են վերցված բոլոր իրերը և փաստաթղթերը՝ բացառությամբ կեղծ փաստաթղթերի և այն իրերի, որոնք իրավախախտման կատարման առարկա են:⁸⁸
- **Վարակիչ հիվանդություններով վարակված օտարերկրացիները՝** Վարակիչ հիվանդություններով վարակված օտարերկրացիներին բաց թողնելուց հետո հատուկ կացարանների սենյակներում իրականացվում է եզրափակիչ ախտահանում, իսկ սանիտարական-կարանտինային կետի կողմից սահմանվում է հսկողություն եզրափակիչ ախտահանման աշխատանքների իրականացման նկատմամբ:⁸⁹

Գործընթացը բացատրելու համար որպես օրինակ է բերվել այն դեպքը, երբ հայտնաբերվում, ձերբակալվում ու ոստիկանական բաժանմունք է բերվում ԻՆՏԵՐՊՈԼ-ի կողմից որոնվող անձը: Օտարերկրացին կարող է պահվել ձերբակալվածներին պահելու վայրում մինչև 72 ժամ, իսկ կալանավորելու թույլտվություն հայցում են դատարաններից: Օտարերկրացիներն ընդհանրապես կարող են կալանավորվել 30 օրով, իսկ ԱՊՀ քաղաքացիները՝ 40 օրով: Ինչ վերաբերում է ձերբակալման հետևանքով 72 ժամից ավելի անազատության մեջ պահելուն, ապա ձերբակալված անձանց պահելու կենտրոնական հաստատություն չունենալու դեպքում, օտարերկրացուն սովորաբար տեղափոխում են կալանավորվածներին պահելու վայր՝ դատարանի հաստատմամբ:

Ինչպես նշված էր վերևում՝ կենտրոնական հատուկ կացարանի բացակայության դեպքում, Հայաստանում անկանոն կարգավիճակով միգրանտները ներկայումս պահվում են

85 N 783-Ն որոշման հավելվածի 6-րդ կետ և «Օտարերկրացիների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մաս:

86 «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում ու տարանցիկ գոտիներում հատուկ կացարանների գործունեության և օտարերկրացիներին այնտեղ պահելու կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության N 783-Ն որոշում, Հավելված, կետ 24:

87 N 783-Ն որոշման հավելվածի 25-րդ կետ:

88 N 783-Ն որոշման հավելվածի 26-րդ կետ:

89 N 783-Ն որոշման հավելվածի 27-րդ կետ:



«Վարդաշեն»⁹⁰ և «Նուբարաշեն»⁹¹ ու «Աբովյան»⁹² քրեակատարողական հիմնարկներում: Ձերբակալված օտարերկրացիներն իրավունք ունեն օգտվելու թարգմանչի ծառայություններից, դիմելու դատարան, բողոքարկելու իրենց վերաբերող որոշումները, իրավական ներկայացվածություն ունենալու, հանդիպելու դիվանագիտական ու հյուպատոսական պաշտոնյաների հետ ու ստանալու բժշկական օգնություն: Մարդու իրավունքների պաշտպանն իրավունք ունի այցելելու քրեակատարողական հիմնարկներ: Հայաստանում գործում է 12 քրեակատարողական հիմնարկ, որտեղ օտարերկրյա քաղաքացիները պահվում են առանձին վերը նշված երեք հիմնարկներում: Մինչդատական կալանքի ու դատապարտելուց հետո անազատության մեջ պահելու համար պատասխանատու է Արդարադատության նախարարությունը: Կարևոր է նշել, որ հնարավոր է նաև կիրառել կալանավորմանն այլընտրանք հանդիսացող միջոցներ, ինչպիսիք են՝ ներկայանալը, այդ թվում օտարերկրացիների համար, սակայն ոչ անօրինական մուտքի համար հանցագործության դեպքում: Ձերբակալման այլընտրանքային միջոցների կիրառման ու վերահսկման ոչ բավարար շրջանակը հիմնական խնդիրն է քրեական արդարադատության բոլոր փուլերում: Օրինակ՝ շատ հազվադեպ են դիմում որպես այլընտրանքային միջոց հանդիսացող գրավին, որը պայմանավորված է օրենքով ամրագրված շատ բարձր գումարներով:⁹³

Հետաքրքիր է, որ այն օտարերկրացիները, որոնց ձերբակալել են երկիրը լքելիս թույլատրված ժամկետից ավելի երկար Հայաստանում գտնվելու համար, չեն ձերբակալվում, փոխարենը՝ նրանց պարտավորեցնում են տուգանք վճարել և լքել տարածքը, որը չի համապատասխանում միջազգային չափանիշներին և համաչափ չէ սահմանը ապօրինի հատելու համար ծանր քրեական պատասխանատվությանը: Այն դեպքերում, երբ օտարերկրացիներն ի վիճակի չեն վճարելու տուգանքը, ապա նրանց մուտքը մերժվում է մեկ տարի ժամկետով:⁹⁴

Օտարերկրյա դատապարտյալները, որոշ դեպքերում, վերադարձվում են իրենց երկրներ՝ պատժի կրումը շարունակելու համար, որը հնարավոր է դատապարտյալների փոխանցման մասին Հայաստանի և համապատասխան երկրի միջև գործող երկկողմ համաձայնագրերով:

Եթե նրանք իրենց պատիժը կրում են Հայաստանում, և նրանք որևէ օրինական հիմք չունեն պատիժը կրելուց հետո այնտեղ գտնվելու համար, քրեակատարողական հիմնարկի վարչակազմը, ազատարձակման անաթվից առաջ, կապ են հաստատում համապատասխան դիվանագիտական առաքելության (հյուպատոսական հիմնարկի) հետ՝ նրանց վերադարձը դյուրացնելու համար: Արդյունքում, Արդարադատության նախարարության կարծիքով՝ անհրաժեշտ չի համարվում նրանց համար ձերբակալված անձանց պահելու առանձին հաստատություն ունենալը, քանի դեռ նրանք սպասում են վտարման:⁹⁵

Ներկայումս գործում են հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված անկախ մոնիթորինգային խմբեր, որոնք այցելում են քրեակատարողական

90 «Վարդաշեն»-ը օտարերկրյա քաղաքացիների ու հանցագործության մեջ մեղադրվող՝ Հայաստանի քաղաքացի հանդիսացող պաշտոնյաների և ոստիկանության աշխատակիցների համար նախատեսված մինչդատական փոքր կալանավայր է, որը գտնվում է Երևանի ծայրամասում՝ նախատեսված անազատության մեջ պահվող 154 անձի համար:

91 «Նուբարաշեն»-ը Երևանի ծայրամասում գտնվող ու 1200 կալանավորվածների համար նախատեսված մինչդատական կալանավայր է:

92 «Աբովյան»-ը մինչդատական քրեակատարողական հաստատություն է, ինչպես նաև դատապարտվելուց հետո կանանց և անչափահաս իրավախախտների համար նախատեսված ուղղիչ հիմնարկ է:

93 Հայաստանում իրավունքի գերակայություն նախաձեռնություն, Հայաստանի համար անազատության մեջ պահելու ընթացակարգի գնահատման գործիք, 2010:

94 Գնահատման այց, Երևան, Հարցազրույց Ոստիկանությունում, 2013:

95 Հարցազրույց Արդարադատության նախարարությունում, գնահատման այց, Երևան, 2013 թվականի սեպտեմբեր:



հիմնարկներ ու ձերբակալվածներին պահելու վայրեր: Այդ մոնիթորինգային խմբերը ստեղծվել են այն բանից հետո, երբ Հայաստանն անդամակցեց Եվրոպայի խորհրդին, և նրա առջև պահանջ էր դրված համագործակցելու մարդու իրավունքների չարաշահման ու խոշտանգումների մասով: Այդ երկու մոնիթորինգային խմբերն իրավասու են ցանկացած ժամանակ այցելելու ուղղիչ հիմնարկներ/կալանավորվածներին պահելու վայրեր, իսկ նրանց մուտքը չի կարող մերժվել: Նրանք նախապատրաստում են զեկույցներ այդ կառույցների պայմանների վերաբերյալ: Հրապարակումներում մինչ այժմ անդրադարձ չի կատարվել ձերբակալված օտարերկրյա անձանց:

3.6 Արտաքսումը և ելքը

«Օտարերկրացիների մասին» օրենքի 5-րդ գլուխն անդրադառնում է այն անձանց արտաքսմանը, որոնք անօրինակ հիմունքներով են գտնվում Հայաստանի տարածքում, ինչպես նաև պարունակում են դրույթներ կամավոր վերադարձի վերաբերյալ: Այնուամենայնիվ, 35-րդ հոդվածով չի նախատեսվում կամավոր վերադարձի համար տրամադրվող ժամանակահատված: 30-րդ հոդվածով սահմանված են հետևյալ դեպքերը, երբ օտարերկրացին պարտավոր է հեռանալ Հայաստանից՝

- լրացել է նրա մուտքի վիզայի կամ կացության կարգավիճակի վավերականության ժամկետը.
- մուտքի վիզան ուժը կորցրած է ճանաչվել օրենքի 8-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերում նշված հիմքերով.
- մերժվել է կացության կարգավիճակ ստանալու կամ ժամկետը երկարաձգելու համար դիմումը.
- «Օտարերկրացիների մասին» օրենքի 21-րդ հոդվածում նշված հիմքերով զրկվել է կացության կարգավիճակից:

Եթե օտարերկրացին կամավոր չի հեռանում Հայաստանի տարածքից՝ «Օտարերկրացիների մասին» օրենքի 31-րդ հոդվածի համաձայն, ապա ոստիկանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը արտաքսման վերաբերյալ գործ է հարուցում և ներկայացնում դատարան: Դատարանն այնուհետ կայացնում է որոշում օտարերկրացու արտաքսման կամ արտաքսումը մերժելու մասին: Եթե դատարանը մերժում է արտաքսումը, ապա ոստիկանությունը պետք է ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրի օտարերկրացուն:⁹⁶ Արտաքսումը օտարերկրացու հարկադիր հեռացումն է Հայաստանի Հանրապետությունից նրա՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու կամ բնակվելու օրինական հիմքերի բացակայության դեպքում:

«Օտարերկրացիների մասին» օրենքի 32-րդ հոդվածը պարունակում է վերադարձնելու անթույլատրելիության սկզբունքը և արգելում է օտարերկրյա քաղաքացիների արտաքսումն այն պետություն, որտեղ նրան սպառնում է հետապնդում ռասայական, կրոնական պատկանելության, սոցիալական ծագման, քաղաքացիության կամ քաղաքական համոզմունքների պատճառով, կամ եթե տվյալ օտարերկրացիները կարող են ենթարկվել խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կամ մահապատժի:

Դատարանի կողմից արտաքսման վերաբերյալ որոշումն ուսումնասիրելիս օտարերկրացին ունի Հայաստանի օրենքներով նախատեսված դատական պաշտպանության միջոցներից օգտվելու բոլոր իրավունքները՝ հատկապես, բողոքարկման իրավունքը՝ «Օտարերկրացիների մասին» օրենքի 35-րդ հոդվածով նախատեսված արտաքսման վերաբերյալ որոշման կասեցման ազդեցությամբ: Այնուամենայնիվ, «Օտարերկրացիների մասին» օրենքի

96 «Օտարերկրացիների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մաս:



35-րդ հոդվածում հստակ չի նշվում, որ օտարերկրացուն տրամադրվում է անվճար իրավաբանական օգնություն և դատարանում ներկայացվածությունից օգտվելու հնարավորություն՝ արտաքսման վերաբերյալ որոշումը բողոքարկելու համար, որը չի համապատասխանում միջազգային չափանիշներին:

«Օտարերկրացիների մասին» օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ արտաքսման մասին որոշման վերաբերյալ նշում է կատարվում օտարերկրացու անձնագրում և այն ի կատար է ածվում Ոստիկանության կողմից, և արտաքսվող օտարերկրացու ծագման պետության դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը տեղեկացվում է այդ մասին: Օտարերկրացին հոգում է արտաքսման ծախսերը, կամ դրանք կատարվում են Հայաստանի Հանրապետական պետական բյուջեից: Օրենքով հստակ նշված չէ, թե արդյոք ոստիկանությունն իրավասու է կիրառելու հարկադրանքի միջոցներ:

«Օտարերկրացիների մասին» օրենքի 38-րդ հոդվածով սահմանվում են Հայաստանի տարածքում գործող հատուկ հիմնարկներում **արտաքսման նպատակով օտարերկրացու ձերբակալման դեպքերը**, եթե բավարար հիմքեր կան կասկածելու, որ նա կարող է թաքնվել մինչև դատարանում արտաքսման մասին գործի քննությունը կամ օրինական ուժի մեջ մտած արտաքսման որոշման կատարումը: Օտարերկրացուն ձերբակալելու դեպքում Ոստիկանությունը 48 ժամվա ընթացքում դիմում է դատարան՝ օտարերկրացուն ձերբակալելու թույլտվության վերաբերյալ որոշում ստանալու համար: Թույլտվություն ստանալուց հետո օտարերկրացին կարող է ձերբակալվել առավելագույնը 90 օր ժամկետով: Ոստիկանությունը ձերբակալման մասին տեղեկացնում է ձերբակալված օտարերկրացու ծագման պետության դիվանագիտական ներկայացուցչությանը կամ հյուպատոսական հիմնարկին: Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված չեն այնպիսի դրույթներ, որ օտարերկրացին պետք է անհապաղ ազատ արձակվի, երբ թվում է, որ հեռացման նպատակահարմար հեռանկարը, իրավական և այլ նկատառումներից ելնելով, այլևս առկա չեն: Ձերբակալված կամ պահվող օտարերկրացու իրավունքները նախատեսված են 39-րդ հոդվածով և պարունակում հետևյալը՝

- իմանալ իր ձերբակալման և պահման պատճառների մասին,
- բողոքարկելու իրավունք,
- իրավական ներկայացուցչի և ծագման պետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի պաշտոնյայի այցելության իրավունք,
- դիմել դատարան իրեն ազատ արձակելու դիմումով և ստանալ անհրաժեշտ բժշկական օգնություն:

Ինչվերաբերում է ձերբակալված օտարերկրացիներին պահելու վայրին, ապա 38-րդ հոդվածի 4-րդ մասում նշվում է, որ այն պետք է մինչ այժմ ստեղծվի 872-Ն որոշման համաձայն:⁹⁷ Ձերբակալվածներին պահելու վայրերը չեն օգտագործվում օտարերկրացիներին ձերբակալելու համար՝ մինչև վտարումը:

Անհրաժեշտ է նշել, այնուամենայնիվ, որ օտարերկրացիների համար նախատեսված այս հատուկ ընդունման հաստատությունները ներկայումս գոյություն չունեն: «Օտարերկրացիների մասին» օրենքով նախատեսվում է վտարվող անձանց համար նախատեսված այսպիսի հատուկ կացարաններ ունենալու անհրաժեշտությունը, հետևաբար խորհուրդ է տրվում պահպանել օրենքը և ստեղծել անկանոն կարգավիճակով միգրանտների համար փակ ռեժիմով ձերբակալման կենտրոնական հաստատություն, որը կհամապատասխանի 2-րդ գլխով սահմանված միջազգային չափանիշներին:

97 «Հայաստանի Հանրապետության տարածքում հատուկ կացարանի գործունեության և ձերբակալված օտարերկրացիներին այնտեղ պահելու կարգը սահմանելու մասին» N 872-Ն որոշում:



4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Այս գլխում անդրադարձ է կատարվում այն հարցին, թե օտարերկրացուն ազատագրվումն ու ձերբակալումը կարգավորող Հայաստանի քրեակատարողական համակարգը ինչպես է գործառնապես կառավարվում Հայաստանի տարածքում, այդ թվում՝ անկանոն կարգավիճակով միգրանտների վարչական ձերբակալումը: Ի տարբերություն շատ երկրների՝ ձերբակալման պարտականությունը համեմատաբար հստակ սահմանազատված է. Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) պատասխանատու է ՍԱԿ-ներում մինչև 72 ժամ պահելու համար,⁹⁸ Ոստիկանությունը պատասխանատու է երկրի ներսում մինչև ձերբակալման հետևանքով 72 ժամ անազատության մեջ պահելու համար,⁹⁹ Քրեակատարողական վարչությունը պատասխանատու է 72 ժամից ավելի անազատության մեջ պահելու համար՝ միայն բացառիկ հանգամանքներում և միայն դատարանի ցուցումով:

4.1 Ազատագրվման վայրերում պահվող անձինք. օտարերկրացիները

Հայաստանում բոլոր 12 քրեակատարողական հիմնարկները Արդարադատության նախարարության (ԱՆ) ենթակայության ներքո են գործում, ինչպես նաև ազատագրվմանը փոխարինող այլընտրանքային պատիժների կատարման բաժինը: Նախատեսված այլընտրանքային միջոցներն են տնային կալանքը և (կամ) պրոբացիայի ծառայությունը: Ներկայումս Հայաստանի քրեակատարողական համակարգում գտնվում է 147 օտարերկրացի քաղաքացի, 95-ը՝ Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) երկրներից և 52-ը՝ այլ երկրներից: Առաջին խմբում հիմնականում ռուսներ են և վրացիներ, իսկ վերջին խմբում հիմնականում իրանցիները և մի փոքր թիվ են կազմում Թուրքիայի քրդերը: Կատարված հանցագործություններն են խարդախությունը, թմրամիջոցները և գողությունը: Բացի դրանից՝ կան նաև որոշ օտարերկրացիներ, որոնք դատապարտվել են սահմանն ապօրինի հատելու համար, որը Հայաստանում հանցագործություն է համարվում, որը չի համապատասխանում միջազգային չափանիշներին, որոնցով անօրինական մուտքը դասակարգվում է որպես վարչական իրավախախտում: Համակարգում օտարերկրացի անչափահասներ չկան, չնայած որ նրանց և կանանց համար գործում է պահելու հատուկ վայր: Հստակեցվել է, որ քրեակատարողական հիմնարկները միայն օգտագործվում են դատապարտյալների և հանցագործությունների համար դատապարտված անձանց պահելու համար, և ոչ թե անկանոն կարգավիճակով միգրանտների համար, բացի այն անձանցից, որոնք ծայտված են հատել սահմանը:

Ի տարբերություն ընդհանուր միջազգային գործելակերպի՝ սահմանային հսկողությունը շրջանցելով անօրինական մուտքը համարվում է հանցագործություն, որը պատժվում է ազատագրվմամբ՝ մինչև երեք տարի ժամկետով, չնայած որ, զարմանալիորեն, միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխումը քրեականացված չէ: Դա ակնհայտորեն այն պատճառով է, որ այնպիսի ընկալում է, որ միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխումն իր մեջ չի ներառում շահագործում: Դա սխալ կանխավարկած է. մինչդեռ կարող է նշվել, որ մարդկանց մաքսանենգ ճանապարհով տեղափոխողները պարզապես ծառայություն են մատուցում, հանցագործություն կատարելու նպատակով նրանց օժանդակելու համար գումար վերցնելը համարվում է քրեական արարք գրեթե ամբողջ

98 ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի N 127-Ն որոշում:

99 Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 10-ի թիվ 872-Ն որոշում:



աշխարհի իրավական համակարգերի մեծ մասում: Ընդ որում՝ մարդկանց մաքսանենգ ճանապարհով տեղափոխման քրեական տարրը վերջերս է ճանաչվել, իսկ օրենքն էլ փոփոխման փուլում է: Դրանով կստեղծվի մաքսանենգ ճանապարհով տեղափոխվող անձանց վարչական ձերբակալման ենթարկելու անհրաժեշտություն՝ մաքսանենգ ճանապարհով մարդկանց տեղափոխողների նկատմամբ հետաքննությանն օժանդակելու, մաքսանենգ ճանապարհով տեղափոխման մեթոդների ու հեռացման սպասելու մասով:

Ծպտված (անօրինական) մուտքը բնորոշ հանցագործությունն է, որը հաստատվում է այն փաստով, որ քրեակատարողական հիմնարկներում գտնվում է միայն երկու իրավախախտ: Երրորդ երկրի քաղաքացիներին դեպի Հայաստան թրաֆիքինգի ենթարկելը, որը նույնպես բնորոշ է, համարվում է հանցագործություն, և մոտավորապես 20 անձ է (գրեթե բոլորը հայաստանցի կանայք են) դատապարտվել սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգի համար: Ներկայումս, այնուամենայնիվ, մարդկանց թրաֆիքինգի համար «Աբովյան» քրեակատարողական համակարգում իր պատիժն է կրում մի օտարերկրացի կին:

Հայաստանի օրենսդրությամբ օտարերկրացիները պետք է առանձին պահվեն Հայաստանի քաղաքացի համարվող կալանավորվածներից՝ մինչև դատաքննությունը (կալանքի տակ պահել), սակայն այդ գործելակերպը պետք է շարունակել, և նրանց պետք է առանձին պահեն նաև դատապարտվելուց հետո՝ ելնելով մշակութային ու կրոնական նկատառումներից:

4.2 Ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահելու գործընթացը

Բոլոր իրավախախտները, այդ թվում՝ օտարերկրացիները, կարող են ձերբակալման հետևանքով մինչև 72 ժամ անազատության մեջ պահվել ոստիկանության ձերբակալվածներին պահելու վայրերում, որի ընթացքում կալանավորելու համար թույլտվություն պետք է ստանալ դատարանից: Դատարանները պատասխանատու են կալանավորման ժամկետը երկարաձգելու համար՝ առաջինը՝ մինչև երկու ամիս, իսկ հետո՝ մինչև 12 ամիս: Դատարանները նաև նշում են կալանավորվածներին պահելու վայրը, որը 72 ժամը գերազանցող դեպքերում, սովորաբար քրեակատարողական հիմնարկի կալանավորվածներին պահելու վայրերն են, որտեղ կարելի է օգտվել բանավոր, գրավոր թարգմանության ծառայություններից ու իրավաբանական օգնությունից: Միջազգային որոշումների համաձայն ձերբակալված օտարերկրացիները, որոնք պահվում են արտահանման նպատակով, կարող են կալանավորվել 30 օրով, իսկ ԱՊՀ քաղաքացիները՝ 40 օրով: Արտահանման վերաբերյալ հարցումը կարող է ստացվել 30 օրվա ընթացքում, և պետք է ստանալ դատարանի թույլտվությունը կալանավորման ժամկետը երկարաձգելու համար: Օտարերկրյա բանտարկյալները չեն պահվում նույն խցերում հայաստանցի դատապարտյալների հետ, և օտարերկրյա բանտարկյալների մեծ մասը տեղավորվում է Երևանում տեղակայված «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում, որտեղ գտնվում են նաև հայաստանցի նախկին իրավապահ մարմինների դատապարտված պաշտոնյաները: Մյուս քրեակատարողական հիմնարկը՝ «Նուբարաշենը» նույնպես ունի հատուկ բաժին օտարերկրացիների համար: Օտարերկրյա դիվանագիտական առաքելությունները տեղեկացվում են 24 ժամվա ընթացքում, երբ նրանց քաղաքացիներն արգելանքի տակ են վերցվում, նրանց համար երաշխավորվում է հյուպատոսական հիմնարկի աշխատակցի այցելությունը: Չնայած որ օտարերկրացիներն առանձին են պահվում, ազատությունից զրկելու պայմանները նույնն են բոլոր բանտարկյալների համար:

4.3 Դատապարտյալների փոխանակումը և հեռացումը

Օտարերկրացի դատապարտյալները սովորաբար վերադարձվում են իրենց երկրներ պատժի կրումն այնտեղ շարունակելու համար՝ դատապարտյալների փոխանցման վերաբերյալ երկկողմ համաձայնագրերի ու միջազգային կոնվենցիաների համաձայն: Եթե նրանք



իրենց պատիժը կրում են Հայաստանում, ապա ազատ արձակման ամսաթվից առաջ քրեակատարողական վարչակազմը կապ է հաստատում տվյալ անձի երկրի հյուպատոսական հիմնարկի հետ, եթե պահանջվում է վտարում: Արդյունքում, անհրաժեշտ չի համարվում նրանց համար ձերբակալված անձանց պահելու առանձին հաստատություն ունենալը, քանի դեռ նրանք սպասում են վտարման: Այս իրավիճակի մասին նշվել է «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի ղեկավարի անձնական փորձի տեսանկյունից, և կարող է բնորոշ չլինել մյուս քրեակատարողական հիմնարկներին: Դա խնդիր չի լինի սահմանն ապօրինի հատելու համար մեղադրվող օտարերկրացիների համար, երբ օրենքը փոփոխվի, քանի որ նրանք ամենայն հավանականությամբ կպահվեն առաջարկվող հատուկ կացարանում, սակայն պետք է հնարավորություն լինի, որ հանցագործությունների համար դատապարտված օտարերկրացիների հեռացման գործընթացը կարող է ավարտված չլինել այն ժամանակ, երբ պատժի կրման ժամկետը լրանա, եթե, օրինակ, դժվարություններ առաջանան ճամփորդական փաստաթղթեր ստանալիս, կամ եթե իրենց կամ երրորդ երկրի կողմից հետընդունման գործընթացը վիճարկվում է: Այդ դեպքում, նրանք պետք է պահվեն վարչական ձերբակալման ներքո՝ վտարմանը սպասելու համար, քանի որ քրեակատարողական հիմնարկում նրանց անազատության մեջ պահելը կարող է համարվել նրանց պատժի ժամկետի անօրինական երկարաձգում: Առաջարկվող կենտրոնական հատուկ կացարանը կծառայի այս նպատակին:

4.4 Քրեակատարողական հիմնարկի մոնիթորինգը

Քրեակատարողական հիմնարկների անկախ մոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է Հայաստանի հելսինկյան կոմիտեի կողմից, որի պարտականությունների մեջ է մտնում նաև քրեակատարողական հիմնարկների պայմանների մոնիթորինգը և քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց խոշտանգումն ու նրանց նկատմամբ ոտնձգությունը կանխարգելելը:

Հայաստանն անդամակցել է Եվրոպային խորհրդին 2001 թվականին, և նրա առջև պահանջ է դրվել համագործակցել մարդու իրավունքների չարաշահման ու խոշտանգման դեպքերի մասով: Ինչ վերաբերում է քրեակատարողական հիմնարկներին, ապա Հանրային մոնիթորինգի խումբն առաջին անգամ ստեղծվել է 2006 թվականի Արդարադատության նախարարության ենթակայության ներքո, իսկ այնուհետ ընդունվել է դրա առանձին կանոնադրությունը: Ներկայումս այն անկախ հասարակական կազմակերպություն է և ներգրավում է 11 անդամների մյուս հասարակական կազմակերպություններից՝ բացմրցույթի միջոցով: Խումբն իրավասու է ցանկացած ժամանակ այցելելու քրեակատարողական հիմնարկներ կամ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրեր (ԱԱԾ մեկուսարաններ), իսկ դրա ներկայացուցիչների մուտքը չի կարող մերժվել: Նրանք պետք է այցելեն յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկ տարին առնվազն մեկ անգամ, իսկ որոշ դեպքերում, անազատության մեջ պահվող անձանց բողոքներից հետո վատ պայմաններ բացահայտելու դեպքում, նրանք այցելել են տարին ավելի, քան 20 անգամ: Նրանք նախապատրաստում են զեկույցներ պայմանների մասին և պետք է ներկայացնեն դրանք Արդարադատության նախարարություն մինչև հրապարակումը: Հրատապ համարվող դեպքերի համար պահանջվում է Արդարադատության նախարարության արձագանքը երեք օրվա ընթացքում, իսկ միջանկյալ զեկույցների դեպքում տրվում է 15 օրյա վերջնաժամկետ: Եթե Արդարադատության նախարարությունը չի արձագանքում, Խումբը հրապարակում է զեկույցը:

Մոնիթորինգի խումբը 2012 թվականին սկսել է մի ծրագիր, որի նպատակն է խրախուսել քրեակատարողական հիմնարկում նախկինում պահվող անձանց պատմել քրեակատարողական հիմնարկների պայմանների մասին, և հիմնական արդյունքները հետևյալն են՝



- Վատ սնունդ
- Գերբեռնվածություն՝ 8-10 անազատության մեջ պահվող մեկ խցում
- Իրավաբանական օգնությունից օգտվելու վատ պայմաններ կամ վատ որակ
- Կոռուպցիայի հետ կապված հարցեր

«Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկը, որտեղ գտնվում է օտարերկրացի բանտարկյալների մեծ մասը, համարվել է համակարգի ամենալավ հիմնարկներից մեկը:

4.5 Ապաստան հայցողների համար ընդունման հաստատությունները

Որպես ապաստան հայցողների առջև իր պարտականների մի մաս՝ ՄՊԾ-ն ղեկավարում է ապաստանի համար նախատեսված բաց տիպի կացարանով ապահովման կենտրոն Երևանում: Տեսականորեն այդ կացարանում տեղավորվում է 45 մահճակալ և այն գտնվում է բնակելի համալիրում: Այն բաց տիպի կենտրոն է և նախատեսված է միայն ապաստան հայցողների համար, որոնք չունեն ապաստարան, սակայն տեղավորման կարիք ունեն: Այն նախատեսված չէ միգրանտներին պահելու համար, և հետևաբար հարմար չէ ներգաղթային իրավախախտներին տեղավորելու համար, նույնիսկ եթե այնտեղ տեղ լինի, սակայն ներկայումս այնտեղ տեղ չկա:

ՄՊԾ-ի կողմից ներկայացված թվերի համաձայն, 2005 և 2012 թվականների միջև ընկած ժամանակահատվածում, ներկայացվել է ապաստանի 2098 դիմում, որոնցից 1088-ի դեպքում դրական որոշում է կայացվել: Այս ամբողջ ժամանակահատվածի համար ապաստանի դիմումների մերժման վերաբերյալ տվյալներ առկա չեն, բայց 2010 և 2012 թվականների միջև ընկած ժամանակահատվածում ապաստանի 720 դիմումներից 255-ի դեպքում դրական որոշում է կայացվել, իսկ 63-ի դեպքում՝ բացասական: Երեք հիմնական գործոն օգնում են բացատրել անհամապատասխանությունը թվերում՝

- դիմողները թաքնվում են մինչ նրանց դիմումների վերաբերյալ որոշում է կայացվում.
- որոշ դիմողներ ազգությամբ հայեր են, և իրավունք ունեն կացության թույլտվություն կամ քաղաքացիություն ստանալու. ամբողջությամբ հայտնի չէ, թե ինչու են այդ մարդիկ դիմում ապաստանի համար, սակայն ՄԱԿ ՓԳՀ-ն նշել է, որ այդպես են վարվում, որպեսզի ստանան ապաստարան և աջակցություն, և որ հնարավոր է, որ նրանք մտածում են, որ փախստականի կարգավիճակը կհեշտացնի Արևմուտք մեկնելու նրանց գործընթացը.
- բազմաթիվ որոշումներ են առկա, որոնք վերաբերյալ պետք է որոշում կայացվի, չնայած որ այս տվյալը կլինի ցածր, քանի որ մշակման համար սահմանված ժամանակահատվածը երեք ամիս է:

2005 և 2012 թվականների միջև ընկած ժամանակահատվածում, ապաստանի համար ամենաշատ դիմել են հետևյալ երկրների քաղաքացիները՝

Երկիր	Դիմել է	Շնորհվել է
Իրաք	886	850
Սիրիա	513	161
Լիբանան	284	15

Իրաքցիների մեծամասնությունը դիմել է 2005 և 2007 թվականների միջև ընկած ժամանակահատվածում, որից հետո այդ հոսքը աստիճանաբար նվազել է 63-ից 2008 թվականին մինչև 35՝ 2012 թվականին, որը նշանակում է, որ որևէ ներհոսք այլևս չգալի չէ: Սիրիացիների ներհոսքը 2005 և 2011 թվականների միջև ընկած ժամանակահատվածում կամ առկա չէր, կամ հաշվարկվում էր կենտ թվերով, այնուհետ այն աճեց՝ հասնելով 496-ի 2012 թվականին: Լիբանանցիների վերաբերյալ տվյալները գալիս են գրեթե ամբողջությամբ 2006 թվա-



կանից, երբ 279 մարդ ժամանեց, և ուստի, ինչպես և Իրաքի դեպքում, հոսքը էականորեն նվազել է՝ հասնելով աննշան թվերի: Հնարավոր մտահոգությունն առաջացնող մյուս երկիրը, չնայած հազիվ թե էական նշանակություն ունեցող, Իրանն է՝ 94 մարդ ավելի քան յոթ տարվա ընթացքում՝ ժամանողների թիվը միջինում տարեկան 14 հոգի: Զարմանալի չէ, որ այդ տվյալներն արտացոլում են ներքին անկայունությունը ծագման երկրներում, որը պայմանավորված էր այն հանգամանքով, որ այդ երկրներից դիմողների մոտ հիմնավոր վախ կար իրենց անվտանգության համար՝ կամ կապված հետապնդման կամ զինված ընդհարման պատճառով: Դա հստակ կերպով ընդունում էր նաև ՄՊԾ-ն, որը հաստատեց, որ իրաքցի և սիրիացի դիմողների մեծ մասին, եթե ոչ բոլորին, տրամադրվել է միջազգային պաշտպանության ինչ որ ձև: Այդ տվյալները ցույց են տալիս, թե ինչքան արագ կարող է տեղի ունենալ ապաստանի համար դիմողների ընդունումը՝ ոչնչից հասնելով էական թվերի՝ որպես արձագանք վատթարացող անվտանգությանը և (կամ) տնտեսական իրավիճակին ծագման երկրում: Դա ավելի է շեշտում պատրաստ լինելու անհրաժեշտությունը՝ հատկապես, քանի որ շատ իրավիճակներ հեշտ չի լինելու կանխատեսել:

Ապաստանի դիմումների գերակշռող մեծամասնությունը ներկայացվում է երկրի ներսում, և հաշվարկվել է, որ ընդամենը 3 կամ 4 դիմումներ են ներկայացվել օդանավակայանում վերջին 13 տարիների ընթացքում: Ընդ որում՝ ՄՊԾ-ն ակտիվորեն ներգրավված է այն սահմանապահների համար վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու գործում, որոնք, ՄԱԿ ՓԳՀ-ի հետ, զբաղվում են ապաստանի դիմումները դիտարկելով և հնարավոր փախստականների հետ կապված հարցերով: Ապաստան չստացած անձանց, բողոքարկման բոլոր ընթացակարգերը սպառելուց հետո, տրվում է 5 օր երկիրը լքելու համար, իսկ եթե նրանք դա չեն անում, ապա ոստիկանությունը պետք է զբաղվի նրանց հեռացնելու հարցով: ՄՊԾ-ն չունի որևէ տվյալ ապաստան չստացած անձանց մասին, որոնք լքել էին Հայաստանը, և հաշվի առնելով ընդհանուր ազատական մոտեցումը ներհոսքի մասով իրավակիրառ գործունեությունը, հավանական է թվում, որ այն բանից հետո, երբ նրանց հրահանգվում է լքել երկիրը, դրանից հետո ոչինչ չի արվում՝ համոզվելու համար, որ նրանք այդպես վարվել են: Հաղորդվել է, որ որևէ ապաստան հայցող չի ձերբակալվել՝ անկախ այն հանգամանքից՝ նրանք ձախողել են, թե այլ բան է տեղի ունեցել, և հստակ նշվել է, որ նրանց ձերբակալելու պրակտիկա գոյություն չունի: Այնուամենայնիվ, ՄԱԿ ՓԳՀ-ն ստացել է հաղորդումներ այն դեպքերի մասին, երբ ապաստանի համար դիմելու նպատակով ՍԱԿ-ներից դուրս սահմանը հատող միգրանտներ ձերբակալվել են, բայց մանրամասները բավականին «աղքատիկ էին» և հնարավոր է, որ դիմումները ներկայացնելու մասով ձգձգումներ են եղել:

4.6 Ձերբակալման կառավարումը. գնահատումը

Հանցագործությունների համար մեղադրված կամ դատապարտված օտարերկրյա քաղաքացիների հետ կապված իրավիճակը համեմատաբար հստակ սահմանված է, քանի որ նրանց վերաբերվում են նույն կերպ, ինչ Հայաստանի քաղաքացիներին՝ չնայած որ նրանց առանձին են պահում: Նրանք օգտվում են մարդու իրավունքների պաշտպանության բոլոր միջոցներից, որոնցից օգտվում են քրեակատարողական համակարգում գտնվող՝ ազատությունից զրկված բոլոր անձինք՝ գումարած հյուպատոսական աջակցությունից օգտվելու հնարավորությունը: Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանում անկանոն կարգավիճակով միգրանտների համար կենտրոնական երկարաժամկետ կացարաններ գոյություն չունեն, այնուամենայնիվ, քրեակատարողական հիմնարկները չեն օգտագործվում ներգաղթի հետ կապված իրավախախտումների պատճառով միգրանտների վարչական ձերբակալման համար՝ բացի սահմանն ապօրինի հատելու դեպքերի, քանի որ ներկայումս այն դիտարկվում է որպես հանցագործություն, որը չի համապատասխանում



միջազգային չափանիշներին: Քրեակատարողական հիմնարկի գույքի կառավարումը հաստատապես Արդարադատության նախարարության պարտականությունն է, իսկ քրեակատարողական հիմնարկի պայմանները անկախ մոնիթորինգի են ենթարկվում Հանրային մոնիթորինգի խմբի կողմից: Գնահատման ընթացքում ստացված տեղեկատվության համաձայն՝ ապաստան հայցողների ձերբակալումը բնորոշ երևույթ է, մի քանի բացառություններով, որոնք արտացոլում են այն դեպքերը, երբ ապաստան հայցողները սահմանն ապօրինի են հատել: ՄԱԿ ՓԳՀ-ի կարծիքով՝ շատ քիչ դեպքերում են ապաստան հայցողներին պահում են քրեակատարողական հիմնարկներում՝ նրանց անօրինական մուտքի պատճառով, մինչև նրանք ստացել են փախստականի կարգավիճակ:

Կառավարությունը, իր որոշումներով, ընդունել է Միգրանտների համար կենտրոնական կացարանի¹⁰⁰ և ՍԱԿ-ներում առանձին կացարանների անհրաժեշտությունը:¹⁰¹ Սահմանին կացարանով ապահովման հատուկ կենտրոնների կառավարման օրինական պարտականությունը վերապահվել է ԱԱԾ-ին, իսկ առաջարկվող կենտրոնական կացարանի կառավարումը՝ Ոստիկանությանը: Քանի որ ՍԱԿ-ներում տեղակայված հատուկ կացարանները կօգտագործվեն միայն անկանոն եղանակով ժամանակավոր, կարճաժամկետ տեղավորման համար՝ կառավարման պարտականությունը վերապահելով ԱԱԾ-ի սահմանապահ զորքերին, որն այս պահին թվում է լավագույն տարբերակը, բայց քանի որ միգրացիայի կառավարումը առհասարակ դառնում է կանոնակարգված և գործուն՝ հանգեցնելով ձերբակալման դեպքերի բարձր մակարդակի, դա պետք է վերանայվի: Եթե ՍԱԿ-ներում տեղակայված կացարանով ապահովման կենտրոնները զբաղեցվում են պարբերական հիմունքներով, ապա շեշտը պետք է դրվի այդ կացարանների աշխատանքներն ապահովելու համար լրիվ դրույքով քաղաքացիական անձնակազմ կամ անվտանգության մասնավոր ծառայություններ մատուցողներ ներգրավելու վրա՝ հնարավորություն տալով ԱԱԾ-ին իրականացնելու սահմանի հսկողության իրենց բուն գործառույթը:

Կացարանով ապահովման փակ տիպի կենտրոնական հատուկ կենտրոնը նախատեսված կլինի ներգաղթի հետ կապված վարչական իրավախախտումների համար ոստիկանության կողմից ձերբակալված անկանոն կարգավիճակով միգրանտների համար՝ հաշվի առնելով ձերբակալման առավելագույն ժամանակահատվածի վերաբերյալ միջազգային ուղեցույցները: Մինչդեռ ոստիկանությունը սովորաբար ձերբակալում է բոլոր տեսակի իրավախախտներին կարճաժամկետ հետաքննության համար, կացարանով ապահովման հատուկ կենտրոնները նրանց կողմից կառավարելու մասով որոշակի բացասական կողմեր կան: Ինչպես և սահմանին տեղակայված կացարանով ապահովման հատուկ կենտրոնների դեպքում, շեշտը պետք է դրվի դրա կառավարումը քաղաքացիական իշխանություններին, ինչպիսին է՝ ՄՊԾ-ն, հանձնելու վրա, որն աշխատանքներում կներգրավի նվիրված, կացարանով ապահովման հատուկ կենտրոնների վերաբերյալ վերապատրաստված պաշտոնյաների, կամ այդ աշխատանքները կարտապատվիրի անվտանգության մասնավոր ծառայություններ մատուցողներին: Դրա առավելությունն այն կլինի, որ ոստիկանության վերապատրաստված, փորձառու ծառայողներին չի հանձնարարվի մշտապես հսկողություն իրականացնելու պարտականությունը, և ոստիկանական տարրը բացառելով՝ հստակ տարբերակել վարչական ու քրեական հիմքով ձերբակալումը: Մյուս տարբերակը Արդարադատության նախարարության կողմից կացարանի շահագործումն է, բայց այս դեպքում վտանգ կա որ այն օգտագործվում է քրեակատարողական համակարգում ճնշումը մեղմացնելու համար՝ հանցագործներին ընդունելով և որպես քրեական հիմնարկ դիտարկվելով:

100 Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 10-ի թիվ 872-Ն որոշում:

101 Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 18-ի թիվ 783-Ն որոշում:



5. ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄԸ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Սահմանները

Ինչպես նշվել է վերը, միգրանտների տեղավորման համար Հայաստանում գործում է երկու հիմնարկ, որոնք հայտնի են որպես Կացարանով ապահովման կենտրոններ և Միգրանտներին կացարանով ապահովման հատուկ կենտրոններ՝ կախված սկզբնաղբյուրից: Դրանք նույն հաստատություններն են, և հստակության համար սույն գնահատման մեջ դրանք անվանվում են կացարանով ապահովման հատուկ կենտրոններ: Մեկը տեղակայված է Բագրատաշենի ՍԱԿ-ում, իսկ մյուս՝ Երևանում գտնվող «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում:

Անկանոն կարգավիճակով միգրանտները, որոնց դեպքում կարող է վարչական ձերբակալում կիրառվել սահմաններին, սովորաբար հետևյալ կատեգորիայի ներքո են՝

- Միգրանտներ, որոնք փորձում են մուտք գործել տարածք կեղծ կամ կեղծված փաստաթղթերով
- ծպտյալ մուտք գործողներ, որոնց կամ թաքցնում են փոխադրամիջոցներում, կամ որոնք փորձում են հատել սահմանը պաշտոնական սահմանի անցման կետից դուրս
- միգրանտներ, որոնք փորձում են մուտք գործել երկիր խաբեությանը՝ խեղաթյուրելով իրենց ճամփորդության պատճառներն ու նպատակը
- միգրանտներ, որոնք առանց համապատասխան միջոցների չեն կարող ապահովել իրենց կացությունը՝ առանց աշխատանքի անցնելու
- քաղաքացիներ, որոնք պետք է մուտք գործեն երկիր վիզայով, սակայն վիզա չունեն
- փաստաթղթային խնդիրներ ունեցող ճամփորդողներ
- միգրանտներ, որոնք չեն կատարել Հայաստանում կամ այլ երկրում գտնվելու ժամանակ մուտքի պայմանները
- միգրանտներ, որոնք հեռացվել, վտարվել կամ արտաքսվել են Հայաստանից կամ այլ տարածքից:

5.1 Բագրատաշենի սահմանային անցման կետը

Վերանայման թիմը այցելել է Բագրատաշենի սահմանի անցման կետ 2013 թվականի սեպտեմբերի 16-ին:

ՍԱԿ-ի ուղևորահոսքը կազմում է 8000 մարդ մեկ օրում՝ թե՛ սեզոնին՝ հունիսից սեպտեմբերի սկիզբ, 3000 մարդ մեկ օրում՝ տարվա մյուս ժամանակահատվածում: Առանց հղում կատարելու պաշտոնական տվյալներին՝ ուղևորահոսքը ըստ քաղաքացիների ունի հետևյալ տեսքը՝ հայեր, վրացիներ, ռուսներ, գերմանացիներ, բրիտանացիներ, ճապոնացիներ և կորեացիներ: Պարբերական ուղևորահոսք է նկատվում Թբիլիսիից Երևան ու *հակառակ ուղղությամբ* ավտոբուսներով ճամփորդող զբոսաշրջային խմբերի շրջանում: Հաղորդվել է, որ մուտքը մերժելու դեպքեր շատ հազվադեպ են գրանցվել, միգրանտների ստուգումը սահմանափակվել է հիմնականում անձի ինքնությունը ու ճամփորդական փաստաթղթերի վավերականությունը պարզելով: Եթե ներգաղթի հարցերով պաշտոնյաները համոզվում են, որ փաստաթղթերը իսկական են և համարժեք, ուղևորներին թույլատրվում է շարունակել ճանապարհը, նրանք սովորաբար ճամփորդողներին չեն հարցնում անձնական հանգամանքների, կենսապահովման միջոցների կամ ճամփորդության պատճառների արժանահավատության մասին, և անդրադարձ չի կատարվում ներգաղթի հետ կապված ցանկացած իրավախախտման վերաբերյալ ընդունված գործելակերպի մասով, որը հետագայում ի հայտ է գալիս և որին պետք է անդրադարձնալ երկրի ներսում: Մուտքը մերժելու հազվադեպ դեպքերը կարելի էր նաև բացատրել այն հանգամանքով, որ պոտենցիալ



մերժումները սովորաբար ֆիլտրվում են Վրաստանի համապատասխան մարմինների կողմից: Մուտքի մերժման պատճառները գրեթե բացառապես սահմանափակվում են այն երկրների քաղաքացիների վիզա չունենալու շրջանակով, որոնց քաղաքացիները պետք է վիզա ունենան երկիր մուտք գործելու համար, ինչպես նաև այն անձանց շրջանակով, որոնք ճամփորդում են կեղծ կամ կեղծված անձնագրերով: Առաջին խմբում ընդգրկվածներն առանց ձերբակալվելու ուղիղ հետ են ուղարկվում տարանցման (ծագման) երկիր, իսկ վերջին խմբում ընդգրկվածները հնարավորինս շուտ տեղափոխվում են Երևան՝ հետագա ստուգումների համար, կամ եթե նրանց անձի ինքնությունը հնարավոր է լինում պարզել, նրանք ազատ են արձակվում և նրանց հրահանգվում է ներկայանալ Երևանում գտնվող ԱԱԾ: Չնայած ասվում էր, որ մերժման վերաբերյալ վիճակագրությունն առկա է, այնուամենայնիվ, դրանք միանգամից հասանելի չէին: Ինչ վերաբերում է ծպտյալ եղանակով մուտքին, ապա կարևոր է նշել, որ ներկայումս ԱԱԾ-ի կողմից օգտագործվող սկաններներ կամ որոնողական այլ մասնագիտական սարքավորումներ առկա չեն:

ԱԱԾ ծառայողներն իրավասու են պահելու անկանոն կարգավիճակով միգրանտներին 3 ժամ նախնական ժամանակահատվածով՝ հետագա ստուգման համար, և եթե պահանջվում է պարզել անձի ինքնությունը և գործի հանգամանքները, կարող է ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահվել պաշտոնապես մինչև 72 ժամ, սակայն, դա անելու համար, պետք է ստանալ դատարանի թույլտվությունը 24 ժամվա ընթացքում: Գործնականում, եթե հարցերը հնարավոր չի լինում լուծել ՍԱԿ-ում հետագա ուսումնասիրման համար նախատեսված 3 ժամվա ընթացքում, ապա օտարերկրացիները տեղափոխվում են Երևանում գտնվող ԱԱԾ կենտրոնակայան, որտեղ նրանց հարցաքննում են, և կամ ազատ են արձակում, կամ հետ են ուղարկում իրենց հայրենի երկիր: Այնուամենայնիվ, եթե նրանք ձերբակալվում են օրվա ուշ ժամին կամ գիշերվա ընթացքում, նրանք պահվում են ձերբակալման սենյակում, մինչև հնարավոր լինի նրանց տեղափոխել Երևան: Իսկ տեսականորեն, կացարանով ապահովման հատուկ կենտրոնում ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահվելու ժամկետը 72 ժամ է. հաղորդվել է, որ այդ ամբողջ ժամանակահատվածը երբեք չի կիրառվում, և ամենատեղաբարձր մեկ գիշերն է, որ նրանք պահվել են:

Հաղորդվում է, որ ձերբակալման դեպքերը շատ հազվադեպ են լինում, և ծառայողները չէին կարողանում հիշել որևէ օտարերկրյա քաղաքացու, որը ձերբակալվել է: Ձերբակալման վերջին դեպքը արձանագրվել էր մի քանի ամիս առաջ, իսկ հրամանատարն էլ երբեք չէր հանդիպել ապաստանի համար դիմողի կամ առանց ուղեկցության անչափահասի: Հաղորդվում էր, որ ՍԱԿ-ով անձանց թրաֆիքինգի ու մաքսանենգ ճանապարհով տեղափոխման դեպքեր չեն արձանագրվել, ինչպես նաև չէր արձանագրել նաև փոխադրամիջոցում թաքնվելով ծպտյալ մուտքի փաստ: Երկրորդային ստուգման ենթակա ճամփորդողները հարցաքննվում են հրամանատարի սենյակում, որը ներգաղթի հացերով զբաղվող ծառայողների համար նախատեսված շենքի երկրորդ հարկում էր: Բանավոր թարգմանիչներ շատ հազվադեպ են պահանջվել, քանի որ տարբեր ծառայողներ տիրապետում են հայերենին, վրացերենին, ռուսերենին, անգլերենին ու թուրքերենին, և առնվազն մեկին նշանակում էին յուրաքանչյուր հերթափոխի ժամանակ: Տվյալ վայրում գործում է առողջապահական գրասենյակ, որտեղ աշխատում է պարամեդիկ:

Աշխատակիցների համար նախատեսված շենքի առաջին հարկում գտնվող հանգստի սենյակը երբեմն օգտագործվում է որպես ներգաղթողների ձերբակալման կացարան: Այն տեղակայված է դեպի ուստիկանության գրասենյակ տանող մուտքի նախասրահի հակառակ կողմում, որտեղ մշակվում են ժամանելու պահին մուտքի վիզայի դիմումները: Այն բաղկացած է փոքր խոհանոցից, որտեղ տեղադրված է սեղան՝ բարի կանգնակով, ինչպես նաև առկա է ննջասենյակ՝ գրեթե 3x2.5մ՝ կահավորված երկհարկանի մահճակալով, մեկտեղանի մահճակալով և մեկ աթոռով: Երկու սենյակներն էլ մաքուր էին ու կոկիկ:



Թիմին պատմել են, որ տվյալ տարածքը պետք է վերափոխվի ԵՄ կողմից ֆինանսավորվող նախաձեռնության շրջանակներում,¹⁰² և աշխատանքները պետք է շուտով մեկնարկեն՝ 2013 թվականի սեպտեմբերին կայացած բացման արարողությունից հետո:¹⁰³ Հսկողության համար նախատեսված կառույցը կթարմացվի այնպես, որ ժամանման ու մեկնման ուղիները հնարավոր լինի արագորեն փոփոխել՝ կախված ուղևորահոսքի ծավալներից, իսկ ներգաղթի հարցերով զբաղվող աշխատակիցների համար նախատեսված շենքը կներառի ձերբակալման համար նպատակային կառուցված տարածք՝ հիմնված այն ձերբակալման վայրի վրա, որը գործում է Երևանի օդանավակայանում:

5.2 «Զվարթնոց» միջազգային օդանավակայան, Երևան

Ինչպես և ցամաքային սահմանի դեպքում՝ օդանավակայանում ներգաղթի հացերով զբաղվող բոլոր ծառայողները ԱԱԾ-ից են. Ուղևորները բաժանված են երեք հստակ խմբերի՝

- Ուղևորներ, որոնց համար վիզա չի պահանջվում
- ուղևորներ, որոնք կարող են վիզա ստանալ մուտք գործելու պահին
- 64 երկրի քաղաքացիներ, որոնք պետք է վիզա ստանան արտերկրում գտնվող Հայաստանի հյուպատոսական բաժիններից:

Սահմանապահի պարտականությունն է ստուգել ճամփորդական փաստաթղթերի վավերականությունն ու նույնականությունը, ինչպես նաև ստուգել Սահմանային կառավարման տեղեկատվական համակարգը (ՍԷԿ)՝ համոզվելու համար, որ ուղևորները զգուշացման ցանկում չեն գտնվում: Սահմանային կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով հնարավոր է նաև մուտք գործել ԻՆՏԵՐՊՈԼ-ի ահազանգման համակարգ: Սահմանապահները սովորաբար հարցեր չեն ուղղում ուղևորներին՝ ճամփորդության նպատակների արժանահավատությունը ստուգելու համար, և եթե փաստաթղթերի, ՍԷԿ-ում իրականացված ստուգման հետ կապված խնդիր չկա և, պահանջի դեպքում, վիզան ստացվել է, ապա ուղևորների մուտքը թույլատրվում է: Եթե նրանց հետ կապված այնուհետ խնդիրներ են ի հայտ գալիս, ապա այդ հարցերը լուծվում են երկրի ներսում: Հայաստանը՝ դեպի Արևմտյան Եվրոպա, Կանադա և ԱՄՆ մեկնելու համար անկանոն կարգավիճակով միգրանտների համար որպես տարանցիկ կետ ընկալելը փաստարկվում է ներգաղթային մակերեսային հսկողությամբ, ինչպես նաև Հայաստանի ցանկությամբ՝ գրավելու զբոսաշրջիկների, գործարար նպատակներով ճամփորդողների և ներդրում կատարողների, որի արդյունքում ԵՄ քաղաքացիների համար վիզայի պահանջը վերջերս վերացվեց:

Խնդրահարույց համարվող քաղաքացիները հիմնականում աֆրիկացիներն են ու իրանցիները, որոնք ճամփորդում են կեղծված անձնագրերով և (կամ) կեղծ վիզաներով: Աֆրիկացիների թիվը կտրուկ նվազել է, քանի որ 2012 թվականին աֆրիկյան երկրների քաղաքացիների մեծ մասը պետք է վիզա ստանար մինչև ժամանելը: Վերջին միտումները, ըստ ԱԱԾ-ի, վերաբերվում էին իրանցիներին, որոնք կեղծ անձնագրերով և (կամ) վիզաներով ժամանում են Թուրքիայից և Արաբական Միացյալ Էմիրություններից: Քանի որ այս երկրներում գործում է մեկնման շատ մակերեսային ստուգման համակարգ, թվում է, թե անկանոն կարգավիճակով միգրանտները մտածում են, որ եթե իրենց անձնագրերում կնիք է դրվում առանց մանրազնին ուսումնասիրման, ապա դա օրինականացնի նրանց մյուս երկրներում գործող ներգաղթային հարցերով աշխատակիցների մոտ: Չենք կարծում, թե նրանց նպատակը Հայաստանում մնալն է, այլ փորձելն է Հայաստանից մեկնել Արևմտյան

102 Ֆինանսավորումն իրականացվում է ՎԶԵԲ-ի, ԵՆԲ և Հարևանության ներդրումային գործիքի, Հայաստանի Կառավարության և ՄԱԿ ԶԾ-ի կողմից:

103 Բացման արարողությունը տեղի է ունեցել 2013 թվականի սեպտեմբերի 27-ին:



Եվրոպա, ԱՄՆ և Կանադա: Խաբեությունը հիմնավորելու համար այն իրանցիները, որոնք նախկինում ճամփորդել են ավանդական հանդերձանքով, հիմա հազնում են արևմտյան հագուստ, որպեսզի արժանահավատություն հաղորդեն այն քաղաքացիության մասով, որ նրանք վերցրել են: Երբ պարզվում է կեղծված փաստաթղթերով ուղևորների ինքնությունը, նրանք սովորաբար իրենց մոտ թաքցրած են լինում նաև իրենց իրական փաստաթղթերը, և երբ նրանք ներկայացնում են դրանք և ի ցույց դնում իրենց իրական ինքնությունն ու քաղաքացիությունը, նրանց թույլատրում են ցանկացած ուղղությամբ տոմս գնել, որը պրագմատիկ մոտեցում է Հայաստանի մասով, սակայն չի համապատասխանում միջազգային գործելակերպին: Եթե նրանք չեն ներկայացնում իրենց իրական փաստաթղթերը, ապա նրանք հետ են վերադարձվում, որտեղից ժամանել են կամ իրենց հայրենի երկիր:

Նաև ԱԱԾ-ի համաձայն՝ այս պահին միջսահմանային կազմակերպված հանցավորության ու ահաբեկչության հետ կապված խնդիրներ չկան, չնայած որ այդ խնդիրը կար մինչև այն պահը, երբ աֆրիկացիները և ասիացիները պետք է վիզա ստանային արտերկրում: Հայաստանը, այս պահին, կեղծված անձնագրերի ու կեղծ փաստաթղթերի մատակարարման երկիր էր, սակայն ԱԱԾի մոտ այն ընկալումն է, որ այդ հարցով լուրջ աշխատանք է կատարվել ու մեծամասամբ դադարեցվել է այդ գործելակերպը:

Եթե սահմանապահ ծառայողները հսկողություն իրականացնելիս ուղևորների հետ կապված որևէ խնդրի են առնչվում՝ կեղծիքի կամ վիզայի բացակայության, կամ որևէ այլ պատճառով, նրանք դիմում են ավագ ծառայակցի, և եթե անհրաժեշտ է երկրորդային ստուգում, ապա տվյալ անձին պարեկային խումբն ուղեկցում է հարցաքննության սենյակ, որը գտնվում է տվյալ շենքի երկրորդ հարկում գտնվող ներգաղթային հարցերով զբաղվող գրասենյակում: Եթե խնդիրը չի լուծվում 3 ժամվա ընթացքում, կամ եթե ուղևորների մուտքը մերժվում է և նրանք պետք է սպասեն հեռացման, ապա նրանց տեղափոխում են ձերբակալման կենտրոն: Ձերբակալումը շատ հազվադեպ է տեղի ունենում. հաղորդվել է ամսական 5-8 մարդու մասին: Մերժման դեպքերը նույնիսկ ավելի հազվադեպ են, սակայն Բագրատաշենում պաշտոնական վիճակագրություն դրա վերաբերյալ գոյություն չունի: ԱԱԾ ուղղված հետազոտ հարցումների պատասխաններում նշվել է մուտքի մերժման 190 դեպքի մասին 2013 թվականի հունվարի 13-ից սկսած, սակայն այդ մերժումները չեն գրանցվել ըստ քաղաքացիության ու մերժման պատճառների: Մերժման հիմնական (եթե ոչ միակ) պատճառը կեղծված փաստաթղթերն էին, վիզայի բացակայությունը կամ ժամկետից ավելի երկար արգելված գտնվելու փաստը:

Ապաստանի դիմումների ներկայացման, և ոչ էլ առանց ուղեկցության անչափահասների հետ կապված դեպքեր օդանավակայանում չի գրանցվել: Ապաստանի դիմումները մշտապես ներկայացվում են երկրի ներսում: Ուղևորներին երբեմն կարճ ժամանակով ձերբակալում են մեկնման ժամանակ՝ հիմնականում կեղծված փաստաթղթերի համար կամ թույլատրված ժամկետից ավելի երկար գտնվելու համար: Կեղծված փաստաթղթերով ուղևորների հետ աշխատանքային ընթացակարգը նույնն է, ինչ ժամանողների հետ, նրանք կամ ներկայացնում են իրական փաստաթղթեր, և նրանց թույլատրում են շարունակել ճանապարհը, կամ հետ են ուղարկվում իրենց հայրենի երկիր: Թույլատրված ժամկետից ավելի երկար գտնվողները փոխանցվում են ոստիկանությանը, որպեսզի վերջիններս նրանց նկատմամբ տուգանք կիրառեն: Եթե նրանք չեն կարող վճարել, նրանց թույլատրում են շարունակել ճանապարհը, սակայն արգելում են կրկին մուտք գործել երկրի տարածք 12 ամսով:

2012 թվականի համար տարեկան ուղևորահոսքը կազմել է 1.6 միլիոն մարդ: Սահմանապահներն աշխատում են 16 ժամ հերթափոխով, և տեղակայվում են հերթափոխի պետի կողմից՝ կախված հոսքերից, ժամանման, մեկնման և VIP սրահներում: Եթե որևէ մեկը ձերբակալվում է, երկու ծառայողներ ուղարկվում են օդանավակայանի ձերբակալման վայր: Կոնկրետ ձերբակալման համար նշանակված մշտական ծառայողներ չկան կենտրոնում, որը զարմանալի



չէ՝ ձերբակալման շատ հազվադեպ դեպքերն ի նկատի ունենալով: Ձերբակալվածներին վերահսկելու վերաբերյալ ծառայողների համար կոնկրետ վերապատրաստման ծրագրեր առկա չեն, սակայն դրա վերաբերյալ վերապատրաստումն ընդգրկված է ընդհանուր վերապատրաստման ծրագրում, որը ներկայացվում է աշխատանքի ընդունելու ժամանակ, և նշվել է, որ բոլոր ծառայողները տեղյակ են իրենց պարտականությունների մասին մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային ուղեցույցների շրջանակներում, մասնավորապես ապաստանի առնչությամբ: Որոշում կայացնելու ժամանակահատվածը շատ հազվադեպ է գերազանցում մեկ օրը, և ձերբակալվածների ճնշող մեծամասնությունն ազատ է արձակվում 24 ժամվա ընթացքում: Տեսականորեն, Կենտրոնում պահելը առավելագույնը 72 ժամ է տևում, որը պայմանավորված է նախնական ձերբակալման համար 24 ժամվա ընթացքում դատարանի թույլտվությունը ստանալու անհրաժեշտությամբ, սակայն կրկին տեսականորեն, դատարանները կարող են թույլ տալ պահելու ժամկետի երկարաձգում մինչև 90 օր:

5.3 Բագրատաշենի ՍԱԿ-ի վերափոխումը

Բագրատաշենի սահմանի անցման կետի վերափոխման վերաբերյալ մանրամասները տրամադրվել են Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագրի (ԱՄԱԿ ԱԾ) կողմից: Այդ աշխատանքը նախաձեռնվել է որպես ԵՄ-ի կողմից օժանդակող «Հայաստանի և Վրաստանի միջև Նինոծմինդա-Բավրա սահմանի անցման կետում սահմանի կառավարման կարողությունների մակարդակի բարձրացում» (NBIBM) տարածաշրջանային ծրագրի մաս, որի ներքո այդ ծրագիրը ֆինանսավորվում է:

NBIBM ծրագիրը փոխարինեց «Հարավային Կովկասում սահմանների համալիր կառավարում» (ՀԿԱՀԿ) ծրագրին, որն իրականացվում էր 2009-ից 2012 թվականը: Այս ծրագիրը հիմնականում ներառում էր համագործակցության ձևավորմանն ուղղված քայլեր Հայաստանի ու Վրաստանի և Վրաստանի ու Ադրբեջանի միջև. պայմանավորված քաղաքական իրավիճակով և վիճելի սահմանով՝ հնարավոր չեղավ անմիջական համագործակցության եզրեր գտնել Հայաստանի ու Ադրբեջանի միջև:

NBIBM ծրագրի ընդհանուր բյուջեն 61 միլիոն եվրո է, և դրա աշխատանքները պլանավորվում է իրականացնել մինչև 2015 թվական: Ներդրումների հիմնական մասը տրամադրում են Եվրոպական ներդրումային բանկը և Վերակառուցման ու զարգացման եվրոպական բանկը (41 միլիոն), ավելի քիչ ներդրումներ են կատարել Հարևանության ներդրումային հիմնադրամը, ՄԱԿ ԶԾ-ն և Հայաստանի Կառավարությունը: Ծրագրի հիմնական նպատակն է Հայաստան/Վրաստան սահմանի Բավրա, Բագրատաշեն ու Գոգավան երեք ցամաքային սահմանի անցման կետերի նորացումն ու վերափոխումն է: Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2015 թվականին: ՄԱԿ ԶԾ-ի դերն է կառավարել և համակարգել ծրագիրը՝ ապահովելու համար, որ բոլոր պետական մարմինների կարիքները բավարարվեն՝ ԵՄ-ին համապատասխան ժամանակակից ՍԱԿ-ներ ունենալու մասով: Բագրատաշենի ու Բավրայի անցակետերը նույն չափսի կլինեն՝ միջին հոսքը 2000 ճամփորդող մեքենաներ, 600 բեռնափոխադրող մեքենաներ և 500 հետիոտն, իսկ Գոգավանի անցակետը մի քիչ փոքր կլինի:

Պլանները մշակվել են ֆրանսիական ընկերության կողմից, որը կոչվում է Inbrevi՝ երեք ՍԱԿ-ների վերափոխման համար: Բագրատաշենի անցակետի համար նախատեսված պլաններով նախատեսվում է գոյություն ունեցող շինության գրեթե ամբողջական քանդում, որին կհաջորդի ավելի մեծ սահմանի անցման հսկողության կառույցի շինարարությունը՝ դեպի այդ կառույցը տանող նոր քառուղի կամրջով և վարչական շենքերով, որում կտեղակայվեն ՍԱԿ-ում ներկայացված բոլոր պետական մարմինները՝ ԱԱԾ-ն, Ոստիկանությունը, Մաքսային ծառայությունը, Գյուղատնտեսության նախարարությունն ու Առողջապահության



Նախարարությունը: Նոր տարածքում կգործի նաև բեռնատարների գնման սարք (սկաներ) և հյուրատուն: Տեխնոլոգիական բարելավումներ կկատարվեն նաև ՍԷԿ-ում, որով կահագանգվի նաև առողջապահության ու գյուղատնտեսության պաշտոնյաներին, սահմանապահների միջոցով, այն երկրներից ճամփորդողների մասին, որոնք կարող են վտանգ ներկայացնել այդ երկու տարածքներում: Նպատակն է դրանք դարձնել «մեկ պատուհանի» սկզբունքով ՍԱԿ-ներ՝ հետագա ուղևորահոսքերը բարելավելու համար: Բոլոր անցակետերը կունենան ԵՄ չափանիշներին համապատասխանող ձերբակալված անձանց պահելու հաստատություններ, որի համար խնդրանքով դիմել են ՄՄԿ-ին ու ՄԱԿ ՓԳՀ-ին:

5.4 Ձերբակալման գործընթացը Բագրատաշենում. գնահատում

ՍԱԿ-ներում հատուկ կացարանների անհրաժեշտությունը հստակ կերպով թելադրված կլինի ձերբակալման ծրագրված մակարդակով, որը Բագրատաշենում ներկայումս ցածրից ավելի ցածր է: Ձերբակալման քանակի վրա ազդեցություն ունեցող գործոնների մասին արդեն անդրադարձ կատարվել է, սակայն արժե դրա մասին կրկին խոսել և թեման զարգացնել հատկապես Բագրատաշենի համատեքստում:

Հայաստանի չորս սահմաններից երկուսը՝ Թուրքիայի ու Ադրբեջանի հետ, փակ են: Հետևաբար հնարավոր չէ օրինական հատել սահմանը և դժվար է անօրինական հատել այն, որը բնականաբար սահմանափակում է թե՛ տարանցիկ, և թե՛ Հայաստանը որպես իրենց վերջնական նպատակակետ դարձնելու փորձ անող հնարավոր միգրանտների հոսքը դեպի Իրանի ու Վրաստանի սահմաններ: Իրանի հետ սահմանը շատ կարճ է և փշալարերով է առանձնացված ու գործում է մեկ ՍԱԿ: Կարելի էր ակնկալել, որ Իրանից տնտեսական միգրացիան կլինի նվազագույն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իրանի ՀՆԱ-ն Հայաստանի ՀՆԱ-ից երկու անգամ ավելի է, սակայն կացության թույլտվության վերաբերյալ գործերը ցույց են տալիս, որ 2010 թվականի հունիսի 1-ից 2011 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրանցիներին տրվել է 2398 կացության թույլտվություն, որոնց ճնշող մեծամասնությունը ժամանակավոր հիմունքներով՝ ուսման նպատակով՝ 1700, որին հաջորդում է աշխատանքը՝ 357 և ընտանեկան հանգամանքները՝ 199: Բալանսը կազմում է մինչև 53 մշտական թույլտվություններ աշխատանքի համար և 89 ընտանեկան հանգամանքներով տրված մշտական թույլտվություններ:¹⁰⁴ Այդ վիճակագրական տվյալները փաստում են, որ իրանցիների համար առկա են «ձգող գործոններ», որը կարող է պայմանավորված լինել Իրանում գործող հայկական մեծ սփյուռքով, սակայն չի թվում, թե առկա է որևէ հասանելի տեղեկատվություն, թե ինչն է դրդում ուսանողներին Հայաստանում սովորելու համար, կամ ինչ աշխատատեղեր են աշխատողները լրացնում: Նաև հստակ չէ, թե ինչպես են հետևում ժամանակավոր թույլտվություններ ունեցողներին, և քանիսն են դառնում ներգաղթային իրավախախտներ՝ ներգաղթային կանոնները չպահպանելու պատճառով: Տրամաբանությունը թելադրում է, որ ՍԱԿ-ների երկարության ու թվի պատճառով Վրաստանի հետ սահմանը անկանոն կարգավիճակով միգրանտների ներթափանցման ամենամեծ վտանգը կարող է ներկայացնել՝ անկախ նպատակից: Տնտեսական միգրացիան դժվար թե էական «ձգող գործոն» լինի, քանի որ Հայաստանն ու Վրաստանն ունեն շատ նման ՀՆԱ և տնտեսական աճի ցուցանիշներ, որը հիմնավորվում է նախկինում վկայակոչված կացության թույլտվության վերաբերյալ գործերում, որով ցույց է տրվում, որ վրացիներին ընդհանուր առմամբ 247 թույլտվություն է տրվել նույն 18 ամսյա ժամանակահատվածում: Դա, ամեն դեպքում, չի բացառում երրորդ երկրի անօրինական միգրանտներին՝ Հայաստանում աշխատանքի նպատակով դիմելու համար կամ այն օգտագործել որպես տարանցիկ կետ Վրաստանի սահմանով դեպի Արևմուտք և Ծոցի երկրներ մեկնելու համար:

104 Հայաստանի ոստիկանություն. թույլտվությունների վերաբերյալ գործեր, 2012 թվական:



Թույլատրված ժամկետից ավելի երկար գտնվողների և այլ ներգաղթային իրավախախտումների վերաբերյալ վիճակագրական տվյալների, ինչպես նաև ներքին իրավակիրառ գործունեության բացակայությունը բարդություններ է առաջացնում իրավախախտման ծավալները գնահատելու գործում: Թվում է՝ շատ քիչ տեղեկատվություն է առկա նաև այն անկանոն կարգավիճակով միգրանտների վերաբերյալ, որոնք մուտք են գործում այլ երկիր տարանցելու նպատակով, սակայն նրանց խոչընդոտում են՝ հավանաբար միջոցների բացակայության, մտադրվող նպատակակետի համար ոչ համարժեք փաստաթղթերի կամ դեպի այնպիսի այլ երկիր մեկնելու հետ կապված պայմանավորվածություններով, որի ճանապարհը անցնում է այս տարածքով, ուստի, նրանք պետք է անօրինական աշխատանքի անցնեն: Թվում է՝ մակերեսային հսկողությունը տարածվում է նաև փոխադրամիջոցների խուզարկության վրա, որը, կարծես, հազվադեպ է և թերանում է տեխնիկական աջակցության տեսանկյունից: Մարդկանց մաքսանենգ ճանապարհով տեղափոխումն ու թրաֆիքինգը, հատկապես բեռնատար փոխադրամիջոցներում, շատ բնորոշ է ամբողջ աշխարհին, և որոնողական աշխատանքները, նախընտրելի է, որ դրանք զուգորդված լինեն հետախուզական տվյալներ ձեռք բերելու միջոցներով, պետք է հիմնական գործունեությունը լինեն: Որպես վերափոխման ծրագրի մի մաս Բագրատաշենի ՍԱԿ-ում փոխադրամիջոցների զննման սարքի (սկաների) տեղադրման վերաբերյալ առաջարկը շատ ողջունելի նախաձեռնություն է, և նույնիսկ եթե դրա սեփականատերը մաքսային ծառայությունն է, սովորական երևույթ է, եթե այդ սարքավորումը օգտագործի նաև ներգաղթային ծառայությունը: Սկաներները հատկապես արդյունավետ են ծպտյալ անկանոն կարգավիճակով միգրանտների թաքստոցները հայտնաբերելու համար: Եվ վերջապես, բոլոր երկրները միջազգային պարտավորություն ունեն խոչընդոտելու իրենց տարածքով անցնող անօրինական միգրացիոն ուղիները, և ինչպես կարևորվել է նախկին զեկույցներում, մուտքի առավել գործուն հսկողության վերաբերյալ մոտեցումը ամենայն հավանականությամբ ներգաղթի մասով արձանագրված չարաշահումների ավելի իրատեսական և ճշգրիտ պատկեր կապահովի, և արդյունքում՝ միգրանտների ժամանակավոր կացարանի բարձր անհրաժեշտություն:

Բագրատաշենում գտնվող ձերբակալված անձանց պահելու կացարանը ներկայումս ոչ նպատակային է կառուցված, ոչ էլ ամբողջական տեսք ունի: Սակայն, քանի որ ակնհայտորեն շատ քիչ անհրաժեշտություն կա անկանոն կարգավիճակով միգրանտներին ձերբակալելու համար, այն ծառայում է այն նպատակով, որի համար ստեղծվել է, որը, թվում է, օգտագործվում է շատ հազվադեպ՝ անկանոն կարգավիճակով միգրանտներին մեկ գիշերով տեղավորելու համար, մինչև նրանց կտեղափոխեն Երևան՝ հետագա հետաքննության համար: Կարելի է ենթադրել, որ քանի որ ցամաքային սահմանին հայտնաբերված՝ անօրինական համարվող միգրանտների ճշող մեծամասնությունը կարող է հեշտությամբ հետ ուղարկվել, եթե ոչ անմիջապես, ապա առնվազն երեք ժամ հետո, որը թույլատրվում է երկրորդային ստուգման համար, դրանից ավելի ոչինչ անհրաժեշտ չէ: Դա հեռատեսական մոտեցում չէ, հատուկ կացարանը, իր ներկայիս տեսքով, ընդհանրապես համարժեք չէ որպես կարճաժամկետ պահելու վայր համարվելու համար, քանի որ այն միանգամից կգերբեռնվի՝ պայմանավորված ծառայողների սահմանափակ քանակով, որոնք կարող են երկրորդային ստուգում իրականացնել, ինչը, հնարավոր է, որ կհանգեցնի երկար ձգձգումների:

Բագրատաշենի ՍԱԿ-ը վերափոխելուն ուղղված ՄԱԿ ԶԾ-ի համակարգած NBIBM ծրագրով առաջարկվում է լուծում ներկայումս ենթաստանդարտներով գործող միգրանտների կացարանի համար, չնայած, որ դա, անկասկած, միանգամից չի իրականացվի, այլ կպահանջվի երկու տարի՝ այն ավարտին հասցնելու համար: Մանրամասն պլանների մասին դեռ համաձայնություն ձեռք չի բերվել, սակայն առաջարկվում է լայնընդարկուն եղանակով մոդելավորել ձերբակալման կենտրոնը՝ վերածելով այն նպատակային կառուցված հաստատության, ինչպես դա «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում է:




Ի պատասխան կացարանների չափսերի ու կառուցվածքի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու՝ ՄԱԿ ԶԾ-ի կողմից ՄՄԿ-ին ուղղված խնդրանքին՝ Խումբը ներկայացրել է ուղղորդում՝ հիմնված «Միգրացիոն գործելակերպի վերաբերյալ հիմնական տեղեկություններ» ՄՄԿ հրապարակման մեջ ընդգրկված ուղղորդման վրա: Դա հիմնված է այն ելակետային պայմանի վրա, որ ցամաքային սահմանի վրա գտնվող ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահելու ցանկացած վայր, գոնե գործող օրենսդրության ու ընթացակարգերի համաձայն, պետք է լինի կարճաժամկետ և ամենայն հավանականությամբ չպետք է գերազանցի 24 ժամը: Այս հաստատապես չի գերազանցի օրենքով թույլատրված 72 ժամը: ՍԱԿ-ի վարչական շենքի ներկայիս համընդհանուր նախագծով հնարավորություն է ընձեռվում 8-10 անձ տեղավորելու համար, որը տարողության իրատեսական գնահատում է՝ թույլ տալով գալիք տարիների համար ապահովել ավելացող կարիքը:

5.5 Բագրատաշենի ՍԱԿ-ում տեղակայված կացարանով ապահովման հարուկ կենտրոնի կառուցվածքը

Առաջարկվում է նվազագույնն ապահովել հետևյալ կացարանը՝

- Ընդունման սենյակ՝ հենց մուտքից հետո, ապակե վահանակով, որտեղից ամբողջությամբ երևում է ընդհանուր օգտագործման տարածքը, կահավորված դեխսերով (շերտավարագույր), երբ պահանջվում է գաղտնիության ապահովում: Զուգարան ու լվացարան՝ անձնակազմի օգտագործման համար անվտանգ պահասենյակ
- ընդունման գրասենյակին կից դահլիճ, որն առանձնացված է ընդհանուր օգտագործման տարածքից դռնով
- ընդհանուր օգտագործման կենտրոնական տարածք՝ կահավորված հարմարավետ նստատեղերով
- ննջասենյակ 1՝ կանանց ու երեխաների համար նախատեսված ընտանեկան սենյակ՝ 4 հատ մեկտեղանոց մահճակալ
- ննջասենյակ 2՝ կամ 4 մեկտեղանոց մահճակալ կամ երկու երկհարկանի մահճակալներ, որը նախատեսված է արական սեռի մինչև 4 ներկայացուցչի տեղավորելու համար
- անվտանգ ննջասենյակ՝ մեկ մեկտեղանոց մահճակալ
- խոհանոց՝ մինչև 4 անձի համար բավարար ճաշելու տարածքով
- հարցաքննության սենյակ
- կանանց և տղամարդկանց զուգարաններ, ցնցուղարաններ ու լվացարաններ

Ստորև նշված հատակագծում ներկայացված է հնարավոր կառուցվածքը և ոչ թե ամբողջական մասշտաբը:



5.6 Կառուցվածքի նկարագրությունը

Այս կառուցվածքն առաջարկելիս հատուկ ուշադրություն է դարձվել մի շարք պահանջների բավարարմանը, որոնց մի մասը նշված է եղել Կառավարության որոշման մեջ¹⁰⁵, որոնք համառոտ ներկայացված են ստորև՝

- Հատուկ կացարանները ստեղծվում են ՍԱԿ-ի տարանցիկ գոտիներում՝ հնարավորություն տալու պարզելու հանգամանքներն ու միգրանտ օտարերկրացիների ինքնությունը և նրանց նկատմամբ որոշում ընդունելու:
- Յուրաքանչյուր անցման կետում պետք է լինի առնվազն երկու՝ տարբեր սեռերի անձանց կամ կանանց և երեխաների, կամ տարբեր երկրների քաղաքացիների (իր ցանկությամբ) առանձին պահելու համար հատուկ կացարան:
- Հատուկ կացարանները պետք է ապահովված լինեն սեղանով, անշարժ աթոռներով, անշարժ պահարանով՝ ձեռքի իրերի և ուղեբեռի համար, սպասքի պարագաներով (պլաստմասսայից պատրաստված), լվացարանով, սանհանգույցով, մահճակալով, օդափոխիչով, ինչպես նաև պետք է ունենան վթարային էլեկտրական լուսավորություն:
- Հատուկ կացարաններում պահվող օտարերկրացիների նկատմամբ հսկողությունն իրականացնում է սահմանային վերահսկողության ստորաբաժանման հերթափոխը՝ հերթափոխի պետի պատասխանատվությամբ:

Չնայած որ Որոշման մեջ նշվում է երկու՝ տարբեր սեռերի անձանց կամ կանանց և երեխաների, կամ տարբեր երկրների քաղաքացիների առանձին պահելու համար հատուկ կացարանի մասին, այնուամենայնիվ, ենթադրվում է, որ ընդունելի կլինի այս պահանջը բավարարել՝ նախատեսելով առանձին կառույցներ միևնույն կենտրոնի սահմաններում՝ հաշվի առնելով տեղավորման կարճ տևողությունը: Բագրատաշենի և հավանաբար մյուս ցամաքային անցման կետերի նախագծման չափորոշիչներով թելադրվում է, որ տարածքը սահմանափակ է և հետևաբար ընդհանուր տարածքների կրկնօրինակման անհրաժեշտություն չի լինի՝ պայմանով, որ կենտրոնները պատշաճ կերպով վերահսկվեն ու ստուգվեն: Այնուամենայնիվ, եթե քաղաքականության վերաբերյալ որոշումներ կա-

105 «Հայաստանի Հանրապետության սահմանային անցման կետերում և տարանցիկ գոտիներում հատուկ կացարանների գործունեության ու օտարերկրացիներին այնտեղ պահելու կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի N 127-Ն որոշում:



յացնողները որոշեն, որ ամբողջությամբ առանձնացված տարածքներ ունենալը հրամայական է, առաջարկվող կառուցվածքն ինքնին հնարավորություն է տալիս համեմատաբար հեշտությանբ առանձնացնել այն՝ կիսելով ընդհանուր օգտագործման տարածքը: Տարածքի մասով միևնույն սահմանափակումների և կարճ ժամկետով ձերբակալելու շրջանակներում պետք է քաղաքականության վերաբերյալ նաև որոշում կայացվի հաշմանդամ միգրանտներին ձերբակալելու վերաբերյալ՝ որոշելու համար, թե արդյոք հաշմանդամների համար նախատեսված հարմարությունները՝ անվասայլակի մուտքը զուգարան, ցնցուղարան, նրանց համար նախատեսված քնելու տեղեր, պետք է ներառվեն նախագծում: Եթե ընդունվի հաշմանդամ անձանց համար այլընտրանքային մեխանիզմներ մշակելու և կացարանով ապահովման հատուկ կենտրոններում նրանց չսահմանափակելու մասով քաղաքականության վերաբերյալ որոշում, ապա որևէ դրույթ այլևս անհրաժեշտ չէ: Դա կլինի խորհուրդ տրված տարբերակը, հատկապես քանի որ ՍԱԿ-ի վերափոխման պլաններում կա նաև նոր հյուրանոցի կառուցում, որից հավանաբար կկարողանան օգտվել հաշմանդամները, ինչպես նաև դրանք կարող են օգտագործվել, անհրաժեշտության դեպքում վերահսկողության ներքո, հաշմանդամ միգրանտների գիշերակացի համար:

Նախասրահի

Նախասրահի համար պահանջվում է խիստ ռեժիմով հսկողություն՝ դեպի դուրս բացվող ամրացված դռնով: Վարչական գրասենյակը տեղակայված է դրսի մուտքի դռնից անմիջապես ձախ: Հարցաքննության սենյակը գտնվում է աջ կողմում: Նախասրահի ներքին դուռը նույնպես պետք է խիստ ռեժիմով հսկվի և բացվի դեպի ընդհանուր օգտագործման տարածք: Դռների արանքում պետք է ստեղծվի օդամեկուսիչ անցախուցի ազդեցություն, և դրանք չպետք է երբեք միևնույն ժամանակ չկողպված լինեն:

Վարչական գրասենյակը

Վարչական գրասենյակը նախատեսված է հատուկ կացարանի անձնակազմի կողմից օգտագործման համար՝ կենտրոնում պահանջվող վարչական գործառույթներն իրականացնելու համար, այսինքն՝ միգրանտների գրանցումը, անձնական իրերը պահելու, մատնահետքեր վերցնելու և այլն: Անձնակազմի կողմից օգտագործման համար նախատեսված է նաև զուգարան ու լվացարան: Գրասենյակը պետք է լինի այնպիսի համարժեք չափսի, որպեսզի այնտեղ տեղավորվի 2 սեղան, 2 գրասենյակային աթոռ, 2 կամ 3 փափուկ աթոռ և ցածր սեղան: Պետք է նախատեսել անվտանգ պահասենյակ՝ միգրանտների անձնական իրերը պահելու համար, որոնք չի կարելի թողնել նրանց մոտ, ինչպես նաև կենտրոնում պահանջվող պարագաներ ու սարքավորումներ, ինչպիսիք են՝ մաքրող նյութերը, մատնահետքեր վերցնելու համար նախատեսված սարքավորումները և այլն: Պետք է տեղադրվի ամրացված ապակե պատուհան՝ ընդհանուր օգտագործման համար տարածքը դիտելու համար՝ շերտավարագույրով՝ գաղտնիությունը պահպանելու համար: Կպահանջվեն համակարգչի ու հեռախոսային կետեր, և հատուկ ուշադրություն պետք է դարձնել ընդհանուր տարածքներում գաղտնի տեսահսկողության համակարգի (ԳՏՀ) համար հաղորդալարեր անցկացնելու համար:

Կառավարության որոշման մեջ նշվում է, որ հատուկ կացարանները պետք է վերահսկվեն հերթափոխի պետի կողմից նշանակված սահմանապահ ծառայողների (ԱԱԾ) կողմից, որը հիմնավորված տարբերակ է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կենտրոնները մշտապես չեն զբաղեցվելու:



Ննջասենյակները

Երկու ննջասենյակ է նախատեսված՝ իգական սեռի ներկայացուցիչների/ընտանեկան ու արական սեռի ներկայացուցիչների համար, և դրանց կից կան նաև զուգարան ու լվացվելու հարմարանքներ, չնայած որ դրանք միացված չեն, քանի որ դրանցից հնարավոր չի լինի օգտվել ընդհանուր օգտագործման տարածքից: Տարբեր քաղաքացիներին առանձնացնելը անկասկած ցանկալի է երկարաժամկետ կացարաններում, սակայն ժամանակավոր կենտրոններում դա այդքան կարևոր չի լինի, քանի որ այնտեղ գտնվելու առավելագույն տևողությունը դժվար թե գերազանցի 24 ժամը: Հետևաբար առաջարկվում է տեղադրել արական սեռի ներկայացուցիչների համար համատեղ օգտագործվող մահճակալ, և յուրաքանչյուր ննջասենյակ պետք է կահավորվի այնպես, որ այնտեղ տեղավորվի 4 անձ: Ննջասենյակները պետք է կահավորվեն անձնական իրերը տեղավորելու համար նախատեսված պահարաններով և արկղերով: Կահույքի մեծ կտորները պետք է անշարժ լինեն: Դռները պետք է հնարավոր լինի կողպել ներսի կողմից, սակայն դրանք պետք է հնարավոր լինի բացել բանալիով նաև դրսի կողմից: Առաջարկվող չափսերը հետևյալներն են՝

- Ընտանեկան սենյակում՝ մեկտեղանոց մահճակալներով, նվազագույն ընդհանուր տարածքի մասով պահանջը հետևյալն է՝ մեկ անձի համար նվազագույն բնակելի տարածքը՝ 3.75մ², յուրաքանչյուր տեղավորված միգրանտի համար ընդհանուր 6,75մ² -ից 3.0մ² չճանրաբեռնված օրվա համար տարածք՝ կազմելով 27մ²-ից ընդհանուրը 4մ²:
- Երկհարկանի մահճակալներով կահավորված սենյակների մասով յուրաքանչյուր երկտեղանոց մահճակալի համար 6.5մ² ընդհանուր մակերեսի նվազագույն պահանջ է սահմանված: Յուրաքանչյուր տեղավորված միգրանտի համար պահանջվող՝ 3.25մ² սենյակի տարածքին գումարելով՝ յուրաքանչյուր տեղավորված միգրանտի համար ընդհանուր մակերեսը կազմում է 6.5մ² (6.5մ² մեկ մահճակալի համար՝ բաժանված 2 տեղավորված միգրանտով = 3.25մ² մեկ տեղավորված միգրանտի համար + 3.25մ² սենյակ = 6.5մ² մեկ տեղավորված միգրանտի համար), ընդհանուրը՝ 26մ²:

Ընդհանուր օգտագործման տարածքը

Ընդհանուր օգտագործման կենտրոնական տարածքը պետք է կահավորված լինի առնվազն 8 տեղանոց հարմարավետ նստատեղերով, ցածր սեղանով, գրապահարաններով և ամսագրերով ու հեռուստացույցով: Ձերբակալված անձինք կարող են անսահմանափակ օգտվել դրանից: Կարող է տեղադրվել մեծ արկղ երեխաների խաղալիքների ու խաղերի համար:

Խոհանոցը

Խոհանոցային/անվելու տարածքում պետք է տեղադրվեն հիմնական հարմարությունները մենդի պատրաստման, պահպանման ու սպառման համար: Հաշվի առնելով, որ դա ժամանակավոր կացարան է, առաջարկվում է տեղադրել միայն միկրոալիքային վառարան մնունդը տաքացնելու համար, թեյնիկ ու սառնարան: Պետք է նաև տեղադրվի լվացարան/ցամաքեցնելու հարմարանք և պետք է լինի նաև ճաշելու տարածք՝ սեղանով և առնվազն 4 անձի համար նախատեսված նստատեղերով: Սարքավորումների մեջ պետք է լինեն դանակներ, բաժակներ, միկրոալիքային վառարանի համար նախատեսված սպասք (բլուրը պլաստմասե) և մաքրող պարագաներ ու նյութեր: Միգրանտները, նրանց ընտանիքի անդամներն ու ընկերները կարող են մնունդ բերել տարածք, կամ եթե դա հնարավոր չէ, դրանք կարող են բերվել համապատասխան պետական մարմինների կողմից:



Անվտանգ/մեկուսացված սենյակը

Անվտանգ ննջասենյակներ պետք է ապահովվեն այն միգրանտների համար, որոնք վտանգ են ներկայացնում իրենց և մյուսների համար: Այդտեղ պետք է տեղադրվեն մեկ մեկտեղանոց մահճակալ, սեղան և զգեստապահարան, որոնք բոլորն էլ պետք է ամրացված լինեն հատակին կամ պատերին: Լավագույն տարբերակն այն կլինի, որ լինի միացված զուգարան ու լվացարան, կամ սենյակը զբաղեցնող ցանկացած անձի անհրաժեշտ կլինի ուղեկցել ընդհանուր օգտագործման տարածքում տեղադրված զուգարան կամ լվացարան: Դուռը պետք է հնարավոր լինի կողպել միայն դրսի կողմից: Առաջարկվող չափսերն են՝

- Ընդհանուր տարածքը պետք է պակաս չլինի 4մ^2 բնակելի տարածքից և 3.5մ^2 չճանրաբեռնված սենյակից:
- Ընդհանուր տարածքը պետք է 7.5մ^2 -ից պակաս չլինի:
- Առաստաղի նվազագույն մաքուր բարձրությունը 2.5-3 մետր է, իսկ սենյակի նվազագույն լայնությունը՝ 2 մետր:

Հարցաքննության սենյակը

Առաջարկվում է հարցաքննության սենյակը տեղակայել վարչական գրասենյակի դիմաց: Դա հնարավորություն կտա ծառայողներին՝ միգրանտներին, այդ թվում՝ թրաֆիքինգի զոհերին ու առանց ուղեկցության անչափահասներին հարցաքննելու համար՝ որպես հետաքննության կամ ապաստանի ստուգման գործընթացի մաս, ինչպես նաև որպեսզի միգրանտները կարողանան գաղտնի խոսել անձնակազմի, ընտանիքի կամ օրինական ներկայացուցիչների հետ: Սենյակը կարող է բազմանպատակային լինել, և նաև կարող է օգտագործվել անձանց խուզարկելու ու բժշկական հետազոտության համար: Եթե պատշաճ կեպով կահավորված լինի, ապա այն կարող է նաև օգտագործվել որպես հանգստի սենյակ անձնակազմի համար, երբ այն այլ նպատակներով չի օգտագործվում: Այնտեղ պետք է տեղադրվի համակարգիչ/հեռախոս և հեռուստացույց:

Շինարարության ընթացքում, հետևյալ կետերը պետք է հաշվի առնել՝ նվազագույնի հասցնելու ձերբակալվածների կողմից իրենց կամ այլոց վնասելու հավանականությունը՝

- Ջրատար համակարգերը չպետք է վտանգի ենթարկվեն
- լուսավորման սարքերը պետք է լավ պաշտպանված լինեն
- այնպիսի սարքերը, ինչպիսիք են՝ հայելիները, լոգասենյակի պարագաները պետք է այնպիսի սարքերով մոնտաժված լինեն, որոնք հնարավոր չէ վնասել
- հակահրդեհային ցայտաջրմուղ համակարգը պետք է այնպես նախագծվի, որ կանխվի դրա նորմալ աշխատանքի խափանումը:

Ջեռուցման/օդորակման համակարգ պետք է տեղադրվի՝ ջերմաստիճանը $18\text{C} - 22\text{C}$ միջակայքում պահպանելու համար, և պետք է ապահովվեն ու նաև հակահրդեհային ցայտաջրմուղ համակարգ ու տարհանման համակարգ:

5.7 «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի հատուկ կացարանը

Հատուկ կացարանը տեղակայված է օդային գոտում առանձին շենքում՝ օդանավակայանի տերմինալի շենքից մոտ 1-ից 2 կիլոմետր հեռավորության վրա: Այնտեղ կարելի է հասնել մեքենայով՝ թռիչքուղով, և անվտանգության նկատառումներից ելնելով, այնտեղ հնարավոր չէ հասնել ոտքով, երևի թե միայն արտակարգ իրավիճակներում: Այն տեղակայված է ժամանակակից շինության առաջին հարկում և անկասկած համեմատաբար նոր է: Մաքուր ու կոկիկ կացարանը բաղկացած է՝



- ընդարձակ նախասրահից
- սեղանով ու բազմոցով կահավորված ընդունարանից
- ընդհանուր օգտագործման համար նախատեսված հյուրասենյակից՝ բազմոցով, աթոռներով, սեղանով, պահարաններով և հեռուստացույցով: անհրաժեշտության դեպքում, այս սենյակը նաև օգտագործվում է հարցաքննությունների համար
- խոհանոցից՝ միկրոալիքային վառարանով, սառնարանով, սեղանով և 4 աթոռով
- ննջասենյակից՝ 1-4 մեկտեղանոց մահճակալներ
- ննջասենյակից՝ 2-1 երկտեղանի մահճակալ և մանկական մահճակալ
- ննջասենյակից՝ 3-3 մեկտեղանոց մահճակալ և մանկական մահճակալ
- ննջասենյակից՝ 4-3 մեկտեղանոց մահճակալներ
- 2 ցնցուղարանից, 2 զուգարանից և 2 լվացարանից՝ բոլորն էլ նախասրահից դուրս

Բոլոր ննջասենյակներն ունեն պահեստավորման տարածք՝ արկղերի և (կամ) զգեստապահարանների տեսքով: Վտանգ ներկայացնող ձերբակալված անձանց համար մեկուսացված սենյակ գոյություն չունի, քանի որ այն համարվում է ոչ անհրաժեշտ, քանի որ շենքն անվտանգ տարածքում է:

Հաղորդվեց, որ ձերբակալման վերաբերյալ գործերը պահվում են թղթային տարբերակով, սակայն դրանք հասանելի չեն ուսումնասիրման համար, քանի որ, երբ չկան ձերբակալված անձինք, դրանք տեղափոխվում են տերմինալի շենքում գտնվող հիմնական գրասենյակ: Բժշկական հետազոտությունն ու բուժումն իրականացվում են Ավիացիոն բժշկական ծառայություն կոչվող կազմակերպության կողմից: Բոլոր ձերբակալվածներն անցնում են բժշկական հետազոտություն, երբնրանց առաջին անգամ ձերբակալում են: Թարգմանչական ծառայություններ նույնպես հասանելի են օդանավակայանում, և ԱԱԾ որոշ ծառայողներ վարժ տիրապետում են լայնորեն գործածվող լեզուներին՝ անգլերենին, ֆրանսերենին ու գերմաներենին: Ձերբակալվածների համար առկա են տարբեր տեսակի տեղեկատվական թերթիկներ, որոնք հիմնականում վերաբերում են ապաստան հայցելուն, իսկ խնդրանքի դեպքում հասանելի է նաև իրավաբանական օգնությունը: Ընդունարանում հնարավոր է անսահմանափակ օգտվել հեռախոսային ծառայություններից: Թիմին պատմել են, որ ձերբակալման մասով Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերը հասանելի են ծառայողներին, սակայն դրանք չեն կարող ներկայացվել, քանի որ դրանք գաղտնի են:

5.8 Ձերբակալման գործընթացը «Զվարթնոց» օդանավակայանում. գնահատումը

Քանի որ անօրինական մուտքի դեպքերի մեծ մասը տեղի է ունենում «Զվարթնոց» օդանավակայանում, ապատրամաբանական է, որնպատակային կառուցված հատուկ կազարանը պետք է տեղակայվի այնտեղ, սակայն չնայած դրան՝ ձերբակալման դեպքերը շարունակում են հազվադեպ բնույթ կրել: Դա առաջին հերթին պայմանավորված է խնդրահարույց քաղաքացիներին խոչընդոտելու նպատակով վիզային ռեժիմի կիրառմամբ՝ պահանջելով, որպեսզի նրանք ձեռք բերեն վիզան արտերկրում, որը դրսևորվել է աֆրիկյան բոլոր երկրներն ընդգրկելով այն ցանկում, որոնց քաղաքացիները պետք է մուտքի վիզա ձեռք բերեն արտերկրում: Երկրորդը, մակերեսային հսկողությունը նույնպես գործոն է, քանի որ, ինչպես և ցամաքային սահմանների դեպքում, ընդհանուր պրակտիկան այն է, որ ուղևորներին չհարցնեն ճամփորդության նպատակների արժանահավատության վերաբերյալ, եթե նրանց փաստաթղթերն իսկական են ու ամբողջական: Եթե արժանահավատության հարցը ստուգվեր առօրյան նպատակներով՝ խնդրահարույց դեպքերի մասով, տրամաբանական կլինի ենթադրել, որ կպահանջվեն ձերբակալման առավել հաճախ դեպքեր՝ հետաքննությանը

օժանդակելու համար: Երրորդը, այն անձանց, որոնք ճանփորդում են կեղծված կամ կեղծ փաստաթղթերով, թույլատրվում է իրենց ճանապարհը շարունակել դեպի իրենց ընտրած նպատակակետ երկիր, եթե նրանք ներկայացնում են իսկական փաստաթղթեր, որը սակայն չի համապատասխանում միջազգային գործելակերպին և զարմանալիորեն հակասում է ծպտյալ անօրինական մուտքի քրեականացմանը, որը պատժվում է մինչև 3 տարի ազատազրկմամբ: Եթե կեղծման դեպքերի մասով հետաքննություն իրականացվեր ավելի գործունե կերպով՝ կեղծված փաստաթղթերի մատակարարման ու կազմակերպմանը վերաբերող շարժառիթը, մեթոդներն ու կապը որոշելու համար, որոնք կարող են անհրաժեշտ դարձնել ձերբակալումը, ապա հնարավորություններ կլինեին ամրապնդելու միգրացիայի կառավարումը: Ներկայիս դիրքորոշումը՝ խնդրահարույց ուղևորներին հնարավորինս արագ հեռացնելն է, որը անկասկած տրամաբանական է, եթե հետաքննությունը պատշաճ կերպով իրականացվել է, և հետախուզական նպատակներով ձեռք է բերվել հնարավորինս շատ տեղեկատվություն: Պետք է նշել, որ սա առաջարկություն չէ, որպեսզի ձերբակալումը կիրառվի անհիմն կամ որպես պատիժ, այլ որ ձերբակալված անձանց պահելու կացարանի առկայությունը կաջակցի անկանոն միգրացիայի դեպքերի հետաքննությանը՝ թե՛ ի նպաստ Հայաստանում միգրացիայի կառավարմանը, և թե՛ համաշխարհային ծրագրերի գլոբալ համատեքստում:

«Զվարթնոցի» հատուկ կացարանը նպատակային է կառուցված և ապահովում է տեղավորման լավ չափանիշներ՝ ներկայիս պահանջների մասով բավարար տարողությամբ, և այն բավարար է կանխատեսելի ապագայում կարիքները բավարարելու համար: Աշխատանքային հերթափոխից կենտրոնում հերթապահության համար երկու ծառայողի հատկացնելու ներկայիս համակարգը տրամաբանական է, բայց, ինչպես և մյուս ՍԱԿ-ների դեպքում, եթե ձերբակալման դեպքերի թիվն ավելանա օրական կամ գոնե հաճախակի զբաղվածության մասով, պետք է հաշվի առնել այնտեղ մշտական անձնակազմի տեղակայման հարցը: Բացի դրանից՝ հսկողություն իրականացնող անձնակազմի՝ ըստ կոնկրետ դեպքի տեղակայման դեպքում, առաջ է գալիս վերապատրաստման խնդիրը, և այդ հարցը պետք է վերանայել՝ ապահովելու համար, որպեսզի ծառայողները պատշաճ վերապատրաստում անցնեն ձերբակալման վերաբերյալ: Մինչդեռ, ընդունվում է, որ այդ հարցը լուծվում է որպես հիմնական վերապատրաստման մի մաս, դժվար թե դա համապատասխանի միջազգային չափանիշներին՝ հատկապես պարբերաբար թարմացվող ու կրկնվող վերապատրաստման ծրագրերի առնչությամբ: Առաջարկվում է, որ մի խումբ ծառայողներ անցնեն բարձր մակարդակի և բավարար քանակի վերապատրաստման դասընթացներ՝ ապահովելու համար, որ առնվազն մեկ ծառայող հասանելի կլինի յուրաքանչյուր հերթափոխի համար՝ կենտրոնը ղեկավարելու համար, եթե տեղակայման անհրաժեշտություն առաջանա:

Հատուկ կացարանի կառուցվածքն ընդհանուր առմամբ ընդունելի է, սակայն այն առավելություն կունենա, եթե՝

- Նախասրահի միջանցքի վերջում տեղադրվի անվտանգության դուռ՝ դեպի վարչական մաս/ընդունարան մուտքը սահմանափակելու համար, իսկ հիմնական մուտքից հետո օդամեկուսիչ անցախուցի ազդեցություն ստեղծվի:
- Հարցաքննության առանձին սենյակ: Հարցաքննության գործող սենյակը կրկնապատկվում է որպես միակ հանգստի տարածք, որը շատ լավ է, երբ դա անհրաժեշտ չէ հարցաքննությունների համար, սակայն շատ վատ է, երբ այն զբաղված է: Այն նաև հարմար չէ խուզարկության, բժշկական հետազոտության կամ այլնի համար:
- Անվտանգ/մեկուսացված սենյակ, որը կարող է ապահովվել՝ գոյություն ունեցող ննջասենյակներից մեկը վերափոխելով: Այն կարծիքն է հնչել, որ կենտրոնը լինելով վերահսկվող գոտում, անվտանգ վայրում է, այնպես որ դրա անհրաժեշտությունը



չկա: Դրանով անտեսվում է այն ձերբակալվածին մեկուսացնելու հնարավորությունը, որը վտանգ է ներկայացնում իր կամ մյուսների համար: Բացի դրանից՝ ցանկացած ձերբակալված, որին հաջողվել է դուրս գալ կացարանից, որքան էլ որ անհավանական դա թվա, իրականում կհայտնվի օդանավակայանի թռիչքուղու վրա:

Վերանայման թիմը չկարողացավ ուսումնասիրել հատուկ կացարանում ձերբակալման վերաբերյալ գործերը, բայց եթե այդ գործերում դեռ չի նշվում, ապա հետագայում պետք է նշվի հետևյալը՝

- Հատուկ կացարան մուտք գործելու ժամն ու ամսաթիվը
- Անունը
- Սեռը
- Ծննդյան ամսաթիվը
- Քաղաքացիությունը
- Հատուկ կացարանից դուրս գալու ժամն ու ամսաթիվը
- Միգրանտի գտնվելու հաջորդ վայրը

Եթե ձերբակալումը ձգձգվի, այսինքն՝ ավելի երկար, քան մի քանի ժամն է, ապա պետք է բացել ձերբակալման անհատական գործ՝ հատուկ կացարանի անձնակազմի համար, գրառելու լրացուցիչ տվյալներ անձի բժշկական վիճակի, հոգեկան վիճակի, իր կամ այլոց համար վտանգավոր լինելու աստիճանի, անձնական իրերի, նախկինում ցանկացած այլ ներգաղթային խախտումների/դատվածության և այլնի վերաբերյալ: Գործի մասով առանձին հետաքննության փաստաթղթում պետք է նշել ձերբակալման մանրամասները, այդ թվում՝ ավագ ծառայողի կողմից պարբերական ստուգումները:

Առաջարկություններ 1. Սահմանում իրականացվող գործողությունները

- 1.1 Պահանջվում են առավել արդյունավետ կառավարչական տեղեկատվական համակարգեր՝ ներգաղթային իրավախախտումների աստիճանն ու տեսակը որոշելու համար, որպեսզի հնարավորություն տրվի վերլուծելու միգրացիայի շարժառիթներն ու մուտքի պայմանների հետ համապատասխանության մակարդակը: Դա պետք է հանգեցնի երկրորդային ստուգումների, որոնք հիմնված կլինեն այն անձանց մասով ռիսկի վերլուծության վրա, որոնք հավանական է, որ իրավախախտում կկատարեն՝ ըստ քաղաքացիության, տարիքի, սեռի, ընդհանուր տեսքի կամ վարքի ու ճամփորդության ուղիների:
- 1.2 Առավել գործուն հսկողություն մուտք գործելու ժամանակ՝ հաստատելու ճամփորդության պարճառների արժանահավատությունը, որի մասին տեղեկացվել է տվյալ ճամփորդողի գործը բացելիս՝ թե՛ վիզայի դիմում ներկայացնելու փուլում, և թե՛ ժամանելիս:
- 1.3 Կեղծված ու կեղծ փաստաթղթերով ճամփորդողների մասով մանրակրկիտ հետաքննություն՝ սահմանելու շարժառիթները, փաստաթղթերի ծագումը և կեղծման մեթոդները:
- 1.4 Կեղծված ու կեղծ փաստաթղթերով ճամփորդողները պետք է վերադարձվեն մեկնման վերջին կետ, և նրանց չպետք է թույլատրվի շարունակել ճանապարհը դեպի երրորդ երկիր՝ առանց այդ երկրի հստակ համաձայնության՝ իրազեկված լինելով, որ փորձ է արվել մուտք գործել կեղծ փաստաթղթերով:
- 1.5 Փոխադրամիջոցների, հարկապես բեռնատարների պարբերական ու հաճախակի ստուգումներ ցամաքային սահմանի անցման կետերում՝ որոշելու համար, թե արդյոք էմիգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխումը/թրաֆիքինգը



խնդրահարույց է: Միջամտությունները պետք է իրականացվեն հետախուզական փուլերի հավաքելու նպատակով

- 1.6 Մարդկանց թրաֆիքինգի դեպքերի հայտնաբերման ցածր թիվը խոսում է այն մասին, որ կարող է պահանջվել վերապատրաստման դասընթացների իրականացում թրաֆիքինգի ցուցանիշների վերաբերյալ:
- 1.7 Միգրանտների ձերբակալման, միգրանտների իրավունքների ու մշակութային «զգայունության» վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ պետք է անցկացնել յուրաքանչյուր հերթափոխի առնվազն երկու ծառայողների համար, որպեսզի վերջիններս անհրաժեշտության դեպքում գործեն որպես անազատության մեջ պահելու պատասխանատուներ:
- 1.8 Սահմաններին տեղակայված կացարանով ապահովման հատուկ կենտրոններում պետք է տեղադրվի ավելի շատ տեղեկատվություն հաճախ գործածվող լեզուներով, այսինքն՝ կացարանի կանոնների, իրավաբանական օգնության և մարդու իրավունքների, թրաֆիքինգի ու շահագործման զոհերի համար հասանելի աջակցության և այլնի վերաբերյալ:
- 1.9 «Զվարթնոց» օդանավակայանի հատուկ կացարանի դեպի ընդհանուր օգտագործման փարածք փանող վայրում տեղադրել անվտանգ դուռ, ինչպես նաև նախատեսել հարցաքննության առանձին սենյակ ու մեկուսացված անվտանգ սենյակ:

6. ԵՐԿՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄԸ

6.1 Իրավակիրառ գործունեությունն ու ձերբակալումը

Այն հարցը դիտարկելիս, թե ինչ է պահանջվում Հայաստանում միգրանտներին կացարանով ապահովման հատուկ կենտրոններ ապահովելու համար, անհրաժեշտ է առաջին հերթին ուսումնասիրել, թե ներգաղթային իրավախախտների որ կատեգորիաները կարող են ձերբակալվել՝ նրանց նույնականությունն ու վերադարձը դյուրացնելու նպատակով՝

- Թույլատրված ժամկետից ավելի երկար գտնվողները, որոնք չեն պահպանել մուտք գործելու իրենց պայմանները
- Այն անձինք, որոնց գտնվելու ժամկետի երկարաձգումը մերժվել է և (կամ) մերժվել է կացության կարգավիճակը, և որոնք կասկածի տեղիք են տվել, որ նրանք չեն պահպանի երկիրը լքելու ցուցումները և (կամ) կփորձեն խոչընդոտել կամ խաթարել նրանց հեռացման հետ կապված պայմանավորվածությունները
- Այն անձինք, որոնք ենթակա են վտարման և որոնք սպառել են բողոքարկման բոլոր իրավունքները
- Անօրինական աշխատողները՝ աշխատանքի թույլտվության վերաբերյալ երկրորդային օրենսդրությունը գործողության մեջ դնելուն պես
- Ապաստան չստացած անձինք, երբ սպառվել են բողոքարկման բոլոր իրավունքները
- Անօրինական միգրանտները՝ անկախ այն հանգամանքից՝ նրանք ծախյալ եղանակով են մուտք գործել, թե՛ խաբեությամբ
- Անօրինական միգրանտները, որոնք նախկինում չեն պահպանել նրանց նկատմամբ կիրառված՝ ազատությունից զրկելու հետ չկապված սահմանափակումները

Այդ կատեգորիաները հիմնականում վերաբերվում են այն անկանոն կարգավիճակով միգրանտներին, որոնք չնայած տեղավորվել են երկրի տարածքում, սակայն ակնկալվում է, որ կենտրոնական հաստատությունը կտրամադրի կացարան այն իրավախախտների համար, որոնք հայտնաբերվել են ՍԱԿ-ներում և որոնց հետ կապված հարցերը չեն կարող լուծվել սահմաններին: Հաշվի առնելով նախկինում նկարագրված՝ ՍԱԿ-ներում կիրառվող ներկայիս ձերբակալման պրակտիկան, կանխատեսելի է, որ այդ դեպքերը հազվադեպ կլինեն, հատկապես երբ ժամանակակից հատուկ կացարաններ են տեղադրվել ցամաքային ՍԱԿ-ներում, որոնք համար են առնվազն ձերբակալման հետևանքով 72 ժամով անազատության մեջ պահվել համար: Հետևաբար տրամաբանական է եզրահանգել, որ երկրի ներսում ձերբակալման տարածքի մասով պահանջարկը մեծամասամբ թելադրված կլինի հիմնականում, եթե ոչ բացառապես ոստիկանության կողմից իրավակիրառ գործունեության արդյունքով:

Միգրանտների համար նախատեսված կացարանով ապահովման հիմնական կենտրոնի ստեղծման հարցին, միգրացիայի կառավարման համակարգն արդիականացնելու լայնընդգրկուն միջոցառումների համատեքստում, անդրադարձ է կատարվել 2008 թվականին «Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի կառավարման ոլորտի ուսումնասիրություն» ՄՄԿ-ի զեկույցում¹⁰⁶, որում ուսումնասիրվել է, թե ինչպես է երկրի ներսում միգրացիայի մասով իրավակիրառ գործունեություն իրականացվում: Հեղինակները եզրահանգել են, որ՝

«Գործնականում հստակ չէ, թե ով է երկրի տարածքում անօրինական միգրանտներին հայտնաբերելու համար իրավասու մարմինը, այսինքն՝ որն է այն իրավակիրառ մարմինը,

106 Պիեր Ռոսսի Լոնգի, Թերեզա Լինդստրյոմ, Քրիստինա Գալստյան, 2008 թվականի մարտ՝ ֆինանսավորված Շվեդիայի միգրացիոն խորհրդի կողմից:



որը զբաղվում է երկրի տարածքում անկանոն կարգավիճակով միգրանտների հետ կապված հարցերով: Սահմանային հսկողության վրա շեշտադրումը ստեղծում է որոշակի սահմաններից հեռու ազատ տարածք, երկրի ներսում: Վերը նշվածի հետ զուգորդվող այն փաստը, որ առկա չեն օտարերկրացու կացության փոփոխության բացահայտման մեխանիզմներ, օրինակ՝ զբոսաշրջիկից ձեռնարկատերի, ուսանողից փախստականի և այլն, ինչպես նաև հնարավոր խախտման դեպքերի ահազանգման մեխանիզմներ, ինչպես օրինակ՝ թույլատրված ժամկետից ավելի երկար գտնվելը, հիմնականում հանգեցնում է այնպիսի մի իրավիճակի, երբ երկրի ներսում անձանց կարգավիճակի ավտոմատ կամ ընտրանքային հսկողությունն առկա չէ: Երկրի ներսում օտարերկրացուն որոնելը կիրականացվի ըստ դեպքի՝ այն բանից հետո, երբ օտարերկրացին ներգրավված կլինի հանցագործության կատարման, սակայն ՈՉ միգրացիոն իրավախախտումների մեջ: Դա ստեղծում է կոնկրետ հնարավորություններ համակարգի չարաշահման համար: Բացի դրանից՝ ներկայիս տեխնիկական համակարգը և տարբեր տվյալների բանկերի օգտագործումը շատ բարդացնում է երկրում անձի իրական օրինական կարգավիճակը պարզելու գործընթացը: Պետական պաշտոնյայի (լինի դա ոստիկան, սահմանապահ կամ քաղաքացիական ծառայող) համար օտարերկրացուն հսկելը պետք է պարզեցվի: Պետական պաշտոնյաները պետք է իմանան ում հետ կապ հաստատել ներգաղթյալի օրինական կարգավիճակը պարզելու համար, եթե տվյալ անձը չի կարող ապացուցել իր օրինական կարգավիճակը երկրում: Այլապես, շատ հավանական է, որ անօրինական կարգավիճակով անձին թույլատրվի երկրում գտնվել, կամ որ օրինական կարգավիճակով անձը սխալմամբ ձերբակալվի կամ կալանավորվի»:

Զեկույցում, ի թիվս այլ հարցերի, առաջարկվում է, համառոտ՝

- Վարչական ձերբակալման ենթարկված օտարերկրացիների համար փակ տեսակի կացարանով ապահովման կետերում ստեղծում կենտրոնը պետք է ղեկավարվի անկանոն կարգավիճակով միգրանտներին սերտորեն առնչվող պետական մարմնի կողմից, որը Հայաստանի դեպքում Սահմանապահ զորքերն են, Ոստիկանությունը կամ Արդարադատության նախարարությունը, որի ենթակայության տակ է գտնվում Քրեակատարողական վարչությունը, որին էլ կարող է վերապահվել այդ նոր գործառույթը:
- Որևէ հաստատության նշանակում, որը կղեկավարի Հայաստանում աշխատելու համար օտարերկրացիներին թույլատրելու հետ կապված անհրաժեշտ ընթացակարգերը, ինչպես նաև կվարի օտարերկրացիների կողմից կնքված աշխատանքային պայմանագրերի հստակ գործեր:

2012 թվականին գնահատմանը հաջորդող աշխատանքներ մեկնարկեցին ու այնուհետ ներկայացվեց «Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի կառավարման ոլորտում զարգացումների ակնարկ. առաջընթացի գնահատման զեկույցը»¹⁰⁷: Բուն գնահատումից ի վեր տեղաշարժի մասով՝ հեղինակները նշել են, որ ՄՊԾ-ի ստեղծմամբ որոշակի առաջընթաց էր արձանագրվել պետական մարմիններին մեկ պետական մարմնի ներքո համակարգելու ուղղությամբ: Առաջընթաց էր գրանցվել նաև ՏՏ միավորելու գործում՝ այնքանով, որքանով ՍԷԿ համակարգում ներկայումս պահվում են նաև մուտքի վիզայի վերաբերյալ գործեր, ու թե՛ ԱԱԾ-ն, և թե՛ Ոստիկանությունը կարող են օգտվել դրանից, սակայն որևէ առաջընթաց չէր արձանագրվել կենտրոնական տվյալների բանկ ստեղծելու ուղղությամբ՝ թույլատրված ժամկետից ավելի երկար գտնվողներին հետևելու համար միգրանտների վերաբերյալ անհատական գործեր ստեղծելու միջոցով, որտեղ կնշվեին

107 Քրիստինա Գալստյան, Պիեր Ռոսսի-Լոնգի, Ֆրանց Պրուսչ, 2011՝ ֆինանսավորված ԵՄ-ի և ՄՄԿ-ի Զարգացման հիմնադրամի կողմից:



մուտքի պայմանների մանրամասների, ժամկետը երկարաձգելու բոլոր դեպքերի ու կացության կարգավիճակի բոլոր փոփոխությունների մասին:

6.2 Իրավակիրառ գործունեությունը. ներկայիս իրավիճակը

Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության 3-րդ վարչության և Անօրինական միգրացիայի դեմ պայքարի և միջազգային համագործակցության բաժնի ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպում է անցկացվել Երևանում՝ քննարկելու միգրացիայի կառուցվածքում ազգային ոստիկանության դերը: Պարզ է դարձել, որ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը կենտրոնացած է գրեթե ամբողջությամբ մուտքի վիզայի գործընթացի և երկիրը լքելիս թույլատրված ժամկետից ավելի երկար գտնվողների նկատմամբ տուգանքներ կիրառելու իր պարտականությունների վրա:

Այն քաղաքացիները, որոնք պետք է մուտքի վիզան ստանան արտերկրում գտնվող Հայաստանի հյուպատոսական հիմնարկներից, պետք է իրենց դիմումի հետ մեկտեղ ներկայացնեն նաև հրավեր: Հրավերներ տրամադրող հովանավորները պետք է նախ դրանք ներկայացնեն Հայաստանի ոստիկանություն՝ իսկությունը հաստատելու համար, դրանից հետո նրանք հրավերը պետք է ուղարկեն դիմողներին, որպեսզի վերջիններս դրանք իրենց մուտքի վիզայի դիմումների հետ ներկայացնեն հյուպատոսական հիմնարկ: Սա վերաբերվում է միայն անհատներին, իսկ խմբակային դիմողների համար հրավերները պետք է ստուգվեն Արտաքին գործերի նախարարության կողմից՝ նույնպես Հայաստանում: Հրավերները մուտքի վիզայի համար դիմողների կողմից ստանալուն պես՝ վերջիններս մուտքի վիզայի համար դիմում են կամ անձամբ ամենամոտը գտնվող հյուպատոսական հիմնարկում կամ իրենց դիմումն ուղարկում են փոստով՝ նույնպես ամենամոտը գտնվող հյուպատոսական հիմնարկ:

Ոստիկանությունը (Անձնագրային և վիզաների վարչությունը) ներկա է բոլոր ՍԱԿ-ներում և սերտորեն աշխատում է ԱԱԾ-ի և ՄՊԾ-ի հետ: Նրանք առանձին գրասենյակներ ու մուտքի վիզաների մշակման տարածքներ ունեն, և այն ճամփորդողները, որոնք իրավունք ունեն ստանալու մուտքի վիզա ժամանելիս, պետք է նախ ներկայանան այդ մարմիններ՝ նախքան սահմանապահին մոտենալը: Ժամանելիս մուտքի վիզայի հետ կապված գործընթացը հետևյալն է՝

- Դիմողը լրացնում է դիմումի ձևը և մոտենում Ոստիկանության վիզաների և հաշվառման սեղանին
- Դիմումի ձևը ներկայացվում է, և անձնական տվյալները ձեռքով մուտքագրվում են ՍԷԿ համակարգ
- Կատարվում է մուտքի վիզայի վճար
- Մուտքի վիզա է տպվում և փակցվում դիմողի անձնագրում

Ամբողջ գործընթացը շատ կարճ է տևում (մոտ 2 րոպե), և դիմողներին չեն հարցնում իրենց ճամփորդության պատճառների և անձնական հանգամանքների և այլնի մասին, քանի որ նշվել է, որ անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունն առկա է մուտքի վիզայի դիմումի ձևերում: Կենսաչափական տվյալներ մուտքի վիզաների համար չեն հավաքվում, իսկ ՍԷԿ համակարգը չունի մատնահետքեր վերցնելու և խաչաձև համեմատելու հնարավորություն: Որոշակի վստահություն կա ՍԷԿ համակարգի նկատմամբ, որ դրանով հնարավոր է բացահայտել թույլատրված ժամկետից ավելի երկար գտնվողներին, քանի որ մուտքի ու ելքի գրառումները խաչաձև համեմատվում են, հայկական բոլոր գողացված ու կորցրած անձնագրերը գրանցվում են գործերում: Ոստիկանության ծառայողների հիմնական դերն



այն է, որ ստուգեն փաստաթղթերի իսկությունը: Եթե ծառայողները կասկածներ ունեն փաստաթղթերի վերաբերյալ, ապա նրանք դիմում են իրենց վերադասին, և վերջինիս լիազորությամբ՝ դիմողին հանձնում են սահմանապահներին լրացուցիչ հետաքննության համար: Այս փուլում կեղծման դեպքերի թիվը նկարագրվում էր որպես շատ ցածր, և չնայած որ պաշտոնական տվյալներ առկա չեն, վկայակոչվել է տարեկան մոտ 6 դեպք: Ոստիկանության ծառայողները չեն ստուգում հովանավորների տվյալները, քանի որ դա համարվում է ԱԱԾ-ի պարտականությունը:

Ոստիկանությունը ներգրավված չէ անկանոն կարգավիճակով միգրանտներին ձերբակալելու աշխատանքներում: Նույնիսկ եթե թույլատրված ժամկետից ավելի երկար գտնվողներին կանգնեցնում են մեկնման ժամանակ, նրանք կամ վճարում են տուգանքը և շարունակում ճանապարհը, կամ եթե նրանք չեն կարող վճարել, նրանց թույլատրում են շարունակել ճանապարհը, սակայն արգելում են վերադառնալ Հայաստան 12 ամսով: Երկրի ներսում նախաձեռնողական իրավակիրառ գործունեության միակ դեպքը ՀԱՊԿ-ի շրջանակներում իրականացվող Նելեգալ միջոցառումն է, որն անցկացվում է ոստիկանության կողմից՝ ԱԱԾ-ի հետ համագործակցությամբ, ՍԱԿ-ներում և երկրի տարածքում տարեկան երկու անգամ, որի նպատակն է բացահայտել դեպի Հայաստան տանող՝ երրորդ երկրների անկանոն կարգավիճակով միգրանտների կողմից օգտագործվող ուղիները և բերման ենթարկել թրաֆիքինգ իրականացնողներին ու անօրինական մուտքին օժանդակողներին: Այս միջոցառումների արդյունքների վերաբերյալ որևէ տվյալ առկա չէ, և չնայած որ ասվում է, որ վիճակագրություն գոյություն ունի, բացահայտված իրավախախտները չեն դասակարգվում ըստ կատարված իրավախախտման բնույթի: Կեղծ փաստաթղթերով սահմանը հատած մյուսների անօրինական մուտքին օժանդակող օտարերկրացիները և հենց Հայաստանի քաղաքացիները պատժվում են միայն անօրինական մուտքի համար, քանի որ օժանդակելը/միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխելը ներկայումս հանցագործություն չէ: Հարցազրույցի մասնակցած ոչ մի ծառայող չկարողացավ հիշել միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխելու որևէ դեպք և երբևէ չէր լսել մեքենաներում կամ այլ փոխադրամիջոցներում թաքցված՝ ծայտյալ եղանակով մուտք գործելու որևէ դեպքի մասին: Միգրանտներին թրաֆիքինգի ենթարկելու դեպքերը նույնպես նկարագրվել են որպես շատ հազվադեպ, սակայն երբ դրանք տեղի են ունեցել, իրավախախտները սովորաբար Հայաստանի քաղաքացիներ են եղել:

6.3 Կացարանով ապահովման հիմնական կենտրոնի անհրաժեշտությունը

Թվում է, թե իրավակիրառ գործունեությունը մի քիչ փոխվել է, եթե չասենք՝ ամբողջությամբ՝ 2008 թվականին իրականացված՝ միգրացիայի կառավարման ոլորտի ուսումնասիրությունից ի վեր: Տրամաբանական է, որ եթե ներգաղթային իրավախախտներին ձերբակալելու համար վայրեր չկան, ապա դրանք գտնելու շատ տարբերակ էլ չկա: Չնայած որ այս փաստարկում կա որոշակի ճշմարտություն, սակայն դա չպետք է օգտագործվի որպես արդարացում իրավակիրառ գործունեություն չիրականացնելու համար, քանի որ, ոչ մի դեպքում, վարչական իրավախախտում կատարած բոլոր անձինք չպետք է միանգամից ձերբակալվեն առաջին անգամ հայտնաբերվելու դեպքում, և ձերբակալումը պետք է կիրառել միայն որպես վերջին միջոց:

Ինչպես քննարկվել է ավելի վաղ այս զեկույցի տարբեր կետերում, կացարանով ապահովման հատուկ կենտրոնի անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի միգրացիոն հատվածի ամբողջական վերակազմավորմամբ և ԵՄ-ի ու միջազգային չափանիշներին համապատասխան սահմանների լիարժեք համալիր կառավարման համակարգի



ստեղծմամբ: Պարզ է, որ Հայաստանի Կառավարությունը հանձնառու է կացարանով ապահովման հատուկ կենտրոնների ստեղծման հարցում, և ՍԱԿ-ներում գրանցված առաջ-ընթացն ու իրավական դաշտի ներմուծումը դրա ապացույցն են: Իրավակիրառ գործու-նեությանը և ներգաղթային վարչական իրավախախտումներին առնչվող կառավարմանը վերաբերող տեղեկատվության բացակայության պատճառով՝ դժվար է այս փուլում գնահատել կացարանով ապահովման հատուկ հիմնական կենտրոնի կարողության մակար-դակը: Այն ենթադրությամբ, որ ձերբակալման դեպքերը անկասկած կավելանան, այս զեկույցի ստորև նշված մասում ներկայացված առաջարկները հիմնված են կացարանը զբաղեցնող 100 անձ նվազագույն տվյալի վրա, սակայն այն ընդլայնելու կամ փոքրացնելու հնարավորությամբ՝ կախված հանգամանքներից:

Առաջարկություններ 2. Երկրի ներսում իրականացվող գործողությունները

- 2.1 Պահանջվում է երկրի ներսում օտարերկրացիների նկատմամբ իրականացնել նախա-ձեռնողական և գործուն հսկողություն, ինչպես նշված է սահմանների կառավարման վերաբերյալ նախկինում ներկայացված գնահատման փաստաթղթերում, որին պետք է աջակցի ճշգրիտ գործող Կառավարման տեղեկատվական համակարգը՝ գոյություն ունեցող խնդիրները շարունակաբար մոնիթորինգի ենթարկելու, ի հայտ եկող մի-տումները հայտնաբերելու, քաղաքականությունը ձևակերպելու, հետախուզական նպատակներով գործառնական արձագանք ապահովելու և անձնակազմի համալրման ու ձերբակալման վերաբերյալ պահանջների հետ կապված հարցերը որոշելու համար:*
- 2.2 Մեկ անգամ ևս, ինչպես մարտնչված է գնահատման նախկին փաստաթղթերում, կարևոր է հիմնել կենտրոնական տվյալների բանկ և ստեղծել անհատական գործեր՝ հետևելու միգրանտներին՝ մուտքից մինչև ելք: Այդ գործերում պետք է նշվեն մուտք գործելու պայմանները, աշխատանքի կամ ուսման վայրերը, մուտք գործելու մասով երկարաձգման պայմանները, վրարումը, բացառումը և ձերբակալման ժամկետները:*



7. ԿԱՑԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Կացարանով ապահովման հիմնական հատուկ կենտրոնի ստեղծումը էականորեն տարբեր և շատ ավելի ընդգրկուն ծրագիր է, քան գոյություն ունեցող և սահմանային անցակետերում առաջարկվող՝ կացարանով ապահովման հատուկ կենտրոնների ստեղծումը: Քանի որ այս ծրագրով ենթադրվում է անկանոն կարգավիճակով միգրանտների ընդունում ամբողջ երկրից՝ ներառյալ սահմաններին ձերբակալված անձանց, որոնց համար պահանջվում են կացարանով ապահովման ավելի երկար ժամկետներ, այն պետք է լինի շատ ավելի մեծ և պետք է ունենա այնպիսի դասավորվածություն, որ հնարավոր լինի հարմարություններ ապահովել 72 ժամից ավելի տևողությամբ անազատության մեջ պահելու համար: Քանի որ մինչ այդ գոյություն չի ունեցել կացարանով ապահովման որևէ հատուկ կենտրոն, եթե իհարկե ներկայումս գոյություն չունի հսկվող, մեկուսացված պետական հաստատության, որը նպատակահարմար է փոփոխել և դարձնել նման կենտրոն, հարկավոր է հատուկ այդ նպատակի համար կառուցել նոր կենտրոն: Արդեն գոյություն ունեցող հաստատությունը փոփոխելու կամ նորը կառուցելու մասին որոշում կայացնելիս պետք է հաշվի առնել գոյություն ունեցող հաստատության կամ վայրի մատչելիությունը, դրա փոփոխման, գտնվելու վայրի նպատակահարմարությունը, հետագա ընդլայնման հնարավորությունը և, որ ամենակարևորն է՝ դրա արժեքը: Այս որոշումը պետք է կայացնի Հայաստանի Հանրապետության Կառավարությունը՝ ելնելով կենտրոնական ֆինանսական միջոցներից, դոնորներից և վարկերից ստացվող ֆինանսավորման առկայությունից՝ մասնագետների կողմից նախագծված տարբերակները քննարկելուց հետո: Գնահատման այս բաժնի նպատակն է առաջարկել տեղակայման ընդհանուր գծագիր, որով կարելի է առաջնորդվել նոր կառուցվող շինության նախագծման ժամանակ՝ նշելով ընդհանուր պահանջները. այն նպատակ չունի ներկայացնել տեխնիկական, ճարտարապետական մասնագրեր կամ վերջնական մանրամասն նախագիծ:

7.1. Նախագծման սկզբունքները


Կարևոր է հաշվի առնել այն, որ այդ հաստատությունը քրեակատարողական հիմնարկ չէ և չպետք է օգտագործվի այն անձանց կացարանով ապահովելու նպատակով, ովքեր սպասում են դատաքննության, կամ դատապարտված են որևէ հանցագործության համար՝ անկախ նրանց օտարերկրացի լինելու կամ չլինելու հանգամանքից և (կամ) այն փաստից, թե արդյոք նրանք մեղադրվել են ներգաղթի հետ կապված հանցագործություններ կատարելու համար կամ կատարել են նման հանցագործություններ, թե՛ ոչ: Անկանոն կարգավիճակով միգրանտների համար փակ ռեժիմով՝ անձանց ընդունման կենտրոնում ձերբակալված անձանց համար պետք է նախատեսվի խիստ հսկողությամբ, բայց մարդկային պայմաններով և հանգիստ ռեժիմով կացարանային ապահովում՝ ապահովելով տեղաշարժի և շփման հնարավորինս ազատություն՝ միաժամանակ պահպանելով միջավայրի անվտանգությունը և խիստ հսկողությունը: Կացարանով ապահովված միգրանտներին պետք է խրախուսել և աջակցել՝ իրենց ժամանակը հնարավորինս արդյունավետ օգտագործելու հարցում՝ միաժամանակ հարգելով, հատկապես, նրանց արժանապատվությունը և արտահայտվելու անհատական իրավունքը՝ կենտրոնում համապատասխան հարմարություններ ապահովելու միջոցով:

Նախագծման չափորոշիչներով պետք է նախատեսվեն՝

- քնելու հարմարություններ, որոնցով ապահովվում է անձնական անվտանգությունը և մասնավորությունը՝ տրամադրելով՝ այնքանով, որքանով դա գործնականում



- հնարավոր է, առանձին ննջասենյակներ կամ քիչ թվով անձանցով բնակեցված ընդհանուր սենյակներ.
- բնակելի միավորներ, որոնք պետք է նախագծված լինեն խմբերին՝ ըստ նրանց սեռի և մշակութային պատկանելության կացարանով ապահովելու և ըստ ռիսկի նկարագրի՝ նրանց առանձնացնելու համար.
 - ընդհանուր շփման համար նախատեսված առնվազն երկու տարածք, որոնք, անհրաժեշտության դեպքում, կարող են օգտագործվել հարմարավետ, հանգիստ միջավայրում անձանց՝ ըստ սեռերի առանձնացնելու համար.
 - լվացքատան ծառայությունների համապատասխան մատչելիությունը յուրաքանչյուր բնակելի միավորից.
 - պասիվ և ակտիվ ժամանցի համար նախատեսված հարմարություններ, ինչպես օրինակ՝ գրադարան, մարզասրահ, համացանցի հասանելիություն և մարզահրապարակներ՝ կենտրոնի ներսում և դրան կից.
 - համայնքի ստանդարտների հետ համադրելի առողջապահական ծառայությունների տրամադրում տեղում՝ բժշկական կենտրոնի միջոցով.
 - տեսակցությունների կենտրոն՝ բարեկամական, հաճելի միջավայրում այցելուների հետ սոցիալական և ժամանցային բնույթի շփման հնարավորություն ընձեռելու համար.
 - հարցազրույցի սենյակներ, որոնք ապահովում են կացարանում բնակվող անձանց մասնավորությունը աշխատակազմի և օրինական ներկայացուցիչների հետ խոսելիս.
 - կրոնական և հոգևոր պահանջները բավարարող համապատասխան հարմարություններ.
 - անվտանգության ապահովման այնպիսի աստիճան, որը բավարար կլինի կացարանում բնակվող անձանց և համայնքի անվտանգությունն ապահովելու համար. հնարավորության դեպքում անվտանգության ապահովում ոչ ինստիտուցիոնալ եղանակով՝ տեղաշարժի ազատության հետ մեկտեղ ապահովելով զսպման համապատասխան մեխանիզմներ.
 - նախագիծ, որը բավարարում է համայնքային պլանավորման սահմանափակումների պահանջները և համապատասխանում է տվյալ միջավայրին.
 - մուտքի հարմարություններ, որոնք հնարավորություն կտան համապատասխան անձանց ընդունումը կենտրոն իրականացնել ֆունկցիոնալ, և սպառնալիքից զերծ և սիրալիր մթնոլորտում.
 - ճաշարանային հարմարություններ՝ խմբով կամ առանձին ճաշելու հնարավորությամբ՝ համալրված խորտիկներ պատրաստելու համար նախատեսված փոքրիկ խոհանոցներով, և անհրաժեշտության դեպքում՝ ապահովված առանձին մշակութային պահանջները բավարարող սննդամթերքով.
 - էլեկտրահաղորդման ցանցով էլեկտրաէներգիայի մատակարարում՝ գեներատորների պահուստային վթարային համակարգով.
 - ջրամատակարարման ցանցով ջրի մատակարարում և կայուն դրենաժային համակարգ.
 - հակահրդեհային ցայտաջրնուղ համակարգ բոլոր շինություններում.
 - բացօթյա տարածքներ՝ հնարավորինս կանաչապատված:




7.2 Կացարանով ապահովման հիմնական հատուկ կենտրոնի տեղակայումը եվ դասավորվածությունը

Կացարանով ապահովման հատուկ կենտրոնների դասավորվածությունը ճարտարապետական նախագծման մասնագիտացված ոլորտ է, որի համար պահանջվում են համապատասխան մասնագիտական հմտություններ և փորձ: Ամբողջ աշխարհում նման հաստատություններն էապես տարբերվում են իրարից, և դրանցից շատերը փոփոխվել են՝ հաճախ լինելով նախկին ռազմական, կրթական կամ քրեակատարողական նշանակության հաստատություններ, ինչը և սահմանափակում է դրանց համապատասխանությունը վերը նշված չափորոշիչներին: Այնուհանդերձ, ենթադրելով, որ Հայաստանի Հանրապետությունում կացարանով ապահովման հատուկ կենտրոնը կարող է լինել նորակառույց, կարելի է օգտվել այլ երկրներում մշակված վերջին նախագծերից, որտեղ նման հաստատություններն արդեն տարիներ շարունակ գործում են, և գործնական կիրառության փորձի հիման վրա կատարելագործվել են նախագծման հետ կապված գաղափարները: Եվս մեկ անգամ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաստատությունները չպետք է արտացոլեն քրեակատարողական հիմնարկներում պահանջվող անվտանգության և հսկողության բարձր մակարդակը՝ ներկայացվել են խիստ հսկվող սահմաններով բաց տարածքով շրջապատված կիսամեկուսացված բնակելի միավորներ, հնարավորության սահմաններում, ոչ ինստիտուցիոնալ միջավայր ստեղծելու պահանջը բավարարելու նպատակով:

Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի ոլորտի հետ առնչվող մարմինների հետ քննարկումների արդյունքում պարզ դարձավ, որ նրանք բոլորը համամիտ են այն հարցում, որ եթե պետք է նման հաստատություն կառուցվի, ապա այն պետք է տեղակայված լինի Երևանում: Դա միանգամայն տրամաբանական է՝ հաշվի առնելով քաղաքի ակնհայտ կենտրոնական դիրքը, ինչպես նաև զարգացած հաղորդակցության միջոցների, ենթակառուցվածքների առկայությունը և գլխավոր միջազգային օդանավակայանի տեղադրությունը: Նախընտրելի տարբերակ կլինի այն տեղակայել քաղաքից ոչ շատ հեռու, որտեղ այն շրջապատված չի լինի բնակելի շինություններով, միևնույն ժամանակ մոտ կլինի այնպիսի հարմարություններին, ինչպիսիք են՝ բժշկական և ատամնաբուժական կլինիկաները՝ այն առողջական խնդիրները լուծելու նպատակով, որոնք հնարավոր չէ լուծել հաստատության ներսում տրամադրվող ծառայությունների շրջանակներում: Այդպիսով, հաստատությունն ավելի հասանելի կլինի միգրացիայի ոլորտում իրավապահ անձնակազմի, օրինական ներկայացուցիչների, ՀԿ-ների և այցելուների համար: Տեղի բնակիչներին պատճառվող անհարմարությունները կարող են հասցվել նվազագույնի և, ենթադրաբար, հողը հնարավոր կլինի ձեռք բերել ավելի հեշտությամբ և ավելի մատչելի գնով: Ի վերջո, այն հետագայում հնարավոր կլինի ընդլայնել:

Ստորև ներկայացված տեղանքի հատակագծի միջոցով կարելի է ընդհանուր պատկերացում կազմել այն մասին, թե ինչպես կարող է տեղակայվել կացարանով ապահովման հատուկ կենտրոնը: Այն ենթակա չէ մասշտաբային մեծացման և ներկայացվում է որպես վարչական պատասխանատուների և տեխնիկական նախագծողների միջև քննարկման ընթացքում ուղղորդվելու և բանավեճ ծավալելու գործիք՝





Առաջարկվող տեղամասի հատակագծով նախատեսվում է 4 բնակելի միավոր, որոնք խմբավորված են բացօթյա ընդհանուր օգտագործման գոտու շուրջ, որն իր մեջ պետք է ներառի փոքր ծածկված տարածք: Բնակելի յուրաքանչյուր առանձին միավոր ապահովված է ընդհանուր օգտագործման հարմարություններով, իսկ վարչական շենքում տեղակայված են տեսակցությունների կենտրոնը և բժշկական կենտրոնը: Տեղամասը շրջապատված է հուսալիորեն հսկվող պատերով կամ պարսպով և շենքերի հետնամասի սահմաններում տեղաշարժը սահմանափակվում է տեղադրված ներքին պարսպով (նշված կարմիր գույնով)՝ փախուստի փորձերը կանխելու նպատակով: Թեև նախատեսված է, որ կացարանում բնակվող բոլոր անձինք կարողանան ազատ մուտք գործել կենտրոնական ընդհանուր տարածքներ, այնուամենայնիվ, նախատեսվում է պարսպով առանձնացված ավելի փոքր բացօթյա տարածք՝ բացառապես կանանց և երեխաների օգտագործման համար: Գեներատորների, էներգամատակարարման սարքավորումների, օդորակիչների և այլ սարքերի տեղավորման համար նախատեսված տեխնիկական շինությունը տեղակայվել է տարածքի սահմանների և ներքին պարիսպների միջև, քանի որ այն ունի ապահով սենյակ այգեգործական և մաքրող սարքերը տեղավորելու համար:

7.3 Դասավորվածություն և նախագծման մանրամասները

Պլանավորողներին և նախագծողներին օժանդակելու նպատակով այս բաժնում ընդհանուր կերպով նկարագրվում է, թե ինչ հարմարություններով և կառույցներ պետք է լինեն Կենտրոնի տարբեր մասերում, թեև աշխատանքների իրականացման գործընթացների վերաբերյալ ներկայացվում են որոշ մանրամասներ շինությունների նշված դասավորվածության պատճառները պարզաբանելու համար: Կառույցի բոլոր մասերում իրականացվող վարչական գործընթացների հետ կապված մանրամասները առավել հանգամանալից ներկայացվում են առանձին Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերի փաստաթղթում, որը տրամադրվում է՝ շահագործումն ապահովող անձնակազմի և ղեկավարների օգտագործման համար:

7.4 Վարչական բաժանմունքը և ընդունարանը

Վարչական բաժանմունքում և ընդունարանում պետք է տեղակայված լինի հիմնական հսկողության սենյակը, որը պետք է ապահովված լինի անձնակազմի և շինությունների միջև կապն ապահովելու համար անհրաժեշտ հաղորդակցային սարքավորումներով՝ ռադիո և ներքին կապի համակարգերով (ինտերկոմ) և հագեցած լինի համապատասխան սարքավորումներով հաստատության ամբողջ տարածքում ԳՏՀ-ի միջոցով դիտանցում



իրականացնելու համար: Պետք է ապահովվի համալիրի ամբողջ տարածքում գտնվող բոլոր շինությունների անվտանգության դռները հեռակառավարմամբ փակելու և բացելու հնարավորություն և բարձրախոսային համակարգ՝ հայտարարությունների, անձնակազմի և կացարանում բնակվող անձանց գտնվելու վայրի հետ կապված կարգադրություններ անելու համար՝ հաղորդակցության այլ միջոցներով դրանց իրականացման անհնարինության դեպքում: Կացարանով ապահովման հատուկ կենտրոնի ամենօրյա ընթացիկ աշխատանքների կազմակերպմամբ զբաղվող բոլոր աշխատողներին, ինչպես նաև սոցիալական ոլորտի աշխատողներին և ղեկավար անձնակազմին՝ հաստատության ղեկավարին և նրա տեղակալներին աշխատատեղերով ապահովելու համար հարկավոր է նախատեսել բավարար գրասենյակային տարածք, որը պետք է ունենա վարչական և գրանցումների բաժին, անվտանգության բաժին և տեխնիկական սպասարկման բաժին: Բացի դրանից՝ պետք է նախատեսվի համապատասխան տարածք իրավապահ անձնակազմի, ՀԿ-ների ներկայացուցիչների և վերահսկող թիմերի, ինչպես նաև կենտրոն այցելող այլ անձանց համար: Առաջարկվում է կառուցել երկհարկ շինություն, որի ցուկոլային հարկում կտեղակայվի ընդունարանը, իսկ դրա վերևում՝ վարչական գրասենյակները: Գրասենյակները և անձնակազմին տրամադրված կացարանը հաստատության մուտքի մոտ տեղակայելը հնարավորություն կընձեռի գլխավոր համալիրի ներսում արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում անհապաղ ապահովել շահագործման ապահովմամբ չզբաղվող անձնակազմի տարհանումը կառույցի տարածքից դուրս:

Ընդունարանի միջոցով պետք է կառույցի ներսում դյուրացվի նոր ժամանած անձանց հոսքը, իսկ ընդունարանի համար պահանջվում է հետևյալը՝

- Ընդունարանի սեղան, որից առաջ պետք է տեղադրված լինեն անվտանգության պորտալը և դյուրակիր հայտնաբերող սարքերը: Անվտանգության ստուգումներից հետո ընդունարանի աշխատողը պետք է մանրամասնորեն ուսումնասիրի ժամանած անձանց՝ ուղեկցող պաշտոնական փաստաթղթերը և հաշվառման գործընթացի նախնական փուլի համար իր մոտ նշի նրանց հիմնական տվյալները՝ անունը, սեռը, ծննդյան ամսաթիվը, ազգությունը: Որևէ անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում, ընդունումը պետք է մերժվի՝ մինչև դրանք վերացնելը:
- առնվազն 8 նոր ժամանած անձ տեղավորող սպասասրահ՝ ապահովված նստելու համար նախատեսված հարմարավետ հարմարություններով և զովացուցիչ ըմպելիքներից և թեթև խորտիկներից օգտվելու հնարավորությամբ: Կենտրոն ժամանած անձանց համար պետք է ապահովվի հեռախոսի մատչելիությունը, և նրանց ընձեռվի 10 րոպե տևողությամբ հեռախոսազանգ կատարելու հնարավորություն:
- խիստ հսկվող՝ ժամանակավոր պահման համար նախատեսված սենյակ՝ ապահովված երկու անձի համար նստելու հարմարություններով, զուգարանով և լվացարանով՝ կենտրոն ժամանած այն անձանց տեղավորելու համար, ովքեր ընդունման գործընթացի ժամանակ կարող են վտանգ ներկայացնել անձնակազմի կամ կենտրոն ժամանած մյուս անձանց համար:
- լուսանկարելու և մատնահետքեր վերցնելու համար նախատեսված տարածք, ցանկալի է՝ առանձին սենյակ, թեև հարցաքննության սենյակները կարող են օգտագործվել երկակի նշանակությամբ:
- հարցաքննության 2 սենյակ անձնակազմի համար՝ ընդունման գործընթացը մեկուսի իրականացնելու համար, սակայն անձնակազմի մյուս անդամների կողմից մանրամասն ուսումնասիրություն կատարելու համար ևս դրանք պետք է մատչելի լինեն և լինեն կիսով չափ ապակեպատ: Պետք է գրանցվեն լրացուցիչ մանրամասներ՝ ներառյալ՝ կենտրոն ընդունման ամսաթիվը, անձի արտաքինի նկարագրությունը,



առանձնահատկությունները, ներգաղթի հետ կապված նախապատմությունը և կենտրոն ժամանած անձի կողմից այլ անձանց համար վտանգ ներկայացնելու աստիճանը: Պետք է լրացնել բժշկական հարցաթերթիկը՝ նշելով անձի ներկայիս առողջական վիճակը և նախկին հիվանդությունները, ալերգիաները, նախկինում ստացած և ներկայումս նրա կողմից օգտագործվող դեղորայքը, նրա հոգեբանական խնդիրները կամ հոգեբանական վիճակը և այլն: Բիսկի վերաբերյալ գրավոր գնահատման մեջ պետք է նշվի այլ անձի հետ ընդհանուր սենյակում բնակվելու նպատակահարմարությունը: Կենտրոն ժամանած յուրաքանչյուր անձի պետք է տրամադրել կացարանով ապահովման հատուկ կենտրոնի կանոնների մեկ օրինակը, նաև տվյալ անձին պետք է գրավոր կերպով տեղեկացնել օրինական ներկայացուցիչ ունենալու, բուժում ստանալու, կամավոր կերպով վերադառնալու և ապաստան հայցելու իր իրավունքների մասին:

- ապահով պահեստային տարածք նոր ժամանած անձանց այն փաստաթղթերի, դրամական միջոցների և գույքի համար, որոնք չի թույլատրվում թողնել նրանց մոտ: Կենտրոն ժամանած անձի անձնական գործի մեջ պետք է նշվի անվտանգ պահման հանձնված՝ փաստաթղթերի, գույքի ցանկը և դրամական միջոցների չափը:
- 2 ցնցուղարան, երկու զուգարան (որոնցից մեկը՝ հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց համար) և երկու լվացարան: Կենտրոն ժամանած անձինք պետք է հնարավորություն ունենան, ցանկության դեպքում, ցնցուղ ընդունելու կամ, ելնելով նրանց արտաքին տեսքից, նրանցից կարող է պահանջվել ցնցուղ ընդունել մինչև ընդունման գործընթացը սկսելը:
- պահեստ հագուստի, անկողնային պարագաների և անձնական հիգիենայի պարագաների համար: Կենտրոն նոր ժամանած անձանց պետք է տրամադրվեն մաքուր անկողնային պարագաներ և հագուստ, ինչպես նաև անձնական հիգիենայի հիմնական պարագաներ՝ նրանց կողմից պահանջի դեպքում: Հագուստը պետք է լինի տարվա այդ եղանակին բնորոշ կլիմային համապատասխան: Որպես ուղեցույց՝ պահեստային տարածքի ընդհանուր մակերեսը պետք է որոշվի՝ կացարանում բնակվող յուրաքանչյուր անձի համար 2.27 մ¹⁰⁸ հաշվարկի հիման վրա:
- շինության տեխնիկական սպասարկումն ապահովելու համար անհրաժեշտ մաքրող սարքերի և պարագաների, ինչպես նաև այլ տարատեսակ իրերի համար նախատեսված պահեստ:

Շինության նախագծով պետք է նախատեսվի դրա մատչելիությունը կենտրոն ժամանած՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

7.5 Բժշկական կենտրոնը

Կացարանով ապահովման հատուկ կենտրոնի կացարանում բնակվող անձինք իրավունք ունեն օգտվելու այնպիսի բժշկական ծառայություններից, որոնց մակարդակը առնվազն համարժեք է տվյալ տարածաշրջանում տրամադրվող ծառայություններին, և որոնց տրամադրումը ենթադրում է անձանց բարեկեցության խթանում, ինչպես նաև հիվանդությունների կանխարգելում և բուժում: Պետք է հաշվի առնվեն կացարանում բնակվող՝ հաշմանդամություն ունեցող այն անձանց հատուկ կարիքները, ովքեր հնարավոր է տրավմայի են ենթարկվել:

Բժշկական կենտրոնը պետք է նախագծվի՝ խորհրդակցելով առողջապահության ոլորտի մասնագետների հետ՝ նպատակ ունենալով տրամադրել առնվազն նախնական

108 Ուղեցույց և լավագույն գործելակերպ Ուկրաինայի կացարանով ապահովման հատուկ կենտրոնների համար. ՄՄԿ Ուկրաինա



բժշկական զննության, խորհրդատվության, հետագա բժշկական զննման և ամենօրյա առողջապահական ծառայություններ: Այն չպետք է նախատեսված լինի սովորաբար հոսպիտալացման ենթակա՝ երկարաժամկետ բուժում պահանջող հիվանդների համար, փոխարենը՝ բժշկական ծառայություններ տրամադրի այն հիվանդներին, ովքեր կարիք ունեն շտապ բուժման կամ մեկուսացման՝ մինչև հիվանդանոց տեղափոխվելը: Պետք է մշակվի հիվանդներին տեղի առողջապահական հաստատություններ ուղեգրելու և տեղափոխելու մեխանիզմ՝ ատամնաբուժական, ռենտգենաբանական հետազոտության և լաբորատոր ծառայությունների, ինչպես նաև վիրահատություն և լրիվ հոսպիտալացում ենթադրող մասնագիտացված բժշկական օգնության տրամադրումն ապահովելու համար: Կադրային ապահովման պահանջներն են՝ առնվազն մեկ բուժքույր կամ պարամեդիկ մեկ օրվա՝ 24 ժամվա ընթացքում, ինչը ենթադրում է 3 անգամ 8 ժամ տևողությամբ հերթափոխով աշխատանք: Վարչական հարցերով օգնականը կամ ընդունարանի աշխատողը պետք է գտնվի իր աշխատավայրում և իր պարտականությունները կատարի աշխատանքային ժամերի ընթացքում, իսկ բժիշկը պետք է հասանելի լինի խորհրդատվության համար առնվազն 3 ժամ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր և 2-ական ժամ՝ հանգստյան օրերին: Պետք է կազմվի տեղի բժիշկների հերթապահությունների ժամանակացույց աշխատանքային ժամերից դուրս ստացվող շտապ բժշկական օգնության կանչերը սպասարկելու համար: Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերի փաստաթղթում պետք է սահմանվեն նոր ժամանած և կացարանում բնակվող անձանց բժշկական զննման, հաշվառման մասին տվյալների պահպանման և դեղամիջոցների բացթողման և այլ գործընթացների ընթացակարգերը:

Բժշկական կենտրոնը պետք է տեղակայված լինի գլխավոր ընդունարանի մոտ՝ ժամանման պահին բժշկական զննման իրականացումը և հիվանդանոց կամ այլ կլինիկաներ հիվանդների տեղափոխումը դյուրացնելու համար: Կարող է նախատեսվել մուտքի հնարավորություն կացարանում արդեն բնակվող անձանց համար՝ գլխավոր համալիրից և նոր ժամանած անձանց համար՝ հիմնական ընդունարանից: Բժշկական կենտրոնը պետք է ապահովված լինի հետևյալ հարմարություններով՝

- Բժշկական ընդունարանի սեղան:
- Բժշկական և վարչական անձնակազմի օգտագործման համար նախատեսված վարչական գրասենյակ, որը պետք է ապահովված լինի համակարգիչներով և թղթային կրիչների վրա պահվող տվյալների պահպանման համար նախատեսված ապահով պահարաններով՝ միայն բժշկական կենտրոնի աշխատակազմի համար մուտքի հնարավորությամբ: Բժշկական փաստաթղթերը պետք է պահվեն համակարգչի մեջ և նոր ժամանած անձանց հետ ներկայացվող՝ թղթային կրիչների վրա պահվող բոլոր տվյալները և նախնական բժշկական զննության ձևաթղթերը պետք է սկանավորվեն և պահվեն համակարգիչների մեջ:
- Բժշկական սարքավորումների համար նախատեսված պահեստային սենյակ: Առողջապահության ոլորտի մասնագետները պետք է որոշեն, թե ինչ սարքավորումներ են անհրաժեշտ արտակարգ իրավիճակների դեպքում, ինչպես նաև կենտրոնի ամենօրյա աշխատանքն ապահովելու համար, սակայն այդ ցանկում պարտադիր պետք է ներառվեն թթվածինը, վերքերի վիրակապման պարագաները և առնվազն երկու դեֆիբրիլյատոր (սրտամկանի թելիկախաղը վերացնող սարքեր):
- Առնվազն 6 անձ տեղավորող սպասարահ, թեև կարելի է կիրառել պայմանավորվածությամբ այցերի սպասարկման համակարգ՝ ամեն անգամ սպասարահում գտնվող անձանց թիվը սահմանափակելու նպատակով:
- Խորհրդատվության տրամադրման/ բուժման համար նախատեսված 2 սենյակ՝



ապահովված սեղաններով, 2 կամ 3 աթոռով, տաք և սառը ջրով ապահովված լվացարանով, զննման համար նախատեսված մահճակալով և ծածկված հանդերձարանով: Խորհրդատվության տրամադրման համար նախատեսված սենյակներից մեկը պետք է հարմարեցված լինի հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին: Կարելի է խորհրդակցել առողջապահության ոլորտի մասնագետների հետ՝ բուժման համար անհրաժեշտ մյուս պահանջները, ինչպես օրինակ՝ գործիքները, մանրէազերծիչ սարքավորումները և այլ պարագաներ բացահայտելու համար:

- 2 զուգարան, որոնցից մեկը՝ հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:
- Երկու ննջասենյակ՝ ապահովված բժշկական մահճակալներով այն արտակարգ դեպքերի համար, երբ անհրաժեշտ է հիվանդներին ժամանակավորապես տեղավորել և (կամ) մեկուսացնել՝ մինչև նրանց հիվանդանոց տեղափոխելը: Այս սենյակները կարող են նախատեսվել մեկ կամ երկու անձի համար, սակայն դրանցից մեկը պետք է հարմարեցված լինի հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին: Տարածքին ներկայացվող պահանջները առնվազն նույնն են, ինչ որ սահմանվում են սովորական ննջասենյակների համար:
- Անհրաժեշտ է քննարկել օդափոխման համակարգ տեղադրելու հարցը (օդի բացասական ճնշման ստեղծում), ինչը նպատակահարմար է օդակաթիլային վարակների դեմ պայքարելու համար:

Բժշկական կենտրոնը պետք է ունենա նաև, հնարավոր է, երկրորդ հարկում տեղակայված դեղատուն՝ տարածքը առավելագույնս արդյունավետ օգտագործելու և հավելյալ անվտանգություն ապահովելու համար: Որպես նվազագույն պահանջ՝ պետք է հատկացվի բավարար տարածք՝ դեղամիջոցների և դեղերի ապահով պահման համար, գրասենյակային տարածք՝ տվյալների վարման համար և տարածք դեղագործի համար՝ նշանակումների պատրաստման և բացթողման համար:

7.6 Տեսակցությունների կենտրոնը

Որպես կանոն՝ տեսակցությունների կարգավորման քաղաքականությունը պետք է լինի հնարավորինս ճկուն և մեղմ՝ անվտանգության բավարար մակարդակ ապահովելու համար նախատեսված սահմանափակումների շրջանակներում: Գլխավոր ընդունարանի մասնաշենքին կից շինությունը, որը պետք է լինի միահարկ, պետք է ունենա 75-100 անձ տեղավորելու հնարավորություն՝ խելամիտ հարմարավետության պայմաններում, և միայն ծայրահեղ դեպքերում պետք է կիրառվի տեսակցության «առանց շփում» տեսակը: Եթե կացարանում բնակվող անձինք չեն համարվում սեփական անձի կամ այլ անձանց համար վտանգ ներկայացնող անձինք, ապա պետք է թույլատրվի ազատ շփումը կացարանում բնակվող անձանց և այցելուների հետ, այնուամենայնիվ, կարգուկանոնը պահպանելու նպատակով, կացարանով ապահովման հատուկ կենտրոնի անձնակազմի կողմից պետք է իրականացվի ոչ խիստ հսկողություն և դիտանցում ԳՏՀ-ի միջոցով: Տեսակցությունների ժամերը պետք է լինեն հնարավորինս ճկուն և նախատեսվեն ցերեկային և ոչ ուշ երեկոյան ժամերին: Եթե տեսակցությունների պահանջարկը գերազանցի տեսակցությունների կենտրոնի հնարավորությունները, անհրաժեշտ կլինի կացարանում բնակվող անձանց տրամադրել հատկացված ժամեր և սահմանափակել նրանցից յուրաքանչյուրին այցելող անձանց թիվը: Կենտրոնի տեղակայման գծագրում պետք է նախատեսվեն՝

- Ընդունարան՝ այցելուներին հաշվառելու համար, որից առաջ պետք է նախատեսվի խուզարկության համար հատկացված տարածք՝ անվտանգության պորտալով և



դյուրակիր մետաղափնտրիչ սարքերով: Պետք է նախատեսվի առնվազն մեկ առանձնացված տարածք՝ մեկուսի խուզարկություն իրականացնելու համար: Հաշվառման ընթացակարգերը սահմանվում են Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերի փաստաթղթում, սակայն անհրաժեշտ է քննարկել մատնահետքեր ընթերցող այնպիսի էլեկտրոնային սարքեր տեղադրելու հարցը, ինչպիսիք օգտագործվում են «Զվարթնոց» օդանավակայանում՝ ելքի կետերում ուղևորների ինքնությունը, ըստ ներգաղթային հսկողությունից դուրս գալուց առաջ նրանցից վերցված մատնահետքերի, ստուգելու համար: Այս դեպքում, այցելուներից պետք է մատնահետքեր վերցվեն կենտրոն ժամանելիս և կենտրոնից մեկնելիս: Մուտքի և տեսակցությունների սենյակի միջև գտնվող դիտանցքի դռնակները պետք է ապահովված լինեն օդամեկուսիչ անցախցերով:

- Ընդունարանում գտնվող կողավող պահարաններ այցելուների համար՝ նրանց մոտ գտնվող գումարը, ինքնությունը հաստատող փաստաթղթերը և որևէ այլ արգելված գույք թողնելու համար: Կացարանում բնակվող անձանց համար բերվող սննդամթերքի և այլ իրերի հետ վարվելակարգը սահմանվում է Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերի փաստաթղթում:
- Մանկական խաղասրահ՝ ապահովված հեռուստացույցով, DVD նվագարկիչով և խաղալիքների տեսականիով:
- Բուֆետ՝ ըմպելիքներ և խորտիկներ վաճառող վաճառքի սարքերով կամ՝ փոքր սրճարանով:
- Կենտրոնի՝ հարմարություններով ապահովված մասում գտնվող ընդունարան կացարանում բնակվող անձանց հաշվառման համար:
- 3 կամ 4 հարցազրույցի սենյակներ՝ կացարանում բնակվող անձանց և նրանց օրինական ներկայացուցիչների, ՀԿ-ների ներկայացուցիչների, օրենքի կատարումն ապահովող մարմինների ծառայողների և այլ անձանց միջև գաղտնի հարցազրույցների համար: Պետք է հնարավոր լինի այդ սենյակներ մուտք գործել 2 ընդունարաններից, սակայն դրանք պետք է ամբողջովին առանձնացված լինեն տեսակցությունների հիմնական տարածքից և չունենան այդ տարածքի միջով մուտքի հնարավորություն: Սենյակներից մեկը պետք է հարմարեցված լինի տեսակցության «առանց շփում» տեսակի համար՝ ապահովված ապակե էկրանով, որը նախատեսված է կացարանում բնակվող՝ մեծ վտանգ ներկայացնող անձանց համար: Սենյակները պետք է դիտանցվեն ԳՏՀ-ի միջոցով, բայց ոչ՝ ձայնագրման սարքավորումներով:


Տեսակցությունների ընդհանուր օգտագործման տարածքը պետք է լինի լուսավոր և հյուրընկալ: Պատերին փակցված նկարները և ոչ հաստատություններին բնորոշ երանգներով և ռճով արված սովորական ներքին հարդարանքը և ձևավորումը պետք է ունենան հանգստացնող ազդեցություն և նպաստեն ագրեսիվ վարքագծի դրսևորումներից խուսափելուն, ինչպես նաև ազատազրկման վայրում գտնվելու զգացողությունից:

7.7 Բնակելի միավորներ տղամարդկանց համար

Տեղանքի հատակագծի օրինակով նախատեսվում է 4 բնակելի մասնաշենք: Համալիրի արևմտյան կողմում գտնվող 2 մասնաշենքերը նախատեսված են բացառապես կացարանում բնակվող տղամարդկանց համար և, կախված ննջասենյակները զբաղեցնելու նախընտրությունից՝ կարող է տեղավորել մինչև 80 կամ 90 անձ երկու մահճակալով ապահովված ննջասենյակներում: Առաջարկվում է նախագծում ներառել խառը՝ մեկ և երկու մահճակալով ննջասենյակներ, բայց, եթե ֆինանսական միջոցները թույլ տան, խելամիտ կլինեք դրանք նախագծել այնպես, որ հարմար լինի այնտեղ տեղավորել կացարանում բնակվող երկու անձի, սակայն օգտագործել դրանք մեկ անձի բնակեցման համար, եթե չառաջանա տեղա-



վորման լրացուցիչ հնարավորություն ապահովելու պահանջ: Ստորև ներկայացված է տղամարդկանց բնակելի միավորի հնարավոր հատակագիծը՝ ըստ հարկերի: Կրկին, այն ենթակա չէ մասշտաբային մեծացման և ներկայացվում է միայն ցուցադրման նպատակով՝



Ըստ նախագծի՝ բնակելի միավորը պետք է լինի երկհարկ, որի ցուկոլային հարկում պետք է տեղակայվեն օժանդակ հարմարությունները և ննջասենյակները, իսկ առաջին հարկում՝ ննջասենյակները և ցնցուղարանները: Ներկայացվում են հետևյալ պահանջները՝

- Վարչական գրասենյակ, որտեղ աշխատում է առնվազն մեկ ծառայող, և որն ունի ցուկոլային հարկի ընդհանուր օգտագործման տարածքին նայող ամրակայված ապակե պատուհան, և ապահովված է ԳՏՀ-ի մոնիտորով՝ վերևի հարկը դիտանցելու համար: Պետք է ապահովվի լարային հեռախոսակապի և ռադիոսարքավորումների, մուտքի դռները փակելու հեռակառավարման վահանակների և կոճակի սեղմմամբ աշխատող այն տափնապի ազդանշանային համակարգերի ընդունիչ կայանի առկայությունը, որոնք տեղակայված են բնակելի միավորի ամբողջ տարածքում և հնարավորություն են տալիս կացարանում բնակվող անձանց ցույց տալ, որ իրենք ցանկանում են կապ հաստատել աշխատակազմի հետ: Բնակելի միավորի բոլոր գրասենյակները պետք է ապահովված լինեն բազմատեսականի դեղորայք պարունակող առաջին օգնության դեղարկղով: Գրասենյակի երկու կողմերում մուտքի դռների առկայությունը հնարավորություն է տալիս այդ դռներից մեկը կամ երկուսն էլ փակելու միջոցով գրասենյակի ծառայողների համար անվտանգ ապաստարան ապահովել այն դեպքերում, երբ բնակելի միավորում և (կամ) շինության մյուս մասերում տեղի է ունեցել կարգուկանոնի խախտում:
- Յուրաքանչյուր հարկում պետք է լինի ընդամենը վեց ցնցուղարան և ցուկոլային հարկում գտնվող ցնցուղարաններից առնվազն մեկը պետք է հարմարեցված լինի հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:
- Լվացքատուն՝ ապահովված համապատասխան սարքավորումներով, որտեղ կացարանում բնակվող անձինք կարող են լվանալ և չորացնել իրենց հագուստները: Անկողնային պարագաները կարող են հավաքվել շաբաթական կտրվածքով և լվացվել կենտրոնական լվացքատանը, որը հագեցված է լվացքի և չորացման համար նախատեսված արդյունաբերական մեքենաներով:



- Յուրաքանչյուր ննջասենյակում պետք է լինի մեկ կամ երկու երկհարկ մահճակալ, ծածկված զուգարան, լվացարան, չկոտրվող հայելի, սեղան, աշխատասեղան և աթոռ: Ննջասենյակներում պետք է լինի ապահով պահարան կամ, տարածքը խնայելու նպատակով, մահճակալների տակ տեղադրված կողպվող դարակներ: Պետք է հնարավոր լինի կողպել ննջասենյակի դռները, սակայն կացարանում բնակվող յուրաքանչյուր անձի պետք է տրամադրել իր ննջասենյակի դռան բանալին: Թեև բնակելի միավորները պետք է կողպեքով փակվեն գիշերվա որոշակի ժամի, կացարանում բնակվող անձանց չի կարելի փակել իրենց ննջասենյակներում: Նրանք, անշուշտ, կարող են որոշել իրենք իրենց ներսից փակել սենյակում: Արբանյակային հեռուստատեսության ապահովումը դրական կերպով կանդրադառնա կացարանում բնակվող անձանց բարոյական վիճակի վրա:
- Յուրաքանչյուր մասնաշենքի ցոկոլային հարկում գտնվող ննջասենյակներից մեկը պետք է հարմարեցված լինի հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:
- Ընդհանուր օգտագործման տարածքները կարող են կահավորվել բնակելի միավորի ներսում շփումը դյուրացնելու նպատակով և ապահովված լինել ժամանցի համար նախատեսված այնպիսի հարմարություններով, ինչպես օրինակ՝ բիլիարդի սեղաններն են:

Այնքանով, որքանով որ տեղյակ է վերահսկող թիմը, գոյություն չունեն սենյակների չափերին ներկայացվող միջազգայնորեն սահմանված պահանջներ, թերևս հաստատության ղեկավարներին վթարային իրավիճակներում ճկունություն դրսևորելու հնարավորություն ընձեռելու համար և իսկապես՝ Միացյալ Թագավորության Ներգաղթողների ձերբակալման հարցերով կենտրոնների վերաբերյալ կանոններում նշվում է, որ՝

«Ոչ մի սենյակ չի կարող օգտագործվել որպես ձերբակալված անձի համար քնելու կացարան, եթե Պետական քարտուղարի կողմից չի հաստատվել, որ՝

ա) դրա չափը, լուսավորությունը, ջեռուցումը, օդափոխությունը և հարմարությունները բավարար են առողջության պահպանման համար.

բ) այն ունի բավարար պահեստային հարմարություններ (անվտանգության և ապահովության նկատառումներից ելնելով), և

գ) այն ձերբակալված անձին հնարավորություն է տալիս ցանկացած ժամանակ հաղորդակցվել ծառայողի հետ:»¹⁰⁹

Սրանով հստակ պարտավորություն է դրվում Միացյալ Թագավորության Ներքին գործերի նախարարություն պաշտոնյաների վրա ներքին գործերի նախարարի կողմից նրանց պատվիրակված լիազորությունների միջոցով սահմանելու կիրառելի ստանդարտները: Այնուամենայնիվ, «Ուղեցույց և լավագույն գործելակերպ Ուկրաինայի կացարանով ապահովման հատուկ կենտրոնների համար (2007 թվականի օգոստոս)» ՄՄԿ-ի զեկույցում նշված չափերն ընդունվել են որպես չափանիշ ՄՄԿ-ի կացարանային ապահովման հետ կապված կարիքների հետագա գնահատումների համար, և առաջարկվում են պահպանել այս կացարանով ապահովման հատուկ կենտրոնի նախագծման ժամանակ:

«Նվազագույն մակերեսը յուրաքանչյուր անձի համար պետք է լինի ոչ պակաս, քան 4.00 մ² բնակելի տարածությունը և 3.5 մ² ազատ ցերեկային տարածքը: Մեկ անձի համար նախատեսված սենյակի նվազագույն մակերեսը պետք է լինի ոչ պակաս, քան 7.5 մ²: Ընդհանուր մակերեսը որոշվում է՝ յուրաքանչյուր անձի համար հաշվարկելով 4.00 մ² նվազագույն բնակելի տարածությունը և 3.5 մ² ազատ ցերեկային տարածքը: «Ազատ

109 Ներգաղթ. Ձերբակալման կենտրոնի կանոններ. Նորմատիվ իրավական ակտ, 2001 թվական, թիվ 238-



տարածությունը» օգրագործման ենթակա այն տարածությունն է, որը ծանրաբեռնված չէ կահավորանքով կամ տեղակայված հարմարանքներով: Ազատ տարածության չափը, առնվազն մեկ ուղղությամբ, պետք է կազմի առնվազն 2.2 մ: Սենյակի ազատ տարածքը որոշելու համար չափվում է ընդհանուր մակերեսը և դրանցից հանվում է տեղակայված հարմարանքների և սարքավորումների զբաղեցրած մակերեսը: Տեղակայված բոլոր հարմարանքները և սարքավորումները պետք է լինեն սարքին վիճակում և յուրաքանչյուր անձի համար ապահովեն հետևյալ նվազագույն հարմարությունները՝ մահճակալ, սանիտարափոխանակական հարմարանքներ (եթե դրանք տեղակայված են սենյակի ներսում), գրասեղան, կողպվող պահարան և աթոռ կամ աթոռակ (տարբուրեմ)»:

Ուղեցույցներում նաև նշվում է, որ՝

«Մեկ անձի համար նախատեսված սենյակները պետք է՝

- ունենան առավելագույնը մեկ կազմարանով ապահովված միգրանտ տեղավորելու հնարավորություն.
- ունենան առնվազն 7.5 մ² ընդհանուր մակերեսով տարածք.
- ունենան առնվազն 2.5–3 մետր ներքին բարձրությամբ առաստաղ և առնվազն 2 մետր լայնություն.
- ապահովված լինեն զուգարանով և լվացարանով.
- ապահովված լինեն փոքր մահճակալով, գրասեղանով և նստելու հարմարությամբ՝ բոլորը ապահով կերպով ամրացված հատակին/պատերին»

իսկ՝

«Երկու անձի համար նախատեսված սենյակները պետք է՝

- ունենան առավելագույնը երկու կազմարանով ապահովված միգրանտ տեղավորելու հնարավորություն.
- ունենան առնվազն 6.5 մ² մակերեսով տարածք յուրաքանչյուր անձի համար.
- ունենան առնվազն 2.5–3 մետր ներքին բարձրությամբ առաստաղ և առնվազն 2 մետր լայնություն.
- ապահովված լինեն լվացարանով և զուգարանով (առանձնացված 1մ տրամագծով և 1.2 մ բարձրությամբ բաժանիչ միջնորմով): Այս դեպքում պետք է ավելացվի 0.5 մ² լրացուցիչ տարածք.
- ապահովված լինեն երկու փոքր մահճակալով և առնվազն մեկ գրասեղանով և մեկ նստելու հարմարությամբ՝ բոլորը ապահով կերպով ամրացված հատակին/պատերին».

Թեև կազմարանով ապահովման հատուկ կենտրոնի՝ քննարկվող նմուշի համար չի առաջարկվել ապահովել շատ անձանց համար նախատեսված սենյակներ, այնուամենայնիվ, շատ անձանց համար նախատեսված սենյակների առկայությունը որպես տարբերակ (ի տարբերություն ընտանիքի համար նախատեսված սենյակների) քննարկելու դեպքում Ուկրաինայի Ուղեցույցներում նշվում է, որ 5 կամ ավելի անձանց բնակության համար սենյակները պետք է նախատեսվեն որպես ննջարաններ՝ հետևյալ բնութագրերով՝

- «մեկտեղանի մահճակալներով ապահովված ննջարանի նվազագույն մակերեսը պետք է լինի. յուրաքանչյուր անձի համար 3.75 մ² նվազագույն բնակելի տարածություն և 3.0 մ² ազատ ցերեկային տարածք, ընդամենը՝ 6.75 մ² մակերես՝ կազմարանով ապահովված յուրաքանչյուր միգրանտի համար.
- եթե ննջարանը ապահովված է երկհարկ մահճակալներով, ապա յուրաքանչյուր երկհարկ մահճակալի համար նվազագույն մակերեսը պետք է լինի 6.5 մ²: Երբ ավելացնում




ենք կացարանով ապահովված յուրաքանչյուր միգրանտի համար պահանջվող՝ 3.25 մ² մակերեսով ցերեկային հանգստի համար նախատեսված տարածությունը, կացարանով ապահովված յուրաքանչյուր միգրանտի համար ընդհանուր տարածությունը երկհարկ մահճակալներով ապահովված ննջարանում կազմում է 6.5 մ² (6.5 մ²-ին՝ բաժանած երկհարկ մահճակալը իրար հետ կիսող կացարանով ապահովված 2 միգրանտի՝ հավասար է 3.25 մ² յուրաքանչյուր միգրանտի համար՝ գումարած 3.25 մ² մակերեսով ցերեկային հանգստի համար նախատեսված տարածությունը՝ կստացվի 6.5 մ² ընդհանուր մակերես կացարանով ապահովված յուրաքանչյուր միգրանտի համար)։

- եռահարկ մահճակալներով ննջարաններում յուրաքանչյուր եռահարկ մահճակալի համար նվազագույն տարածությունը պետք է լինի 8.4 մ² կամ 2.75 մ² կացարանով ապահովված յուրաքանչյուր միգրանտի համար: Երբ ավելացնում ենք կացարանով ապահովված յուրաքանչյուր միգրանտի համար պահանջվող՝ 3.25 մ² մակերեսով ցերեկային հանգստի համար նախատեսված տարածությունը, կացարանով ապահովված յուրաքանչյուր միգրանտի համար ընդհանուր տարածությունը եռահարկ մահճակալներով ապահովված ննջարանում կազմում է 6 մ² (8.4 մ²-ին՝ բաժանած եռահարկ մահճակալը իրար հետ կիսող կացարանով ապահովված 3 միգրանտի՝ հավասար է 2.75 մ² յուրաքանչյուր միգրանտի համար՝ գումարած 3.25 մ² մակերեսով ցերեկային հանգստի համար նախատեսված տարածությունը՝ կստացվի 6 մ² ընդհանուր մակերես կացարանով ապահովված յուրաքանչյուր միգրանտի համար)»:

7.8. Բնակելի միավոր կանանց և ընտանիքների համար

Կանանց և ընտանիքների համար նախատեսված կացարանը պետք է առանձնացված լինի, իսկ մոդելում առաջարկվում է այս բնակելի մասնաշենքը կառուցել համալիրի հյուսիս-արևելքում: Կանանց համար նախատեսված ննջասենյակները պետք է կառուցվեն և սարքավորվեն նույն սկզբունքով, ինչ որ տղամարդկանց համար առաջարկվող կացարանները և, ցանկալի է, որ դրանք նախատեսված լինեն մեկ անձի բնակության համար: Կանանց համար նախատեսված առաջարկվող կացարանների քանակը զգալիորեն քիչ է, քանի որ լայնորեն ընդունված է այն կարծիքը, որ քիչ հավանական է, որ նրանք խախտումներ կատարեն ներգաղթի ոլորտում, իսկ այն կանայք, ովքեր կատարում են նման խախտումներ, քիչ հավանական է, որ կձերբակալվեն: Առավել անհավանական է ընտանիքների ձերբակալումը, քանի որ սովորաբար բավարար է լինում ձերբակալել ընտանիքի գլուխը հանդիսացող տղամարդուն, ինչի արդյունքում, հիմնականում, ընտանիքի մյուս անդամները ենթարկվում են ներկայանալու մասով սահմանափակումներին և հեռացման մասին հրահանգներին: Պետք է նախատեսել կացարանով ապահովում ընտանիքների համար, չնայած դա, գերակշռող դեպքերում, կօգտագործվի մինչև մեկնելը՝ միայն կարճ ժամանակահատվածի համար, նաև այն ժամանակ, երբ բողոքարկման բոլոր իրավունքները սպառելուց հետո դեռևս բավարար հիմքեր կան ենթադրելու, որ ընտանիքը չի կատարի հեռացման հետ կապված պայմանավորվածությունները: Պատկերավոր նկարագրության համար՝ բնակելի միավորի ցուցանիշները հարկի նախագիծը կարող է հարմարեցվել ստորև նշված ձևով՝





Եվս մեկ անգամ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կազմարանով ապահովման հատուկ կենտրոնները քրեակատարողական հիմնարկներ չեն, հենց սկզբից պետք է առաջնորդվել այն սկզբունքով, որ ընդհանուր օգտագործման տարածքներում՝ ներսում և բացօթյա տարածքում կանայք և տղամարդիկ պետք է ունենան անարգել ազատ շփման հնարավորություն: Շփման սահմանափակումը հիմնականում կարող է արդարացված լինեն անվտանգության, կարգապահության և պատշաճ կարգուկանոնի պահպանման համար վտանգի առկայության հիմնավորմամբ: Նման դեպքերում առավելագույնս արդյունավետ կերպով կօգտագործվեն ընդհանուր օգտագործման հարմարությունները, և միջոցներ կձեռնարկվեն նման իրավիճակների կրկնությունից խուսափելու համար, կամ հերթապահությունների ժամանակացույցեր կմշակվեն՝ հատուկ օգտագործման համար: Հաշվի առնելով վերը նշվածը՝ կանանց համար նախատեսված բնակելի միավորի տարածքի սահմաններում առաջարկվում է նախատեսել բացօթյա, կանանց համար նախատեսված ընդհանուր օգտագործման տարածք՝ մանկական խաղահրապարակով, որը կունենա սահմանափակ մուտքի հնարավորություն և հնարավորություն կտա երեխաների համար ապահովել պաշտպանվածության ավելի բարձր մակարդակ: Որպես կանոն՝ իրենց ընտանիքների հետ տեղավորված՝ կազմարանում բնակվող տղամարդկանց պետք է թույլատրել գտնվել իրենց ընտանիքների հետ իրենց՝ ընտանիքի համար նախատեսված սենյակներում, սակայն եթե դա հնարավոր չէ ապահովել, նրանց պետք է թույլատրել այցելել ընտանիքի անդամներին՝ մինչև բնակելի միավորների՝ գիշերային ժամերին իրականացվող պահպանությունն ու խիստ հսկողությունը: Ամբողջ ընտանիքին կազմարանում տեղավորելու համար ընտանիքի համար նախատեսված սենյակները պետք է ունենան սենյակին անմիջապես կից գտնվող լոգասենյակ՝ ապահովված զուգարանի, լվացարանի և ցնցուղարանի հարմարություններով: Նախագծի մեջ ավելացվել է երեխաների մեկ խաղասենյակ և նախագծից հանվել է ցնցուղ ընդունելու համար նախատեսված սենյակներից մեկը: Նախատեսվում է առաջին հարկի դասավորվածությունը թողնել նույնը՝ երկու անձի համար նախատեսված սենյակներով, որոնք պետք է օգտագործել մեկ անձի բնակեցման համար, եթե չառաջանա տեղավորման լրացուցիչ հնարավորություն ապահովելու պահանջ: Մեկտեղանի մահճակալներով ապահովված՝ ընտանիքի համար նախատեսված սենյակի չափերն են. յուրաքանչյուր անձի համար 3.75 մ² նվազագույն բնակելի տարածություն և 3.0 մ² ազատ ցերեկային տարածք, ընդամենը՝ 6.75 մ² մակերես՝



կացարանով ապահովված յուրաքանչյուր միգրանտի համար¹¹⁰, որը 4 անձի համար կազմում է ընդամենը 27մ²: Ցուկոլային հարկում գտնվող՝ ընտանիքի համար նախատեսված մեկ սենյակ և մեկ սովորական սենյակ պետք է հարմարեցված լինի հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների համար:

7.9 Բնակելի միավոր ընդունումը և առանձնացումը

Կացարանով ապահովման կենտրոնները, որպես կանոն, պետք է շաբաթական 7 օր՝ 24 ժամ շարունակ բաց լինեն՝ կենտրոն նոր ժամանած անձանց ընդունելու համար: Այն միգրանտների համար, որոնք ժամանում են գիշերվա ընթացքում, խորհուրդ է տրվում ունենալ ընդունման կացարան, որտեղ նրանք կարող են մնալ մինչև հիմնական սենյակ տեղափոխվելը: Ուշ ժամերի կենտրոն ժամանած անձանց պետք է առաջարկել տաք սնունդ և նրանց համար ապահովել ցնցուղ ընդունելու հնարավորություն: Լիարժեք ընդունումը պետք է տեղի ունենա հաջորդ օրը՝ կատարելով բժշկական զննում, կառույցի շրջայց և բացատրելով կացարանով ապահովման կենտրոնի կանոնները, ինչպես նաև կացարանում բնակվող անձանց օրինական իրավունքները: Կենտրոն նոր ժամանած անձինք պետք է պարբերաբար ստուգվեն առաջին 24 ժամվա ընթացքում:

Կարգուկանոնը պահպանելու և կացարանում բնակվող բոլոր անձանց և աշխատակազմի անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ խիստ ռեժիմով հսկվող կացարան, որտեղ կացարանում բնակվող կարգազանց, սպառնացող և (կամ) բռնի վարքագիծ դրսևորող անձինք կարող են ժամանակավորապես մեկուսացվել: Առանձնացման համար նախատեսված կացարանը կարող է օգտագործվել նաև կացարանում բնակվող կամ նոր ժամանած այն անձանց նկատմամբ կարանտին սահմանելու համար, ում հետ կապված կան կասկածներ վարակիչ հիվանդություններ ունենալու վերաբերյալ, ինչպես նաև այն անձանց նկատմամբ, ովքեր համարվում են ինքնավնասման առումով անմիջական վտանգ ներկայացնող: Ուժ կիրառելու և առանձնացման հետ կապված ընթացակարգերը մանրամասնորեն ներկայացվում են Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերի փաստաթղթում, սակայն կացարանով ապահովման առումով, բնակելի միավորը պետք է ունենա նույնպիսի դասավորվածություն, ինչպիսին տղամարդկանց համար նախատեսված բնակելի միավորներն են: Ընդունման սենյակները պետք է ապահովված լինեն սովորական հարմարություններով, բայց խիստ ռեժիմով հսկվող սենյակների համար պահանջվում են ծանրաքարշ, անվտանգությամբ ապահովված դռներ, որոնք պետք է վարչական գրասենյակից հնարավոր լինի փակել հեռակառավարման միջոցով: Դրանց համար, որպես կանոն, չի պահանջվում ծավալուն պահեստային տարածք, քանի որ այդ սենյակում պահվող բոլոր անձինք պետք է այնտեղ մնան հնարավորինս կարճ ժամանակով և, իհարկե, 3 օրից ոչ ավելի. պետք է քննարկել կացարանում բնակվող այն անձանց նկատմամբ մեղադրանք առաջադրելու հարցը, ում, անընդհատ բռնի վարքագիծ դրսևորելու համար, հարկավոր է առանձնացնել երկարատև ժամանակով՝ նման անձանց քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու և այնտեղ պահելու համար: Բնակելի միավորի առաջին հարկը կարող է օգտագործվել որպես տղամարդկանց համար նախատեսված՝ սովորական կացարան: Ընդունման և առանձնացման համար նախատեսված սենյակներից մեկը պետք է հարմարեցված լինի հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների համար:

110 Ուղեցույց և լավագույն գործելակերպ Ուկրաինայի կացարանով ապահովման հատուկ կենտրոնների համար. ՄՄԿ Ուկրաինա, 2007 թվական:



7.10 Ընդհանուր օգտագործման հարմարությունները

Ընդհանուր օգտագործման հարմարությունների շենքը պետք է այնպես նախագծվի, որ հնարավոր լինի մեկ վայրում համախմբել ժամանցային, կրթական և կրոնական նպատակների համար պահանջվող բոլոր հարմարությունները: Շինությունում պետք է տեղակայված լինեն նաև խոհանոցը, ճաշարանը և հիմնական լվացքատունը: Ներկայացվում են հետևյալ պահանջները՝

- Ներքևի հարկում գտնվող ճաշարան, որը, իդեալական տարբերակում, կկարողանա տեղավորել մինչև 100 մարդ: Որպես այլընտրանք, մինչև 50 անձ տեղավորող՝ ճաշելու համար նախատեսված ավելի փոքր տարածք, և այն դեպքում, երբ ապահովման հատուկ կենտրոնը բնակեցված է ամբողջությամբ՝ ճաշարանում սննդի ապահովումը պետք է իրականացվի 2 հերթափոխով: Տարածքի ընդհանուր մակերեսը կարող է հաշվարկվել՝ կազմարանում բնակվող մեկ անձի համար հատկացնելով 1.4մ² մակերեսով տարածք՝ ապահովելով բավարար թվով նստելու համար նախատեսված տեղեր և սեղաններ, ինչպես նաև մատչելիություն հաշմանդամություն ունեցող անձանց համար:
- Ամբողջովին սարքավորված խոհանոց, որի միջոցով հնարավոր կլինի կազմարանում բնակվող մինչև 100 անձի համար՝ ավելացրած անձնակազմը, ամենօրյա կտրվածքով, ապահովել երեքանգամյա սնունդ: Պետք է խորհրդակցել խոհարար-մասնագետների հետ խոհանոցի պլանավորման և սարքավորման հարցում՝ ներկառուցված սարքերի, առանձին տեխնիկայի, օդափոխության, ջրի, էլեկտրաէներգիայի և գազի մատակարարման հետ կապված՝ առողջության և անվտանգության պահանջների համապատասխանությունն ապահովելու նպատակով: Պետք է պարբերաբար իրականացնել անվտանգության ստուգումներ: Պետք է պահպանվեն սննդի պատրաստման, բաժանման և որակի հետ կապված կրոնական և մշակութային առանձնահատկություններով պայմանավորված պահանջները, սակայն, եթե դրա ապահովումը հարուցի որոշակի խնդիրներ, ապա կարող են միջոցներ ձեռնարկվել քիչ թվով անձանց համար սննդի ապահովման նպատակով բնակելի միավորներում խոհանոցային հարմարություններ տեղադրելու համար:
- Շփման համար նախատեսված երկու սենյակ, յուրաքանչյուրում՝ մինչև 50 անձ տեղավորելու համար նախատեսված հարմարավետ կահավորանքով, որոնցից մեկը պետք է տեղակայված լինի վերևի, մյուսը՝ ներքևի հարկում՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիություն ապահովելու համար: 2 սենյակի առկայությունը հնարավորություն է տալիս մշակութային, էթնիկական և կրոնական տարբեր խմբերին՝ առանձին հաղորդակցվելու համար և, անհրաժեշտության դեպքում, տղամարդկանց և կանանց համար ապահովվում են տարբեր տարածքներ: Սենյակներում պետք է առկա լինեն քարտախաղի և այլ խաղերի տեսակներ, որոնք կարող են ժամանակավորապես տրամադրվել կազմարանում բնակվող անձանց:
- Հեռուստացույցով ապահովված սենյակ՝ արբանյակային կապի հնարավորությամբ և DVD նվագարկիչով:
- Գրադարան՝ ապահովված տարածված լեզուներով տպագրված գրքերի լայն տեսականիով: Գրադարանը կարող է նաև ապահովված լինել սեղանի վրա տեղադրված՝ համացանցի մատչելիությամբ ապահովված 3 կամ 4 համակարգիչներով, որոնցից, նախապես գրանցվելու սկզբունքով, կարող են օգտվել կազմարանում բնակվող անձինք՝ բովանդակության ստուգման միջոցով իրականացվող վերահսկողության ներքո:



- Մարզասրահ և մարզահրապարակ/խաղահրապարակ: Հնարավորության դեպքում, պետք է բավարար տարածք ապահովել շինության ներսում գտնվող՝ յուրաքանչյուր թիմում 6 խաղացողի համար նախատեսված ֆուտբոլի մարզադահլիճի համար: Մարզասրահի սարքավորումների տրամադրումը պետք է իրականացվի համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից: Բոլոր սարքավորումների անվտանգությունը պետք է պարբերաբար փորձարկվի և վերահսկվի որակավորված մարզական հրահանգիչի կողմից:
- Մինչ 30 անձ տեղավորող դասասենյակ ուսումնական դասընթացների համար՝ սարքավորված ուսումնասօժանդակ պարագաներով, ինչպես օրինակ՝ սպիտակ գրատախտակներով, դյուրակիր համակարգիչներով, «PowerPoint» արտապատկերիչ սարքով, DVD նվագարկիչով, հեռուստաէկրանով և այլն:
- Բազմադասական աղթասրահ: Կախված կացարանում բնակվող անձանց կրոնական պատկանելությունից՝ կարող է պահանջվել 2 նման աղթասրահ:
- Լվացքատուն՝ սարքավորված կոմերցիոն կատեգորիայի վացքի և չորացման համար նախատեսված մեքենաներով՝ անկողնային պարագաների և սրբիչների վացման և արդուկման նպատակով: Մեքենաների քանակը և դրանց մասնագրերը որոշելու համար հարկավոր է խորհրդակցել մասնագետների հետ:
- Խանութ, որտեղ կվաճառվեն առաջին անհրաժեշտության ապրանքներ, ինչպես օրինակ՝ անձնական հիգիենայի պարագաներ և էթնիկական փոքրամասնությունների համար հատուկ մենդամթերք, թեյ, սուրճ, զովացուցիչ ընպելիքներ, միրգ և այլն: Կացարանում բնակվող անձինք պետք է հնարավորություն ունենան ղեկավարներին հայտնել իրենց նախընտրությունները վաճառվող ապրանքների վերաբերյալ: Առաջարկվում է վճարման համար կիրառել էլեկտրոնային համակարգ, որտեղ կգրանցվի կացարանում բնակվող անձանց կողմից վարչական գրասենյակում ի պահ տրված գումարի չափը և որից, ավտոմատ կերպով, կհանվի կատարված գնումներին համապատասխան գումարը:
- Երկու հարկերում տեղակայված՝ տղամարդկանց և կանանց համար նախատեսված սանհանգույցներ՝ ապահովված զուգարաններով և վացարաններով. ցուկլային հարկում գտնվող սանհանգույցը պետք է հարմարեցված լինի հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների համար:
- Յուրաքանչյուր հարկում, դյուրամատչելի վայրում և համապատասխան նշումով, պետք է առկա լինի առաջին օգնության առնվազն երկու դեղարկղ, ինչպես նաև կրակմարիչներ:

7.11 Տեխնիկական շինությունը

Տեխնիկական շինությունը պետք է տեղակայված լինի համալիրի հարավ-արևմտյան անկյունում գտնվող անվտանգության պարիսպների միջև՝ արդյունավետ կերպով օգտագործելով ազատ տարածությունը և չպետք է հասանելի լինի կացարանում բնակվող անձանց համար: Այնտեղ կպահվեն համալիրի շինությունները ջեռուցելու և հովացնելու համար անհրաժեշտ բոլոր մեխանիզմները, այնտեղից կկարգավորվեն արտաքին էլեկտրամատակարարումն ու գազամատակարարումը և այնտեղ կտեղավորվեն գեներատորները՝ լուսավորության, անվտանգության համակարգերի, հաղորդակցության, հակահրդեհային համակարգերի և բժշկական կենտրոնի համար պահուստային էլեկտրասնուցում ապահովելու նպատակով: Ձերբակալման կենտրոններում լուսավորության, ջեռուցման և օդափոխության ստանդարտներ սահմանելիս կարելի է ուղղորդվել Միացյալ Թագավորության կանոններով, որտեղ նշվում է, որ՝



- Սեղանի բարձրության մակարդակում արհեստական լուսավորությունը պետք է լինի միջինում մինչև 150 լյուքս: Լուսավորվածության մակարդակը պետք է ստուգվի դյուրակիր լյուքսաչափով: Պետք է տեղադրել լյուքսաչափը: չափիչ սարքը և այն ստվերարկող փարրը պետք է գտնվեն իրարից հեռու:
- Սենյակներում նվազագույն ջերմաստիճանը պետք է պահպանվի $21^{\circ}\text{C} \pm 1^{\circ}\text{C}$ -ի սահմաններում: Առավելագույն ջերմաստիճանը չպետք է գերազանցի 28°C -ը: Ջերմաստիճանի հետ կապված նախագծման ռիսկը (անսարքության ցուցանիշը) կարող է կազմել 30 օր՝ փասը փարվա ընթացքում: Այն դեպքում, երբ անհրաժեշտ է ապահովել մեխանիկական հովացման միջոցով հարմարավետ օդորակման համակարգ, պետք է ապահովվի ամառային սեզոնի համար նախատեսված՝ $1^{\circ}\text{C} \pm 2^{\circ}\text{C}$ նախագծման ջերմաստիճանը:
- Առանց բնական օդափոխության սենյակների դեպքում, որտեղ պահանջվում է օդի մեխանիկական մաքրակարարում և օդափոխման օդաքաշ համակարգ, մաքուր օդի ծախսը պետք է մեկ անձի համար կազմի ութ լիտր/վայրկյանում, այն դեպքում, երբ այդ փարածքում ծխելն արգելվում է: Չպետք է լինի խոնավության կուտակում, ինչը կարող է հանգեցնել բորբոսի առաջացման կան աղտոտիչների գոյացման, ինչը կարող է վրանգավոր լինեն առողջության համար:¹¹¹

7.12 Սարքավորումների՝ խիստ ռեժիմով հսկվող պահեստը

Սարքավորումների պահեստը տեղակայված է համալիրի հարավ-արևելյան անկյունում՝ սահմանների և ներքին պարիսպների միջև և հասանելի չէ կացարանում բնակվող անձանց համար: Այն պետք է օգտագործվի այլ բոլոր սարքավորումները պահելու համար, որոնք վտանգ են ներկայացնում կացարանում բնակվող անձանց և անձնակազմի համար կամ, պետք է օգտագործվեն որպես զենք՝ կարգուկանոնի խախտման դեպքում: Նման սարքավորումները ներառում են այգեգործական տեխնիկական և գործիքները, շինության տեխնիկական սպասարկման համար անհրաժեշտ գործիքները և անվտանգության սարքավորումները, ինչպես օրինակ՝ շնչառական ապարատները, կրակմարիչները և այլ:

7.13 Ընդհանուր օգտագործման բացօթյա տարածքը

Ընդհանուր օգտագործման տարածքը պետք է հասանելի լինի կացարանում բնակվող բոլոր անձանց՝ մարզվելու և ժամանցի նպատակով: Բացօթյա ժամանցը չպետք է սահմանափակվի բնականոն պայմաններում, ցերեկային ժամերին բաց դռների քաղաքականության և ազատ շփման պայմաններում: Տարածքը պետք է լինի հնարավորինս կանաչապատված՝ հաճելի միջավայր ստեղծելու համար և ապահովված լինի նստելու համար նախատեսված ծածկված տարածքով՝ բնության տարբեր երևույթներից պատուհաններով համար: Իդեալական տարբերակում, պետք է լինի բացօթյա սպորտաձևերի համար նախատեսված տարածք:

Կանանց համար նախատեսված բացօթյա ընդհանուր օգտագործման տարածքը պետք է պարսպով առանձնացված լինի կանանց համար նախատեսված բնակելի միավորի շրջակայքում և ապահովված լինի մանկական խաղահրապարակով: Խաղերի համար նախատեսված տարածքը պետք է ունենա մասնակի ծածկ՝ արևից պաշտպանության համար և ապահովված լինի խաղասարքերով՝ ճոճանակներով ու սահարաններով: Բացառապես կանանց համար նախատեսված ընդհանուր օգտագործման տարածքով ապահովված լինելը չպետք է սահմանափակի կանանց՝ հիմնական բացօթյա տարածքից օգտվելու հնարավորությունը:

111 Ներգաղթ. Ձերբակալման կենտրոնի կանոններ. Նորմատիվ իրավական ակտ, 2001 թվական, թիվ 238- Ձերբակալման ծառայությունների հրաման 4/2003:



7.14 Ղեկավարումը և անձնակազմի կառուցվածքը

Կացարանով ապահովման հատուկ կենտրոնի ղեկավարման և կադրային ապահովման կարգը, ի վերջո, սահմանվում է դրա աշխատանքների կազմակերպման համար պատասխանատու կազմակերպության կողմից: Եթե այդ կազմակերպությունը, օրինակ՝ Արդարադատության նախարարությունն է, ղեկավարման կառուցվածքում կարտացոլվի քրեակատարողական հիմնարկներում աշխատանքների կազմակերպման ձևը: Չնայած, որ սրանով կապահովվի խելամիտ մեխանիզմ, վարչական ձեռքարկման դեպքում պահանջունները, շատ առումներով, տարբեր են: Համեմատաբար՝ հիմնականում ստորակարգային (հիերարխիկ) կառուցվածքի դեպքում կպահանջվի կառույցի աշխատանքների կազմակերպման հարցում պատասխանատվության բաժանում երկու մասի՝ գործառնական և վարչական:

Գործառնական մասը ենթադրում է տեղամասում վերահսկողական գործողություններ իրականացնելու և կարգուկանոնն ու կարգապահությունը պահպանելու պատասխանատվություն: Բնակելի միավորների անվտանգությունն ապահովող թիմերը կտեղավորվեն բնակելի միավորներում գտնվող գրասենյակներում՝ իրենց կազմը համալրելով յուրաքանչյուր առանձին միավորի համար նշանակված ծառայողներով: Նրանք պետք է ծանոթանան իրենց բնակելի միավորի տարածքում կացարանում բնակվող անձանց հետ և վերահսկեն նրանց թե՛ ֆիզիկական և թե՛ հոգեկան առողջության պահպանումը, ինչպես նաև կանխատեսեն հնարավոր խնդիրները: Յուրաքանչյուր բնակելի միավորի համար կադրային ապահովումը կախված կլինի կացարանում բնակվող անձանց՝ համագործակցելու պատրաստակամությունից, սակայն հնարավոր է, որ յուրաքանչյուր շինության համար պահանջվի միայն մեկ ծառայող, ինչը ենթադրում է, որ տվյալ թիմը բաղկացած կլինի երեք անձից, ովքեր 24 ժամվա ընթացքում կաշխատեն 8-ական ժամ տևողությամբ՝ հերթափոխերով:

Ձեռքարկված անձանց պահելու հաստատությունների աշխատանքների կազմակերպման համար էական նշանակություն ունի հետախուզության իրականացումը, և կացարանով ապահովման կենտրոններն այդ առումով բացառություն չեն: Անվտանգության հետախուզության թիմը պետք է մշակի կացարանում բնակվող անձանց հետ շփվող բնակելի միավորների անվտանգությունն ապահովող թիմերի և կացարանում բնակվող անձանց հետ շփվող՝ անձնակազմի որևէ այլ անդամի կողմից իրեն տրամադրվող տեղեկություններն այնպես, որ կանխարգելիչ միջոցներ ձեռնարկվեն անվտանգությունը պահպանելու համար: Անձնակազմի բոլոր անդամները պետք է գիտակցեն, որ իրենք պատասխանատու են տեղեկություններ հավաքելու համար:


Անվտանգության՝ պատահարների արձագանքման թիմը պատասխանատու է այն տարածքներ այցելելու համար, որտեղ ծագել են խնդիրները և այն անձանց մեկուսացնելու համար, ովքեր հրահրել են այդ խնդիրների առաջացումը:

Վարչական մասում՝ վարչական և գրանցումների բաժինը պատասխանատու է ընդունման գործընթացի փաստաթղթային հիմնավորումն ապահովելու համար՝ վարելով կացարանում բնակվող անձանց անձնական գործերը, վարելով գույքի հաշվառումը և այլն: Կացարանով ապահովման հատուկ կենտրոնի ծառայությունների բաժինը պատասխանատու է վարչական մասի և բժշկական կենտրոնի աշխատանքի կազմակերպման համար՝ ավելացրած ընդհանուր օգտագործման հարմարությունների շինությունում տարբեր գործառնայթներ իրականացնելու համար, ինչպես օրինակ՝ ճաշարանում, խոհանոցում՝ սննդամթերքի և պարագաների մատակարարում, գրադարանի համալրում, մարզասրահի սարքավորումների տրամադրում, մաքրման աշխատանքներ և այլն: Կառույցի տեխնիկական սպասարկման բաժինը պետք է պատասխանատու լինի շինության և սարքավորումների տեխնիկական սպասարկման, ջեռուցման, լուսավորության, ջրամատակարարման, ջրահեռացման և



այլ ծառայությունների ապահովման համար: Սոցիալական ոլորտի աշխատողները կընդգրկվեն վարչական կազմում՝ կառույցների ծառայությունների բաժնում և օրվա ընթացքում պատրաստակամորեն հասանելի կլինեն կացարանում բնակվող անձանց խորհրդատվություն տրամադրելու համար:

Դրա կառուցվածքը ներկայացվում է ստորև.



Չի որոշվել թիմերի անդամների բաշխումը, սակայն նախատեսվում է ունենալ բնակելի միավորների անվտանգությունն ապահովող 5 կամ 6 թիմ, որոնք կաշխատեն 3 հերթափոխով՝ յուրաքանչյուրն իր հերթափոխի ղեկավարով: Նախատեսվում է ունենալ հետախուզության միայն մեկ թիմ, որը թերևս կաշխատի մեկ կամ երկու հերթափոխով և հետախուզության աշխատողներից մեկը կպատասխանի աշխատանքային ժամերից դուրս ստացվող զանգերին: Պատահարների արձագանքման թիմերը կարող են լինել առանձին կամ ընդգրկվել բնակելի միավորների անվտանգությունն ապահովող թիմերում՝ որպես հավելյալ աշխատողներ կամ կարող են աշխատել «ըստ կանչի» սկզբունքով, եթե հնարավոր է շատ արագ կերպով ապահովել նրանց ներկայությունը դեպքի վայրում: Վարչական բաժինները չեն աշխատի ակտիվորեն և հիմնականում կաշխատի մեկ աշխատող՝ օրական 8-ից 10 ժամ տևողությամբ՝ հերթափոխերով, ինչպես նաև կլինեն նաև աշխատողներ արտակարգ իրավիճակներում «ըստ կանչի» սկզբունքով տեխնիկական սպասարկում ապահովելու համար:



8. ԿԱՑԱՐԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԸ

8.1 Անձնակազմի վերապատրաստումը

Կացարաններում բնակվող միգրանտների նկատմամբ խնամք իրականացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի կացարանով ապահովման հատուկ կենտրոնների շահագործումն ապահովող անձնակազմն անցնի մասնագիտական վերապատրաստում կացարանում բնակվող անձանց՝ որպես վարչական իրավախախտում կատարած անձանց կարգավիճակը հաշվի առնելու և նրանց իրավունքների պատշաճ պաշտպանությունն ապահովելու համար: Շահագործումն ապահովող անձնակազմի անդամները պետք է հատուկ տեղեկացված լինեն մշակութային և կրոնական առանձնահատկությունների մասին: Ստորև ներկայացվում են այն կոնկրետ թեմաներից մի քանիսը, որոնք պետք է ներառվեն համապարփակ ընդունման ծրագրում՝

- Միգրացիա – հասարակական – աշխարհագրական հոսքերի ուղղություններ – ծագման ու նպատակակետ երկրներ – միգրանտի դրդապատճառը
- Օրենսդրություն – ազգային և միջազգային – անկանոն կարգավիճակով միգրանտների վարչական ձերբակալման վերաբերյալ
- Հետախուզության համար հավաքվող տեղեկություններ
- Մարդու իրավունքներ – միջազգային պարտավորություններ
- Մշակութային, կրոնական ու էթնիկ բազմազանություն – հարգանք հիմնական էթնիկ խմբերի համոզմունքների ու կրոնի նկատմամբ
- Տրավմայի և սթրեսի նշանների հայտնաբերում կյանքին վտանգ սպառնացող իրավիճակներ հաղթահարած անձանց և խոշտանգումների զոհերի շրջանում
- Մարդկանց թրաֆիքինգ – թրաֆիքինգի և շահագործման զոհերի հայտնաբերում
- Հաղորդակցություն – արդյունավետ հաղորդակցության և դիմակայման միջոցներ – բանավոր թարգմանիչների միջոցով
- Արտակարգ իրավիճակներին արձագանքում – հրդեհ, ջրհեղեղ, առաջին օգնություն, առողջություն և անվտանգություն
- Վարակիչ հիվանդությունների նշանների ու ախտանիշների հայտնաբերում և դրանց արձագանքում
- Անձնական պաշտպանություն, ուժի և առանձնացման միջոցների կիրառում՝ կացարանով ապահովման հատուկ կենտրոններում կարգուկանոն ապահովելու համար
- Արտակարգ պատահարներին արձագանքում – գրավոր և բանավոր զեկույցներ ներկայացնելը
- Ազնվություն – աշխատողներից ակնկալվում է բացահայտել ազնվությանն սպառնացող վտանգները, կոռուպցիայի ազդեցություններն ու հետևանքները

Նշված թեմաները պետք է որպես լրացուցիչ թեմաներ ընդգրկվեն կացարանով ապահովման հատուկ կենտրոնների համար պատասխանատվություն ստանձնող ցանկացած կազմակերպության համար կազմակերպվող՝ ընդունման և ձերբակալման վերաբերյալ վերապատրաստման ծրագրում, իսկ կառավարման դասընթացներում պետք է ներառվի կացարանով ապահովման հատուկ կենտրոնների կառավարումը ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց համար դասընթացը:

Հատուկ ուշադրություն պետք է դարձվի շահագործումն ապահովող թիմի կոնկրետ աշխատողներին հետևյալ թեմաների շուրջ առավել խորը մասնագիտական դասընթացներ տալու հարցին՝



- Ծաղրուծանակի ենթարկելը, ինքնասպանություն և ինքնավնասում
- Բազմազանություն
- Երեխաների խնամք ու պաշտպանություն
- Առողջություն և անվտանգություն
- Սոցիալական ապահովություն

8.2 Անձնակազմի և կացարանում բնակվող անձանց միջև հարաբերությունները

Անձնակազմի բոլոր անդամները պետք է հարգալից վերաբերմունք ցուցաբերեն ձերբակալված անձանց նկատմամբ՝ հաշվի առնելով նրանց դրության անորոշությունը, ինչպես նաև մշակութային ու էթնիկ արմատները: Դրական հարաբերությունները տևական անվտանգության հիմքն են, և ձերբակալված անձինք խրախուսվում են իրենց սեփական գործողությունների ու որոշումների համար պատասխանատվություն կրելու համար: Թեև այս պնդումը կարող է ակնհայտ թվալ, չի կարելի չափազանց մեծ նշանակություն տալ այն հանգամանքին, որ համակրանքի ու զգայական վերաբերմունքի դրսևորումը կարող է ազդեցություն ունենալ կացարանով ապահովման հատուկ կենտրոններում բնակվող անձանց բարոյականության ու կյանքի վրա: Միացյալ Թագավորությունում կացարանով ապահովման հատուկ կենտրոններում բնակվող անձանց շրջանում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ թեթև ուշադրության շնորհիվ, որը կարող է դրսևորվել անունով դիմելու, անձին լսելու, օգնելու և ձերբակալված անձանց նկատմամբ հարգալից վերաբերմունք ցուցաբերելու ձևով, զգալիորեն նվազել են զեկուցվող առճակատման ու բռնության դեպքերը:

8.3 Ներգաղթին հասցեավորված օգնությունը

Արդյունավետ գործելակերպ է համարվում կացարաններում բնակվող անձանց գործերով զբաղվող ցանկացած մարմնից տեղում ներգաղթի հարցերով որևէ թիմի գոյությունը: Թիմի անդամը կացարանում բնակվող որևէ անձի ժամանումից 24 ժամվա ընթացքում պետք է հանդիպի նրան և տեղեկություններ տա իր գործի ընթացքի ու դրա ավարտի նախանշված ժամկետի մասին: Եթե նրանց դեռևս չեն տրամադրվել այդ տեղեկությունները, ապա նրանք պետք է իրենց մայրենի լեզվով ստանան իրենց ձերբակալման գրավոր պատճառները: Նրանց պետք է բացատրվի օրինական ներկայացուցիչ ունենալու իրենց իրավունքը և, հնարավորության դեպքում, իրավական խորհրդատվություն տրամադրվի որակավորված փաստաբանների կողմից, ինչը ապահովվում է պետության կողմից կամ ՀԿ-ների միջոցով՝ շաբաթական առնվազն երկու անգամ կացարանով ապահովման հատուկ կենտրոնում: Պետք է տրամադրվեն անվճար իրավական օգնություն տրամադրող փաստաբանների ցուցակը և կոնտակտային տվյալները: Կացարանում բնակվող անձինք պետք է հնարավորություն ունենան կապ հաստատելու իրենց օրինական ներկայացուցչի հետ հեռախոսով, ֆաքսով և էլեկտրոնային փոստով: Գրադարանում պետք է տրամադրվեն իրավաբանական գրքեր, և կացարանում բնակվող անձինք պետք է ունենան իրավական հարցերով կայքէջերից օգտվելու հնարավորություն:

Ներգաղթի հարցերով թիմում պետք է ընդգրկվեն սոցիալական ոլորտի աշխատողներ, հատկապես եթե հնարավոր չէ ապահովել լրիվ աշխատաժամանակով ներկայություն:



8.4 Ահաբեկումը

Կացարանով ապահովման հատուկ կենտրոններն ունեն կացարանում բնակվող անձանց՝ վնասի հավանականությունից պաշտպանելու պարտականություն և պետք է ապահովվեն անվտանգ կացարանով և անվտանգ ֆիզիկական միջավայրով: Որպես այդ պարտականության մաս՝ անհրաժեշտ է կանխել կացարանում բնակվող մյուս անձանց և անձնակազմի կողմից ահաբեկման դրսևորումները: Պետք է լինի ծաղրուծանակի դրսևորումների դեմ պայքարի հստակ ռազմավարություն, որի մասին կացարանում բնակվող բոլոր անձինք և ամբողջ անձնակազմը պետք է տեղեկացված լինեն կացարանով ապահովման հատուկ կենտրոնների կանոնների և կենտրոնում տեսանելի վայրերում փակցված և առավել հաճախ հանդիպող լեզուներով պատրաստված ծանուցումների միջոցով: Առաջարկվում է կացարանում բնակվող անձանց կողմից կացարանում բնակվող այլ անձանց ուղղված ահաբեկումների հետ կապված որդեգրել եռափուլ մոտեցում՝

- 1-ին փուլ՝ ահաբեկում կատարած անձին ուղղված բանավոր զգուշացում և վերահսկողություն նրա նկատմամբ:
- 2-րդ փուլ՝ ավելի խիստ վերահսկողություն և գրավոր զգուշացում, որում հստակ նշվում է, որ շարունակվող նման վարքագիծը կհանգեցնի անձի առանձնացմանը:
- 3-րդ փուլ՝ առանձնացում:

Պետք է լուրջ և սկզբունքային մոտեցում ցուցաբերել ծաղրուծանակի հետ կապված բոլոր բողոքների դեպքում. անհրաժեշտ է նշանակել հանրային անվտանգության հարցերով աշխատակից, ով կդիտանցի անվտանգության բոլոր հարցերն ու կվերահսկի ահաբեկման հարցերով ուսումնասիրությունները: Բոլոր միջադեպերը պետք է արձանագրվեն դրանցով զբաղվող (կամ բողոքներն ընդունած) աշխատակցի կողմից՝ հաղորդման հատուկ ձևերով, որոնցում նշվում են դրանք իրականացնողների, տուժողների, վկաների անձնական տվյալները և մյուս բոլոր հանգամանքները: Անհրաժեշտ է վարել միջադեպերի վերաբերյալ հաղորդումների գրանցամատյան: Գրանցված բոլոր միջադեպերն ու մանրամասները պետք է մուտքագրվեն դրանք կատարողների ու տուժողների անձնական քարտերում: Ահաբեկում կատարած ենթադրյալ անձինք բոլոր փուլերում պետք է իրավունք ունենան բողոքարկելու որոշումները դրանք ընդունած աշխատողներից առավել բարձր պաշտոն զբաղեցնող աշխատողների: Հանրային անվտանգության հարցերով աշխատակցի ղեկավարությամբ պետք է կազմակերպվեն հանրային անվտանգության թեմայով պարբերական հանդիպումներ, որոնց պետք է մասնակցեն թիմերի և ստորաբաժանումների ղեկավարներն ու բուժաշխատողները:

Պետք է գործի նաև անձնակազմի անդամների դեմ ուղղված բողոքները քննելու ընթացակարգ: Նոր ժամանած անձինք պետք է տեղեկացվեն բողոքարկման ընթացակարգի մասին ճանաչման փուլում, և դա պետք է ներառվի կենտրոնի կանոններում: Բողոքների առնչությամբ առաջարկվող ուղեցույցները ներառված են Ստանդարտ աշխատանքային ընթացակարգեր փաստաթղթում համառոտ տարբերակով: Կացարանի տնօրենը կամ տնօրենի կողմից նշանակված բարձրաստիճան պաշտոնատար անձը պետք է ամեն օր լսի բողոքների ու խնդրանքների մանրամասները: Պետք է պահպանվեն անձնակազմի դեմ ուղղված բողոքների ընդգրկուն արձանագրությունները, ինչպես նաև ուսումնասիրությունների մանրամասներն ու արդյունքները: Կացարանում բնակվող անձինք պետք է ունենան տնօրենի կամ նշանակված բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ շփվելու հնարավորություն կամ անհատական հանդիպման ձևով կամ գրավոր՝ այդ նպատակով ներկայացվող կնքված ծրարների միջոցով: Անձնակազմի կարգապահական ընթացակարգերը կարող են հիմնվել հանրային ծառայողների դեմ բողոքների հետ կապված՝ սահմանված ընթացակարգերի կամ կացարանով ապահովման հատուկ կենտրոնների համար պատասխանատու մարմնի գերատեսչական ուղեցույցների վրա:



8.5 Ինքնասպանությունը և ինքնավնասումը

Ինքնասպանության կամ ինքնավնասման վտանգի գնահատումը պետք է ներառվի ընդունման փուլում բժշկական զննության գործընթացում, որի ընթացքում նաև փորձ է արվելու հայտնաբերելու հոգեկան առողջության անհետաձգելի խնդիրներ և ալկոհոլի կամ թմրանյութերի չարաշահման նշաններ: Եթե ընդունման փուլում հայտնաբերվում են այդպիսի խնդիրներ, ապա նոր ժամանած անձինք պետք է ուղեգրվեն համապատասխան բուժաշխատողի մոտ, որպեսզի նրանք տեղավորվեն ոչ թե կացարանով ապահովման հատուկ կենտրոնում, այլ բժշկական բաժանմունքում: Կացարանում բնակվող բոլոր անձինք բժշկական կենտրոնում բժշկի կողմից պետք է ենթարկվեն լիարժեք բժշկական զննության ժամանումից հետո 3 օրվա ընթացքում:

Կացարանով ապահովման հատուկ կենտրոնի ամբողջ անձնակազմը, հատկապես շահագործման հետ կապված պարտակություններ ունեցող աշխատողները, պետք է վերապատրաստվեն հոգեկան առողջության վատթարացման նշաններ հայտնաբերելու և արդյունքում ինքնավնասման նախատրամադրվածություն ունեցող անձանց հայտնաբերելու համար: Բոլոր մտահոգությունների մասին պետք է անմիջապես տեղեկացվեն ղեկավարն ու սոցիալական ոլորտի աշխատողը: Միջոցներ պետք է ձեռնարկվեն ռիսկային անձանց հնարավորինս շուտ առողջապահության ոլորտի մասնագետին ներկայացնելու համար, սակայն այդ ընթացքում կարող է անհրաժեշտ լինել նրանց տեղափոխել առանձնացման համար նախատեսված սենյակ և մինչև բժշկական բաժանմունք տեղափոխելը նրանց նկատմամբ նշանակել շուրջօրյա վերահսկողություն: Ռիսկային անձանց տեղավորման համար օգտագործվող՝ առանձնացման համար նախատեսված սենյակում չպետք է լինի կահույք կամ այնպիսի իրեր, որոնք կարող են օգտագործվել ինքնավնասման համար:

Ինքնասպանության և ինքնավնասման հետ կապված բոլոր հարցերը պետք է կարգավորվեն հանրային անվտանգության թեմայով հանդիպումներում: Անհրաժեշտության դեպքում, այդպիսի հանդիպումներ կարող են կազմակերպվել կարճ ժամկետում, հատկապես եթե հարկավոր է որոշում կայացնել կացարանում բնակվող անձին բժշկական մասնագիտացված բաժանմունք տեղափոխելու մասին: Ռիսկային որակված, սակայն դեռևս ոչ առանձնացման կամ տեղափոխման ենթակա անձանց տվյալները պետք է տրամադրվեն շահագործումն ապահովող անձնակազմին հերթափոխի նախորդող ճեպագրույցների ընթացքում, որպեսզի այդ անձինք լինեն մշտական վերահսկողության տակ: Ճաշարանից ստացված տեղեկությունների հիման վրա գրառումներ պետք է կատարվեն այն անձանց մասին, ովքեր հրաժարվել են սննդից: Շահագործումն ապահովող անձնակազմը պետք է կրի կապեր, դանակներ և իմանա անհետաձգելի բժշկական օգնության պայուսակի տեղը: Հաշվի պետք է առնվի նաև վերապատրաստում անցած պաշտպանների կողմից իրավական խորհրդատվություն և (կամ), պահանջի դեպքում, համապատասխան ՀԿ-ի կամ կամավորական կազմակերպության միջոցով այլ պաշտպանություն տրամադրելու հարցը:

8.6 Երեխայի խնամքը և երեխայի պաշտպանությունը

Ինչպես նախապես նշվել էր, երեխաները կարող են ձերբակալվել միայն բացառիկ հանգամանքներում և այլն էլ միայն նվազագույն ժամկետով: Նրանք պետք է գտնվեն բավարար խնամքի տակ, պատշաճ կերպով պաշտպանված լինեն անվտանգ միջավայրում և ստանան համապատասխան կրթություն: Եթե կացարանն անհրաժեշտ է կարճատև ժամկետով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ մոտ ապագայում նախատեսվում է մեկնում, պետք է օգտագործվեն սահմանին գտնվող կացարանով ապահովման հատուկ կենտրոնները: Կացարանով ապահովման հատուկ կենտրոնները և սոցիալական ոլորտի աշխատողները պետք է ներգրավվեն ընդունման փուլից, և եթե ընտանիքի ու երեխայի



ձերբակալումը ստանում է կանոնավոր բնույթ, ապա պետք է տվյալ ընտանիքի հարցերով զբաղվելու համար ներգրավվի երեխաների խնամքի հարցերով մասնագետ: Պետք է պահպանվեն երեխայի խնամքի ոլորտում գործող բոլոր արձանագրություններն ու ընթացակարգերը: Եթե կասկածներ կան՝ կապված կացարանում բնակվող այն անձանց տարիքի հետ, որոնք պնդում են իրենց անչափահաս լինելը, ապա որակավորված մասնագետը պետք է կատարի նրանց տարիքի համապատասխանության հաստատում:

8.7 Դավանանքը և բազմազանությունը

Կացարանում բնակվող բոլոր անձինք պետք է ունենան անվտանգ պայմաններում իրենց կրոնին հետևելու իրավունք և ունենան պաշտամունքի վայրեր մուտք գործելու, արարողություններին մասնակցելու ու կրոնական ուսուցում ստանալու հնարավորություն: Պետք է խրախուսվեն հոգևորականների կողմից կանոնավոր այցելությունները կենտրոն, և կացարանում բնակվող անձանց կողմից բավականին բարձր պահանջարկի դեպքում՝ ուշադրություն պետք է դարձվի առավել տարածված կրոնին կամ կրոններին դավանող հոգևորականի մշտական ներկայություն ապահովելու հարցին: Այս կապակցությամբ կարող են պահանջվել միադավան կացարաններ, եթե պարբերաբար խնդիր է առաջանում՝ կապված բազմադավան աղոթասրահի՝ պահանջարկին համապատասխան թվով մարդիկ տեղավորելու հնարավորության բացակայության հետ:

Անձնակազմը պետք է հատուկ ուշադրություն դարձնի կացարանում բնակվող անձանց բազմազան արմատներն ու տարբեր մշակութային նորմերն ընդունելու ու ընկալելու հարցին, քանի որ սա այնպիսի բնագավառ է, որտեղ թյուր կարծիքի ու տգիտության արդյունքում հեշտությամբ կարող են առաջանալ դժգոհություններ ու անկարգություններ: Կացարանում բնակվող անձանց նկատմամբ չպետք է դրսևորվի խտրականություն՝ ռասայի, ազգության, սեռի, կրոնի, հաշմանդամություն ունենալու կամ սեռական կողմնորոշման հիմքով:

8.8 Անձնական գույքը

Կացարանում բնակվող անձանց թույլատրվում է իրենց անձնական գույքի պարագաները և հագուստը պահել իրենց մոտ՝ կենտրոնում՝ պայմանով, որ դրանք վտանգ չեն ներկայացնում անվտանգությանն ու ապահովությանը և կարող են համապատասխանաբար տեղավորվել իրենց սենյակներում տեղադրված անձնական պահարաններում: Արգելված պարագաները կամ անձնական պահարաններում չտեղավորվող գույքը պետք է ապահով պայմաններում պահվի ընդունարանի ընդհանուր պահեստում: Պահանջի հիման վրա՝ կացարանում բնակվող անձանց պետք է տրվի ընդհանուր պահեստում պահվող գույքից օգտվելու հնարավորություն: Կարևոր փաստաթղթերն ու դրամական միջոցները պետք է պահվեն ընդունարանում գտնվող անձնական պահատեղերում: Կարևոր փաստաթղթերի, հատկապես անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերի պատճենը պետք է կցվի անհատի անձնական գործին: Տեղում դրամական միջոցների նկատմամբ հսկողությունը կացարանի կառավարման մարմնի համար քաղաքականության խնդիր է, սակայն առաջարկվում է, որ կենտրոնում չթույլատրվի դրամական միջոցների առկայություն և օգտագործվի համակարգչային համակարգ, որով հնարավորություն կտրվի կացարանում բնակվող անձանց ծախսելու ընդունարանում պահատեղության հանձնված իրենց գումարները: Այսպիսով, տեղում գտնվող խանութից կատարված գնումների կամ պատվիրված ապրանքների համար գումարը հաշվանցվում է նրանց հաշվեկշռից՝ նույնականացման քարտի ներկայացմամբ: Ամբողջ գույքը, բոլոր փաստաթղթերը և դրամական միջոցները պետք է ցուցակագրվեն ժամանման պահին՝ երկու աշխատողի ու կացարանում բնակվող անձի ներկայությամբ, և դրանց ստացումը պետք է հաստատվի ստորագրությամբ՝ ժամանման և մեկնման պահին: Կացարանում բնակության ընթացքում պահեստից որևէ



իր հանելու, անհրաժեշտության դեպքում, նաև վերադարձնելու փաստը պետք է նույնպես հաստատվի ստորագրությամբ:

Բջջային հեռախոսների հետ կապված քաղաքականությունը նույնպես խնդիր է կենտրոնի կառավարող պաշտոնյաների համար, թեև կացարանում բնակվող անձանց պարզ, առանց լուսանկարահանման կամ համացանցի հնարավորությունների հեռախոսներ ունենալու հնարավորությունը տալը չպետք է վտանգ ներկայացնի անվտանգությանը և կարող է թույլ տալ նրանց կապ հաստատել հարազատների ու ընկերների հետ: Միացյալ Թագավորությունում կացարանով ապահովման որոշ հատուկ կենտրոններ կացարանում բնակվող անձանց, նրանց ժամանման պահին, տրամադրում են կանխավճարային համակարգով հեռախոսներ, ինչի առավելությունն այն է, որ դա հնարավորություն է տալիս նրանց արագ կապ հաստատել կենտրոնի տարածքում: Հաշվի լիցքավորման քարտերը գնում են կացարանում բնակվող անձինք՝ իրենց հաշվին, թեև դրանք կարող են տրամադրվել պետության հաշվին, եթե նրանք չունեն դրամական միջոցներ:

8.9 Հագուստի, անկողնային և հիգիենայի պարագաները


Կացարանում բնակվող անձանց պետք է թույլ տրվի կրել իրենց հագուստը, և նրանք պետք է ունենան բնակելի միավորներում առկա լվացքատներից ազատորեն օգտվելու հնարավորություն: Պետք է գործի ընդհանուր հագուստի պահեստարան՝ կացարանում բնակվող անձանց հիմնական պահանջները բավարարելու համար. առնվազն երեք կոմպլեկտ ներքնազգեստ և սեզոնին համապատասխան վերնազգեստ, եթե նրանց ունեցած հագուստը հարմար չէ: Հագուստի տրամադրման հարցում պետք է լինի ճկունություն՝ անհատական բժշկական կամ հատուկ կարիքները հաշվի առնելու համար և կացարանում բնակվող անձինք պետք է կարողանան հագուստ ստանալ դրսից: Կենտրոնը պետք է պահանջի, ինչը պետք է նշվի կանոններում, որ անհրաժեշտ է պահպանել հագուստի մաքրությունը: Լվացքի փոշին պետք է միշտ առկա լինի լվացքատներում:

Ժամանման պահին կացարանում բնակվող անձանց պետք է տրամադրվի անկողնային պարագաներ և սրբիչներ, որոնք պետք է փոխվեն ամեն շաբաթ և լվացվեն ընդհանուր լվացքատանը: Լվացքատանը պետք է աշխատեն պայմանագրային աշխատողներ, որոնց կազմը կարող է համալրվել կամավոր աշխատանքի ցանկություն հայտնող՝ կացարանում բնակվող անձինք:

Ընդհանուր օգտագործման տարածքների մաքրությունը պետք է ապահովեն պայմանագրային աշխատողները, որոնց կազմը նույնպես, անհրաժեշտության դեպքում, կարող է համալրել կամավորներով՝ զբաղվածության ծրագրերի հիման վրա: Կացարանում բնակվող անձինք պետք է ստանան մաքրող նյութեր և պատասխանատու լինեն իրենց սենյակների մաքրության և բնակելի շենքերում ընդհանուր օգտագործման տարածքները կոկիկ պահելու համար:

Կացարանում բնակվող անձանց պետք է տրամադրվի առանձին՝ տղամարդկանց և կանանց համար նախատեսված անձնական հիգիենայի պարագաների փաթեթ՝ նրանց ժամանման պահին: Նվազագույն պահանջները պետք է լինեն՝

- Օճառ և (կամ) ցնցուղի գել
- Շամպուն
- Ատամի մածուկ
- Ատամի խոզանակ
- Սանր և մազերի խոզանակ
- Հոտազերծիչ



Տղամարդկանց պետք է տրամադրվեն մեկանգամյա օգտագործման ածելի և սափրվելու օճառ: Ինքնավասան կամ այլ անձանց վնասելու վտանգ ներկայացնող անձանց պետք է տրվի ածելի, սափրվելու ընթացքում նրանք պետք է գտնվեն հսկողության տակ, որից հետո նրանցից պետք է հետ պահանջել ածելին: Անձնական հիգիենայի պահպանության պահանջը պետք է ներառվի կենտրոնի կանոններում: Կացարանում բնակվող անձինք պետք է ունենան ցնցուղարանից շուրջօրյա օգտվելու հնարավորություն և տաք ջրով ապահովված լինեն ժամը 06.00–ից մինչև 24.00–ը: Կանայք պետք է ունենան հիգիենիկ պարագաներից հեշտությամբ օգտվելու հնարավորություն: Վարսավիրական ծառայությունների համար պետք է նախանշվի տարածք՝ կան բնակելի միավորներում՝ ռոտացիոն սկզբունքով, կան ընդհանուր օգտագործման մասում, իսկ վարսավիրական ծառայությունները պետք է մատուցվեն պայմանագրային հիմունքներով աշխատողի կողմից:

8.10 Գործունեությունը

Ժամանցային և աշխատանքային գործունեությունը կարևոր նշանակություն ունի միգրանտների կենտրոնում բնակվող անձանց ֆիզիկական ու մտավոր բարեկեցությունը պահպանելու և խթանելու համար և պետք է ակտիվորեն խրախուսվի՝ հատկապես կացարանում երկարաժամկետ բնակվող անձանց համար. առաջարկվում է նաև, որ կացարանների ծառայությունների բաժնից նշանակվի աշխատանքների կազմակերպման հարցերով որևէ աշխատող կամ փոքր թիմ: Որպես ընդհանուր օգտագործման հարմարությունների մաս՝ արդեն առաջարկվել է, որ պետք է ապահովվել մարզասահով, ներշնչային ու բացօթյա սպորտային տարածքներով, գրադարանով, ուսուցման ու շփման համար նախատեսված սենյակներով: Մարզասահը պետք է հագեցված լինի մարզասարքերով՝ բազմաֆունկցիոնալ մարզասարքերով, վագրուդիներով և թիավարման մարզասարքերով: Խորհուրդ չի տրվում մարզասահում ունենալ մարզաքարեր, քանի որ մարզման ընթացքում դրանք կարող են պարունակել վնասման վտանգ կամ կարող են օգտագործվել որպես զենք: Մարզադահլիճում մարզվելու ընթացքը պետք է մշտապես լինի համապատասխան վերապատրաստում անցած աշխատողի վերահսկողության տակ: Կողմորոշվելու համար նշենք, որ բացօթյա սպորտային տարածքը պետք է ունենա առնվազն մեկ ֆուտբոլային դաշտ (90մX45մ), իսկ ներքին սրահը պետք է ունենա բասկետբոլի դաշտի համար բավարար տարածք (29մX15մ):

Գրադարանում պետք է լինի գրքերի լավ ընտրանի, որոնց լեզուների ընտրությունը կատարվում է կացարանում բնակվող անձանց ազգության հիման վրա: Պետք է կատարվի գրադարանային ֆոնդի հաշվառում և գործի գրադարանից դուրս տրամադրելու համակարգ, նախընտրելի է՝ համակարգչայնացված եղանակով: Պետք է լինեն ներգաղթային իրավունքի վերաբերյալ թարմ իրավական հրապարակումներ, որոնցից կարելի է օգտվել տեղեկատվություն ստանալու համար, այլ ոչ թե գրադարանից դուրս տրամադրելու համար, ինչի համար, պահանջարկից ելնելով, կարող է պահանջվել գործածության նպատակով նախապես պատվիրման համակարգ: Կենտրոնում բնակվող անձանց տիրապետած լեզուներով պետք է լինի թերթերի և ամսագրերի ընտրանի, որը պետք է հասանելի լինի գրադարանում ընթերցանության համար:

Ուսումնական դասընթացները պետք է կազմակերպվեն՝ ելնելով անձանց՝ կացարանում բնակության միջին տևողությունից, քանի որ գրեթե անիմաստ է կազմակերպել երկարաժամկետ դասընթացներ, եթե անձինք կացարանում բնակվում են միայն մի քանի օր, ինչը, ամենայն հավանականությամբ, համապատասխանում է իրականությանը: Պետք է նշանակվի կրթության գծով համապատասխան աշխատող, թեև աշխատանքը կարող է լինել ոչ լրիվ դրույքով: Ուսուցիչները պետք է ունենան համապատասխան որակավորում, թեև նաև կացարանում բնակվող անձանց կարելի է ընձեռել իրենց երկրների, հոբբիների,



մասնագիտական փորձի և այլնի մասին դասախոսություններ կարդալու հնարավորություններ: Յուրաքանչյուր դասի կարող է մասնակցել առավելագույնը 12-15 անձ, իսկ ավելի մեծ պահանջարկի դեպքում՝ դասերը կարող են կրկնվել: Շփման սենյակներում պետք է լինի տարածք հեռուստացույց և DVD նվագարկիչ դիտելու համար, ինչպես նաև ապահովված լինեն ժամանցային սարքավորումներով, ինչպես օրինակ՝ թենիսի և բիլիարդի սեղաններով: Պետք է լինեն նաև թղթախաղեր և խաղեր:

Աշխատանքը չի կարող լինել պարտադիր, աշխատանքի դիմաց պետք է վճարել, եթե այդ աշխատանքը հատուկ չի նախանշվել որպես կամավոր աշխատանք, իսկ թափուր աշխատատեղերի վերաբերյալ պետք է տեղեկացնել կացարանում բնակվող բոլոր անձանց, որպեսզի նրանք ունենան դիմելու հնարավորություն: Վերը նշված գործունեության բոլոր տեսակները կացարանում բնակվող անձանց տալիս են զբաղվածության հնարավորություն՝ գրադարանավարի օգնականներ, ֆիզիկական պատրաստության մասնագետի օգնականներ, ուսումնական գծով օգնականներ և այլն, թեև, այս դեպքում ևս, աշխատատեղի ստեղծման գործնական կիրառելիությունը կախված կլինի ձեռքբերված հետևանքով անագատության մեջ պահելու միջին տևողությունից: Աշխատանքի այլ հնարավորություններ կան մաքրության ապահովման, լվացքատան և խոհարարության ոլորտներում: Կարող է նշանակվել աշխատանքի համակարգման հարցերով աշխատող, ով կարող է աշխատել ոչ լրիվ աշխատաժամանակով:

8.11 Ուժի կիրառումը և առանձնացումը

Ուժ պետք է կիրառվի միայն որպես վերջին միջոց: Կիրառվում են միջազգային ճանաչում ունեցող հետևյալ կանոնները՝

- **Համաչափ՝** ուժ պետք է կիրառվի այն նվազագույն չափով, որն անհրաժեշտ է նպատակն իրականացնելու համար: Ուժ կիրառող աշխատողները պետք է հասկանան և պատասխանատվություն կրեն իրենց գործողությունների հետևանքների համար: Ուժ սովորաբար կկիրառեն միայն այն անձինք, ովքեր հաստատված զսպման միջոցների հետ կապված վերապատրաստում են անցել, սակայն դրա բացակայության պարագայում՝ պետք է, այնուամենայնիվ, ցուցաբերեն ողջամտություն:
- **Օրինական՝** ուժ պետք է կիրառվի միայն այն դեպքում, եթե աշխատողն իրականացնում է օրինական գործառույթ՝ համաձայն ներգաղթային իրավունքի, ձեռքբերված վերաբերյալ այլ օրենսդրության կամ կիրառելի որևէ քրեական իրավունքի, այն է՝ հարձակման, հասարակական վայրում կռվի, անկարգությունների դեպքում:
- **Վերահսկելի՝** ուժի կիրառման ցանկացած դեպք պետք է արձանագրվի օրինական մարտահրավերի կամ բողոքի դեպքում:
- **Անհրաժեշտ՝** աշխատողը պետք է ցույց տա, որ, գործնականում, ողջամիտ ուժի կիրառմանը որևէ այլընտրանք չի եղել:

Առանձնացվում է ուժի կիրառման երկու կատեգորիա՝

- **Ինքնաբուխ դեպքեր՝** եթե լարված իրավիճակը արագորեն և հաճախ անսպասելիորեն վերածվում է բռնության կամ հավանական բռնության և վնասարկանիստելու և կարգուկանոն ապահովելու համար առաջանում է արագ արձագանքման անհրաժեշտություն: Նման դեպքերը կարող են արագորեն զարգանալ, եթե ներգրավվեն այլ դերակատարներ, և կարող են վերածվել մեծամասշտաբ անկարգությունների, որոնք, ընդհանուր առմամբ, դիտարկվում են որպես ճգնաժամային իրավիճակներ: Առաջին փուլում ինքնաբուխ դեպքերին արձագանքող աշխատողները պետք է պահանջեն պահուստային



աջակցություն և անմիջապես միջամտեն միայն այն դեպքում, եթե նրանք համոզված են, որ կարող են ինքնուրույն ճնշել տվյալ անձին: Կացարանով ապահովման կենտրոնը պետք է ունենա ճգնաժամային դեպքերին արձագանքելու հստակ պլան, որը մանրամասն նկարագրված է Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերի փաստաթղթում, և որում պարզորոշ կերպով սահմանվում է հրամանի շղթան, նշվում է արագ արձագանքման թիմերի մոբիլիզացման կարգը և նման պատահարների տեղայնացման նպատակով բնակելի ու ընդհանուր օգտագործման միավորները փակելու ընթացակարգերը: Բոլոր պատահարների մասին պետք է զեկուցեն ներգրավված աշխատողները, իսկ, անհրաժեշտության դեպքում, վերցվեն վկայություններ: Դրանք պետք է արձանագրվեն ըստ դեպքի բնույթի, դրա կատարման վայրի և ներգրավված անձանց տարիքի ու էթնիկ պատկանելության, ինչի միջոցով կապահովվի հետագա վերլուծության հնարավորությունը: Բռնության դեպքերում ներգրավված բոլոր անձինք պետք է հնարավորինս շուտ ենթարկվեն բժշկի կողմից գննության: Ներգրավված բոլոր աշխատողները պետք է հնարավորինս շուտ հարցաքննվեն:

- **Պլանավորված միջամտություն՝** նախապես պլանավորված գործուն արձագանք ապահովությանը, կարգուկանոնին և անվտանգությանը անմիջական վտանգ սպառնացող՝ կացարանում բնակվող անձին կամ անձանց առանձնացնելու համար: Տվյալ անձը կարող է մեկուսացվել նախօրոք և արձագանքման թիմի կողմից արագորեն, նախապես պլանավորված երթուղով հեռացվել նախասահմանված վայր, նախընտրելի է՝ կացարանում բնակվող այլ անձանցից հեռու վայր: Ձեռնաշղթաներ պետք է օգտագործվեն միայն ակնհայտ վտանգի առկայության պարագայում և առողջապահության ոլորտի մասնագետների ներկայությամբ: Այդ դեպքերը տեսագրելը լավ գործելակերպ է բողոքների համար: Նախքան միջամտությունները պետք է կատարվի հրահանգավորում, իսկ դրանցից հետո անցկացվում են հարցաքննություններ:

Առանձնացումն ինչ-որ չափով նախկինում կարգավորվել է զեկուցում և ներառված է Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերի փաստաթղթում, սակայն անհրաժեշտ է հիշել այն կարևոր կանոնը, որ դա պետք է լինի հնարավորինս կարճ և կամայականորեն չերկարաձգվի որպես պատիժ: Իհարկե, ինքնաբուխ դեպքերի պարագայում, իրողությունների փաստերը հաստատելուց և դերակատարներից սպառնացող վտանգը չեզոքացնելուց անմիջապես հետո այդ անձինք պետք է վերադարձվեն շփման նորմալ միջավայր: Պլանավորված միջամտությունները պետք է ունենան նախապես համաձայնեցված նպատակներ ու արդյունքներ, որոնք ընդհանուր առմամբ կարտահայտվեն երկրից անձին հեռացնելու, կամ եթե նրանք մշտապես ագրեսիվ ու բռնի վարքագիծ են դրսևորում, նրանց քրեական համակարգ փոխանցելու կամ բժշկական պատճառներով մեկուսացման դեպքում՝ հիվանդանոց տեղափոխելու ձևով:

8.12 Հանրային սնունդը

Նպատակն է օրական կտրվածքով տրամադրել սննդային տեսակետից բալանսավորված 3 կերակուր, որից երկուսը՝ երկրորդ նախաճաշն ու ճաշը պետք է պարունակեն տաք ուտեստներ: Պետք է հաշվի առնվեն պատրաստման, բաշխման և բաղադրությանն առնչվող կրոնական ու մշակութային պահանջները: Ճաշացանկերը պետք է հաջորդեն միմյանց մեկ ամիս պարբերաշրջանով, փոփոխվեն ու նախատեսեն բանջարեղենային ու առողջարար այլընտրանք: Պետք է ապահովվեն թարմ մրգերի անհրաժեշտ պաշարներ. առաջարկվում է, որ ճաշացանկում ներառված յուրաքանչյուր ուտեստ ներկայացվի նկարով՝ լեզվական դժվարություններից խուսափելու համար: Պետք է ապահովվեն հատուկ սննդակարգեր, հատկապես եթե առկա են սննդային ակերգիաներ, որոնց ցանկը պետք է պահվի խոհանոցում: Խոհանոցը պետք է վերահսկվի պրոֆեսիոնալ շեֆ-խոհարարների կողմից, և պետք



Է նշանակվի հանրային սննդի գծով կառավարիչ: Կացարանում բնակվող անձանց պետք է թույլատրվի, որպեսզի նրանք սահմանափակ քանակությամբ սնունդ, նախընտրելի է միայն խորտիկներ, պատրաստեն բնակելի միավորի խոհանոցներում, սակայն այս կանոնը կարող է գործել, եթե առկա է մշակութային կամ կրոնական յուրահատկություն, որը չի կարող բավարարվել հիմնական խոհանոցում:

8.13 Սոցիալական ապահովությունը

Լրիվ կամ ոչ լրիվ աշխատաժամանակով՝ կախված զբաղվածության մակարդակից, պետք է նշանակվի սոցիալական ոլորտի աշխատող, և կացարանում բնակվող բոլոր անձինք, իրենց ժամանումից 24 ժամվա ընթացքում, պետք է հանդիպեն նրան: Սոցիալական հարցերով գրասենյակը պետք է աշխատի սովորական աշխատանքային ժամերին և կացարանում բնակվող անձանց օժանդակություն ցուցաբերի այնպիսի գործնական հարցերի շուրջ, ինչպիսիք են՝ ձերբակալման պատճառով իրենց հետ չտեղափոխված գույքի հետ ստացումը, բանկային հաշիվների կարգավորումը, հարազատների հետ կապ հաստատելը, ՀԿ-ներից ու կամավորական կազմակերպությունների օգնություն ստանալը և այլն: Սոցիալական ոլորտի աշխատողը դերակատարում կունենա նաև կացարանում բնակվող անձանց հեռացման կամ ազատման մասին տեղեկացնելու կամ պատրաստելու գործում՝ կարգավորելով վերաբնակեցման հետ կապված ֆինանսական միջոցները, ազատման դեպքում կազմակերպելով ժամանակավոր կացության, վերադարձի դեպքում՝ ընդունման հարցերը և այլն:

8.14 Դիտանցումը

Կացարանով ապահովման կենտրոններ ունեցող շատ երկրներում այդ կենտրոններում դիտանցում կատարելու համար գործում են վերահսկիչ նույն կազմակերպությունները, որոնք վերահսկողություն են իրականացնում նաև քրեակատարողական հիմնարկներում: Հանրային մոնիթորինգի հայկական խումբը, որն առանձին կանոնադրության համաձայն ունի քրեակատարողական հիմնարկների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասություն, ակնհայտորեն նույն գործառույթն է ստանձնում կացարանով ապահովման կենտրոնների դեպքում: Ենթակառուցվածքը գործում է, ընդունվում է, որ խումբն անկախ է, խմբի անդամները հավաքագրվել են ՀԿ-ներից և ունեն այդ բնագավառում աշխատանքի փորձ ու հմտություններ: Հաշվի առնելով անկանոն կարգավիճակով միգրանտներին կալանավորելու հարցի խոցելիությունը՝ առաջարկվում է, որ քրեակատարողական հիմնարկի նկատմամբ գործող վերահսկողության համակարգը հարմարեցվի կացարանով ապահովման հատուկ կենտրոնների պահանջներին՝ թույլ տալով լուրջ խնդիրների մասին անմիջապես զեկուցել կացարանի տնօրենին, ինչը կտա այդ խնդիրներին արագ լուծում տալու հնարավորություն՝ նախքան ամբողջական զեկույցը ներկայացնելը: Որպես կանոն, ստուգումները պետք է անցկացվեն պարբերաբար, սակայն չգերազանցելով 6 ամիսը, եթե նախորդ զեկույցում չեն եղել խնդիրներ և բողոքներ չեն ստացվել կացարանում բնակվող անձանցից: Այդ դեպքում դրանք կարող են անցկացվել տարեկան կտրվածքով:



9. ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն զեկույցում առաջին հերթին ուշադրություն է դարձվում Հայաստանի Հանրապետության միգրացիոն ոլորտում անկանոն կարգավիճակով միգրանտների համար ձեռքարկված անձանց պահելու կենտրոնական կացարանի անհրաժեշտության գնահատման հարցին: Այդ կապակցությամբ՝ գնահատման թիմն ուսումնասիրել է գոյություն ունեցող համակարգը կարգավորող քաղաքականությունն ու օրենսդրությունը, ինչպես նաև այն, թե ինչպես է զարգացել սահմանների համալիր կառավարման համակարգը, մեծամասամբ, ՄՄԿ-ի կողմից նախկինում կատարված՝ միգրացիոն խնդիրների լայն շրջանակ ընդգրկող գնահատումների օժանդակությամբ: Բացի դրանից, ներկայումս գոյություն ունեցող՝ կառավարման մասին սահմանափակ տեղեկությունները ենթարկվել են մանրամասն ուսումնասիրության՝ սահմաններում և կենտրոնացված կարգով կացարանով ապահովման կենտրոններ հիմնելու վերաբերյալ Կառավարության տարբեր որոշումների և օրենսդրության պահանջներին համապատասխան՝ միգրանտներին կացարանով ապահովման հետագա կարիքները նախատեսելու համար: Միաժամանակ առաջարկություններ են կատարվել նախագծման, ծառայությունների, անձնակազմի համալրման և հարմարությունների վերաբերյալ՝ ընդհանուր միջազգային ստանդարտներին ու գործելակերպին համապատասխան:

Միգրացիոն քաղաքականությունը զարգացել է այն վարկածի շուրջ, որ Հայաստանը միգրանտների համար ոչ թե տարանցման կամ նպատակակետ, այլ ծագման երկիր է: Պատմականորեն, այդ տեսակետի համար եղել են լուրջ շարժառիթներ և, հասկանալի պատճառներով, չմիջամտելու քաղաքականության արդյունքում որդեգրվել է՝ լավագույն դեպքում որպես ներգաղթի նկատմամբ հսկողության պասիվ համակարգ նկարագրվող մի քաղաքականություն, որը միտված է ներգաղթային այնպիսի իրավախախտումների կարգավորմանը, ինչպիսին է թույլատրված ժամկետից ավելի երկար մնալը, երբ իրավախախտներն ի վերջո լքում են երկիրը: Միտում կա կենտրոնանալու այն հարցի վրա, որ ապահովվի մուտք գործելիս միգրանտների պատշաճ փաստաթղթավորումը, և որ արագորեն հեռացվեն այն անձինք, որոնք չեն փաստաթղթավորվել՝ առանց լիարժեք հետաքննության հնարավորության կամ միգրացիոն բնույթի փաստացի իրավախախտումների, ինչը ներքին իրավակիրառ գործունեության բացակայության պարագայում և միգրանտներին հետևելու ոչ արդյունավետ համակարգերի հետ մեկտեղ, ավելի է դժվարացնում փաստացի իրավախախտման ծավալների հստակ պատկեր ունենալը: Այնուամենայնիվ, կան նշաններ, որ դա փոփոխվում է: Միգրացիայի ոլորտում գործունեությունը համակարգելու նպատակով Միգրացիոն պետական ծառայության հիմնումը դրական առաջընթացի քայլ էր ճիշտ այնպես, ինչպես անօրինական մուտքի կազմակերպմանը վերաբերող օրենսդրության մշակումը և հետագծելիության համակարգչային միասնական համակարգի մշակումը: Առկա վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ տրամադրված կացության թույլտվությունների թիվն աճում է, իսկ կրթության ոլորտը զարգանում է: Պաշտոնական թվերը ցույց են տալիս, որ փախստականների հոսքն անմիջապես արտացոլում է ծագման երկրներում կենցաղային պայմանների վատթարացումը, և քանի որ Կառավարման տեղեկատվական համակարգը կատարելագործվում է ընդհանուր առմամբ միգրացիայի կառավարման վերաբերյալ առավել համապարփակ վիճակագրական տվյալներ ընդգրկելու համար, դրա շնորհիվ հնարավոր կլինի առավել իրատեսական կանխատեսումներ կատարել այն մասին, թե ինչպես պետք է Հայաստանը կարգավորի միգրացիայի ոլորտում միջազգային հետագա միտումները:

Կացարանով ապահովման կենտրոնների վերաբերյալ առաջարկություններ կատարելիս գնահատող թիվն ընդունել է, որ Կառավարության քաղաքականությունը կշարունակի բխել միգրացիայի կառավարումը ԵՄ և միջազգային արդյունավետ գործելակերպերին



համապատասխանեցնելու առկա ցանկությունից, ինչը կհանգեցնի իրավակիրառ գործունեության՝ սահմաններին և հստակ կառավարման տեղեկատվական համակարգերի միջոցով հավաքված տվյալների հիման վրա՝ դրանով իսկ առաջացնելով միգրանտներին կացարանով ապահովելու առավել մեծ կարողության անհրաժեշտություն:

Անկանոն միգրացիայի և ձերբակալման հետ կապված իրավական համակարգը սահմանափակ է: Նախընտրելի կլիներ, որ միգրացիայի ոլորտին առնչվող իրավախախտումների համար ներկայումս կիրառվող քրեական պատասխանատվության միջոցների փոխարեն նշանակվեին վարչական տուգանքներ, եթե չի եղել քրեական բնույթի որևէ մտադրություն: Շահավետ կլիներ նաև, եթե միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխելը քրեականացվեր և սահմանվեր «Միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխելու մասին» ՄԱԿ-ի արձանագրության իմաստով: Անհրաժեշտ է նաև կիրարկել աշխատանքի թույլտվություն տրամադրելու պայմանների վերաբերյալ երկրորդային օրենսդրությունը, քանի որ օտարերկրացիների մուտքը աշխատանքային շուկա ներկայումս չի վերահսկվում կամ կարգավորվում: Օտարերկրացիների ձերբակալման առնչությամբ գոյություն ունի գործող օրենսդրություն, որն անհրաժեշտ է դնել գործողության մեջ և համապատասխանեցնել, քանի որ բոլոր սահմանային անցակետերում ստեղծվում են կացարանով ապահովման հատուկ կենտրոններ:

Մինչ սահմաններին կացարանով ապահովման հատուկ կենտրոնները ներկայումս սկզբնական փուլում են, աշխատանքներ են տարվում Վրաստանի հետ ցամաքային սահմաններին հաստատություններ ստեղծելու ուղղությամբ: «Զվարթնոց» օդանավակայանի նոր կենտրոնը համապատասխանում է բարձր ստանդարտներին և ապահովված է անհրաժեշտ հարմարություններով ներկայիս և կանխատեսելի ապագայի պահանջները բավարարելու համար: Առաջարկվել են որոշ մանր փոփոխություններ, որոնք կկատարելագործեն անվտանգությունը, և զեկույցի հետ մեկտեղ մշակվում են շահագործման ընթացակարգեր միջազգային չափանիշներին լիարժեք համապատասխանեցումն ապահովելու համար:

Առաջարկվել է կացարանով ապահովման հատուկ կենտրոնի նախագիծ, որի շուրջ քննարկումներ կունենան տեխնիկական դիզայներները և կացարանի ղեկավարները: Առաջարկված նախագիծը բավարար է 100 միգրանտ տեղավորելու համար և, անհրաժեշտության դեպքում, բավականին պարզ վերապլանավորման միջոցով այդ թիվը կարող է ավելացվել: Օգտվելով բնակելի և ընդհանուր օգտագործման շինությունների միավորների համակարգից՝ տարածքը, անհրաժեշտության դեպքում, կարող է աստիճանաբար զարգանալ պահանջարկի աճի և ֆինանսական միջոցների ի հայտ գալուն զուգահեռ: Անհրաժեշտ է հստակեցնել, որ ոչ բոլոր միավորները պետք է կառուցվեն միանգամից: Նույնը վերաբերում է նաև թվարկված հարմարություններին ու ծառայություններին, որոնք առաջարկվել են կենտրոնը միջազգային չափանիշներին լիովին համապատասխանեցնելու համար: Ամենայն հավանականությամբ, դրանք բոլորը չեն պահանջվի, քանի դեռ կենտրոնում չի ապահովվել ամբողջական կամ գրեթե ամբողջական ծանրաբեռնվածության: Օրինակ, եթե ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահելու միջին տևողությունը հաշվարկվում է օրերով, դժվար թե ներկայացվի մարզասրահի առկայության պահանջ՝ պայմանով, որ լինի մարզվելու ու ճաշելու այլընտրանքային միջոց, իսկ բժշկական հարմարությունները կարող են չլինել խիստ լայնածավալ: Հիմնական նպատակը նախատեսված պահանջի բավարարումն է, որը առավել ակնհայտ կդառնա միայն այն դեպքում, երբ իրականացվի առավել ակտիվ իրավակիրառ գործունեություն, և կիրառվեն միգրացիայի գործընթացի վերահսկողության միջոցներ:



ՀԱՎԵԼՎԱԾ Ա

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Սահմանին իրականացվող գործողությունները

- 1.1 Ներգաղթային իրավախախտումների ծանրության աստիճաններն ու տեսակը որոշելու համար պահանջվում են առավել արդյունավետ կառավարման տեղեկատվական համակարգեր, որոնց շնորհիվ հնարավոր կլինի վերլուծել միգրացիայի դրդապատճառները և այն, թե ինչ չափով են բավարարվում մուտքի պայմանները: Դա կարող է հանգեցնել երկրորդային հսկողության՝ հիմնված այնպիսի անձանց նկատմամբ ռիսկերի վերլուծության վրա, որոնք թերևս կարող են կատարել իրավախախտումներ՝ ելնելով ազգությունից, փարիքից, սեռից, արտաքին տեսքից, վարվելակերպից և ուղևորության երթուղուց:
- 1.2 Մուտքի պահին առավել խիստ հսկողություն նպատակային հարցազրույցների միջոցով՝ ուղևորության այն պատճառների արժանահավատությունը հաստատելու համար, որոնց մասին տվյալ անձի առնչությամբ տեղեկատվություն է ստացվել վիզա ստանալու համար դիմումների քննության փուլում և ժամանման պահին:
- 1.3 Կեղծված կամ կեղծ փաստաթղթեր ունեցող ուղևորների առավել մանրամասն ստուգում՝ դրդապատճառները, այդ փաստաթղթերի աղբյուրը և կեղծման մեթոդները հաստատելու համար:
- 1.4 Կեղծված կամ կեղծ փաստաթղթեր ունեցող անձինք պետք է վերադարձվեն նրանց նստեցման վերջին կետ, և նրանց չպետք է թույլատրվի շարունակել ուղևորությունը երրորդ երկիր՝ առանց տվյալ երկրի հստակ համաձայնության՝ կեղծ փաստաթղթերով մուտք գործելու փորձի մասին գիտությամբ:
- 1.5 Փոխադրամիջոցների կանոնավոր, հաճախակի ստուգումներ, հարկապես բեռնափոխադրումների, ցամաքային սահմանի հատումների դեպքում՝ հաստատելու, թե արդյոք առկա է միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխման կամ թրաֆիքինգի խնդիր: Միջամտությունները պետք է կատարվեն հետախուզության նպատակներով:
- 1.6 Մարդկանց թրաֆիքինգի բացահայտման դեպքերի ցածր ցուցանիշներից պարզ է դառնում, որ կարող է անհրաժեշտ լինել կազմակերպել թրաֆիքինգի ցուցանիշների վերաբերյալ վերապատրաստում:
- 1.7 Յուրաքանչյուր հերթափոխից առնվազն երկու աշխատողի համար պետք է կազմակերպվի ձերբակալման այլընտրանքային միջոցների, միգրանտների իրավունքների ու մշակութային առանձնահատկությունների վերաբերյալ վերապատրաստման խորացված դասընթացներ, որպեսզի անհրաժեշտության դեպքում նրանք հանդես գան որպես ազատությունից զրկելու հարցերով մասնագետներ:
- 1.8 Սահմաններին տեղակայված կացարաններով ապահովման հատուկ կենտրոններում տեղեկությունները (օրինակ՝ կացարանային կանոնների, իրավաբանական օգնության և մարդու իրավունքների, թրաֆիքինգի ու շահագործման զոհերի համար հասանելի աջակցության վերաբերյալ) պետք է տրամադրվեն այն երկրների լեզուներով, որտեղից առավել հաճախ ծագում են անկանոն կարգավիճակով միգրանտներ:



1.9 «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի դեպի ընդհանուր օգրագործման րարածք րանող մուրքի մոք րեղադրել խիսր ռեժիմով հսկվող դուռ, ինչպես նան՝ հարցազրույցի առանձին սենյակ և խիսր հսկողությամբ ապահովված մեկուսացման առանձին սենյակ:

2. Ներքին համակարգում իրականացվող գործողությունները

2.1 Ինչպես ընդգծվել է սահմանների կառավարման վերաբերյալ գնահատման նախորդ զեկույցներում, պահանջվում է Կառավարման րեղեկարվական հսրակ համակարգի միջոցով գործուն, առավել խիսր ներքին հսկողություն սահմանել օգրաբերկրացիների նկարմամբ՝ առկա խնդիրները մշրապես դիրանցելու, ի հայր եկած միրումները րացահայրելու, քաղաքանակություն մշակելու, հերախուզության միջոցով օպերա-րիվ արձագանք րրամադրելու և անձնակազմի համալրման ու ձերբակալման պա-հանջները որոշելու համար:

2.2 Ինչպես նշվել էր գնահատման նախորդ զեկույցներում, կարևոր է հիմնել կենրորնական րվյալների րանկ և րացել անհատական հաշվառման գործեր՝ մուրք գործելու պահից մինչև երկրից դուրս գալու պահը միգրանրներին հերևելու համար: Հաշվառման գործերում պերք է նշվեն րեղեկություններ մուրքի պայմանների, աշխատանքի կամ ուսման վայրերի, մուրքի պայմանների հեր կապված ժամկերների երկարածգման, վրարման, արրաքսման ու ձերբակալման հերևանքով անազարության մեջ պահելու ժամկերների մասին:



ՀԱՎԵԼՎԱԾ Բ

ՀԱՏՈՒԿ ԿԱՑԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԻՄԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ

Հայաստանում ՄՄԿ առաքելություն
Ծրագրերի զարգացման և իրականացման բաժին

**Տեխնիկական առաջադրանք
Հայաստանում միգրանտների համար կացարանով ապահովման
կենտրոնների վերաբերյալ կարիքների գնահատումը և Ստանդարտ
աշխատանքային ընթացակարգերի մշակումը**

Ծրագիր՝ Եվրոպական հանձնաժողովի՝ երրորդ երկրների հետ համագործակցության թեմատիկ ծրագրի և ՄՄԿ Զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում հեղինդունման արդյունավետ կառավարման սրեղծմանը» փարածաշրջանային ծրագիր

Թեմատիկ բլոկ 2՝ Հայաստանում և Ադրբեջանում միգրանտների կացարանների կառավարման կարողությունների ներդրում

Գործողություն 2.1՝ Ուսուցում միգրանտների կացարանների կառավարման վերաբերյալ

Առաջանդրանքի ղեկավար՝ Ծրագրերի զարգացման և իրականացման բաժնի պետ

Ներածություն

ՄՄԿ-ի մասին

Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ) միգրացիայի ոլորտում առաջատար միջկառավարական կազմակերպություն է: ՄՄԿ-ին անդամակցել են 151 անդամ պետություններ և 12 դիտորդ պետություններ (2013 թվականի հունիսի դրությամբ): ՄՄԿ-ն նպաստում է միգրացիայի կանոնակարգված ու քաղաքակիրթ կառավարմանը, խթանում է միգրացիայի հետ կապված հիմնահարցերի շուրջ միջազգային համագործակցության ծավալումը, աջակցում է միգրացիայի հետ կապված խնդիրներին գործնական լուծումներ գտնելուն և մարդասիրական օգնություն և ցուցաբերում կարիքի մեջ գտնվող միգրանտներին, այդ թվում՝ փախստականներին և ներքին տեղահանության ենթարկված անձանց: ՄՄԿ-ի Սահմանադրությամբ ճանաչվում է միգրացիայի և տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացման միջև կապը, ինչպես նաև կապը տեղաշարժի ազատության իրավունքի հետ: ՄՄԿ-ն գործունեություն է ծավալում միգրացիայի կառավարման հետևյալ չորս ընդգրկուն ոլորտներում՝ i) միգրացիա և զարգացում, ii) միգրացիայի խթանում, iii) միգրացիայի կարգավորում և iv) հարկադիր միգրացիա: Ի թիվս նշված ոլորտների՝ ՄՄԿ-ն գործունեություն է իրականացնում նաև միջազգային միգրացիոն իրավունքի տարածման, քաղաքականության շուրջ քննարկումների ու ուղղորդման, միգրանտների իրավունքների պաշտպանության, միգրանտների առողջության և միգրացիայի գենդերային ուղղվածության ոլորտներում:



Հետընդունման (READMIT) ծրագրի մասին

Ծրագրի նպատակը Հայաստանում հետընդունման գործընթացի արդյունավետ կառավարման մեխանիզմների ստեղծմանը և զարգացմանը նպաստելն է: Ծրագիրն օժանդակում է հետընդունման գործընթացի արդյունավետ կառավարման համակարգերի ստեղծմանը, միգրանտների համար կացարանով ապահովման կենտրոնների կառավարմանն ուղղված կարողությունների զարգացմանը, վերադարձված միգրանտների վերահստեգրմանը միտված ինստիտուցիոնալ արդյունավետ մեխանիզմների ձևավորմանը:

Ընդհանուր տեղեկություններ

Թեև Հայաստանի Կառավարությունն ընդունել է որոշումներ, որ հաստատել է Հատուկ կացարանների գործունեության և այդ կացարաններում օտարերկրացիներին պահելու կարգ, այդպիսի կացարաններ դեռևս գոյություն չունեն երկրի սահմանային անցման կետերից մեծ մասում: Ներկայումս հատուկ կացարան է գործում միայն «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում (Երևան) և Բագրատաշենի սահմանային անցման կետում: Դրանք երկուսն էլ ունեն կատարելագործման ու միջազգային չափանիշներին համապատասխանեցման կարիք:

Միգրացիայի ոլորտին առնչվող իրավախախտումներն ու հանցագործությունները կանխելու և հետապնդելու համար Հայաստանը հիմնականում օգտվում է իրավունքի այլ ճյուղերից, ինչպիսիք են՝ վարչական կամ քրեական օրենսգրքերի դրույթները: Տեսականորեն, անօրինական հիմունքներով սահմանը հատող անձինք կարող են ձերբակալվել: Այնուամենայնիվ, կացարանով ապահովման հատուկ հիմնական կենտրոնի բացակայության պայմաններում անկանոն կարգավիճակով միգրանտները ներկայումս պահվում են «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում:

Կացարանով ապահովման հատուկ կենտրոնների վերաբերյալ օրենսդրությունն անհրաժեշտ է կատարելագործել և սահմանել կացարանով ապահովման հատուկ կենտրոններում օտարերկրացիներին պահելու պայմանների ու ժամկետների հատուկ պահանջներ: Անհրաժեշտ է շտկել այն բացերը, որոնք առկա են կացարանով ապահովման հատուկ կենտրոններում անկանոն կարգավիճակով միգրանտներին պահելու խնդիրը և կացարանով ապահովման հատուկ կենտրոնների աշխատանքը կարգավորող ազգային օրենսդրության մեջ: Անհրաժեշտ է՝ ա) սահմանել այն առավելագույնը ժամկետը, որի ընթացքում անկանոն կարգավիճակով ներգաղթողները կարող են պահվել անազատության մեջ և բ) անկանոն կարգավիճակով ներգաղթողներին պահել այլ հանցագործությունների համար պատիժ կրող դատապարտյալներից առանձին այլ վայրում: Ավելին, պետական բյուջեից ֆինանսավորում պետք է տրամադրել՝ կացարանով ապահովման հատուկ կենտրոնները միջազգային և ԵՄ չափանիշներին համապատասխանեցնելու և անկանոն կարգավիճակով միգրանտներին համապատասխան կացարանով, տրանսպորտային և բժշկական ծառայություններով ապահովելու համար:

Բացի դրանից՝ կացարանով ապահովման հատուկ կենտրոններում պահվող միգրանտների իրավունքները պետք է պաշտպանվեն որոշակի երաշխիքներով, իսկ կացարանով ապահովման հատուկ կենտրոնները պետք է համապատասխանեցվեն միջազգային կազմակերպությունների կողմից և միգրացիայի ու ապաստանի վերաբերյալ ԵՄ կանոնագրքով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի կողմից սահմանված մարդասիրական նորմերին:

Հայաստանի ոստիկանությունը պատասխանատվություն կկրի կացարանով ապահովման հատուկ կենտրոնների աշխատանքի համար:

Հայաստանի և Վրաստանի սահմանին սահմանային անցման կետերի արդիականացման ծրագիրը մշակվել է ՄԱԿ ԶԾ-ի կողմից և իրականացվում է ԵՄ արևելյան գործընկերության՝



սահմանների համալիր կառավարման հետ կապված օրինակելի նախաձեռնության ներքո իրականացվող փորձնական ծրագիր համարվող՝ «Հայաստանի և Վրաստանի միջև Նիոնոմինդա-Բավրա սահմանային անցման կետում սահմանի կառավարման կարողությունների մակարդակի բարձրացում» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում:

Կարիքների գնահատման և Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերի նպատակները

Քանի որ կացարանով ապահովման հատուկ կենտրոնների կառուցման ու կահավորման հարցը Հետընդունման (READMIT) ծրագրի կարգավորման առարկան չէ, ապա այդ ծրագրով կկարգավորվեն կացարանով ապահովման հատուկ կենտրոնների համար Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերի մշակման հետ կապված հարցերը: Այդ նպատակով ՄՄԿ-ն կիրականացնի երկրի տարածքում գտնվող **միգրանտներին ժամանակավորապես կացարանով ապահովման** խնդրին առնչվող բացերի ու կարիքների գնահատում: Այդ վերլուծությունը կներառի նաև առաջարկություններ կապված այն փաստերի ու հանգամանքների հետ, որոնք պետք է հաշվի առնվեն երկու երկրների պետական իշխանությունների կողմից այդ թեմայի վերաբերյալ քաղաքականություններ մշակելիս:

Դրան կհետևի Միգրանտների համար կացարանով ապահովման կենտրոնների աշխատանքի համար Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերի մշակումը, որոնք կկիրառվեն հետագա վերապատրաստման գործողություններում:

Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերի փաստաթուղթը հիմք կծառայի օտարերկրյա քաղաքացիներին, հատկապես՝ երկրում մնալու իրավական հիմքեր չունեցող, անկանոն կարգավիճակով միգրանտներին խիստ ռեժիմով հսկողության, սակայն մարդասիրական վերաբերմունքի դրսևորման պայմաններում ժամանակավորապես պահելու համար:

Կարիքների գնահատման միջոցով անդրադարձ կկատարվի առնվազն հետևյալին՝

- I. Ընդունման, ապաստանի, արտահանձնման վերաբերյալ քաղաքականություն և օրենսդրություն, ձերբակալման հիմքեր, պատժամիջոցներ, ընթացակարգային երաշխիքներ, ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահելու ժամկետներ, ռեադմիսիա, անչափահասներ, թրաֆիքինգի զոհեր, ձերբակալված անձանց հետ շփում, ազատությունից զրկելու հետ չկապված միջոցներ:
- II. Ենթակառուցվածք և միջավայր, կարճաժամկետ և միջնաժամկետ կարողություններ, ձերբակալման պայմաններ ու ծառայություններ, անվտանգություն:
- III. Կառավարման դերը, կարողությունները, գիտելիք ու վերապատրաստում, անձնակազմի կառավարում, էթիկա, տվյալների պաշտպանություն, այլ կառույցների հետ համագործակցություն:
- IV. Ընթացակարգերը՝ ֆինանսներ, քնելու հարմարություն, սանիտարական պայմանների ապահովում, հագուստ, սննդակարգ, սնունդ, առողջություն, առօրյա գործունեություն, սեռ, տարիք, լեզու, կրոն, հաղորդակցություն:

Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերը կներառեն առնվազն հետևյալը՝

1. Տարածք (ընդունման համար նախատեսված տարածք, ժամանակավոր պահման սենյակներ, ննջարաններ, բազմակի նշանակության տարածք, բժշկական օգնության բաժանմունք, խոհանոցային և ճաշարանային հարմարություններ, տեսակցությունների համար նախատեսված տարածք, պահեստներ, լվացքատուն, փաստաբանի հետ հարցազրույցի համար նախատեսված տարածք, գրադարան, կրոնական նպատակների համար նախատեսված սենյակ)
2. Անվտանգություն
3. Ընդունում (կանոններ, բժշկական ստուգում և այլն)



4. Կացարանային ապահովում և հարմարություններ (տեղավորում, թրաֆիքինգի զոհեր, խոցելի դեպքեր, սանիտարական պայմանների ապահովում, մաքրություն, կերակուր, ռեժիմ և գործունեություն, մարզում, կրթություն, ծխելու հետ կապված քաղաքականություն և այլն)
5. Անկանոն կարգավիճակով միգրանտների իրավունքներն ու պարտականությունները
6. Հաղորդակցություն և տեսակցություն (թարգմանություն, հեռախոսներից օգտվելու հնարավորություն, նամակագրություն, իրավաբանական ծառայությունների և իրավաբանական օգնությունից օգտվելու հնարավորություն և այլն)
7. Բժշկական օգնություն (հիգիենա, բժշկական քարտի վարում և գաղտնիության ապահովում, դեղորայքի ու բուժական ծառայությունների տրամադրում, վարակիչ հիվանդությունների հսկողություն, սեռական և վերարտադրողական առողջության հետ կապված խնդիրներ, հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ, հանցագործություններից տուժածների, վնասվածք ստացած անձանց կամ խոշտանգումների զոհերի բուժում, մասնագիտական և էկոլոգիական բժշկության խնդիրներ և այլն)
8. Ղեկավարում և մարդկային ռեսուրսների կառավարում Վարչակազմի իրավունքներն ու պարտականությունները
9. Դիտանցում

Ավելին, Կարիքների գնահատման զեկույցում և Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերի փաստաթղթում ներառված են պայմանագրերի և այլ իրավական փաստաթղթերի և ռեադմիսիոն համաձայնագրերի ցանկը:

Կարիքների գնահատման զեկույցը և Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերի փաստաթուղթը առկա են հայերենով և անգլերենով:

Մեթոդաբանությունը

Կարիքների գնահատումը կիրականացվի, և Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերը կմշակվեն երկու միջազգային խորհրդատուների կողմից, որոնք կաշխատեն PDIU ղեկավարի վերահսկողությամբ:

Խորհրդատվությունը կենթադրի տեղում ուսումնասիրություն, իրավական տեքստային վերլուծություն, հիմնական շահագրգիռ կողմերից տեղեկություններ հավաքելու համար հարցաշարի մշակում, կարիքների գնահատման զեկույցի մշակում՝ առաջարկություններով, կացարանով ապահովման հատուկ կենտրոնների համար Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերի մշակում:

Հանդիպումներ կկազմակերպվեն Հայաստանի հետևյալ պետական մարմինների հետ՝ Արտաքին գործերի նախարարություն, Արդարադատության նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այդ թվում՝ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը, Սոցիալական ապահովության պետական ծառայությունը), Տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայություն, Ոստիկանություն (այդ թվում՝ Անձնագրային և վիզաների վարչությունը, Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն), Ազգային անվտանգության ծառայություն (Սահմանապահ զորքեր), Պետական եկամուտների կոմիտե, Սփյուռքի նախարարություն, Կրթության և գիտության նախարարություն, Առողջապահության նախարարություն, Պաշտպանության նախարարություն:

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և ՄՄԿ գլխամասային գրասենյակի ու տարածաշրջանային գրասենյակի փորձագետները կարող են վերանայել նախագծի վերջնական տարբերակները և ներկայացնել իրենց մեկնաբանությունները:

Ընտրված խորհրդատուները պետք է՝



- ա) մշակեն խորհրդատվության մեթոդաբանություն,
- բ) իրականացնեն տեղում ուսումնասիրություն և իրավական տեքստային վերլուծություն,
- գ) հանդիպեն հիմնական շահագրգիռ կողմերին և իրականացնեն կարիքների գնահատում, բացահայտեն Հայաստանում միգրանտներին կազմակերպման և կառավարման բացերը,
- դ) վերլուծեն տեղեկություններն ու տվյալները և մշակեն կարիքների գնահատման զեկույց՝ կոնկրետ առաջարկություններով և հետագա քայլերով,
- ե) մշակեն Ստանդարտ աշխատանքային ընթացակարգեր,
- զ) միավորեն Հայաստանում ՄՄԿ առաքելության և այլ շահագրգիռ անձանց կողմից ներդրված ռեսուրսները, ինչպես առաջարկվել է Հայաստանում ՄՄԿ գրասենյակի կողմից:

Ծրագրին առնչվող փաստաթղթերը նախապատրաստելու նպատակով ՄՄԿ-ն օգտվելու է տարբեր նյութերից, այդ թվում՝ հետևյալ նյութերը՝

ՄՄԿ, «Սահմանների կառավարման ուղեցույցներ և միգրանտներին ձերբակալման ընթացակարգեր. Հանրային առողջության հետ կապված հեռանկար» (2010):

ՄՄԿ, «Ուկրաինայում միգրանտների համար կազմակերպման և կառավարման գործունեության վերաբերյալ ուղեցույցներ և լավագույն գործելակերպ», (2007):

ՄՄԿ, «ԵՄ կանոնադրքին և միջազգային նորմերին համապատասխան անկանոն կարգավիճակով միգրանտների հարցերը կարգավորող համակարգի վերաբերյալ առաջարկ» ՄՄԿ (2006):

Պիեր Ռոսսի-Լոնգիի, Թերեզա Լինդսթրոմ և Քրիստինա Գալստյան, Միգրացիայի միջազգային կազմակերպություն, «Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի կառավարման ոլորտի ուսումնասիրություն: Գնահատման առաքելության զեկույց»: Միգրացիայի միջազգային կազմակերպություն/ Երևան. Լուսակն հրատարակչություն (2008)

Քրիստինա Գալստյան, Ֆրանց Պրուտչ և Պիեր Ռոսսի-Լոնգիի և Միգրացիայի միջազգային կազմակերպություն, «Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի կառավարման ոլորտում զարգացումների ակնարկ. առաջընթացի գնահատում»: Միգրացիայի միջազգային կազմակերպություն (2011)

Ֆրանց Պրուտչ, Միգրացիայի միջազգային կազմակերպություն, «Հայաստանի սահմանների տեսնելիական կարիքների գնահատում», 2011:

Մարիա Տեմեշվարի և Կրիստինա Վասալա Կոկկինակի, Միգրացիայի միջազգային կազմակերպություն, ««ԵՄ-ում ընդունված չափանիշներին համապատասխանելիության տեսանկյունից Հայաստանի միգրացիոն օրենսդրության և պրակտիկայի վերլուծություն», Միգրացիայի միջազգային կազմակերպություն (2013)

ՄԱԿԶԾ, «Միգրացիա և մարդկային զարգացում. Հնարավորություններ և մարտահրավերներ: 2009 թվականի Հայաստանի մարդկային զարգացման ազգային զեկույց» Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր (2009):

Քրիստինա Գալստյան, «Միգրացիայի կառավարում և մարդու իրավունքներ», Միգրացիայի միջազգային կազմակերպություն (2010):

ՄՄԿ, «Մարդկային և նյութական գործոնների վերաբերյալ երկրորդ աշխատանքային փաստաթղթի նախագիծ: Ալբանիայում երրորդ երկրների անկանոն կարգավիճակով քաղաքացիների ընդունման ժամանակավոր փակ կենտրոնի ստեղծման գնահատում», ՄՄԿ Ալբանիա:

ՄՄԿ, «Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային չափանիշներ: Ալբանիայում երրորդ երկրների անկանոն կարգավիճակով քաղաքացիների ընդունման ժամանակավոր փակ կենտրոնի ստեղծման գնահատում» ՄՄԿ:



ՀՀ օտարերկրացիների համար կացարանով ապահովման հատուկ կենտրոնների վերաբերյալ կարիքների գնահատում

ՄՄԿ, «Անկանոն կարգավիճակով միգրանտների վերադարձը Ալբանիա». Գործին ընթացք տալու, ընդունման և վերադարձման գնահատում: Պահանջներ և մեթոդներ» ՄՄԿ (2006):

Տվյալ ոլորտի քաղաքականությունը և օրենսդրությունը:

«Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) Միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգ» (ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 51 նիստում, հաստատվել է ՀՀ վարչապետի կողմից 2011 թվականի հունվարի 13-ին:

«Հայաստանում միգրացիայի պետական կարգավորման ռազմավարության իրականացման 2012-2016 թթ. գործողությունների ազգային ծրագիր» (ընդունվել է 2011 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ Կառավարության թիվ 1593-Ն որոշմամբ)

«Հայաստանի Հանրապետությունից սկիզբ առնող անկանոն միգրացիայի երևույթի ուսումնասիրության և դրա կանխարգելման վերաբերյալ հայեցակարգ» (ընդունվել է 2011 թվականի դեկտեմբերի 29-ին)

1985 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված Վարչական իրավասխախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք

2003 թվականի ապրիլի 18-ի ՀՀ Քրեական օրենսգիրք

ՀՀ Նախագահի 2007 թվականի փետրվարի 26-ի թիվ ՆՀ-37-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»

Ազգային անվտանգության խորհրդի կողմից 2010 թվականի սեպտեմբերի 25-ին հաստատված «ՀՀ սահմանային անվտանգության և պետական սահմանների համալիր կառավարման ռազմավարություն»

2006 թվականի դեկտեմբերի 25-ին ընդունված «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,

2001 թվականի սեպտեմբերի 26-ի «Քաղաքական ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

2008 թվականի նոյեմբերի 27-ի «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

«ՀՀ սահմանային անցման կետերում և փարանցիկ գոտիներում հատուկ կացարանների գործունեության ու օտարերկրացիներին այդ կացարաններում պահելու կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի թիվ 127-Ն որոշում

«ՀՀ տարածքում հատուկ կացարանների գործունեության և ձերբակալված օտարերկրացիներին այս կենտրոնում պահելու կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2008 թվականի հուլիսի 10-ի թիվ 827-Ն որոշում

ՀՀ Կառավարության 2013 թվականի հուլիսի 18-ի թիվ 783-Ն որոշում «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում ու փարանցիկ գոտիներում հատուկ կացարանների գործունեության և օտարերկրացիներին այնտեղ պահելու կարգը սահմանելու մասին»

2013 թվականի ապրիլի 19-ի «Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին համաձայնագիր»



**Հայաստանում ՄՄԿ-ի առաքելություն
Ծրագրերի զարգացման և իրականացման բաժին**

**«Աջակցություն Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում
հետընդունման գործընթացի արդյունավետ կառավարման
մեխանիզմների ստեղծմանը» տարածաշրջանային նախագիծ**

Ֆինանսավորվում է Եվրոպական հանձնաժողովի՝ միգրացիայի և ապաստանի ոլորտներում երրորդ երկրների հետ համագործակցության թեմատիկ ծրագրի և ՄՄԿ Զարգացման հիմնադրամի կողմից

**Հայաստանում միգրանտների համար կացարանով ապահովման
կենտրոնների վերաբերյալ կարիքների գնահատումն իրականացնող
և դրանց ստանդարտ աշխատանքային ընթացակարգերը
նախապատրաստող Հայաստանի առաքելության օրակարգ**

**2013 թվականի սեպտեմբերի 16, երկուշաբթի - 2013 թվականի
սեպտեմբերի 20, ուրբաթ**

Օր 0. Կիրակի, 2013 թվականի սեպտեմբերի 1

17:00 – 20:00	ՄՄԿ Հայաստանի առաքելություն Քրիստինա Գալստյան, Ծրագրերի զարգացման և իրականացման բաժնի ղեկավար
---------------	--

Օր 1. Երկուշաբթի, 2013 թվականի սեպտեմբերի 16

8:00 – 20:00	Բագրատաշենում սահմանների փաստացի անցման ուսումնասիրություն Բագրատաշենի սահմանապահ զորքերի սահմանային վերահսկողության զորամասի հրամանատար
--------------	---

Օր 2. Երեքշաբթի, 2013 թվականի սեպտեմբերի 17

9:30 – 12:30	Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում սահմանների փաստացի անցման ուսումնասիրություն Գնդապետ Սամվել Աղաջանյան, «Զվարթնոց» օդանավակայանի սահմանային վերահսկողության հարցերով բաժնի պետ, Սահմանապահ զորքերի սահմանային վերահսկողության զորամաս, Կարեն Բաբայան, անվտանգության ծառայության պետ, «Արմենիա» միջազգային օդանավակայաններ
14:00 – 15:45	Տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն Գագիկ Եգանյան, պետ
16:00 – 18:00	Արդարադատության նախարարություն Ռաֆայել Հովհաննիսյան, պետի տեղակալ, Քրեակատարողական վարչություն Ալբերտ Մկրտչյան, խորհրդատու Մայրո Տիգրան Սահակյան, պետ, Վարչական - վերլուծական, իրավական և միջազգային կապերի բաժին



Օր 3. Չորեքշաբթի, 2013 թվականի սեպտեմբերի 18

9:30 – 11:00	Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագիր Գրիգորի Մալինցյան, համակարգող, Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Վրաստանի և Հայաստանի միջև Նինո-ժմինդա-Բավրա սահմանային անցման կետում կառավարման կարողությունների զարգացում» տարածաշրջանային նախագիծ և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից ֆինանսավորվող «Հայաստանի հյուսիսային միջանցքի արդիականացման» ծրագիր
11:15 – 12:45	Հայաստանի Հանրապետության ոստիկանություն Գնդապետ Նորայր Մուրադխանյան, պետ, Անձնագրային և վիզաների վարչություն Մայր Արմեն Պետրոսյան, Անօրինական միգրացիայի դեմ պայքարի և միջազգային համագործակցության բաժնի պետ Փոխգնդապետ Արմեն Սեդրակյան, պետ, Միջազգային կապերի բաժին
14:30 – 16:00	Արտաքին գործերի նախարարություն Միեր Բադալյան, Միգրացիայի հարցերով բաժնի պետ, Հյուպատոսական վարչություն Դավիդ Մանուկյան, կցորդ, Վիզաների բաժին, Հյուպատոսական վարչություն
16:15 – 18:00	Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակություն Դավիթ Ավագյան, Ծրագրի ղեկավար

Օր 4. Հինգշաբթի, 2013 թվականի սեպտեմբերի 19

9:30 – 11:00	Փաստաբանների պալատ Ռուբեն Սահակյան, Խորհրդի նախագահ Մասիս Ղազանչյան, Գրասենյակի ղեկավար, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ
11:15 – 12:45	Գլխավոր դատախազություն Կորյուն Փիլոյան, պետ, Կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության վարչություն Արթուր Գոյունյան, Ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբերհանցագործության գործերով վարչության պետ Նելլի Հարությունյան, Միջազգային իրավական հարաբերությունների վարչություն Եղիազար Ավագյան, Դատախազ, Միջազգային իրավական հարաբերությունների վարչություն
12:45 – 14:30	Հայաստանում ԵՄ խորհրդատվական խումբ Էլենորա Վերգեր, Արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով խորհրդատու
14:30 – 16:30	Ազգային անվտանգության ծառայություն Գնդապետ Օլեգ Մարկոսյան, Միջազգային հարաբերությունների վարչության պետի տեղակալ Փոխգնդապետ Մանվել Մայիլյան, պետի տեղակալ, Սահմանային վերահսկողության զորամաս, Սահմանապահ զորքեր



16:45 – 18:00	ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գլխավոր հանձնակատար Քրիստոֆ Բիերուիթթ, ներկայացուցիչ Քեյթ Փուլեր, պաշտպանության հարցերով պաշտոնատար անձ Սուսաննա Գրիգորյան, պաշտպանության հարցերով պաշտոնատար անձ
---------------	--


Օր 5. Ուրբաթ, 2013 թվականի սեպտեմբերի 20

9:30 – 10:30	Առողջապահության նախարարություն Ռուզաննա Յուզբաշյան, պետ, Առողջապահական ծրագրերի բաժին Լուսինե Քոչարյան, պետ, Հանրային առողջության բաժին Հասմիկ Սաֆարյան, առաջատար մասնագետ, Միջազգային կապերի վարչություն
10:45/11:00 – 12:00	Այցելություն «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ (կանանց և անչափահասների համար) Գնդապետ Արամ Սարգսյան
12:30 – 13:30	Հայաստանի հելսինկյան կոմիտե Պրն Ավետիք Իշխանյան, նախագահ
14:30 – 15:45	ԵԱՀԿ երևանյան գրասենյակ
16:00 – 17:15	Հայաստանում ՄՄԿ-ի առաքելություն Ծրագրերի զարգացման և իրականացման բաժնի ղեկավար
17:15 – 20:00	Փորձագետներն աշխատում են միասին



ՀԱՎԵԼՎԱԾ Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԻ ՎԻՋԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ



ՀԱՎԵԼՎԱԾ Դ

Օտարերկրացիների համար կացարանով ապահովման հատուկ կենտրոնների վերաբերյալ ստանդարտ աշխատանքային ընթացակարգեր

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՑԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՆԴԱՐՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

2014

Հրաժարում պատասխանատվությունից. Ճանաչելով պետությունների իրավունքը կալանավորելու անկանոն միգրանտներին որոշակի սահմանափակ հանգամանքներում, Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ) դեմ է անորոշ կամ երկարատև կալանքին: Միգրանտների (անկանոն) կալանավորումը պետք է իրականացնել միայն որպես ծայրահեղ միջոց, երբ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցները համարվել են անարդյունավետ պատասխանատու իշխանությունների կողմից, և պետք է այն կիրառվի միայն որպես վարչական միջոց և ոչ թե քրեական: Բոլոր դեպքերում, պետք է նախընտրել և կիրառել առվել քիչ սահմանափակումներ պարունակող տարբերակը, ներառյալ՝ հասարակական կացարանները, բաց ընդունելության կենտրոնները և խոցելի միգրանտների համար նախատեսված հատուկ աջակցության կենտրոնները, ինչպես նաև, հնարավորության դեպքում, այնպիսի միջոցառումների իրականացումը, ինչպիսիք են աջակցված կամավոր վերադարձը:

Այս ընթացակարգերը պատրաստվել են Եվրոպական հանձնաժողովի և Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) Զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող՝ «Աջակցություն՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում հետընդունման գործընթացի արդյունավետ կառավարման մեխանիզմների ստեղծմանը» տարածաշրջանային ծրագրի և ՄՄԿ Զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող՝ «Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում հետընդունման և վերադարձի գործընթացի արդյունավետ կառավարման կարողությունների զորացում» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԱՏԶ	Անվտանգության մասով տեղեկատվության վերաբերյալ զեկույց
ԳՏՀ	Գաղտնի տեսահսկողության համակարգ
ԵՄ	Եվրոպական միություն
ԿԱՀԿ	Կացարանով ապահովման հատուկ կենտրոն
ԿԻՂ	Կրոնական հարցերով ղեկավար
ԿՏՀ	Կառավարման տեղեկատվական համակարգեր
ՀԱՊ	Համայնքի անվտանգության հարցերով պաշտոնյա
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՄԱԿ ՓԳՀ	Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար
ՄՊԾ	Միգրացիոն պետական ծառայություն
ՍԿՏՀ	Սահմանային կառավարման տեղեկատվական համակարգ
ՄՄԿ	Միգրացիայի միջազգային կազմակերպություն
ՌԻԿԻԿ	Ռասայական խտրականության կանխարգելման հարցերով կոմիտե
ՍԱԿ	Սահմանի անցման կետ
ՍԱԸ	Ստանդարտ աշխատանքային ընթացակարգեր
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիա



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության միգրացիոն պետական ծառայության այս ստանդարտ աշխատանքային ընթացակարգերը (ՍԱԸ) ներկայացված են օտարերկրացիների համար նախատեսված կացարանով ապահովման հատուկ կենտրոնների (ԿԱՀԿ) համար:

Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերի իրականացումը չի բխում ՀՀ օրենսդրությամբ ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայությանը վերապահված լիազորություններից:

Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերը ներկայացվել են ՄՄԿ-ի կողմից իրականացված՝ «Օտարերկրացիների համար կացարանով ապահովման հատուկ կենտրոնների վերաբերյալ կարիքների գնահատում» ՄՄԿ զեկույցի հետ մեկտեղ, որտեղ արտացոլված են թե՛ երկրի ներսում, և թե՛ սահմանային հսկողության կետերում կացարանով ապահովման հատուկ կենտրոնների նախագծման ու ապահովման վերաբերյալ առաջարկներ: Թե՛ Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերը, և թե՛ կարիքների գնահատման վերաբերյալ զեկույցը ՄՄԿ-ի կողմից ղեկավարվող և Եվրոպական միության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող ծրագրի արդյունքներն են, որոնց նպատակն է աջակցել Հայաստանում, Ադրբեյջանում ու Վրաստանում հետընդունման արդյունավետ կառավարմանը:

Երկրի ներսում կացարանով ապահովման հատուկ կենտրոնի բացակայության պայմաններում այս ցուցումները, ըստ անհրաժեշտության, սահմանափակվում են կացարանով ապահովման հատուկ կենտրոնների կառավարման ժամանակ պահանջվող նվազագույն ստանդարտներն ուրվագծելով՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն երաշխիքներին ու ընթացակարգերին, որոնք կարող են հարմարեցվել ազգային իրավական պահանջներին, երբ երկրի ներսում ստեղծվի կացարանով ապահովման հատուկ կենտրոն: Մինչդեռ Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերը հիմնականում մշակվել են երկրի ներսում կացարանով ապահովման հատուկ կենտրոնի համար՝ 72 ժամից ավելի անկանոն կարգավիճակով միգրանտներին տեղավորելու համար, դրանք կարող են հարմարեցվել, ավելի քիչ չափով, սահմանի անցման կետերում (ՍԱԿ) տեղակայված կացարանով ապահովման հատուկ կենտրոնի համար, որտեղ միգրանտները սովորաբար 24 ժամից ավելի չեն գտնվում, և այդ գտնվելու տևողությունը բացառիկ հանգամանքներում կարող է երկարաձգվել մինչև 72 ժամ:

Ապագայում Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերը կարելի է թարմացնել՝ ապահովելու համար, որպեսզի դրանք համապատասխանեն նոր ընդունված ընթացակարգերին ու քաղաքականությանը:

Կարևոր է հիշեցնել, որ օտարերկրացիների համար Կացարանով ապահովման հատուկ կենտրոնը (ԿԱՀԿ) քրեակատարողական հաստատություն չէ և չպետք է օգտագործվի դատաքննության սպասող կամ հանցագործություններ կատարելու համար մեղադրվող անձանց տեղավորման համար՝ բացառությամբ սահմանն ապօրինի հատելու դեպքերի, որը Հայաստանում հանցագործություն է համարվում:¹¹²

Ինչպես սահմանված է «Օտարերկրացիների մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ «... առանց անձնագրի, անվավեր անձնագրով Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետ ժամանած կամ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետում մուտքի վիզայի մերժում ստացած կամ սահմանային հսկողություն իրականացնող մարմնի կողմից մուտքի թույլտվություն չստացած օտարերկրացիները կարող են պահվել տարանցիկ գոտում կամ այլ տեղ՝ այդ նպատակով ստեղծված հատուկ կացարանում»: Բացի դրանից՝ «Օտարերկրացիների մասին» օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝

112 Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 329-րդ հոդված:

օտարերկրացին կարող է պահվել, եթե բավարար հիմքեր կան կասկածելու, որ նա կարող է թաքնվել մինչև դատարանում արտաքսման մասին գործի քննությունը կամ օրինական ուժի մեջ մտած արտաքսման որոշման կատարումը:

Անկանոն կարգավիճակով միգրանտների համար նախատեսված այս փակ ռեժիմով ընդունման կենտրոնը պետք է տրամադրի անվտանգ, սակայն մարդկային պայմաններով ապահովված՝ ձերբակալված անձանց կեցավայր ավելի հանգիստ ռեժիմով՝ նրանց տալով տեղաշարժի և շփման հնարավորինս շատ ազատություն, որը համապատասխանում է ապահով և անվտանգ միջավայր ապահովելուն: Տեղավորված միգրանտներին կխրախուսեն ու կաջակցեն իրենց ժամանակն ամենաարդյունավետ եղանակով օգտագործելու հարցում՝ միևնույն ժամանակ հարգելով, մասնավորապես, նրանց արժանապատվությունը և սեփական տեսակետն ունենալու իրավունքը՝ կենտրոնի շրջանակներում համապատասխան հարմարություններ ստեղծելու միջոցով:



1. ԿԱՑԱՐԱՆԸ

ՉԱՓԱՆԻՇԸ

Կացարանը պետք է համապատասխանի օտարերկրացիների անվտանգ տեղավորման համար նախատեսված նպատակին: Այն պետք է ապահովի արժանապատիվ կենսապայմաններ և համապատասխանի Միգրացիոն պետական ծառայության ղեկավարի կողմից մատնանշված՝ տարածքի մասով պահանջներին: Միգրանտներին տեղավորելու համար նախատեսված կենտրոնը չպետք է նմանություններ ունենա քրեակատարողական հաստատությունների նման հիմնարկներին:


ՆԱԽԱԳԾՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ՝

- քնելու հարմարություններ, որոնցով ապահովվում է անձնական անվտանգությունը և մասնավորությունը՝ տրամադրելով՝ այնքանով, որքանով դա գործնականում հնարավոր է, առանձին ննջասենյակներ կամ քիչ թվով անձանցով բնակեցված ընդհանուր սենյակներ.
- բնակելի միավորներ, որոնք պետք է նախագծված լինեն խմբերին՝ ըստ նրանց սեռի և մշակութային պատկանելության կացարանով ապահովելու և ըստ ռիսկի նկարագրի՝ նրանց առանձնացնելու համար.
- ընդհանուր շփման համար նախատեսված առնվազն երկու տարածք, որոնք, անհրաժեշտության դեպքում, կարող են օգտագործվել հարմարավետ, հանգիստ միջավայրում անձանց՝ ըստ սեռերի առանձնացնելու համար.
- լվացքատան ծառայությունների համապատասխան մատչելիությունը յուրաքանչյուր բնակելի միավորից.
- պասիվ և ակտիվ ժամանցի համար նախատեսված հարմարություններ, ինչպես օրինակ՝ գրադարան, մարզասրահ, համացանցի հասանելիություն և մարզահրապարակներ՝ կենտրոնի ներսում և դրան կից.
- համայնքի ստանդարտների հետ համադրելի առողջապահական ծառայությունների տրամադրում տեղում գտնվող բժշկական կենտրոնի միջոցով.
- տեսակցությունների կենտրոն՝ բարեկամական, հաճելի միջավայրում այցելուների հետ սոցիալական և ժամանցային բնույթի շփման հնարավորություն ընձեռելու համար.
- հարցազրույցի սենյակներ, որոնք ապահովում են կացարանում բնակվող անձանց մասնավորությունը աշխատակազմի և օրինական ներկայացուցիչների հետ խոսելիս.
- կրոնական և հոգևոր պահանջները բավարարող համապատասխան հարմարություններ:

Անվտանգության ապահովման այնպիսի աստիճան, որը բավարար կլինի կացարանում բնակվող անձանց և համայնքի անվտանգությունն ապահովելու համար. հնարավորության դեպքում անվտանգության ապահովում ոչ ինստիտուցիոնալ եղանակով՝ տեղաշարժի ազատության հետ մեկտեղ ապահովելով զսպման համապատասխան մեխանիզմներ:

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Դռները պետք է բաց լինեն, իսկ միզարանտները պետք է հնարավորություն ունենան սահմանված ժամերին մուտք գործելու ընդհանուր օգտագործման տարածքները:
2. Սենյակներից ոչ մեկը չպետք է օգտագործվի որպես քնելու տեղ, եթե Միգրացիոն պետական ծառայության ղեկավարը կամ վերջինիս կողմից նշանակված տեղակալը չեն հաստատել, որ
 - դրա չափսը, լուսավորությունը, ջեռուցումը, օդափոխումը և կահավորանքը համարժեք են առողջության ու ապահովության պահպանման պայմաններին.
 - սենյակում առկա է մահճակալ, զգեստապահարան և կողպվող պահեստային տարածք.
 - այն կացարանում բնակվող անձանց հնարավորություն է տալիս կապ հաստատելու ծառայություն իրականացնող պաշտոնյայի հետ ցանկացած ժամանակ՝ սեղմելով ահազանգման կոճակը կամ ներքին ցանցի միջոցով:
3. Բնակելի տարածքը չպետք է ոչ մի դեպքում գերազանցի Միգրացիոն պետական ծառայության ղեկավարի կողմից մատնանշված՝ հաստատված զբաղեցվածության մակարդակը՝ բացառությամբ վերջինիս կամ նրա նշանակված տեղակալի կողմից թույլատրված բացառիկ դեպքերի:
4. Պետք է ապահովվի հետևյալ կահույքն ու կահավորանքը, իսկ կացարանում բնակվող անձանց սենյակներն ու կացարանները պետք է բավականին մեծ լինեն, որպեսզի այնտեղ տեղավորվի՝
 - մահճակալ (պետք է մեկտեղանոց մահճակալի տեղ լինի, նույնիսկ եթե երկհարկանի մահճակալներ են օգտագործվում). հնարավորության սահմաններում գերադասելի է մեկի փոխարեն օգտագործել երկու հոգու համար նախատեսված մոդելը. ընտանեկան սենյակները պետք է տեղավորեն մինչև 6 անձ. պետք է առկա լինեն մեկ սենյականոց սենյակներ.
 - յուրաքանչյուր ննջասենյակում պետք է լինի ծածկված զուգարան, լվացարան, չկոտրվող հայելի, սեղան, աշխատասեղան և աթոռ.
 - ջրատար համակարգերը չպետք է վտանգի ենթարկվեն
 - լուսավորման սարքերը պետք է լավ պաշտպանված լինեն
 - այնպիսի սարքերը, ինչպիսիք են՝ հայելիները, լոգասենյակի պարագաները պետք է այնպիսի սարքերով մոնտաժված լինեն, որոնք հնարավոր չէ վնասել
 - հակահրդեհային ցայտաջրմուղ համակարգը պետք է այնպես նախագծվի, որ կանխվի դրա նորմալ աշխատանքի խափանումը
 - ապահով պահարան կամ մահճակալների տակ տեղադրված կողպվող դարակներ
 - աղբարկղ
 - վարագույրներ
 - ննջասենյակի դռները պետք է կողպված լինեն, սակայն կացարանում բնակվողներին պետք է տրամադրվի բանալի հիմնական բանալին պետք է լինի անվտանգության աշխատակցի մոտ:



5. Կենտրոնը պետք է իրականացնի ստուգում նախքան սենյակում տեղավորվելը ու փոխելիս՝ հարմարությունների/սարքավորումների մաքրությունն ու առկայությունն ապահովելու համար: Սենյակների նախապատրաստումն իր մեջ ներառում է՝
- հորիզոնական բոլորմակերեսները, այդպիսով՝ ջրակայուններ քնակի ծածկոցները պետք է փոշեհանվեն ու մաքրվեն հավաստված ախտահանող լուծույթով, որն օգտագործվում է արտադրողի ցուցումներին համապատասխան.
 - պատուհանները, պատուհանի շրջանակներն ու պատուհանագոգերը պետք է մաքրվեն ամեն շաբաթ.
 - կահույքը և սարքերը պետք է մաքրվեն ամեն օր.
 - հատակները պետք է մաքրվեն ամեն օր, իսկ աղտոտված լինելու դեպքում՝ ախտահանող մաքրող լուծույթով՝ արտադրողի ցուցումների համաձայն խառնված.
 - աղբի համար նախատեսված կոնտեյներները պետք է ծակոտկեն չլինեն և պատված լինեն պոլիմերային պարկերով. պարկերը պետք է ամեն օր փոխվեն.
 - աղբի համար նախատեսված կոնտեյներները պետք է ջրով մաքրվեն նվազագույնը շաբաթական մեկ անգամ, կամ անհրաժեշտության դեպքում ցանկացած ժամանակ, երբ դրանք աղտոտվում են.
 - վնասատուների դեմ պայքարի լիցենզավորված մասնագետները պետք է ամսական կտրվածքով ստուգումներ իրականացնեն՝ հայտնաբերելու ու ոչնչացնելու կրծողներին, միջատներին ու այլ մակաբույծներին:
6. Լուսավորությունը, ջեռուցումը և օդափոխումը պետք է համապատասխանի ՄՊԾ-ի ղեկավարի կողմից սահմանված չափանիշներին:
7. Ամենօրյա կտրվածքով պետք է գրանցամատյան վարել յուրաքանչյուր բնակելի միավորում, որում պետք է արտացոլվեն կենտրոնի ղեկավարի կողմից նշանակված ծառայողների կողմից կատարված ամենօրյա ստուգումների մասին բոլոր տվյալները, որոնք ներառում են՝ սենյակի ահազանգման համակարգեր.
- ենյակների, ընդհանուր տարածքների, ցնցուղարանների, խոհանոցների, վրացքատան հարմարությունների մաքրություն.
 - անվտանգության համակարգեր՝ կողպման համակարգեր, պատուհաններ, դռներ.
 - կրակմարիչների ու առաջին օգնության դեղարկղերի ամբողջականություն ու առկայություն:
8. Եթե կացարանը չի համապատասխանում մատնանշված չափանիշներին, ապա այդ հարցերը պետք է լուծվեն 24 ժամվա ընթացքում:

2. ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ԱՐՁԱԿՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇԸ

Ընդունման ու արձակման գործընթացը պետք է արդյունավետ կառավարել, պետք է ապահովել, որպեսզի պահպանվեն ձերբակալման թույլտվության մասով իրավական գործընթացները, գրանցել էական մանրամասները, պատշաճ կերպով հաշվի առնել կացարանում բնակվողների բարեկեցությունը և նրանց նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորել:

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

1. Կենտրոնը պետք է բաց լինի անձանց ընդունման ու արձակման համար օրը 24 ժամ և շաբաթը 7 օր: Ժամանման մասին վաղօրոք ծանուցումներ պետք է կատարվեն ձերբակալման գործառույթներ ունեցող մարմինների կողմից՝ հեռախոսով կամ էլեկտրոնային փոստով:
2. Կենտրոնը չպետք է ընդունի անձանց՝ առանց ձերբակալման համար պատշաճ գրավոր թույլտվության: Տվյալ անձի ինքնությունը պետք է հաստատվի ժամանման պահին՝ նախքան ուղեկցող խմբի մեկնումը, իսկ անհամապատասխանությունների դեպքում, նրան չպետք է ընդունեն: Ինքնությունը հաստատելուց հետո, տվյալ անձանց տրամադրվում է տարածքում օգտագործման համար նախատեսված՝ լուսա-նկարով ու անհատական համարով նույնականացման քարտ, որը նրանց մոտ կմնա կացարանում գտնվելու ամբողջ ընթացքում:
3. Նախնական ձերբակալման ժամանակ, ընդունվող անձանց հետ պետք է տրամադրվի ռիսկի գնահատման մասով գրառումներ՝ ներգաղթային կանոնակարգերի բոլոր նախկին խախտումների, հակասոցիալական վարքագծի, բժշկական ու հոգեբուժական հարցերի վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև ցանկացած նշում այն մասին, որ նրանք կարող են ինքնավնասել կամ վնասել ուրիշներին:
4. Ընդունման գործընթացում ներգրավված ծառայողները պետք է վերապատրաստված լինեն՝ ճանաչելու այն վարքագիծն ու նշանները, որոնք արտահայտում են տագնապ, ծանր վիճակ կամ ինքնավնասման վտանգ, ինչպես նաև կոնկրետ անձի խոցելիությունը, որոնց համար պահանջվում է օգնության ու աջակցության համապատասխան միջոցների ընդունում:
5. Պետք է հասանելի լինեն բանավոր թարգմանության ծառայությունները, եթե ոչ տեղում, ապա գոնե հեռախոսով: Կացարանում բնակվող մյուս անձանց կողմից բանավոր թարգմանությունը պետք է միայն թույլատրվի կացարանում բնակվող համապատասխան անձի հստակ համաձայնությամբ:
6. Ռիսկի գնահատման համակարգի հետ մեկտեղ կենտրոնում պետք է առկա լինի ստուգման համակարգ՝ ապահովելու համար, որպեսզի խոցելիության նշաններ դրսևորող անձանց վերաբերյալ տեղեկատվությունը գրանցվի ու հասցեագրվի առողջապահական թիմին և կացարանում բնակվող անձանց նկատմամբ հոգածություն համար պատասխանատու այլ անձանց: Ստուգման ձևը պետք է լրացվի ժամանումից հետո հնարավորինս շուտ:
7. Հիմնական տեղեկատվությունը պետք է հավաքվի ու պահպանվի էլեկտրոնային եղանակով ու թղթային տարբերակով՝ անձնական գործում, որը ներառում է՝
 - անձի ինքնության մասին տեղեկատվությունը,

- o լուսանկարը,
- o լրիվ անունը,
- o ծննդյան ամսաթիվը,
- o սեռը,
- o քաղաքացիությունը,
- o մատնահետքերը (եթե մատնահետքերը դեռ չեն վերցվել),
- ընդունման ժամն ու ամսաթիվը,
- ձերբակալման պատճառներն ու թույլտվությունը,
- ազատ արձակման ամսաթիվը,
- անձնական իրերի ցանկը,
- դատվածության մասին տվյալները:

Ձերբակալման թույլտվությունը պետք է պահել էլեկտրոնային եղանակով և թղթային տարբերակով կացարանում բնակվողի անձնական գործում: Էլեկտրոնային գրառումներից ու թղթային տարբերակով փաստաթղթերից օգտվելու, պահելու, բացահայտման ընթացակարգերն ու թարմացման գործընթացները պետք է համապատասխանեն տվյալների պաշտպանության վերաբերյալ օրենսդրությանը:

8. Կենտրոնը զբաղեցնող բոլոր անձինք պետք է անցնեն բժշկական հետազոտություն (դա պետք է ներառի ինքնավստահան/ինքնասպանության վարքագծի ռիսկի վերլուծություն) ընդունումից հետո երկու ժամվա ընթացքում: Ստուգումը պետք է իրականացվի պատշաճ կերպով որակավորված բժշկական անձնակազմի կողմից՝ առանձին, բժշկական կենտրոնում: Կանանց պետք է հետազոտեն առողջապահության կին մասնագետները, կամ եթե դա հնարավոր չէ, առողջապահության կին աշխատող կամ համայնքի/սոցիալական աշխատող պետք է ներկա լինի կացարանը զբաղեցնող կանանց բժշկական հետազոտության ընթացքում: Բժշկական անձնակազմի կողմից պետք է վարվի բժշկական գործ՝ թե՛ էլեկտրոնային, և թե՛ թղթային տարբերակով: Գործերը պետք է անվտանգ պահվեն բժշկական կենտրոնում, կացարանում բնակվող անձանց գործերից առանձին, որոնցից պետք է կարողանա օգտվել միայն բժշկական կենտրոնի անձնակազմը: Բժշկական էլեկտրոնային գրառումներից օգտվելու ու պահելու ընթացակարգերը պետք է համապատասխանեն տվյալների պաշտպանության վերաբերյալ օրենսդրությանը: Եթե ժամանելիս կացարան ընդունվող անձանց բժիշկ չի հետազոտում, ապա նրանք պետք է ֆիզիկական և հոգեկան վիճակի հետազոտություն անցնեն կենտրոնի բժշկի կողմից՝ այդ անձանց ընդունելուց հետո 24 ժամվա ընթացքում: Տեղափոխման, ազատման դեպքում, կամ երբ անհրաժեշտ է համարվում, կացարանը զբաղեցնող անձին պետք է հասանելի լինեն իր բժշկական գործերը: Կատարյալ տարբերակն այն կլինի, որ բնօրինակ գործին կից ներկայացված լինի միգրանտին հասկանալի լեզվով ամփոփ նկարագիր: Իր բժշկական գործի պատճենումն ու տարածումը պետք է իրականացվի միմիայն տվյալ անձի նախնական համաձայնությամբ, ինչպես նաև տվյալ պահին բնակության (կացության) երկրի՝ տվյալների պաշտպանության վերաբերյալ ազգային օրենսդրության համաձայն:
9. Հերթափոխի պետք է պետք է ամեն օր այցելի (ժամերը պետք է հստակ սահմանվեն) ընդունարան՝ վերահսկելու աշխատանքն ու համոզվի, որ ամեն ինչ կարգուկանոնի մեջ է: Այցելությունները պետք է նշվեն ըստ ամսաթվի ու ժամի՝ այն նկատառումների հետ մեկտեղ, որ ծառայողը կարող է ունենալ:
10. Կացարանում բնակվող անձին պետք է տրամադրվի տեղեկատվության փաթեթ, որտեղ պետք է նշված լինեն տվյալներ կենտրոնում կյանքի մասին, ինչպես նաև դրանում պետք է ներառված լինի տեղանքի քարտեզ, որտեղ նշված կլինի բժշկական

կետը, պաշտամունքի վայրը, սպորտային դահլիճը, գրադարանը, լվացքատունը և այլն: Նրանց պետք է տրամադրվեն նաև կացարանում վարքագծի կանոններ, ինչպես նաև գրավոր ծանուցումներ իրենց հասկանալի լեզվով՝ իրավաբանական օգնության ու ներգաղթային գործերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու իրավունքի վերաբերյալ: Պետք է նախատեսվեն հետևյալ հարցերը՝

- բողոքներ ներկայացնելու ընթացակարգի համակարգ,
 - ծառայություններ ու ծրագրեր,
 - բժշկական օգնություն,
 - իրավաբանական խորհրդատվության հասանելիություն,
 - իրավաբանական գրականություն ու իրավական նյութեր,
 - նամակագրություն ու այլ նյութեր,
 - անձնակազմի ու կացարանում բնակվողի միջև հաղորդակցություն:
11. Կախված ժամանման ժամից, և վերջին անգամ ճաշելու հանգամանքից՝ կացարանը զբաղեցնող անձին պետք է առաջարկեն տաք ուտելիք ու ըմպելիք կամ սառը թեթև ուտեստներ:
12. Կացարանում բնակվողներին պետք է տրամադրել հիգիենայի պարագաներ, իրենց հիմնական կարիքները հոգալու համար, և դա պետք է ներառի՝
- սանր և մազերի խոզանակ,
 - ատամի խոզանակ ու մածուկ,
 - օճառ,
 - հոտազերծիչ,
 - շամպուն,
 - ածելի (տղամարդկանց համար),
 - զուգարան (կանանց համար):
13. Կացարանում բնակվողներին պետք է հնարավորություն տրվի լվացվելու կամ ցնցուղ ընդունելու ընդունման միավորում: Երբ նրանց արտաքին տեսքից այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ հիգիենայի հետ կապված խնդիր կարող է առաջանալ, նրանք պետք է ցնցուղ ընդունեն ու փոխեն իրենց հագուստը:
14. Եթե կացարան ընդունվողը հարմար հագուստ չունի, նրանց պետք է տրամադրել հագուստ՝ կենտրոնի կողմից սահմանված՝ հագուստի մասով ամրագրված չափանիշներին համապատասխան: Կոնկրետ սեզոնին համապատասխան առնվազն երեք ներքնաշորի ու արտաքին հագուստի փոփոխություններ պետք է լինեն:
15. Կացարանում բնակվողներին պետք է տրամադրվեն անկողնու սպիտակեղեն ու սրբիչներ:
16. Ընդունման ժամանակ խուզարկությունը պետք է իրականացվի ՄՊԾ-ի ստանդարտ ընթացակարգերին համապատասխան, սակայն ընդհանուր առմամբ կներառի՝
- մետաղափնտրիչ սարքով ստուգում,
 - մանրակրկիտ անձնական խուզարկություն,
 - կացարանում բնակվողի հագուստի խուզարկություն,
 - կենտրոնի սահմաններում թույլատրվող՝ ցանկացած ուղեբեռի կամ անձնական իրի խուզարկություն:

Խուզարկություն՝ հագուստն ամբողջությամբ հանելով, պետք է միայն իրականացվի, երբ իրական կասկած կա, որ թաքցվում են արգելված իրեր, այդ թվում՝ զենքեր, դեղեր կամ

այլ անօրինական իրեր. այդ դեպքում, պետք է ստանալ ավագ ծառայողի թույլտվությունը՝ խուզարկությունն անցկացնելու համար: Խուզարկությունը պետք է իրականացվի այնպիսի վայրում, որտեղ մասնավորության հնարավորություն է ապահովվում կացարանում բնակվող մյուս անձանցից և խուզարկությունում չընդգրկված անձնակազմից: Այն պետք է իրականացվի նույնի սեռի՝ անձնակազմի անդամի կողմից, ինչ կացարանում բնակվող անձն է: Պետք է վարել գրավոր արձանագրություն, որը կներառի՝

- կացարանում բնակվող անձի անունն ու ծննդյան ամսաթիվը,
- խուզարկություն իրականացնող անձի անունը,
- թույլտվություն տրամադրող անձի անունը,
- խուզարկության ժամն ու ամսաթիվը,
- խուզարկության պատճառը:

17. Կացարանում բնակվող անձանց պետք է թույլատրել օգտվել հեռախոսից կացարան ժամանելուց հետո 12 ժամվա ընթացքում:
18. Առանձին հարմարություններ պետք է ստեղծվեն երեխաներով ընտանիքներին ընդունելու համար, ինչպես նաև ընդունման ժամանակ պետք է նախատեսված լինի երեխաների համար խաղալիքներով, գրքերով ու հարմար ժամանակ անցկացնելու համար վայրեր:
19. Ընդունման վայրերը պետք է լինեն հյուրընկալ և պետք է ունենան կացարանում բնակվող անձանց կարիքներին համապատասխան հարմարություններ: Այդտեղ պետք է լինեն երկու ցնցուղարաններ, տղամարդկանց ու կանանց համար նախատեսված երկու զուգարան, մեկը՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելիությամբ:
20. Կենտրոնում պետք է առկա լինի ընդունման քաղաքականություն, որում մանրամասն կնշվեն այն եղանակները, թե ինչպիսի վերաբերմունք պետք է դրսևորել կացարանում բնակվողների նկատմամբ, և թե ինչպիսի վարքագիծ պետք է անձնակազմի անդամները դրսևորեն ընդունման գործընթացներն իրականացնելիս: Քաղաքականության ոգին ու տառը չպահպանելը կհամարվի կարգապահության խախտում:
21. Կացարանում բնակվողներին պետք է թույլատրել իրենց անձնական պարագաներն ու հագուստը պահել իրենց մոտ կենտրոնում՝ պայմանով, որ դրանք վտանգ չեն ներկայացնում անվտանգությանն ու ապահովությանը, և դրանք հնարավոր է համապատասխան կերպով տեղավորել սենյակներում տեղադրված՝ նրանց հատկացված անձնական պահման վայրերում: Ցանկացած արգելված իր կամ սեփականություն, որը գերազանցում է անձնական պահման տարողությունը, պետք է անվտանգ կերպով պահպանվի կենտրոնական պահման վայրում ընդունման վայրում: Անձնական բոլոր իրերը պետք է ցուցակագրվեն ու կնքվեն կացարանում բնակվողների ներկայությամբ, իսկ այդ փաստաթուղթը պետք է ստորագրեն կացարանում բնակվող համապատասխան անձն ու ցուցակագրող ծառայողը: Խնդրանքի դեպքում, կացարանում բնակվողներին պետք է խելամտության սահմաններում հնարավորություն տրվի օգտվելու կենտրոնացված եղանակով պահվող անձնական իրերից: Կարևոր փաստաթղթերը, թանկարժեք իրերն ու փողը պետք է պահվեն ընդունարանում՝ անձնական կողպվող պահարաններում: Կարևոր փաստաթղթերի, այդ թվում՝ անձը հաստատող փաստաթղթերի պատճենը, պետք է ներառվի անձնական գործերում:

ԱՐՁԱԿՈՒՄԸ

22. Կենտրոնում պետք է գործեն ընթացակարգեր՝ ապահովելու համար, որպեսզի ձերբակալման այլ վայր կամ ձերբակալման վայրից դուրս տեղափոխվող՝ կացարանում բնակվող անձինք արձակման համար պատրաստ լինեն ճիշտ ժամին:
23. Անձնակազմը պետք է հաստատի անձանց ինքնությունը՝ արձակման նպատակով: Դրանք պետք է ներառեն կացարանում բնակվող անձանց անձնական գործերի ստուգումը, այդ թվում՝ լուսանկարները, ծննդյան ամսաթվերը, ֆիզիկական չափսերը և առանձնահատկությունները: Արձակումը վերահսկող ծառայողը պետք է արձանագրի կացարանում բնակվողի անձնական գործը այնպես, կարծես այդ ստուգումները իրականացվել են:
24. Կացարանում բնակվողների անձնական գույքը, կանխիկ գումարը, թանկարժեք իրերը և նշանակված բոլոր դեղերը պետք է հանձնվեն կացարանում բնակվողի կամ կենտրոնի անձնակազմի տնօրինմանը:
25. Կենտրոնը պետք է խնդրի կացարանում բնակվողներին ստորագրելու իրենց անձնական իրերի ստացական, իսկ կենտրոնի տնօրինման ներքո գտնվելու դեպքում, պատասխանատու ծառայողը պետք է գրառում կատարի դրա վերաբերյալ, այդ թվում՝ այն պատճառների մասին, թե ինչու են կացարանում բնակվողները հրաժարվում ստորագրել ստացականը: Անձնական իրերը տրամադրող ծառայողը պետք է ապահովի, որպեսզի անձնակազմի երկրորդ անդամը հաստատի գործողությունը և ստորագրի դրա վերաբերյալ արձանագրությունը:
26. Եթե կացարանում բնակվողները իրենց անձնական հարմար հագուստը չունեն արձակման կամ հեռացման ժամանակ, Կենտրոնը պետք է նրանց տրամադրի հագուստ ու կոշիկ՝ հաշվի առնելով կացարանում բնակվողի վերջնական նպատակակետը:
27. Կենտրոնի տնօրենը կամ հերթափոխի պետը պետք է ամեն օր այցելի (այցելության ժամերը պետք է հստակ սահմանված լինեն) արձակման համար նախատեսված վայր՝ աշխատանքը վերահսկելու ու հանդգնելու, որ ամեն ինչ կարգուկանոնի մեջ է: Այդ այցելությունները պետք է նշվեն այն նկատառումների հետ մեկտեղ, որ ծառայողը կարող է ունենալ:
28. Ձերբակալման վերաբերյալ գրառումները պետք է փոխանցվեն նրանց հետ՝ կենտրոնների միջև, և պահպանվեն, երբ նրանք ձերբակալման վայրից արձակվեն: Եթե նրանք տեղափոխվում են կամ հեռացվում, արձակման վերաբերյալ գրավոր որոշումը փոխանցվում է ուղեկցողներին: Եթե նրանք արձակվում են, ապա արձակման վերաբերյալ որոշումը պետք է պահպանվի կացարանում բնակվողի անձնական գործում:
29. Հեռացման հրահանգներին հետևող ծառայողները պետք է համոզվեն, որ կացարանում բնակվողը հասկացել է փաստաթղթերում արտացոլված տվյալները (օրինակ՝ նրանց հեռացման ամսաթիվը և թռիչքի մանրամասները, այդ թվում՝ նպատակակետը): Պետք է օգտվել բանավոր թարգմանչի ծառայություններից, եթե կասկածներ կան, որ կացարանում բնակվողը չի հասկացել դրանք: Կացարանում բնակվողներին, հնարավորության դեպքում, պետք է թույլատրվի օգտվել հեռախոսային ծառայություններից, իրավական ներկայացուցիչներից ցուցումներ ստանալու ու նրանց հետ շարունակական կապի մեջ լինելու համար: Կացարանում բնակվողներին, որոնք ենթակա են տեղափոխման, պետք է տրամադրվեն այն հաստատության անվանումը, հասցեն և հեռախոսահամարը, որ նրանց տեղափոխում են:
30. Ձերբակալման հարցերով զբաղվող ՄՊԾ կենտրոնական մարմինը պետք է տեղեկացվի, թե երբ են արձակման գործընթացներն իրականացվում:

3. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Պետք է գործեն հստակ մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան կացարանում բնակվողներին գնելու ապրանքներ թե՛ Կենտրոնում գտնվող խանութից, և՛ դրսից պատվիրելու միջոցով: Առկա ապրանքները պետք է համապատասխանեն կացարանում բնակվողների տարիքին, սեռին ու մշակութային պահանջմունքներին:

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Կացարան ընդունվողների կանխիկ գումարը պետք է ստուգվի և գրանցվի Նրանց ժամանման պահին: Նրանք պետք է համաձայնություն տան գրանցված արձանագրությանը և հաստատեն այն:
2. Պետք է վարվի թարմացվող ու ճշգրիտ գրառումներ կացարանում բնակվողների կանխիկի, այդ գումարից մասհանումների ու ի պահ հանձնելու մասով: Կացարանում բնակվողները պետք է համաձայնեն ու ստորագրելով հաստատեն յուրաքանչյուր գործարք:
3. Կանխիկ գումարից բոլոր մասհանումների կամ ի պահ հանձնման վերաբերյալ պետք է ստացական տրվի: Եթե կացարանում բնակվողը հրաժարվում է գումարի ի պահ հանձնման կամ մասհանման ստացական ստորագրել, ապա այդ փաստը պետք է արձանագրվի պատճառների հետ մեկտեղ: Համապատասխան ծառայողը պետք է ապահովի, որպեսզի անձնակազմի երկրորդ անդամը հաստատի գործողությունը և ստորագրի դրա վերաբերյալ արձանագրությունը:
4. Կացարանում բնակվողների համար պետք է մեխանիզմներ սահմանվեն՝ կամ օգտվելու կենտրոնում գտնվող խանութից, կամ ստանալու գնված ապրանքն այլ եղանակներով, ինչպիսիք են՝ փոստային պատվերը կամ առցանց եղանակը, կամ հարազատների/ընկերների միջոցով: Արտաքին աղբյուրներից գնված ապրանքները, ստանալուն պես, պետք է ստուգվեն անվտանգության աշխատակիցների կողմից: ՄՊԾ-ի կողմից պետք է կայացվի քաղաքականության վերաբերյալ որոշում, թե ինչպես պետք է կառավարվեն ապրանքների համար վճարումները: Առաջարկվող տարբերակներն են՝
 - Կացարանում բնակվողներին պետք է թույլատրել իրենց մոտ պահել անձնական գումար՝ հստակ սահմանաչափով. սահմանաչափը գերազանցող ցանկացած գումար պետք է ի պահ հանձնվի ընդունարանում և տրամադրվի կոնկրետ սահմանաչափով՝ ըստ պահանջի.
 - ամբողջ կանխիկ գումարը պետք է ի պահ հանձնվի ընդունարանում և տրամադրվի միմիայն կոնկրետ գնումների համար.
 - կենտրոնում խանութի առկայության դեպքում, ամբողջ կանխիկ գումարը պետք է պահպանվի ընդունարանում, իսկ գնումների ծախսերը նվազեցվեն այդ գումարից կամ էլեկտրոնային եղանակով կամ գրավոր ապրանքագրի միջոցով՝ կացարանում բնակվող նույնականացման քարտը ներկայացնելով:
5. Խանութում պետք է առկա լինեն հիգիենայի պարագաներ, ծխախոտային արտադրանք, հեռախոսային քարտեր, ուտեստներ, ըմպելիքներ, գրենական պիտույքներ և նամականիշեր:

6. Եթե խանութը շահագործվում է պայմանագրային հիմունքներով, ապա կենտրոնի տնօրենը պետք է հաստատի ապրանքների արժեքները:
7. Ապրանքների հստակ արժեքները պետք է ցուցադրված լինեն՝ ի գիտություն կացարանում բնակվողների:
8. Կացարանում բնակվողներին պետք է տեղեկացնել, որ նրանք կարող են գնման համար ապրանքներ առաջարկել:
9. Խանութում իրականացված վաճառքից ստացված շահույթը, հանած պայմանագրային վճարները, պետք է օգտագործվեն ի նպաստ կացարանում բնակվողների: Ստուգման ենթակա հաշիվներ պետք է պահվեն ու ուսումնասիրվեն առնվազն եռամսյակային կտրվածքով՝ տնօրենի կողմից նշանակված երկու ծառայողի կողմից: Տեղում ստուգումները պետք է իրականացվեն ամեն ամիս:
10. Կենտրոնում կատարվող ծախսերի համար արտարժույթը շուկայական գներով հայկական դրամի փոխարկելու ծառայություն պետք է լինի, որի համար որևէ գանձում չպետք է կատարվի կացարանում բնակվողներից:
11. Կացարանում բնակվողները պետք է կարողանան գնել միջազգային հեռախոսային քարտեր՝ կենտրոնում օգտագործելու համար:



4. ԳՈՐԾԵՐԻ ԴԻՏԱՆՑՈՒՄՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՄԱՍՈՎ ԱՌԱՋԸՆԹԱՅԸ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Պետք է ապահովել, որպեսզի գործերը պարբերաբար վերանայվեն ու դրանց մասով առաջընթաց ապահովվի: Կացարանում բնակվողներին իրազեկել իրենց գործերի մասով առաջընթացի և ձերբակալման առնչությամբ վերանայումների արդյունքների վերաբերյալ: Վերանայումները, գործողություններն ու հարցազրույցները պետք է գրանցվեն:

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Կենտրոնում նախնական ձերբակալման ժամանակ, կացարանում բոլոր ընդունվողներին պետք է տրամադրվեն իրենց հասկանալի լեզվով՝ իրենց ձերբակալման վերաբերյալ գրավոր պատճառները, իսկ դրանից հետո պետք է ներկայացվի ձերբակալման առնչությամբ փաստաթուղթ շաբաթական կտրվածքով: Երկար ժամանակով պահելու դեպքում, այդ փաստաթղթերը կարող են երկարաձգվել ամսական կտրվածքով ներկայացումների:
2. Պարբերական ընդունելություններ պետք է կազմակերպվեն կոնկրետ գործերով զբաղվող ՄՊԾ-ի աշխատակիցների կողմից՝ կացարանում բնակվողներին տրամադրելու թարմացված տեղեկություններ իրենց վերաբերվող համապատասխան գործերի առաջընթացի վերաբերյալ: Ընդունելության ժամերից դուրս՝ կացարանում բնակվողները կարող են դիմել՝ անձնակազմի անդամին կամ այն աշխատակցին, որը ծանոթ է իր գործին կամ կարող է տեղեկությունների ստանալ դրա վերաբերյալ, և նրանց պետք է այցելեն 24 ժամվա ընթացքում:
3. Կացարանում այն բնակվողները, որոնք իրենց գործերի վերանայման վերաբերյալ շաբաթական կամ ամսական կտրվածքով փաստաթղթեր պետք է ստանան, պետք է գրանցվեն ՄՊԾ-ի աշխատակիցների կողմից, իսկ նրանց վերաբերյալ գործերը պետք է ուսումնասիրվեն առնվազն ամեն օր՝ ապահովելու համար, որպեսզի այդ փաստաթղթերի մասով բացթողումներ չլինեն, հատկապես երբ ձերբակալման ժամկետը երկարաձգվելու թույլտվություն է պահանջվում դատարանից:
4. Գործող օրենսդրության համաձայն՝ կենտրոնում գործող ՄՊԾ-ի աշխատակիցները պետք է գրանցեն գործերի վերանայման վերաբերյալ վերաբերյալ ամսական կտրվածքով փաստաթղթերի ստացումը, եթե դրանք չեն կատարվում տեղում իրենց գործերով զբաղվող աշխատակիցների կողմից, և պետք է ապահովեն, որպեսզի ստացման օրը դրանք փոխանցվեն կացարանում բնակվողներին: Դրա վերաբերյալ գրառումներ պետք է պահվեն, իսկ պատճենը կցվի կացարանում բնակվողի անձնական գործին: Ձերբակալման պատճառներն ու պարբերական վերանայումները ներկայացնելու համար օրենսդրությամբ պատասխանատու մարմինը Արդարադատության նախարարությունն է, որը պատասխանատու է 48 ժամից ավելի և մինչև 90 օր ժամկետով պահելու համար (պահելու առավելագույն ժամկետ):
5. Եթե տեղանքից դուրս իրականացված՝ ձերբակալման մասով վերանայումները ժամանակին չեն ստացվում, ապա կենտրոնում գործող ՄՊԾ-ի աշխատակիցները պետք է անհապաղ քայլեր ձեռնարկեն՝ դրանք վերցնելու և կացարանում բնակվողներին տեղեկացնելու, որ այդ վերանայումները իրականացվել են: Դրա վերաբերյալ գրառումներ պետք է պահվեն, իսկ պատճենը կցվի անձնական գործին:
6. Երբ այդ մասին խնդրանքը ներկայացվում է կացարանում բնակվողների կողմից,

ապա կենտրոնում գործող ՄՊԾ-ի աշխատակիցները պետք է հարցումներ կատարեն կացարանում բնակվողների գործերի վերաբերյալ ու տեղեկացնեն նրանց արդյունքների մասին: Կացարանում բնակվողների գործերում գրանցվում են այդպիսի հարցումների մանրամասները, ՄՊԾ-ի կողմից ձեռնարկված գործողությունները, և թե երբ է պահանջվող տեղեկատվությունը հասցեագրվել կացարանում բնակվողին: Հարցազրույցների տղազրույթունների պատճենները պետք է կցվեն կացարանում բնակվողների անձնական գործին:

7. ՄՊԾ-ն պետք է արձագանքի տեղեկատվության վերաբերյալ հարցումներին՝ կացարանում բնակվողի կողմից այն ներկայացնելուց հետո 24 ժամվա ընթացքում: Տեղեկատվություն գտնելու հարցում ուշացումների դեպքում, կացարանում բնակվողները պետք է տեղեկացվեն այդպիսի ուշացումների մասին հարցումը ներկայացնելուց հետո 24 ժամվա ընթացքում: Դրա վերաբերյալ գրառումներ պետք է պահվեն և նշվեն անձնական գործում:
8. Եթե կացարանում բնակվողների մտավոր կամ ֆիզիկական վիճակին կամ նախկինում անհայտ՝ նրանց գործերի հանգամանքներին վերաբերող տեղեկատվությունը փոխանցվում է կենտրոնում անձնակազմի անդամներին, ապա այդ տեղեկատվությունը պետք է փոխանցվի կոնկրետ գործով զբաղվող աշխատակցին՝ նպատակ ունենալով ապահովել, որպեսզի ձերբակալման մասով այդ վերանայումն իրականացվի այդ տեղեկատվության լույսի ներքո: Դրա վերաբերյալ գրառումներ պետք է պահվեն, իսկ պատճենը կցվի անձնական գործին:
9. Կացարանում բնակվողների՝ 48 ժամից ավելի կենտրոնում գտնվելուց հետո ՄՊԾ ծառայողները պետք է անցկացնեն ծանոթանալու հարցազրույցներ՝ համոզվելու համար, որ նրանք նորմալ տեղավորվել են ու չփարատված մտահոգություններ չունեն իրենց իրավիճակի վերաբերյալ: Ծառայողները պետք է ապահովեն, որպեսզի նրանք իմանան օրենքով սահմանված իրենց իրավունքները, այդ թվում՝ իրավաբանական օգնության հասանելիությունը, գործի վերաբերյալ տեղեկատվությունը և ձերբակալման մասով վերանայումները: Հարցազրույցի գրառումները պետք է պահվեն և կցվեն անձնական գործերին:



5. ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Անհրաժեշտ է նախատեսել բազմազան ճաշացանկեր՝ առողջարար, բալանսավորված սննդակարգ ապահովելու համար՝ միևնույն ժամանակ պահպանելով կրոնական, մշակութային և բժշկական պահանջներն ու սննդի անվտանգության ու հիգիենայի վերաբերյալ օրենսդրությունը: Մսնդի կազմակերպման տարածքները պետք է համապատասխանեն սննդի կազմակերպման առևտրային տարածքների մասով անվտանգության վերաբերյալ օրենսդրությանը:

1. Մսնդի հիգիենայի վերաբերյալ վերապատրաստումը պետք է հասցեագրվի բոլոր նրանց, ովքեր ներգրավված են սննդի նախապատրաստման, տաք ուտեստի պատրաստման և սննդի մատուցման աշխատանքներում: Պետք է աշխատանքի ընդունել մասնագիտական որակավորում ունեցող սննդի կազմակերպման հարցերով մենեջերի:
2. Խոհանոցը պետք է կահավորված լինի առևտրային նպատակներով օգտագործվող սարքավորումներով, ինչպիսիք են՝ սառնարանները, վառարանները, սննդի մատուցման տաք և սառը կոնտեյներները, միկրոալիքային վառարանները, սնունդը կտրատելու սարքերը, աշխատանքային տարածքները և այլն: Սարքավորումները պետք է պարբերաբար ստուգվեն՝ տեխնիկական փորձագետների հետ մեկտեղ սննդի կազմակերպման մենեջերի կողմից մշակված շահագործման ժամանակացույցին համապատասխան: Ստուգումները պետք է գրանցվեն: Պետք է պահպանվի էլեկտրականության մասին գազով կամ պինդ վառելիքով աշխատող սարքավորումների մասով անվտանգության վերաբերյալ օրենսդրությունը: Դա իր մեջ պետք է, օրինակ, ներառի՝
 - հատակից կամ աշխատանքային մակերեսից յոթ ոտնաչափ բարձրությամբ շոգեուղիները պետք է մեկուսացվեն կամ պատվեն հրակայուն նյութով: Անհասանելի շոգեուղիների պատման անհրաժեշտություն չկա:
 - հատակից կամ աշխատանքային մակերեսից յոթ ոտնաչափ հեռավորության վրա գտնվող օդափոխիչները պետք է ունենան պտտաթևի պաշտպանիչի բացման տեղեր:
 - միս կտրելու սղոցները, կտրատելու սարքերն ու աղացները պետք է ապահովված լինեն ավտոմատ ինքնամիացումը կանխող սարքավորումներով:
 - տապակման սարքերի, ջեռոցների (ֆրիտյուրնիցա) և բաց կրակով աշխատող օդաքաշիչ սարքերի վերևում՝ օդաքաշիչ սարքերի մոտ պետք է տեղադրվի ֆիքսված հակահրդեհային համակարգ:
 - բոլոր ջեռոցներն ու տապակման սարքերը պետք է ապահովված լինեն վառելիքն ու էներգիան դադարեցնող ինքնաշխատ հսկողության համակարգով:
3. Մսնդի մատակարարումը (այդ թվում՝ առաքումների մոնիթորինգը) և պահման մեխանիզմները պետք է համապատասխանեն սննդի անվտանգության վերաբերյալ համապատասխան օրենսդրությանը: Որպես համառոտ ուղեցույց առաքման մասով՝
 - համեմատել առաքումը պատվերի հետ՝ առաքումն իրականացնողի ներկայությամբ,
 - ստուգել առաքումը՝ վնասման, աղտոտման ու վնասատուներից վարակվածության մասով, անհապաղ հեռացնել սննդի վնասված տակդիրներն ու կոտրված կոնտեյներները,
 - առանձնացնել սննդի վնասված կոնտեյներները մյուս սննդից և պահել առան-

ձին՝ հեռացման նպատակով, հատուկ զգուշավորություն ցուցաբերել այլուրին, հացահատիկային մշակաբույսերին, ընկուզեղենին, շաքարավազին, շոկոլադին և աղտոտման ազդեցության ենթարկվող նմատատիպ այլ ապրանքներին առնչվելիս,

- եթե կենտրոն առաքվող սննդամթերքն աղտոտված է, ապա պետք է հրաժարվել ամբողջ խմբաքանակից,
 - ամբողջ սնունդը պահել առնվազն վեց մատնաչափ հատակից բարձր և պատերից բավականաչափ հեռու՝ վնասատուների դեմ հսկողության միջոցների կիրառումը դյուրացնելու համար,
 - փչացող ապրանքները պահել 35-40 ֆարենհայտ ջերմաստիճանի պայմաններում՝ փչացումն ու այլ մանրէների ազդեցությունը կանխարգելելու համար, իսկ սառեցված սնունդը պահել զրո աստիճանում կամ դրանից ցածր պայմաններում,
 - կանխարգելել խաչաձև աղտոտումը՝ առանձին պահելով լվանալու ու եփելու ենթակա սնունդն ու լվանալու ու եփելու սնունդը:
4. Ապահովել, որպեսզի սննդի արտադրությունը, գործընթացներն ու գործելակերպերը համապատասխանեն սննդի անվտանգության ու ապահովության վերաբերյալ օրենսդրությանը. օրինակ՝ հետևյալ ուղեցույցով սահմանվում են եփման ջերմաստիճանները հետևյալի համար՝
- հում ձու, ձուկ, միս ու դրանց բաղադրությամբ սնունդ՝ 63 C աստիճան կամ բարձր,
 - անմիջական սպառման ոչ ենթակա որսի միս, աղացած ձուկ ու միս, մարինացված միս ու ձվեր՝ 68 C աստիճան կամ բարձր,
 - ձուկ, միս կամ թռչնի միս պարունակող սնունդ՝ 75 C աստիճան կամ բարձր,
 - տապակած տավարի միս և աղը դրած տավարի միս՝ 75 C աստիճան կամ բարձր,
 - այն սնունդը, որը եփվել և այնուհետ սառեցվել է, պետք է արագ ու ամբողջությամբ կրկին տաքացվի՝ նվազագույնը 75 C աստիճանում՝ նախքան մատուցելը:
5. Քննարկել սննդի կազմակերպման հետ կապված հարցերը պարբերական հանդիպումների միջոցով (առնվազն եռամսյակային կտրվածքով) կացարանում բնակվողների ներկայացուցիչների հետ և դիմելով նրանց՝ մեկնաբանություններ ու առաջարկություններ ստանալու խնդրանքով:
6. Սննդի կազմակերպման հարցերով մենեջերը պետք է սերտորեն կապ հաստատի կրոնական հարցերի համար պատասխանատուի հետ՝ ապահովելու բնակարանում բնակվող ամենօրյա սննդակարգի մասով կարիքները, հատկապես կրոնական ծիսակատարությունների հետ կապված հատուկ իրադարձությունների ժամանակ, բավարարելու համար: Բացի դրանից՝ պետք է հաշվի առնել սննդի պատրաստման առնչվող կրոնական ու մշակութային պահանջները ու հնարավորության սահմաններում բավարարել դրանք: Եթե այդ պահանջները հնարավոր չէ բավարարել, կացարանում համապատասխան բնակվողները պետք է տեղեկացվեն, ու այլընտրանքային մեխանիզմների շուրջ պետք է համաձայնություն ձեռք բերվի, օրինակ՝ իրենց կողմից սննդի պատրաստումը կամ դրսից այն ձեռք բերելը:
7. Առողջության նկատառումներից ելնելով՝ պետք է բավարարվեն սննդակարգի հատուկ կարիքները: Այն կարող է ներառել՝
- ինսուլինից կախվածությամբ շաքարախտը,
 - հղիության, քաղցկեղի, ՁԻԱՀ-ի և այլնի համար սպիտակուցի կամ

կալորիաների ավելացման անհրաժեշտությունը,

- սննդի հետ նշանակված դեղորայք ընդունելու անհրաժեշտությունը,
- սննդի որոշ տեսակներից ավերգիան:

Հատուկ սննդակարգի կարիք ունեցող՝ կացարանում բնակվողները պետք է լրացնեն այդ պահանջներն արտացոլող ձևաթուղթ: Հատուկ պահանջների մասին գրառումը պետք է պահվի սննդի կազմակերպման տարածքում, իսկ կացարանում բնակվողները պետք է ցույց տան այդ ձևաթուղթը սննդի կազմակերպման աշխատակիցներին յուրաքանչյուր ճաշից առաջ:

8. Կացարանում յուրաքանչյուր բնակվողին պետք է ամեն օր տրամադրվի սննդարար, բազմազան ու լավ որակի երեք ճաշ, որոնցից առնվազն մեկը պետք է լինի տաք:
9. Ամեն օր պետք է առաջարկվի մեծ ընտրության հնարավորություն տվող ճաշացանկ՝ հիմնական ճաշի մաս կազմող առնվազն երկու հիմնական կերակրատեսակով: Ճաշացանկը պետք է կազմել որակավորված բժիշկ դիետոլոգների հետ: Ճաշացանկում ուտեստների կողքը կարող են տեղադրված լինել լուսանկարներ՝ թարգմանության դժվարություններից խուսափելու համար: Ճաշացանկը պետք է փոփոխվի ամիսը մեկ անգամ:
10. Եթե կենտրոնում բնակվում են երեխաներ, ապա պետք է նախատեսել նաև երեխաների ճաշացանկ:
11. Ամեն օր պետք է նախատեսել նաև բուսակերների համար նախատեսված ուտեստներ:
12. Ճաշերի միջև ընդմիջումը պետք է լինի առավելագույն 5.5 և նվազագույնը 4.5 ժամ: Երեկոյան ճաշի և հաջորդ օրվա նախաճաշի միջև տարբերությունը 14 ժամից ավելի չպետք է լինի:
13. Մեխանիզմներ պետք է նախատեսվեն ճաշի սահմանված ժամերից դուրս ճաշ մատուցելու համար՝ կենտրոն նոր ժամանածների կարիքները բավարարելու համար:
14. Եթե ճաշը չի տրամադրվում, երբ կացարանում բնակվողները տեղափոխվում են կամ հեռացվում կենտրոնից, ապա նրանց պետք է տրամադրել փաթեթավորված կերակուր, որտեղ էլ նրանք կստանան այդ կերակուրը:

6. ՀԱԳՈՒՍԱԸ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Պետք է առկա լինի հագուստի ու կոշիկների պահեստ՝ կացարանում այն բնակվողների կարիքները բավարարելու համար, որոնք չունեն բավարար հագուստ կամ կոշկեղեն իրենց հետ: Պարագաները պետք է լինեն պրակտիկ, մաքուր, կլիմային հարմար ու տարբեր չափսերով:

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Կացարանում բնակվողներին պետք է թույլատրվի կրել իրենց սեփական հագուստը՝ պայմանով, որ այն հարմար է, մաքուր, կոկիկ, դրանց վրա չկա պատկերված որևէ տարբերանշան կամ նշում, որը կարող է վիրավորական լինել մյուսների համար:
2. Կացարանում բնակվողներին պետք է տեղեկացնել, որ, եթե իրենք ցանկանում են, նրանք կարող են դիմել ընտանիքից կամ ընկերներից հագուստ ստանալու խնդրանքով, սակայն այդ վերը նշված պահանջները պետք է բավարարվեն: Կացարանում բնակվողները պետք է կարողանան արտաքին մատակարարներից հագուստ պատվիրել. այն կարող է ձեռք բերվել կամ խանութից կամ դրանք կարող են մատակարարվել աջակցող կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են՝ հասարակական կազմակերպությունները: Կենտրոն բերվող ամբողջ հագուստը պետք է հանձնվի անձնակազմի անդամներին և խուզարկվի՝ նախքան այն կացարանում բնակվողներին փոխանցելը:
3. Պետք է լինի նաև հագուստի պահեստ՝ կացարանում այն բնակվողների կարիքները բավարարելու համար, որոնց սեփական հագուստը կամ կոշկեղենը կրելու ենթակա չէ, և որոնք ի վիճակի չեն ձեռք բերել հագուստ և կոշկեղեն: Ներքնաշորերի դեպքում, հագուստը պետք է լինի նոր: Առնվազն ներքնաշորի ու արտաքին հագուստի երեք փոփոխություն պետք է լինի:
4. Տրամադրվող հագուստի ընտրությունը պետք է համապատասխանի տարվա եղանակին, իսկ երբ բնակարանում բնակվողին հեռացնում են Հայաստանից՝ նպատակակետ վայրի տարածքի եղանակին համապատասխան:
5. Հագուստն ու կոշկեղենը պետք է առկա լինեն՝ թույլ տալու կացարանում բնակվողներին մասնակցելու կոնկրետ միջոցառումներին, ինչպիսիք են՝ սպորտային միջոցառումները:
6. Հագուստն ընտրելիս պետք է հաշվի առնել կրոնական ու մշակութային պահանջ-մունքները:
7. Կենտրոնը պետք է ապահովի, որպեսզի կացարանում բնակվողների հագուստի վրացման հարմարություններ ապահովվեն, և այդ հարմարությունների մասին տեղեկատվությունը փակցված լինի: Կացարանում բնակվողները պետք է պատասխանատու լինեն իրենց անձնական հագուստը վանալու համար, և պետք է ազատորեն օգտվեն վազքի մեքենաներից, չորացնող սարքերից և (կամ) չորացնող հարմարություններից ու արդուկման սարքավորումներից: Նրանց պետք է տրամադրվի վազքի փոշի: Պետք է հստակ պատկերված լինեն սարքավորումների ու մեքենաների օգտագործման նկարագրող ցուցումներ:
8. Կենտրոնում պետք է ամեն շաբաթ ստուգումներ անցկացվեն՝ համոզվելու համար, որ վազքի մեքենաները, չորացնող սարքերը ու արդուկման սարքավորումները աշխատում են, իսկ եթե դրանք չեն աշխատում, ապա անհապաղ քայլեր ձեռնարկեն դրանք վերանորոգելու համար: Դրա վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն:

7. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Կացարանում բնակվողները պետք է կարողանան հաղորդակցվել իրենց ընտանիքի, ընկերների ու այլ անձանց հետ՝ առանց սահմանափակումների՝ բացառությամբ այն սահմանափակումների, որոնք անհրաժեշտ են անվտանգությունը, կարգուկանոնը և ապահովությունը երաշխավորելու համար:

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Նամակագրությունը

1. Կացարանում այն բնակվողներին, որոնք չեն կարող կրել գրենական պիտույքների կամ փոստի հետ կապված ծախսերը, պետք է տրամադրվեն՝ ընտանիքին (ընկերներին) նամակներ գրելու համար նախատեսված՝ խելամիտ քանակությամբ գրելու միջոցներ, որը կարող է սահմանվել որպես յուրաքանչյուր շաբաթվա համար ընդհանուր նամակագրության մինչև երեք կտոր: Դա պետք է սահմանափակվի միայն նամակներով, և չի վերաբերում ծանրոցներին ու փաթեթներին, եթե հաստատության տնօրենը բացառիկ հիմքերով դրա մասով թույլտվություն չի տալիս: Բացառիկ հիմքեր են համարվում այն դեպքերը, երբ կենտրոնի շահերից է բխում, որպեսզի, օրինակ, պահանջ կարիք ունեցող անձնական իրերի նվազեցնելը: Կացարանում բնակվողներին, որոնք կարող են իրենց թույլ տալ, պետք է հնարավորություն ընձեռվի կենտրոնից գնելու նամականիշեր:
2. Կացարանում բնակվողներին պետք է հասանելի լինեն գրենական պիտույքները (ներառյալ փոստային ծախսերը), ֆաքսը և լուսապատճենահանման հարմարությունները՝ իրենց գործին հետևելու համար, որի հետ կապված ծախսերը պետք է կրի ՄՊԾ-ն, եթե կացարանում բնակվողները չունեն անհրաժեշտ միջոցներ: Թույլատրվող հասցեատերերի օրինակներն են՝
 - Իրավական հարցերով խորհրդատուները,
 - դատավորները և դատարանները,
 - դեսպանություններն ու հյուպատոսական հիմնարկները,
 - պառլամենտի անդամները,
 - ներգաղթային ու միգրանտների բարեկեցության ոլորտում ներգրավված հասարակական կազմակերպությունները,
 - պետական մարմինները,
 - կենտրոնից դուրս աշխատող՝ առողջապահության ոլորտի ներկայացուցիչները,
 - բողոքներ ներկայացնելու համակարգերի ղեկավարները:Նամակագրության այս տեսակը չպետք է սահմանափակվի:
3. Կացարանում բնակվողներին պետք է տրամադրվի ֆաքսի համարներ, իսկ կենտրոն հասցեագրված ֆաքսերը պետք է փոխանցվեն հասցեատերերին 24 ժամվա ընթացքում ու, նախընտրելի է, նույն օրը: Եթե հաղորդագրությունը հրատապ է, ապա այն պետք է անհապաղ փոխանցվի:
4. Հաստատության սահմաններում կացարանում բնակվողներին պետք է տրամադրվի փոստարկղ կենտրոնից դուրս ուղարկվող փոստի համար, որը պետք է ուղարկվի օրական առնվազն մեկ անգամ՝ երկուշաբթիից մինչև շաբաթ: Ուղարկողի անունը պետք է հստակ նշված լինի ծրարի հետնամասին:

5. Կենտրոնից դուրս ուղարկվող ու կենտրոն հասցեագրված փոստը չպետք է բացել, կարդալ կամ կանգնեցնել՝ բացառությամբ բացառիկ դեպքերի, երբ ողջամիտ պատճառ կա կասկածելու, որ՝

- պարունակությունը կարող է վտանգել կենտրոնի անվտանգությունը,
- պարունակությունը կարող է վտանգել մյուս անձանց անվտանգությունը,
- այն քրեական (ահաբեկչական) բնույթի է,
- ուղարկողի ինքնությունը կասկած է հարուցում կամ չի կարող որոշվել,
- այն պարունակում է արգելված իրեր, ինչպիսիք են՝ անձը հաստատող փաստաթղթերը:

Նամակագրության գաղտնիությանը միջամտելու մասով ցանկացած միջոց կարելի է ձեռնարկել միայն բացառիկ դեպքերում, իսկ թույլտվությունը պետք է տրամադրի դատավորը, եթե առկա է հանցագործություն կատարելու վտանգ:

6. Եթե անհրաժեշտ է համարվում բացել կենտրոնից դուրս ուղարկվող կամ կենտրոն հասցեագրված փոստը (վերը՝ 5-րդ կետում նշված պատճառներով), ապա կացարանում բնակվող համապատասխան անձը պետք է տեղեկացվի փոստը բացելու պատճառների մասին, և նրան պետք է հնարավորություն տրվի ներկա գտնվելու փոստը բացելու պահին:

7. Ցանկացած դեպքի վերաբերյալ, երբ բացվում է նամակը և այն բացելու պատճառները, թե արդյոք կացարանում բնակվողը ներկա է եղել, և ինչ է հայտնաբերվել, պետք է վարել կենտրոնական գրանցամատյան (այսինքն՝ ոչ անձնական գործերում):

8. Կացարանում բնակվողների կողմից ստացված ծանրոցները պետք է բացվեն հենց իրենց կողմից՝ կենտրոնի անձնակազմի անդամների ներկայությամբ: Եթե հայտնաբերվում են իրեր, որոնք նրանք չեն կարող իրենց տնօրինման տակ պահել, ապա նրանք պետք է տեղեկացվեն դրա պատճառների մասին ու ծանուցվեն, որ դրանք պահվելու են իրենց իրերի հետ կենտրոնում: Կացարանում բնակվողներին պետք է տրամադրվի իրենց անձնական իրերի ստացական: Պետք է վարել կենտրոնական գրանցամատյան և կցել անձնական գործերին:

Հեռախոսային զանգերը

Վճարովի հեռախոսները

9. Պետք է տեղադրվեն բավարար քանակի վճարովի հեռախոսներ (առնվազն մեկ՝ կենտրոն հասցեագրված զանգերի համար և մեկ՝ կենտրոնից դուրս դուրս կատարվող զանգերի համար հեռախոսային գիծ կացարանում բնակվող յուրաքանչյուր 20 անձի համար): Հեռախոսային քարտերը պետք է հասանելի լինեն կացարանում բնակվող այն անձանց համար, որոնք ունեն դրանց համար վճարելու միջոցներ: Իսկ այն անձանց, որոնք դրա հնարավորությունը չունեն, պետք է տրամադրվեն նախապես որոշված շաբաթական սահմանաչափով քարտեր:
10. Կացարանում բնակվողներին վճարովի հեռախոսները պետք է հասանելի լինեն օրական 14 ժամ, այդ թվում՝ նորմալ ակտիվ ժամանակահատվածում:
11. Կացարանում բնակվողներին պետք է անհապաղ տեղեկացնեն, երբ նրանց հասցեագրված զանգ է ստացվում:
12. Կենտրոնը պետք է ապահովի, որպեսզի կենտրոն հասցեագրված զանգերի համար ծախսերը չկրի ՄՊԾ-ն կամ կացարանում բնակվողները:

Բջջային հեռախոսները

13. Համաձայն ՄՊԾ-ի քաղաքականության՝ կացարանում բնակվողներին կարող է թույլատրվել բջջային հեռախոս ունենալ իրենց տրամադրության տակ, եթե դա առանց գրառման հնարավորության է, ինչպես օրինակ՝ լուսանկարներ անելու, տեսագրում կատարելու, ուղիղ հեռարձակում ապահովելու կամ ձայնագրում իրականացնելու հնարավորությունները՝ համացանցին միացնելով:
14. Ռիսկի գնահատումից հետո բջջային հեռախոսի տրամադրումը կարող է արգելվել հետևյալ հանգամանքներում՝
 - խանգարող կամ սպառնացող վարքագիծը ապացույցն է այն բանի, որ կացարանում բնակվողը կարող է չարաշահել բջջային հեռախոսի օգտագործումը,
 - հանրության համար առկա են կոնկրետ վտանգներ,
 - ողջամիտ հիմքեր կան հավատալու, որ կացարանում բնակվողը կարող է բջջային հեռախոսն օգտագործել՝ իրենց կամ մեկ այլ անձի վնաս պատճառելու համար:
15. Եթե վերը նշված պայմաններով կացարանում բնակվողներին բջջային հեռախոսն արգելվում է, ապա անձնակազմի անդամները պետք է ապահովեն, որ այդ փաստը չխանգարի նրանց արդարադատության մատչելիության համար՝ նրանց համար ապահովելով իրավական ներկայացուցիչների հետ խոսելու կամ դատարանի հետ կապ հաստատելու այլընտրանքային միջոցներ, կամ իրենց ընտանիքի անդամներին կամ հարազատներին տեղեկացնել իրենց իրավիճակի մասին:¹¹³ Նրանց բջջային հեռախոսները պետք է ապահով պահվեն այն ժամանակահատվածում, երբ նրանց չի թույլատրվում դրանք իրենց մոտ պահել:
16. Եթե կացարանում բնակվողի անձնական բջջային հեռախոսը չի համապատասխանում սահմանափակումների մասով պահանջներին, կամ եթե կացարանում բնակվողը չունի բջջային հեռախոս, ապա կենտրոնը կարող է որոշում կայացնել՝ կացարանում բնակվողին տրամադրել բջջային հեռախոս, որը կհամապատասխանի սահմանափակումների մասով պահանջներին: Այս քաղաքականությունն ունի առավելություններ, քանի որ այն թույլ է տալիս հեշտությամբ կապ հաստատել կենտրոնի սահմաններում:
17. Կացարանում բնակվողներին SIM քարտ տրամադրելու պարտավորություն կենտրոնի նկատմամբ չպետք է սահմանվի:
18. Կացարանում բնակվողները պետք է կարողանան պահպանել իրենց SIM քարտը, եթե այն համատեղելի է կենտրոնի կողմից տրամադրված նոր բջջային հեռախոսի հետ: Եթե նրանք չունեն SIM քարտ, կամ նրանց SIM քարտը համատեղելի չէ, նրանք պետք է կարողանան ընտրել բջջային հեռախոսակապի ծառայություններ մատուցողին: Դրա հնարավորությունն ընձեռելու համար, մի շարք SIM քարտեր ու կանխավճարային ու լիցքավորվող քարտեր պետք է վաճառվեն կենտրոնի խանութում:
19. Կենտրոնի մենեջերները պետք է գրանցեն կացարանում բնակվողների տրամադրության տակ եղած բոլոր բջջային հեռախոսները, այդ թվում՝
 - կացարանում բնակվողի անունը,
 - SIM քարտի համարը,,

¹¹³ Այնպիսի գործողությունների վտանգից խուսափելու համար, որոնք կարող են հավասարազոր լինել կամ նմանեցվել բռնի անհետացումներին. առաջնային կարևորություն ունի այն հանգամանքը, որ ձերբակալված անձինք կարողանան պարբերաբար կապի մեջ լինել իրենց ընտանիքի անդամների ու հարազատների հետ:

- Սարքի միջազգային նույնականացման համարը,
- բջջային հեռախոսի համարը:

Այդ գրանցումները պետք է պահպանվեն կացարանում բնակվողների տրամադրության տակ եղած բոլոր բջջային հեռախոսների ու SIM քարտերի համար՝ անկախ այն հանգամանքից՝ դրանք ստացվել են ընդունարանում, փոստով, այցելությունից հետո, թե գնվել են խանութից:

20. Եթե կացարանում բնակվողը խուլ է կամ լսողության խնդիրներ ունի, որը նշանակում է, որ նա չի կարող օգտագործել հեռախոս, ապա անձնակազմի անդամները պետք է ապահովեն, որպեսզի դա չխանգարի նրանց արդարադատության մատչելիությունը՝ նրանց ապահովելով իրենց իրավական ներկայացուցիչների հետ հաղորդակցվելու կամ դատարանի հետ կապ հաստատելու այլընտրանքային հարմար եղանակներով:

Էլեկտրոնային փոստն ու ինտերնետը

21. Կարելի է համակարգիչներից օգտվելու հնարավորություն ընձեռել, սակայն բավարար երաշխիքներ պետք է լինեն՝ ապահովելու համար, որպեսզի այն կայքերը, որոնք արգելվածների ցանկում են, վերահսկվեն արգելափակող ծրագրերի միջոցով: Արգելվածների ցանկում են հետևյալ կայքերը՝

- խաղադրույքների կատարման կայքերը,
- սոցիալական մեդիան,
- պորնոգրաֆիա պարունակող կայքերը,
- ծայրահեղականությանը կամ ահաբեկչությանը նպաստող կայքերը,
- քրեական գործողություններին նպաստող կայքերը,
- ցանկացած կայք, որը կարող է համարվել սպառնալիք անվտանգությանը՝ թե՛ կենտրոնում, և թե՛ պետությանը:

22. Պետք է ապահովել վերահսկվող ինտերնետ հասանելիություն՝ հնարավորություն տալու կացարանում բնակվողներին կապ պահպանելու իրենց ընտանիքի անդամների ու ընկերների և իրավական ներկայացուցիչների հետ: Չպետք է թույլատրել չվերահսկվող ինտերնետ հասանելիություն, սակայն վերահսկողությունը պետք է լինի այնքան աննկատ, որքան հնարավոր է: Էլեկտրոնային փոստի տրաֆիկը չպետք է ստուգվի, եթե դրա վերաբերյալ դատարանի որոշում չի կայացվել, և երբ հիմնավոր կասկածներ կան, որ այն կարող է վտանգել ձերբակալման վայրի անշարժ գույքը, և եթե այն օգտագործվում է քրեական նպատակներով, ինչպիսիք են՝ պորնոգրաֆիկ նյութեր դիտելն ու տարածելը, ահաբեկչությանն առնչվող կամ ահաբեկչական գործողություններ քարոզող նյութեր դիտելն ու տարածելը, ինչպես նաև դատապարտված օտարերկրյացի իրավախախտների, ինչպես նաև տուժածների հետ անպատշաճ շփումները:

23. Պետք է վարել էլեկտրոնային փոստի ստուգման կենտրոնական գրանցամատյան՝ գրանցելու համապատասխան անձի անունը, ծննդյան տարեթիվը, սեռը, միջամտության ժամը, ամսաթիվն ու պատճառը: Կացարանում բնակվողներին պետք է տեղեկացնել, որ իրենց էլեկտրոնային փոստը ստուգվում է և այն ստուգելու պատճառները, եթե կենտրոնի տնօրենի կողմից այդ գործողությունը չի համարվում ոչ պատշաճ՝ ելնելով անվտանգության ու կարգուկանոնի պահպանման նկատառումներից: Այդ հանգամանքներում, տնօրենը պետք է կացարանում բնակվողի գործի մասով գաղտնիության դրույթ սահմանի՝ նրա գործողությունները հիմնավորելու համար:

Այցելությունները (սոցիալական, իրավական և պաշտոնական)

24. Կենտրոնը պետք է կացարանում բնակվողներին այցելելու հնարավորություն ընձեռի ամեն օր տարվա ընթացքում, սակայն այդ օրերից կարող է հանել հիմնական կրոնական տոները: Այցելության ժամերը պետք է օրվա մեջ առնվազն հինգ ժամ լինեն և կարող են տեղի ունենալ առավոտյան, ցերեկվա կամ երեկոյան ժամերին: Աշխատանքային օրվա երեկոյան ժամերին առնվազն մեկ և կես ժամ պետք է հատկացվի այցելության ժամի համար:
25. Եթե կացարանում բնակվողները չեն գնահատվում որպես իրենց և այլ անձանց համար վտանգ ներկայացնող, ապա կացարանում բնակվողների ու այցելուների միջև ազատ շփումներ պետք է թույլատրվեն, սակայն այդ շփումները պետք է աննկատ վերահսկվեն կացարանով ապահովման հատուկ կենտրոնի անձնակազմի կողմից՝ կարգուկանոն ապահովելու համար, ինչպես նաև այդ շփումները պետք է հսկվեն գաղտնի տեսահսկման համակարգերով:
26. Անձնակազմը կստուգի մեծահասակ բոլոր այցելուների ինքնությունը՝ նախքան կենտրոն մուտք գործելը: Որևէ մեծահասակ այցելուի մուտքը չի թույլատրվում՝ առանց լուսանկար պարունակող նույնականացման փաստաթղթի: Բոլոր այցելուներին պետք է խուզարկել անվտանգության սարքի միջով անցնելու միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև պետք է իրականացվի անձնական խուզարկություն: Առնվազն մեկ տեսահսկվող տարածք պետք է նախատեսված լինի գաղտնի խուզարկության համար:
27. Այցելուների նույնականացման քարտերը պետք է պահվեն ընդունարանում, իսկ նրանց պետք է տրամադրել այցելուների անցաթղթեր, որոնք պետք է դասավորվեն ըստ այցելուի անցաթղթի համարի: Քարտերը պետք է փոխանակվեն այցելության ավարտին՝ մանրակրկիտ կերպով իրականացնելով վիզուալ ստուգում:
28. Կողպվող պահարաններ պետք է նախատեսվեն այցելուների անձնական իրերի համար, ինչպիսիք են՝ պայուսակները, դրամապանակները, գումարը և այլն: Այցելուներին կարելի է թույլատրել՝ կանխիկ գումար կամ փոխանցում կատարել կացարանում բնակվողի հաշվին անձնակազմի նշանակված անդամի միջոցով. անձնակազմի անդամները պետք է այցելուներին տրամադրեն ստացական կենտրոնում թողած ամբողջ գումարի կամ բոլոր իրերի համար: Ոչ մի դեպքում այցելուներին չի կարելի թույլատրել անմիջականորեն որևէ գույք կամ գումար փոխանցել կացարանում բնակվողին:
29. Կենտրոնը պետք է վարի բոլոր այցելուների մատյան, ինչպես նաև առանձին մատյան իրավական հարցերով այցելուների համար: Անձնակազմի անդամները այցելուների մատյանում պետք է գրանցեն հետևյալ տեղեկությունները՝
 - կացարանում այն բնակվողի անունն ու նույնականացման համարը, որին այցելել են,
 - այցելուի անունն ու հասցեն,
 - այցելուի կապը կացարանում բնակվողի հետ,
 - ամսաթիվը, ժամանման ժամը և մեկնման ժամը:

Բացառությամբ ստորև՝ 32-րդ կետում նշված անձանց՝ այդ գրառումները պետք է ոչնչացվեն վերջին այցելությունից 12 ամիս անց:

30. Եթե այցելուին արգելում են մուտք գործել կենտրոն (օրինակ՝ եթե նա հրաժարվում է անցնել խուզարկության ընթացակարգը), ապա այդ փաստը պետք է գրանցվի և բացատրվեն որոշման պատճառները: Այդ տվյալները պետք է պահպանվեն:

31. Այն դեպքերում, երբ կացարանում բնակվողը հեռացվում է կենտրոնից որևէ կոնկրետ օր, և դա տեղի է ունենալու այցելության ժամանակահատվածում, ապա կենտրոնը պետք է կազմակերպի սոցիալական այցելությունները համաձայնեցված ժամերից դուրս
32. Եթե ներկայացվում են հանդիպումների վերաբերյալ խնդրագրեր իրավական ներկայացուցիչների կամ պաշտոնատար անձանց կողմից, ապա կենտրոնը պետք է ձգտի կազմակերպել դրանք:
33. Կացարանում բնակվողների ընտանիքի անդամների ու ընկերների համար պետք է հանգստի հարմարություններ տրամադրել ընդհանուր այցելության տարածքում: Վաճառքի ավտոմատ սարքերը հաճախ ընպելիքներ ու թեթև ուտեստներ տրամադրելու ամենապրակտիկ այլընտրանքային միջոցներն են: Վաճառքի ավտոմատ սարքից պետք է հնարավոր լինի մանրադրամ հետ ստանալ:
34. Այն այցելուներին, որոնք վաղ են ժամանում (և որոնք կացարանի համար այլ միջոցներ չունեն), պետք է տրամադրել առնվազն տանիքով կացարան՝ պաշտպանվելու անձրևից և ձյունից, որտեղ տեղադրված կլինեն նաև նստատեղեր:
35. Խաղային հարմարություններ պետք է նախատեսվեն երեխաների համար այցելության վայրերում՝ խելամիտ չափսերով կից տարածքում՝ ծնողների տեսադաշտում, որտեղ կլինեն խաղալիքներ ու խաղեր:
36. Կենտրոնը պետք է վարի բոլոր այցելուների, այդ թվում՝ նրանց տան հասցեների ճշգրիտ ու թարմացվող գրանցամատյան:
37. Կենտրոնը պետք է վարի ընկերություն անող խմբերի թարմացվող ցուցակ, և գրանցի ներգաղթային ոլորտում ներգրավված հասարակական կազմակերպությունների կոնտակտային տվյալները, ինչպես նաև ապահովի, որպեսզի կացարանում բնակվողները իրազեկ լինեն իրենց ծառայությունների մասին:



8. ԲՈՂՈՔՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Բողոքներ ներկայացնելու ընթացակարգը պետք է լինի հստակ, իսկ դրանց մասով հետաքննությունները՝ թափանցիկ, ժամանակին, անաչառ ու անկողմնակալ:

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Կացարանում բնակվողներին պետք է տեղեկացնեն բողոքներ ներկայացնելու ընթացակարգի մասին կենտրոն ժամանելու պահից, ծանոթանալու ընթացքում և այդ մասին նշելով կենտրոնի կանոններում (պետք է պատրաստվի կենտրոնի կողմից), որի պատճենը պետք է ստանան կացարանում բնակվողները կենտրոն ժամանելիս: Եթե դա հնարավոր չէ, ապա նրանց ժամանելուց ոչ ուշ, քան 24 ժամ հետո:
2. Բողոքարկման գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է փակցվի կենտրոնում՝ կենտրոնում գտնվողներին հասկանալի լեզվով:
3. Կենտրոնը պետք է նախատեսի մեխանիզմներ, որոնց միջոցով կենտրոնի տնօրենը (կամ տնօրենի կողմից նշանակված պաշտոնյան) ականջալուր լինի բողոքներին ամեն օր:
4. Կենտրոնը պետք է ունենա բողոքների ու խնդրագրերի համապարփակ մանրամասները գրանցելու ընթացակարգեր, այդ թվում՝
 - թե երբ են դրանք ներկայացվել,
 - հետաքննությունների կամ ուսումնասիրությունների համապարփակ մանրամասները,
 - արդյունքների վերաբերյալ համապարփակ տվյալները,
 - մանրամասներ այն մասին, թե կացարանում բնակվողներն ու ուսումնասիրություններում ընդգրկվածները երբ են տեղեկացվել արդյունքների մասին:

Առաջին դեպքում, անձնակազմը պետք է փորձի լուծել բողոքների հետ կապված հարցերը ոչ ֆորմալ եղանակով՝ նախքան առավել ժամանակատար գրավոր ընթացակարգերին դիմելը: Անձնակազմը պետք է ցանկացած ջանք գործադրի՝ լուծելու կացարանում բնակվողների բողոքների ու դժգոհությունների հետ կապված հարցերը հնարավորինս ցածր մակարդակում, հստակ սահմանված եղանակով ու ժամկետում:


Անձնակազմի այն անդամները, որոնք ստանում են կացարանում բնակվողի ոչ ֆորմալ բողոքը կամ դժգոհությունը, պետք է՝

- փորձեն լուծել հարցը ոչ ֆորմալ եղանակով, եթե խնդիրն իր պարտականությունների շրջանակում է կամ
- տեղեկացնել համապատասխան վերադասին դժգոհության մասին հնարավորինս շուտ:

Վերադասը կարող է փորձել հարցը լուծել կամ առաջարկել կացարանում բնակվողին իր դժգոհությունը ներկայացնել գրավոր: Եթե դժգոհության հետ կապված հարցը լուծվում է ոչ ֆորմալ մակարդակում, ապա դժգոհության հետ կապված հարցի հանգամանքներն ու լուծումները պետք է գրանցվեն կացարանում բնակվողի անձնական գործում: Եթե դժգոհության հետ կապված հարցը լուծվում է ոչ ֆորմալ եղանակով, ապա անհրաժեշտություն չկա կացարանում բնակվողին գրավոր ծանուցում ներկայացնել արդյունքների մասին:

5. Եթե բողոքները կապված են ենթադրյալ ռասայական խտրականության հետ, ապա այն պետք է հետաքննվի անձնակազմի անդամի կողմից, որը հատուկ վերապատրաստում է անցել ռասայական խնդիրների վերաբերյալ:

6. Այդ ընթացակարգերով կացարանում բնակվողներին պետք է թույլատրվի գաղտնի կերպով հանդիպելու կենտրոնի տնօրենի ու Անկախ մոնիթորինգային մարմնի անդամների հետ. պետք է տրամադրվեն կնքված ծրարներ՝ «Կացարանում բնակվողի գաղտնի նամակ» վերտառությամբ: Նրանք կարող են այդ ծրարը հանձնել անձամբ, սակայն պետք է նաև տրամադրվեն այդ նպատակով նշված գաղտնի արկղեր: Պահանջի դեպքում, աջակցություն պետք է տրամադրվի խանգարումներ կամ հաշմանդամություն ունեցող՝ կացարանում բնակվողներին, բանավոր (գրավոր) ծառայություններ պետք է տրամադրվեն կացարանում այն բնակվողներին, որոնք համապատասխան մակարդակով անգլերեն չեն խոսում, ինչպես նաև՝ աջակցություն սահմանափակակ գրագիտությամբ՝ կացարանում բնակվողներին: Անձնակազմին պետք է խրախուսել՝ տրամադրելու աջակցություն, եթե կացարանում բնակվողը չի կարողանում պատշաճ կերպով հաղորդել իր մտահոգությունը:
7. Եթե կացարանում բնակվողը բավարարված չէ իր բողոքի հետ կապված հարցը ոչ ֆորմալ եղանակով լուծելու արդյունքներից, ապա նա կարող է ներկայացնել գրավոր բողոք Անկախ մոնիթորինգային մարմնի կողմից նշանակված՝ հետաքննության հարցերով պաշտոնյային: Գրավոր բողոքներին պատասխանը պետք է ներկայացվի բողոքը ներկայացնելուց հետո 3 օրվա ընթացքում, իսկ կացարանում բնակվողները պետք է ստանան իրենց գրավոր բողոքի ստացման հաստատումը 24 ժամվա ընթացքում: Եթե ակնկալվում է, որ հետաքննությունը կտևի 3 օրից ավելի, ապա նրանց պետք է տրամադրվի հետաձգման վերաբերյալ պատասխան բողոքը ներկայացնելուց հետո երեք օրվա ընթացքում:
8. Ստանալուց հետո անձնակազմի կողմից չարաչափումների վերաբերյալ վկայա-կոչումներ պարունակող բողոքները պետք է ներկայացվեն վերադաս անձի կամ ավելի բարձր մակարդակի պաշտոնյայի: Մինչդեռ այդ բողոքները պետք է ուսումնասիրվեն Անկախ մոնիթորինգային մարմնի կողմից, պատճենները պետք է ուղարկվեն ՄՊԾ-ի տնօրենին կամ նրա կողմից նշանակված տեղակալին: Անձնակազմի դեմ ուղղված բոլոր բողոքները պետք է ներմուծվեն ու գրանցվեն կենտրոնական գրանցամատյանում՝ մանրամասներով ու հետաքննության արդյունքներով: Կացարանում բնակվողներին պետք է տրամադրվի ամբողջական գրավոր պատասխան իրենց բողոքների վերաբերյալ:
9. Եթե կացարանում բնակվողը բավարարված չէ բողոքն ուսումնասիրելուց կամ դրա արդյունքից, ապա նա պետք է իրավունք ունենա բողոք ներկայացնելու իրավասու դատարան և պետք է լիարժեք կերպով տեղեկացվի կենտրոնի տնօրենի կողմից կիրառելի ընթացակարգի վերաբերյալ:
10. Անձնակազմը չպետք է ոտնձգություն կատարի, պատժի կամ այլ կերպ հակազդող միջոցներ կիրառի կացարանում բնակվող այն անձի նկատմամբ, որը բողոք կամ դժգոհություն է ներկայացնում, կամ կապ է հաստատում Անկախ մոնիթորինգային մարմնի հետ: Պետք է առկա լինեն ու կիրառվեն անձնակազմի անդամների կողմից հակազդող միջոցների դեպքերին արձագանքելու համար նախատեսված կարգապահական միջոցներ:



9. ՀԱՇՄԱՆ ԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ՝ ԿԱՑԱՐԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ֆիզիկական կամ մտավոր խնդիրներ ունեցող՝ կացարանում բնակվողները պետք է, որքանով դա հնարավոր է, կարողանան օգտվել հասանելի հարմարություններից ու մասնակցեն կենտրոնում կազմակերպվող միջոցառումներին:

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ծանուցում. հաշմանդամություն ունեցող անձինք պետք է ձերբակալվեն միայն բացառիկ հանգամանքներում, և պետք է ամեն ջանք գործադրվի կազմակերպելու նրանց այլընտրանքային տեղավորումը հարազատների, ընկերների, ոլորտում մասնագիտացած հասարակական կազմակերպությունների հետ կամ համապատասխան բժշկական հաստատությունում՝ նախքան ձերբակալման հարցն ուսումնասիրելը: Այս իրավիճակում, ձերբակալման կենտրոնները պետք է այնուամենայնիվ նախատեսեն հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմար մի փոքր բաժին, և կարողանան արագորեն հարմարեցնել հարմարություններն ու ծառայությունները այդ անձանց կողմից դրանք օգտագործվելու համար:

1. Պետք է առկա լինեն ընթացակարգեր՝ կացարանում բնակվողների նկատմամբ հաշմանդամության հիմքով խտրականության դեպքերը կանխարգելելու համար: Դրանք պետք է հրատարակվեն ու փակցվեն կացարանում գտնվողների համար հասկանալի լեզվով:
2. Կացարանում բնակվողների կարիքների լիարժեք գնահատումը պետք է ընդունման ու ծանոթանալու գործընթացի անբաժանելի մասը լինի: Պետք է կատարվի հաշմանդամություն ունեցող՝ կացարանում բնակվողների հաղորդակցման ու շարժունակության մասով կոնկրետ կարիքները մանրամասնող գրառում: Նրանց պետք է առաջարկվի իրենց ցանկացած հաշմանդամության մասին տեղյակ պահել կենտրոնի անձնակազմին և մատնանշել հատուկ միջոցներ, որ կարող են պահանջվել իրենց համար: Ցանկացած հայտարարված կամ անձնակազմի կողմից հայտնաբերված հաշմանդամության մասին պետք է տեղեկացնել բուժանձնակազմին՝ պահանջներին մասնագիտական գնահատում տալու նպատակով:
3. Կացարանի տրամադրումը պետք է համապատասխանի հաշմանդամություն ունեցող՝ կացարանում բնակվողների կարիքներին: Առնվազն մեկ սենյակ պետք է լինի բնակելի միավորների առաջին հարկում, որից կարելի է օգտվել անվասայլակով կամ տեղաշարժման այլ սահմանափակումներով՝ կացարանում բնակվողների կողմից: Բազրիքներով կահավորված լայն ցնցուղարաններ ու զուգարանի հարմարություններ պետք է նախատեսվեն: Մահճակալները պետք է համապատասխան բարձրության լինեն՝ դյուրացնելու տեղափոխումն անվասայլակից՝ նախատեսելով բազրիքներ ու բռնակներ:
4. Ժամնակ օգնություն կամ ծառայություններ, ինչպիսիք առկա են համայնքում, պետք է ապահովվեն, որպեսզի հաշմանդամություն ունեցող՝ կացարանում բնակվողներն ի վիճակի լինեն օգտվելու կենտրոնի հարմարություններից: Հնարավորության դեպքում, հարմարությունները պետք է տեղակայվեն առաջին հարկում, և պետք է ժամանակավորապես թեքահարթակներ տեղադրվեն, պահանջի դեպքում, եթե դրանք հիմնավոր կերպով ամրակայված չեն:
5. Այն ծառայությունները, որոնցից հաշմանդամության ունեցող անձինք չեն կարող

- օգտվել, պետք է, հնարավորության դեպքում, տեղափոխվեն կացարանում բնակվողների մոտ, օրինակ՝ գրքերը, ինտերնետ հասանելիությունը, հեռուստացույցը:
6. Կենտրոնը պետք է համապատասխան ծառայություններ տրամադրի կացարանում այն բնակվողներին, որոնք ունեն լսողության հետ կապված խնդիրներ, ինչպիսիք են՝ լսողությանն օժանդակող սարքերը, զվարճանքի համար նախատեսված տեսանյութերի ենթագրերը, հեռախոսային զանգերի մասով օգնությունը:
 7. Հաշմանդամություն ունեցող՝ կացարանում բնակվողները պետք է ունենան կրթության, գրադարանի և, հնարավորության սահմաններում, ֆիզիկական կրթության հասանելիություն:
 8. Պետք է առկա լինի հաշմանդամություն ունեցող՝ կացարանում այն բնակվողների թվի դիտանցման համակարգ, որոնք ի վիճակի չեն մասնակցելու միջոցառումների իրենց հաշմանդամության պատճառով՝ ապագա պահանջներն ավելի լավ բավարարելու ու մշակելու ավելի արդյունավետ նախագծեր ու ընթացակարգեր:



10. ԵՐԵՒԱՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Երեխաներ ունեցող ընտանիքներին, հնարավորության դեպքում, չպետք է ձերբակալել: Առաջին հերթին պետք է դիտարկվեն ձերբակալման այլընտրանքային միջոցները: Եթե ընտանիքի ձերբակալումը հույժ անհրաժեշտ է, ապա պետք է հարգել ընտանիքի միասնությունը՝ բացառությամբ եթե այլ լուծում նախընտրելի չէ՝ ելնելով երեխայի շահերից: Ընտանիքի անդամները չպետք է առանձնացվեն և պետք է տեղավորվեն այնպիսի եղանակով, որը թույլ կտա նրանց, ողջամիտ հնարավորության սահմաններում, ընտանեկան կյանք վարելու համար:

Պահանջները

1. Պետք է համարժեք միջոցներ ձեռնարկվեն ընտանիքի միասնությունը հարգելու համար: Երեխաներ ունեցող ընտանիքները պետք է անմիջականորեն ընդունվեն ընտանիքի համար նախատեսված ընդունման տարածք՝ խուսափելու, որպեսզի իրենց երեխաներն անցնեն ընդունարանի տարածքով այն ժամանակ, երբ այդ պահին այլ ժամանածներ կան այնտեղ: Կենտրոնում գրանցվելու գործընթացները կարող են, հնարավորության սահմաններում, իրականացվեն ընտանիքների համար նախատեսված տարածքում, որից հետո ծնողները կարող են վերադառնալ ընդունարան՝ մատնահետքեր տալու համար: Նույն ընթացակարգը պետք է կիրառվի նաև արձակման գործընթացի ժամանակ:
2. Ընտանիքի համար նախատեսված վայրում ընտանիքի անդամներին պետք է հատկացվեն կից սենյակներ:
3. Կատարյալ տարբերակն այն կլինի, եթե ընտանիքներն ունենան առանձին սնվելու, լվացվելու և լվացքատնից օգտվելու հնարավորություն: Եթե դա ներկայումս հնարավոր չէ և չի կարող իրականացվել ընտանիքների համար նախատեսված՝ գոյություն ունեցող տարածքը ձևափոխելու միջոցով, ապա ընտանիքները պետք է սահմանված ժամեր ունենան, որի ընթացքում նրանք կկարողանան օգտվել լվացքատնից:
4. Ընտանեկան կյանքը պահպանելու համար՝ հնարավորության սահմաններում ճաշի ժամերը բաշխելով ընտանեկան խմբերով, ընտանիքները պետք է հնարավորություն ունենան, որպեսզի իրենց ճաշը մատուցվի ընտանիքի համար նախատեսված բնակելի տարածության սահմաններում գտնվող՝ տաքացվող մատուցման վայրից կամ փոքրիկ խոհանոցից: Եթե դա հնարավոր չէ, նրանց համար պետք է սահմանվի ճաշելու ժամը ճաշասենյակում: Երեխաները պետք է կարողանան օգտվել սննդից նաև ճաշի ժամերից դուրս:
5. Կենտրոնում 14 օրից ավելի գտնվող՝ դպրոցական տարիքի երեխաների համար պետք է ապահովվի կրթության հասանելիություն շաբաթական 23 ժամ, տարեկան 50 շաբաթ՝ հնարավորության սահմաններում հետևելով տեղական դպրոցներում դասավանդվող ուսումնական ծրագրերին: Եթե առկա են մշտական ուսումնական հաստատություններ, ապա երեխաները պետք է հնարավորություն ունենան օգտվելու դրանցից ժամանումից հետո:
6. Դասերը պետք է, հնարավորության սահմաններում, անցկացվեն ընտանիքների համար նախատեսված վայրում հասանելի սենյակում:
7. Երեխաների խաղասենյակում պետք է լինեն խաղալիքներ ու խաղեր՝ 4-13 տարեկան երեխաների կարիքները բավարարելու համար: TV և DVD նվազարկիչներ պետք է հասանելի լինեն բոլոր երեխաների համար՝ բոլոր տարիքների համար նախատեսված տեսասկավառակներով: Պետք է նախատեսվի կենտրոնին կից խաղահրապարակ,

որը պետք է մասնակիորեն ծածկված լինի՝ եղանակային վատ պայմաններից պաշտպանվելու համար:

8. Մանկահասակ երեխաներ ունեցող ընտանիքներին պետք է ապահովել մանկասայլակով, տակդիրներով, տակդիրների համար նախատեսված պայուսակով, աղտոտված տակդիրների անվտանգ հեռացման համար հարմարություններով, երեխաների համար հիգիենայի պարագաներով (կրեմներ, շամպուններ և այլն), իսկ խնդրանքի դեպքում՝ շիշ տաքացնելու ու փստահանելու սարքավորումներով:
9. Երեխաներ ունեցող ընտանիքների հետ հարցազրույցը պետք է անցկացնել կենտրոնի տարածքում, պետք է նախատեսել երեխաների վերահսկման մեխանիզմներ: Անձնակազմի առնվազն երկու անդամ պետք է նշանակվեն, որոնք հատուկ վերապատրաստում են անցել, նախընտրելի է մասնագիտական որակավորումներով, որոնք մշտապես հոգ կտանեն երեխաների և երիտասարդների համար հերթապահության ընթացքում:
10. Անձնակազմի անդամները, այցելուները և ցանկացած այլ անձ, որը մուտք ունի երեխաների մոտ, պետք է ստուգվեն՝ նախկինում դատվածության մասով մանրակրկիտ ստուգում անցնելու միջոցով:



11. ԿԱՅԱՐԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ՝ ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ստեղծել ապահով ու անվտանգ միջավայր կանանց համար:

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Կացարանում բնակվող՝ իգական սեռի ներկայացուցիչները պետք է ժամանելիս տեղեկացվեն կացարանի կանոնների ու բանավոր ճեպագրույցների միջոցով, որ իրենք իրավունք ունեն խնդրելու, որպեսզի իրենց հետազոտի կին բուժքույր և (կամ) բժիշկ:
2. Պետք է պահպանել որոշ գործողությունների մասով մասնավորությունը, ինչպիսիք են՝ հագուստ փոխելը և հիգիենայի հետ կապված հարցերը: Կանանց չպետք է պարտադրել իրենց հագուստը հանել կացարանում մեկ այլ բնակվողի կամ անձնակազմի՝ արական սեռի ներկայացուցիչի ներկայությամբ, բացառությամբ եթե կացարանում բնակվողն իր համաձայնությունը տվել է, որպեսզի իր բուժումն իրականացնի առողջապահական թիմի արական սեռի ներկայացուցիչը:
3. Պետք է նախատեսել, որպեսզի կանանց համար ճաշը մատուցվի կանանց համար նախատեսված ճաշասենյակում կամ կանանց համար նախատեսված հատվածում, կամ ընդհանուր օգտագործման ճաշասենյակում ճաշելու համար առանձին վայրում: Սակայն, եթե նրանք ցանկանան, ապա նրանց պետք է թույլատրվի ճաշել տղամարդկանց հետ ընդհանուր օգտագործման ճաշասենյակում:
4. Կացարանում բնակվող՝ իգական սեռի ներկայացուցիչներին պետք է ուղեկցի կացարանում աշխատող (ուղեկցող) իգական սեռի առնվազն մեկ ներկայացուցիչ, եթե նրանց ուղեկցում են կենտրոնից կամ դեպի կենտրոն:
5. Կացարանում բնակվող՝ իգական սեռի ներկայացուցիչները պետք է հնարավորություն ունենան օգտվելու Կենտրոնում գործող բոլոր ծառայություններից՝ պատշաճ կերպով հաշվի առնելով մշակութային զգայուն հարցերն ու կարիքները, որոշ դեպքերում պահպանել տղամարդկանց և կանանց տարանջատման գործոնը: Անհրաժեշտության դեպքում, պետք է ժամանակացույց սահմանել, որպեսզի կանայք կարողանան օգտվել հանգստի սենյակներից, ինչպիսիք են՝ լողավազանն ու հեռուստացույցով կահավորված սենյակն ու հանդիպման տարածքները: Հանդիպումների առանձին տարածքներ պետք է նախատեսվեն կացարանում բնակվող՝ բացառապես իգական սեռի ներկայացուցիչների կողմից օգտագործման համար՝ նախընտրելի է երեխաների համար նախատեսված խաղասրահին կից:
6. Միայն արական կամ միայն իգական սեռի ներկայացուցիչների համար նախատեսված միջոցառումները պետք է մոնիթորինգի ենթարկվեն անձնակազմի կողմից՝ համոզվելու համար, որ դրանք պատշաճ բնույթի են, և կացարանում բնակվող՝ իգական սեռի ներկայացուցիչները պետք է ներգրավված լինեն համապատասխան միջոցառումներ նախանշելու աշխատանքներում:
7. Հղի և կերակրող կանանց չպետք է ձերբակալել: Եթե նրանց ձերբակալումը հույժ անհրաժեշտ է, ձերբակալման պայմանները պետք է հարմարեցվեն նրանց վիճակին ու կոնկրետ կարիքներին, այդ թվում՝ մոր ու երեխայի վիճակի պարբերական բժշկական ստուգման մասով: Նրանք նաև կարող են օգտվել սննդից ճաշի սահմանված ժամերից դուրս: Բացի դրանից՝ սեռական ոտնձգությունների մասով բողոքարկման մեխանիզմ պետք է գործի, և պետք է մշակվեն կանխարգելման ու պաշտպանության համակարգեր:

12. ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐԸ ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Անձնակազմի անդամները ձերբակալման ժամանակ մահվան դեպքերին պետք է արձագանքեն շատ դյուրազգաց ու թափանցիկ եղանակով՝ մահացածի հարազատների հետ կապված բոլոր հարցերում, ինչպես նաև պետք է լիարժեք աջակցություն ցուցաբերվի ու համագործակցություն իրականացվի հետաքննության գործընթացում ներգրավված մյուս գործակալություններին ու մարմիններին:

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Մահվան դեպքերին արձագանքելու համար պետք է մշակել անկանխատեսելի դեպքերի համար պլան՝ ապահովելու, որպեսզի անհապաղ քայլեր ձեռնարկվեն՝ փորձելու ու վերակենդանացնելու կացարանում բնակվողին, իսկ եթե այդ փորձերն անհաջողությամբ են ավարտվում՝ որպեսզի պահպանվեն մահից հետո ուսումնասիրությունների, քննության և հետաքննության մասով իրավական պահանջները: Առաջինը դեպքին վրա հասած անձնակազմի անդամը պետք է կատարի հետևյալ գործողությունը՝
 - իրականացնի վերակենդանացման միջոցներ, եթե մահը նոր է վրա հասել,
 - օգնություն կանչել բժշկական կենտրոնից, շտապ օգնություն ու ոստիկանություն կանչել, ինչպես նաև ահազանգել հիմնական անձնակազմին,
 - կլինիկական մահն արձանագրելու դեպքում, հնարավորինս շուտ ազատել տարածքը կացարանում մյուս բնակվողներից,
 - պահպանել ոստիկանության կողմից քննություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը,
 - մահվան մասին անմիջապես հայտնել ՄՊԾ համապատասխան ավագ պաշտոնյային,
 - հրավիրել համապատասխան հոգևորականի կամ կրոնական առաջնորդի՝ պաշտոնական ծեսեր իրականացնելու, աղոթքներ հնչեցնելու կամ կամ այլ ծիսակատարություններ իրականացնելու համար,
 - պատշաճ կերպով հայտնել մահվան մասին կացարանում մյուս բնակվողներին,
 - պահանջի դեպքում, աջակցել կացարանում բնակվողին:
2. Դեպքի վայր ժամանելիս առաջնահերթ գործողության իրավունքը վերապահվում է ոստիկանական հետաքննություն իրականացնող ավագ ծառայողին՝ լրացուցիչ գործողություններ իրականացնելու համար, այդ թվում՝ մահացածի տեղափոխումը:
3. Կենտրոնի տնօրենը կամ նրա տեղակալը պետք է նշանակվի անմիջապես որպես ՄՊԾ-ի կոնտակտային անձ մահացածի ընտանիքի հետ շփումներում: Սակայն դա պետք է լինի որպես միջանկյալ միջոց, և պետք է դիտարկել կենտրոնից դուրս գործող ավագ ծառայողի նշանակման հարցը՝ հետաքննությունը ստանձնելու համար:
4. Տնօրենը պետք է ապահովի, որպեսզի մերձավոր ազգականը և ցանկացած այլ անձ, որին մահացածը որպես կոնտակտային անձ է (օրինակ՝ իրավական ներկայացուցիչը) նշել, պետք է տեղեկացվեն այդ մասին: Շատ դեպքերում, ենթադրվում է, որ ոստիկանությունը կտեղեկացնի մերձավոր ազգականին (կոնտակտային անձին), սակայն տնօրենը պետք է համոզվի, որ դա արվել է:
5. Խնդրանքի դեպքում, մահացածի ընտանիքին պետք է թույլատրվի այցելել կենտրոն՝ մահից հետո հնարավորինս շուտ:

6. Եթե դա մահվան գործով շարունակական քրեական հետաքննություն չէ, կացարանում բնակվողի վերաբերյալ ՄՊԾ-ում առկա գործերի պատճեններ ստանալու վերաբերյալ ընտանիքի անդամի կամ իրավական ներկայացուցչի կողմից ներկայացվող ցանկացած դիմում պետք է բավարարվի:
7. Եթե կացարանում բնակվողը մահանում է արգելանքի տակ գտնվելու ընթացքում, և նրա անձնական իրերը որևէ մեկը չի պահանջել, ապա դրանք պետք է պահվեն կենտրոնում առնվազն երկու տարի, որպեսզի ցանկացած մերձավոր ազգական լիարժեք հնարավորություն ունենա այդ իրերը պահանջելու համար: Այդ ժամկետից հետո չպահանջելու դեպքում, պետք է գրանցում կատարվի այդ անձնական իրերի մասով կատարվածի վերաբերյալ, և եթե դրանք վաճառվում են, ապա վաճառքից ստացված միջոցները պետք է գրանցվեն:
8. Վերը նշված 7-րդ կետի մասով, վաճառքից ստացված միջոցները պետք է օգտագործվեն ի նպաստ կացարանում բնակվողների: Գնումների (այդ թվում՝ ծախսերի) մասով գրանցումները պետք է պահպանվեն:
9. Քննության, հետաքննության կամ մահվան ելքով պատահարի վերաբերյալ նյութերի հավաքման արդյունքում արված առաջարկությունները պետք է իրականացվեն ու մոնիթորինգի ենթարկվեն:

13. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Կացարանում բոլոր բնակվողները պետք է օգտվեն առողջապահական առնվազն նույն հնարավորություններից, որոնք որ հասանելի են հանրությանը: Առողջության պահպանման գործընթացը պետք է մոնիթորինգի ենթարկվի ու ղեկավարվի Առողջապահության նախարարության/վարչության, և ոչ թե ներգաղթային ծառայությունների կողմից: Առողջապահական թիմի ղեկավարը պետք է հաշվետու չլինի ներգաղթային ծառայությունների կամ կացարանով ապահովման հատուկ կենտրոնի ղեկավարին, այլ պետք է լինի անկախ:

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Կացարանում բնակվողների հետ հաղորդակցումը

1. Բժշկական հետազոտությունների ընթացքում պետք է պահպանվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված առողջության առաջնային պահպանմանը, դիմողի տեղեկացված համաձայնությանը, անձնական տվյալների և նժշկական գաղտնիքի պահպանմանը ներկայացված դրույթները:

Բժշկական անձնակազմը՝ որակավորումներն ու վերապատրաստումը

1. Կացարանի բժշկական անձնակազմը պետք է ունենա համապատասխան որակավորում և իրավունք՝ իրականացնելու մասնագիտական գործունեություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Կենտրոնը պետք է պահանջի կրթության, որակորման և աշխատանքի իրավունքի մասին համապատասխան փաստաթղթեր և ապացույցներ:
2. Կանանց պետք է հետազոտեն առողջապահության կին մասնագետները, կամ եթե դա հնարավոր չէ, առողջապահության կին աշխատող կամ համայնքի/սոցիալական աշխատող պետք է ներկա լինի կին միգրանտների բժշկական հետազոտության ընթացքում:
3. Կացարանի բժշկական անձնակազմը պետք է ունենա հնարավորություն՝ շարունակական մասնագիտական զարգացման և օրենսդրությամբ սահմանված 5 տարին մեկ անգամ վերապատրաստումներ անցնելու համար, առավել հաճախ վերապատրաստումների անհրաժեշտության մասին կենտրոնը ներկայացնում է առաջարկություններ լիազոր պետական մարմին:
3. **Բժշկական անձնակազմը պետք է ներառի հոգեբույժ կամ բժշկական հոգեբան, որը որակավորված կլինի ախտորոշել հոգեկան խանգարումներ և տրամադրել հոգեբանական աջակցություն, նման մասնագետի բացակայության դեպքում անձնակազմի անդամները պետք է ունենան համապատասխան վերապատրաստում:**
5. Կացարանի բնակիչը պետք է տեղեկացված լինի այն բոլոր բժշկական ծառայությունների մասին, որոնք տրամադրվելու են՝ դրանց տրամադրման համար պատասխանատուի պարտադիր նշումով: Բժշկական ծառայություններից օգտվելու համար ուղեգրման մեխանիզմները պետք է հստակ սահմանվեն և ներառեն, բայց ոչ սահմանափակեն հետևյալը՝
 - առաջնային բժշկական զննում, ներառելով՝ հոգեկան խնդիրներն ու բերանի խոռոչի առողջությունը,
 - անհրաժեշտ բժշկական սպասարկումն ու դեղերով ապահովումը,

- կանխարգելիչ բժշկական սպասարկումը,
 - անհետաձգելի բժշկական օգնությունը,
 - հոսպիտալացման անհրաժեշտության դեպքում՝ տեղական համայնքի սահմաններում հոսպիտալային բժշկական սպասարկման ապահովումը:
6. Հիվանդի տեղեկացված համաձայնությունը ապահովելու, ինչպես նաև ախտորոշման և բուժման անհրաժեշտության մասին հասկանալի լեզվով նրան հայտնելու նպատակով պետք է հասանելի լինի բանավոր թարգմանության հնարավորություն՝ դրա անհրաժեշտության դեպքում կիրառելու նպատակով: Թարգմանություն ապահովող անձին պետք է զգուշացնել բժշկական գաղտնիքի պահպանման և զգայուն թեմաների վերաբերյալ էթիկայի կանոնների պահպանման անհրաժեշտության մասին:
7. Բանավոր թարգմանիչների ծառայություններից օգտվելու կամ թարգմանված նյութերից օգտվելու վերաբերյալ որոշումները պետք է կայացվեն ըստ դեպքի: Հաղորդակցման մակարդակը պետք է լինի համարժեք՝ կլինիկական ճիշտ արդյունքներ ապահովելու համար: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն դեպքերում, երբ կարող են առողջության հետ կապված զգայուն հարցեր լինել, գաղտնիության գաղտնիության հետ կապված հարցեր կամ լիարժեք տեղեկացված համաձայնություն ձեռք բերելու անհրաժեշտություն:
8. Գաղտնիությունը պետք է պահպանվի՝ տվյալների պաշտպանության վերաբերյալ ամբողջ օրենսդրությանը ու բժշկական մասնագիտության վարքագծի կանոններին համապատասխան: Կացարանում բնակվողներին պետք է տեղեկացնել, որ իրենց առողջությանը վերաբերող հարցերը գաղտնի են պահվում: Դրա մասին պետք է հայտնել նրանց՝ վերջիններիս առողջության սկզբնական գնահատման ժամանակ, և դրա վերաբերյալ ծանուցումներ պետք է փակցվեն առողջապահական տարածքում՝ կացարանում բնակվողների բազմազան բնույթն արտացոլող լեզուներով:
9. Եթե բժշկական գործողությունը կամ միջամտությունն անհրաժեշտ է համարվում, ապա կացարանում բնակվողին պետք է տեղեկացնել գործողության պատճառի մասին և ստանալ տեղեկացված համաձայնություն:

Կենտրոնի տարածքում առողջապահական ծառայություններից օգտվելը

10. Առաջնային բժշկական զննման արդյունքում հայտնաբերված անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող կամ շրջապատի համար վտանգ ներկայացնող վիճակները, այդ թվում՝ վարակիչ հիվանդությունների դեպքերը համարվում են արտակարգ դեպք և շտապ հաղորդվում բժշկական անձնակազմին:

Առաջնային բժշկական զննումը պետք է ներառի, բայց չսահմանափակի, հետևյալը՝

- կյանքի ընթացքում արձանագրված հիվանդություններ և ախտաբանական վիճակներ, այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ,
- նախկինում արձանագրված վարակիչ հիվանդություններ,
- ցավի համախտանիշ՝ դրա ուժգնությունը,
- ներկայում և նախկինում օգտագործվող և օգտագործված դեղորայք,
- ալերգիաների մասին տեղեկատվություն,
- նախկինում իրականացված վիրահատական միջամտություններ,
- տուբերկուլյոզի կասկածելի դեպքի սահմանմանը համապատասխանող ախտանշաններ,

- բերանի խոռոչի առողջություն,
 - ալկոհոլի, ծխախոտի և թմրամիջոցների օգտագործում, դրանց օգտագործման դադարեցման հետ կապված ռիսկերի գնահատում,
 - հավանական հղիություն,
 - վարքագծի խեղումներ, հոգեկան առողջության գնահատում,
 - արտաքին տեսք, ցնցումների, գերքրտնարտադրության առկայություն,
 - ինքնասպանության փորձեր անցյալում և ինքնասպանության (սպանության) մտքեր ներկայում,
 - ֆիզիկական թերություններ՝ հաշմանդամություն,
 - նախկինում հոսպիտալային բուժման դեպքեր,
 - խրոնիկ հիվանդություններ՝ ներառյալ, բայց չսահմանափակելով շաքարային դիաբետն ու զարկերակային գերճնշումը,
 - հատուկ սննդակարգի անհրաժեշտություն,
 - ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկվելու դեպքերը անցյալում՝ հստակ նշելով դեպքը տեղի ունենալու ամսաթիվը:
11. Կենտրոնը պետք է ապահովի, որպեսզի կացարանում բնակվողների առաջին բժշկական հետազոտությունն իրականացվի նույն սեռի ներկայացուցիչ բժշկի կողմից, որը պատշաճ կերպով վերապատրաստված է հոգեբանական ու սոցիալական աջակցություն տրամադրելու հարցում:
 12. Առաջնային բժշկական զննանը պետք է հաջորդի բնակվողի բժշկական սպասարկման անհատական ծրագրի կազմումը՝ նրա առողջության ամրապնդումը կառավարելու նպատակով:
 13. Կացարանում այն բնակվողները, որոնք պահանջում են ընթացիկ բժշկական խորհրդատվություն երկուշաբթիից ուրբաթ ընկած ժամանակահատվածում, պետք է ստուգվեն 48 ժամվա ընթացքում: Կացարանում այն բնակվողները, որոնք պահանջում են ընթացիկ այցելություն բուժքրոջ մոտ, պետք է ստուգվեն 24 ժամվա ընթացքում: Շաբաթ կամ կիրակի օրվա ընթացքում այդպիսի այցելության համար դիմողները պետք է ստուգվեն ամենաուշը հաջորդ երկուշաբթի օրը:
 14. Կացարանում բնակվողները պետք է առողջապահական ծառայությունից շուրջօրյա օգտվելու հնարավորություն ունենան: Դա կարող է իրականացվել տեղում աշխատող անձնակազմի կամ կենտրոնից դուրս գործող ծառայությունների միջոցով՝ կախված կենտրոնի պահանջներից:

Առողջապահությունը

15. Կենտրոնը պետք է ունենա արտակարգ իրավիճակների ծառայությունների մասով գրավոր պլան՝ շուրջօրյա անհետաձգելի առողջապահական ծառայություններ մատուցելու համար: Այդ պլանը պետք է ներառի հետևյալը՝
 - շուրջօրյա հասանելի՝ ըստ պահանջի հրավիրվող բժիշկ, ատամնաբույժ և մտավոր առողջության մասնագետ,
 - տեղական շտապ օգնության ու բժշկական ծառայությունների հեռախոսահամարների ցանկ,
 - ավտոմատ արտաքին դեֆիբրիլյատոր պետք է օգտագործման համար պատրաստ լինի յուրաքանչյուր հաստատության կողմից և հասանելի լինել անձնակազմին,

- ձերբակալման վայրի ու բժշկական անձնակազմը պետք է անցնեն ամենամյա սրտաթոքային վերակենդանացման և անհետաձգելի առաջին օգնության վերաբերյալ վերապատրաստում,
 - ձերբակալման վայրի ու առողջապահական թիմի անձնակազմը պետք է ամենամյա վերապատրաստում՝ չորս բույսի ընթացքում առողջության հետ կապված իրավիճակներին արձագանքելու համար,
 - անվտանգության ընթացակարգեր, որոնք ապահովում են կացարանում բնակվողների անհապաղ տեղափոխումը անհետաձգելի բժշկական օգնություն տրամադրելու վայր:
16. Առողջապահական թիմի աշխատակից չհանդիսացողներին պետք է տեղեկացնել առողջապահական ծառայություններից օգտվելու՝ կացարանում բնակվողների իրավունքների մասին, ինչպես նաև առողջապահական ծառայություններից օգտվելու գործընթացը դյուրացնելու նրանց անձնական դերի մասին, որը նրանց կողմից խնամքի իրականացման պարտականությունների մաս է կազմում:
17. Կենտրոնում ներգաղթային հարցերով պաշտոնյաների վերապատրաստումը, որն իրականացվում է որակավորված բժշկական մասնագետի կողմից, պետք է ներառի՝
- առողջության հետ կապված հնարավոր արտակարգ պատահարների նշանների ճանաչում և պահանջվող արձագանքներ,
 - առաջին օգնության, այդ թվում՝ ավտոմատ արտաքին դեֆիբրիլյատորի (ԱԱԴ) և սրտաթոքային վերակենդանացման (ՄԹՎ) իրականացում,
 - անհետաձգելի բժշկական օգնության ստացում՝ կենտրոնի պլանի ու պահանջվող ընթացակարգերի համաձայն,
 - հոգեկան հիվանդության ու ինքնասպանության ռիսկի նշանների ու ախտանիշների ճանաչում,
 - անհետաձգելի բժշկական օգնության, այդ թվում, անհրաժեշտության դեպքում, կացարանում բնակվողին համապատասխան հիվանդանոց կամ այլ բժշկական ծառայություններ՝ ներառյալ շտապ օգնություն անվտանգ ու ապահով տեղափոխելու վերաբերյալ կենտրոնի հաստատված պլան ու ընթացակարգեր: Պլանով պետք է նախատեսվեն կենտրոն արագ մուտք գործելու և կենտրոնը լքելու վերաբերյալ դրույթներ:

Մասնագիտացված առողջապահական ծառայություններից ու երկրորդային խնամքի ծառայություններից օգտվելը

18. Միգրանտների կողմից ֆիզիկական ու մտավոր առողջության լուրջ խնդիրների մասով օգնության դիմելու դեպքում, առողջապահական թիմը պետք է մեխանիզմներ մշակի նրանց համար՝ երկրորդային բժշկական օգնությունից օգտվելու համար: Կացարանում բնակվողների բուժումը պետք է իրականացնեն համապատասխան որակավորում ստացած մասնագետները՝ ազգային չափանիշներին ու ուղեցույցներին համապատասխան:
19. Կենտրոնը պետք է ունենա հստակ սահմանված ուղեգրման կարգ և պետք է ապահովի բնակվողների՝ առաջնային և երկրորդական բժշկական ծառայություններից օգտվելու հասանելիությունը: Սա պետք է ապահովվի կամ կենտրոնի ներսում, եթե հնարավոր է, կամ կենտրոնից դուրս առկա ծառայությունների միջոցով:
20. Անհրաժեշտ է ներդնել վարակիչ հիվանդությունների վարման հստակ մեխանիզմներ, այդ թվում՝ ապահովելով վարակիչ հիվանդին մեկուսացնելու հնարա-

- վորություն և անհատական պաշտպանիչ միջոցների առկայություն, ինչպես նաև ապահովել հստակ ախտորոշման սարքերի, օրինակ՝ տուբերկուլյոզի դեպքում ռենտգենաբանական հետազոտության հասանելիության և անձնակազմի կրթում վարակիչ հիվանդությունների ախտորոշման և դեպքի ստանդարտ սահմանումների վերաբերյալ:
21. Անձնակազմի բոլոր անդամներին պետք է տեղեկացնել տուբերկուլյոզի ախտանիշների մասին՝ հնարավորություն տալով անհապաղ հայտնաբերելու հնարավոր դեպքերը:
 22. Կենտրոնը, անհրաժեշտության դեպքում, կտրամադրի նաև առողջության ամրապնդման ծառայություններ: Այդ ծառայությունների մասով պահանջը պետք է հիմնված կոնկրետ բնակիչների առողջության գնահատման կարիքների գնահատման վրա:

Ինքնասպանությունը, ինքնավնասումը և խոշտանգումը

23. Առողջապահական թիմը պետք է հայտնի կենտրոնի տնօրենին այն բոլոր դեպքերի մասին, երբ կացարանում բնակվողի առողջությունը հնարավոր է վատթարանա ձերբակալման հետևանքով, հատկապես, եթե կասկածներ կան, որ նրանք կարող են ունենալ ինքնասպանության հակումներ: Այդ դեպքում, պետք է կազմակերպել համապատասխան անձի հետազոտումը: Այդ քայլին դիմելիս առողջապահական թիմը պետք է գիտակցի բժշկական գաղտնիության պահպանման անհրաժեշտությունը, եթե հիվանդը չի տալիս տեղեկատվության բացահայտման համաձայնություն:
24. Չնայած որ, որպես ընդհանուր կանոն, բժշկական գաղտնիությունը պետք է պահպանվի, բացառիկ հանգամանքներում կարելի է շրջանցել անհատների ցանկությունները, երբ՝
 - տեղեկատվությունը պահանջվում է օրենքով կամ դատարանի որոշմամբ,
 - տեղեկատվության բացահայտումը էական նշանակություն ունի վտանգից կամ լուրջ վնասումից հիվանդին կամ այլ անձի պաշտպանելու համար,
 - տեղեկատվությունը պահանջվում է լուրջ հանցագործության կանխարգելման, բացահայտման կամ հետապնդման համար:

Այդ դեպքերում, տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ որոշումը պետք է կայացնի առողջապահության ոլորտի ավագ մասնագետը, և կարող է անհրաժեշտ լինել ստանալ իրավական կամ մասնագիտական խորհրդատվություն:

25. Առողջապահության ոլորտի ավագ մասնագետի կողմից տեղեկատվություն ստանալուց հետո, ինչպես դա սահմանված է ստորև՝ 25-րդ կետում, կենտրոնի տնօրենը պետք է ապահովի, որպեսզի այն փոխանցվի այն անձանց, որոնք պատասխանատու են ձերբակալման հետ կապված հարցերի վերանայման համար, և կացարանում բնակվողի կոնկրետ գործերով զբաղվողներին: Դրա վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն:

Հիվանդության պատմությունը

26. Կացարան ընդունված յուրաքանչյուր անձի համար պետք է բժշկական գործ բացվի, և ջանքեր պետք է գործադրվեն դրանում ներառելու նախկինում գոյություն ունեցող ցանկացած հիվանդության պատմություն: Բժշկական տեղեկատվության գաղտնիության հետ կապված հարցերը պետք է կառավարվեն տվյալների պաշտպանության վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան: Գրառումները պետք է պահպանվեն էլեկտրոնային ու թղթային տարբերակներով:
27. Եթե կացարանում բնակվողներին տեղափոխում են հեռացման այլ կենտրոն կամ քրեակատարողական հաստատություն, ապա կենտրոնը պետք է ապահովի,

որպեսզի տեղափոխման ժամանակ հիվանդության պատմությունը փոխանցվի ընդունող կենտրոնին:

Դեղատնային ծառայությունը

28. Կենտրոնը պետք է ունենա և պահպանի դեղագործության կառավարման վերաբերյալ գրավոր քաղաքականություն ու ընթացակարգեր՝ ներառելու՝
- պահպանվող կամ առօրյա գնվող դեղատոմսով կամ առանց դրա նշանակվող դեղերի ցանկ,
 - ցանկում չընդգրկված դեղերի անհապաղ հաստատման և ձեռք բերման եղանակներ,
 - դեղատոմսերի՝ հստակ սահմանված կիրառում, այդ թվում՝ պահանջների սահմանում, որոնց համաձայն դեղորայքը համարվում է նշանակված, երբ դա նշանակվել է կլինիկական պայմաններում, և որ դեղատոմսերը վերանայվում են՝ նախքան դրանք նորից նշանակելը.
 - դեղորայքի գնումների, ստացման, բաշխման, պահման, նախապատրաստման ու բաժանման, կիրառման ու ոչնչացման համար հստակ սահմանված գործընթացներ,
 - հստակ սահմանված ընթացակարգեր անվտանգ պահման ու ոչնչացման, ինչպես նաև բոլոր հսկվող նյութերի, ներարկիչների ու ասեղների թարմացված ցանկ,
 - դեղերի սխալ կիրառման բոլոր դեպքերը պետք է գրանցվեն,
 - դեղերի հետ առնչություն ունեցող անձնակազմի բոլոր անդամները պետք է վերապատրաստում անցնեն դեղագործական արտադրանքի հետ կապված հարցերի կառավարման վերաբերյալ:
29. Դեղագործական ամբողջ արտադրանքը պետք է պահվի հետևյալ չափորոշիչներն ունեցող անվտանգ վայրում՝
- անվտանգ պարագիծ,
 - միայն թույլտվություն ունեցող բժշկական անձնակազմի մուտք,
 - ամուր պատեր հատակից մինչև առաստաղ ու ամուր առաստաղ,
 - հիմնական ամուր դուռ՝ բարձր անվտանգություն ապահովող կողպեքով (առանց այլ մուտքի),
 - դեղորայքի պահման անվտանգ վայր,
 - վարչարարություն ու կառավարում՝ համապատասխան օրենսդրության համաձայն,
 - պատշաճ կերպով լիցենզավորված անձնակազմի կողմից վերահսկողություն,
 - պատշաճ կերպով լիցենզավորված, հավատարմագրված ու վերապատրաստում անցած անձնակազմի կողմից դեղորայքի կիրառում,
 - դեղորայքը ժամանակին և մատակարարողի ցուցումներին համապատասխան կիրառելու կամ բաշխելու համար պատասխանատվության փաստաթղթավորում:

14. ՀԻԳԻԵՆԱՆ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Բնակելի ու շենքային բոլոր միավորներում պետք է պահպանվեն հիգիենայի չափանիշները, որոնք պետք է առնվազն համարժեք լինեն այն չափանիշներին, որոնք առկա են համայնքում: Անձնական հիգիենայի խելամիտ պահանջները պահպանելու համար կացարանում բնակվողներին պետք է տրամադրվեն համապատասխան միջոցներ:

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Կենտրոն ընդունվելիս ընդունվողները պետք է ապահովվեն հիգիենայի հիմնական պարագաներով (Ընդունման չափանիշներ), և դրանից հետո ցանկացած պահի, երբ դրա անհրաժեշտությունը կլինի:
2. Կացարանում բնակվողները պետք է հնարավորություն ունենան շուրջօրյա օգտվելու զուգարաններից ու ձեռքերը լվանալու հարմարություններից:
3. Կացարանում բնակվողները պետք է ամեն օր հնարավորություն ունենան օգտվելու լոգարանից կամ ցնցուղարանից:
4. Զուգարանից ու լվացվելու հարմարություններից օգտվելու հնարավորություն պետք է տրվի նաև կենտրոնի անձնակազմին ու այցելուներին: Այդ տարածքները պետք է ապահովված լինեն երեխայի հագուստն ու տակդիրները փոխելու հարմարություններով:
5. Կենտրոնը պետք է մաքրել ամեն օր պրոֆեսիոնալ մաքրող սարքավորման միջոցով: Կացարանում բնակիչներից չպետք է պահանջել մաքրել ընդհանուր օգտագործման տարածքները, չնայած որ նրանցից կարող է պահանջվել մաքրել իրենց սենյակները, և նրանց պետք է տրամադրել մաքրող նյութեր՝ դա անելու համար: Պարբերական մաքրման համար պետք է գործի հստակ ժամանակացույց:
6. Յուրաքանչյուր հերթափոխի կոնկրետ ծառայողներ պետք է նշանակվեն՝ մաքրման ծառայությունը վերահսկելու համար՝ համոզվելու համար, որ մաքրության լավ չափանիշները պահպանվում են:
7. Կացարանում բնակվողները պետք է հնարավորություն ունենան օգտվելու վարսավիճարական հարմարություններից:
8. Կացարանում բնակվողները պետք է պարբերաբար մաքրեն իրենց հագուստը: Անկողնու սպիտակեղենը պետք է փոխվի ամեն շաբաթ ու լվացվի:
9. Կացարանում բնակվողներին պետք է խթանել, որպեսզի վերջիններս համագործակցեն իրենց անձնական հիգիենան ու կացարանում անձնական և հասարակական տարածքների նորմալ վիճակը պահպանելու համար:



15. ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Բանավոր ու գրավոր ծառայություններից օգտվելը պետք է բավարարի կենտրոնի և իրենց գործերի ուսումնասիրման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու՝ կացարանում բնակվողների պահանջներին՝ մասնավորապես իրավական օգնության և իրենց իրավունքների մասով:

Պահանջները

1. Կենտրոնը պետք է ձերբակալման կենտրոնի կանոնների (ներքին կանոններ) պատճենները և իրավունքներն ու պարտավորությունները սահմանող (տեղեկատվական փաթեթ) ցանկը թարգմանել կենտրոնում գործածվող լեզուներով:
2. Եթե կացարանում բնակվողներին հասկանալի լեզվով որևէ թարգմանություն առկա չէ, ապա նրանց իրավունքները պետք է բանավոր բացատրել՝ անհրաժեշտության դեպքում հեռախոսային թարգմանության և գրավոր թարգմանությունների տեսքով, որը պետք է ապահովել 48 ժամվա ընթացքում: Կացարանում բնակվողին կամ անձնակազմի անդամին կարելի է խնդրել տրամադրել այդ ծառայությունը, կամ պետք է դիտարկել առցանց թարգմանչական ծառայությունները:
3. Կենտրոնը պետք է ունենա պաշտոնական թարգմանիչների տվյալներ, որոնց կարելի է դիմել՝ ապահովելու համար, որպեսզի հստակ հաղորդակցում տեղի ունենա:
4. Ընդունելի է նաև կացարանում մյուս բնակվողներին, այցելուներին կամ անձնակազմի անդամներին դիմելու տարբերակը, որպեսզի նրանք կատարեն բանավոր թարգմանությունը, եթե երկու կողմերն էլ համաձայն են: Կարելի է նաև օգտվել հեռախոսային թարգմանության ծառայություններից:
5. Եթե կացարանում բնակվողները կամ անձնակազմի անդամներն են թարգմանություն կատարում, ապա կենտրոնը պետք է հաշվի առնի հնարավոր զգայուն հարցերը և ապահովի, որպեսզի կացարանում բնակվող կամ անձնակազմի անդամ հանդիսացող նույն սեռի ներկայացուցիչը, ինչ աջակցության համար դիմած անձն է, կատարի այդ թարգմանությունները:
6. Ինչ վերաբերում է բժշկական հարցերին, ապա բժիշկը կամ առողջապահական թիմի մյուս անդամը պետք է որոշի, թե արդյոք անհրաժեշտ է բանավոր թարգմանիչ: Կացարանում մյուս բնակվողները կամ անձնակազմի անդամները նույնպես կարող են աջակցել, եթե կացարանում բնակվողը տալիս է իր համաձայնությունը

16. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Հաշվի առնելով, որ կենտրոնը քրեակատարողական հաստատություն չէ՝ կենտրոնի անձնակազմը չպետք է անվտանգության ուժերից լինի, և պետք է վերապատրաստման և զարգացման հնարավորություն ունենա, որպեսզի նրանց հնարավորություն տրվի իրագործելու կացարանով ապահովման կենտրոնի նպատակները՝ ուղղված կացարանում բնակվող բոլոր անձանց համար ապահով, անվտանգ ու մարդու իրավունքների պաշտպանված ու մշակութային տեսանկյունից զգայուն միջավայրի ստեղծմանը:

Պահանջները

1. Պետք է աշխատանքի ընդունվեն պլանավորման ու վերապատրաստման դասընթացների կառավարման համար պատասխանատու վերապատրաստման ծառայողներ: Նրանք պետք է՝
 - ապահովեն, որպեսզի տրամադրվեն կացարանով ապահովման հատուկ կենտրոնի գործունեությանը ներհատուկ վերապատրաստման դասընթաց կենտրոնի ամբողջ անձնակազմի համար՝ նախքան պարտականությունների ստանձնումը, (տես ստորև՝ 5-րդ պարբերությունը),
 - իրականացնեն վերապատրաստման մասով կարիքների գնահատում առաջին հանդիպման ժամանակ՝ վերապատրաստման մասով լրացուցիչ պահանջները նախանշելու համար,
 - անձնակազմի անդամներից պետք է փորձել ստանալ որևէ արձագանք,
 - գնահատման մեջ նախանշված պահանջները բավարարելու համար՝ ներկայացնեն կենտրոնի համար վերապատրաստման համընդհանուր ռազմավարություն,
 - ապահովել, որպեսզի առանձին ծառայողներ անցնեն վերապատրաստման անձնական պլաններ,
 - ապահովեն, որպեսզի վերապատրաստումն ու զարգացումը ժամանակին իրականացվեն:
2. Անձնակազմի համար վերապատրաստման դասընթացներ իրականացնելիս պետք է հաշվի անել այն հանգամանքը, որ կենտրոնում պահվող անձինք հանցագործներ չեն, և նրանց չպետք է վերաբերվել որպես այդպիսիք: Անձնակազմի անդամները պետք է նաև գիտակցեն կացարանով ապահովման հատուկ կենտրոնում բնակվողների բազմազան բնույթը, որը կներառի ընդհանուր տեղեկատվություն մշակույթների այն բազմազանության մասին, որոնց անձնակազմի անդամը կարող է առնչվել: Վերապատրաստման բոլոր դասընթացներում պետք է նախատեսել դրույթներ այն մասին, որ անհրաժեշտ է հասկանալ ու ավելի լավ հաղորդակցվել կացարանում բնակվողների հետ, և զբաղվել ու հասցեագրել խոցելի անձանց կարիքները, այդ թվում՝ ուղղորդել նրանց համապատասխան պետական մարմիններ ու տեղեկացնել ընթացակարգերի մասին, կամ այլ մարմիններ կամ միավորումներ, որտեղ նրանք կարող են օժանդակություն ու աջակցություն ստանալ:
3. Պետք է գրանցվեն բոլոր անհատական վերապատրաստման դասընթացները և դրանց անցկացման ժամանակը: Հնարավորության սահմաններում, գրանցման համակարգչային համակարգեր պետք է օգտագործվեն, որոնք կկարողանան ահազանգել այն ժամանակ, երբ անհատների համար կպահանջվի անցկացնել

կրկնակի վերապատրաստման դասընթացներ, կամ անձանց համար, որոնք չեն բավարարել վերապատրաստում անցնելու մասով պարտադիր պահանջը:

4. Վերապատրաստման և կրկնակի վերապատրաստման ծրագրերը ներառում են, բայց չեն սահմանափակվում, հետևյալ տարրերը՝
 - Միգրացիա՝ սոցիալ-աշխարհագրական շրջանակներ, ծագման և նպատակակետեր կրներ, միգրանտների խրախուսում,
 - օրենսդրություն՝ ազգային և միջազգային, որը վերաբերում է անկանոն կարգավիճակով միգրանտների վարչական ձերբակալմանը,
 - հանցագործություն կատարելու մասով՝ հետախուզական նպատակներով հավաքվող տեղեկատվություն,
 - մարդու իրավունքներ՝ ներպետական օրենսդրություն և միջազգային պարտավորություններ,
 - մշակութային, կրոնական և էթնիկ բազմազանություն՝ հարգելով հիմնական էթնիկ խմբերի ու կրոնների հավատք,
 - տրավմայի և սթրեսի նշանների ճանաչում հիմնականում, սակայն ոչ միայն, այն անձանց մոտ, որոնք նախկինում անցել են կյանքը վտանգող իրավիճակներով և որոնք խոշտանգման զոհեր են,
 - մարդկանց թրաֆիքինգ՝ թրաֆիքինգի ու շահագործման զոհերի նախանշում և նրանց համապատասխան ընթացակարգերի վերաբերյալ տեղեկացում,
 - հաղորդակցում՝ ինչպես հաղորդակցվել արդյունավետ կերպով և հարգալից և վերացնել հակասությունները՝ բանավոր թարգմանչի ծառայություններից օգտվելով,
 - արձագանք արտակարգ իրավիճակներում՝ հրդեհ, ջրհեղեղ, առաջին օգնություն, առողջություն և ապահովություն,
 - հպավարակիչ հիվանդությունների նշանների և ախտանիշների ճանաչում ու արձագանքում,
 - անձնական պաշտպանություն, իրավապահ մարմինների կողմից ուժի գործադրման սահմանափակումների գիտակցում, առանձնացման սահմանափակ կիրառում՝ համապատասխան բաժնում սահմանված դեպքերում, կարգուկանոնի պահպանում կացարանով ապահովման հատուկ կենտրոնում,
 - միջադեպերին արձագանքում՝ գրավոր ու բանավոր հաղորդումներ,
 - ազնվություն՝ ինչ է ակնկալվում ծառայողներից, ազնվությանը սպառնացող վտանգները, կոռուպցիայի ազդեցությունն ու արդյունքները,
 - ուղեկցման ընթացակարգերը,
 - զեկույցների ձևակերպում:

17. ՌԱՍԱՅԱԿԱՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ապահովել, որպեսզի առկա լինեն քաղաքականությունն ու գործելակերպը, պայքարել և վերացնել անձնակազմի անդամների, կացարանում մյուս բնակվողների կողմից խտրականության դրսևորումները ու նպաստել հավասարությանը բոլորի համար:

Պահանջները

1. Կենտրոնը պետք է ստեղծի Ռասայական խտրականության կանխարգելման հարցերով կոմիտե, որը պետք է ղեկավարի կենտրոնի տնօրենը, կամ ավագ մենեջերը՝ ընթացակարգերն ու գործելակերպը դիտանցելու ու գնահատելու համար: Եթե կոմիտեի նախագահը կենտրոնի տնօրենը չէ, ապա նա պետք է անմիջականորեն հաշվետու լինի տնօրենին:
2. Ռասայական խտրականության կանխարգելման հարցերով կոմիտեի կազմում պետք է ընդգրկվեն (սակայն չսահմանափակվեն) կրոնական հարցերով ղեկավարը (տես Գլուխ 20՝ Կրոնը), կացարանում բնակվողների ներկայացուցիչներ, սննդի կազմակերպման հարցերով մենեջերը և Ռասայական խտրականության կանխարգելման հարցերով կոմիտեի՝ կապն ապահովող պաշտոնյան:
3. Ռասայական խտրականության կանխարգելման հարցերով կոմիտեն, ի թիվս այլ հարցերի, պետք է արձագանքի ռասայական բնույթի դեպքերին ու բողոքներին: Ռասայական խտրականության կանխարգելման հարցերով կոմիտեն պետք է համաձայնեցնի գործողությունների հստակ դրույթներ՝ մտահոգություն առաջացնող հարցերին արձագանքելու համար: Կոմիտեի նախագահը պետք է ապահովի, որպեսզի այդ հարցերին ընթացք տրվի, իսկ արդյունքներն էլ գրանցվեն:
4. Ռասայական խտրականության կանխարգելման հարցերով կոմիտեի՝ կապն ապահովող պաշտոնյան, որը վերապատրաստվել է համապատասխան չափանիշների մասով, պետք է նշանակվի անձնակազմի անդամներից՝ բողոքները, արդյունքները դիտանցելու գործընթացում օգնություն ցուցաբերելու համար, և ապահովելու, որպեսզի ձեռնարկվի ցանկացած անհրաժեշտ գործողություն:
5. Կենտրոնը պետք է Ռասայական խտրականության կանխարգելման հարցերով կոմիտեի անդամների վերապատրաստման և դրա անցկացման ժամանակի վերաբերյալ գրառումներ կատարի:
6. Ռասայական խտրականության կանխարգելման հարցերով կոմիտեն, վերապատրաստման հարցերով մենեջերի հետ մեկտեղ, պետք է մշակի ամբողջ անձնակազմի վերապատրաստման համար նախատեսված ծրագիր և բարձրացնի նրանց իրազեկվածությունը, ինչպես նաև գրանցի անձնակազմի այն անդամներին, որոնք վերապատրաստում են անցել: Անձնակազմի բոլոր անդամները պետք է կրկնակի վերապատրաստման դասընթացներ անցնեն ամեն տարի:
7. Ռասայական խտրականության կանխարգելման վերաբերյալ օրենսդրության, քաղաքականության և գործելակերպի մասին տեղեկատվությունը պետք է հասանելի լինի անձնակազմի անդամներին, կացարանում բնակվողներին և այցելուներին:
8. Ռասայական խտրականության կանխարգելման վերաբերյալ հայտարարությունը պետք է փակցված լինի կենտրոնում՝ համապատասխան լեզուներով և աչքի ընկնող վայրերում, որպեսզի այն ցանկացած պահի հասանելի լինի անձնակազմի անդամներին, կացարանում բնակվողներին և կենտրոն այցելող ցանկացած անձի համար:

18. ԺԱՄԱՆՑԱՅԻՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Պետք է միջոցառումներ նախատեսվեն՝ կացարանում բնակվողների ժամանցային ու ինտելեկտուալ պահանջմունքները բավարարելու համար: Դրանք պետք է արտացոլեն բազմազան բնակչության գենդերային, մշակութային և էթնիկ պահանջմունքները:

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Կրթությունը՝ մեծահասակները

1. Պետք է ստուգել, որ դասավանդման համար ընտրված ուսուցիչները համապատասխան որակավորում ունեն, և պետք է ներկայացվեն որակավորման վկայագրերը: Կենտրոնը պետք է պահի որակավորման տվյալները:
2. Կենտրոնը պետք է անվանապես մշակի կրթական միջոցառումների ծրագիր՝ շաբաթական առնվազն 25 ժամ, որոնցից առնվազն յոթ ժամը պետք է լինի երեկոյան: Կրթությունը պետք է տրամադրվի ամեն տարի՝ առնվազն 50 շաբաթ: Այն չափն ու մակարդակը, որ պետք է պահպանվի, կարգավորվելու է կենտրոնի զբաղեցվածության մակարդակով, ինչպես նաև կացարանում բնակվողներին պահելու միջին ժամանակահատվածով:
3. Պետք է նպաստել կրթական հնարավորություններին՝ կենտրոնում փակցնելով ծանուցումներ՝ կենտրոնում բնակվողներին հասկանալի լեզվով, ինչպես նաև այդ տեղեկատվությունը ներառել կենտրոնի կանոններում:
4. Ուսումնական դասընթացները պետք է ներառեն հետևյալը՝ հայոց լեզու, տեղեկատվական տեխնոլոգիաներ և ձևավորման արվեստ ու ձեռագործություն:


Գրադարանը՝ մեծահասակները

5. Գրադարանավարի պաշտոնի համար ընտրված ցանկացած անձ պետք է մասնագիտական տեսանկյունից որակավորված լինի և ներկայացնի այդ փաստը հաստատող տվյալներ: Կենտրոնը պետք է պահի այդ տվյալները:
6. Գրադարանը պետք է բաց լինի կացարանում բնակվողների համար տարեկան 52 շաբաթ, օրական առնվազն 7 ժամ, որոնցից առնվազն 2 ժամը պետք է լինի երեկոյան:
7. Պետք է ստեղծվի գրադարան, որը նախատեսված կլինի յուրաքանչյուր բնակվողի տեղի համար նվազագույնը 10 գիրք հաշվարկով: Գրքերը, այդ թվում՝ բառարանները, պետք է նախատեսվեն տարբեր լեզուներով՝ արտացոլելով կենտրոնի փոփոխվող ու բազմազան բնակչությունը:
8. Կենտրոնը պետք է ապահովի, որպեսզի կենտրոնում ներկայացված քաղաքացիները կարողանան օգտվել համապատասխան լեզուներով օրաթերթերից ու լրագրերից, եթե դրանք խելամտության սահմաններում հնարավոր լինի ձեռք բերել:
9. Գրքերը պետք է պահվեն լավ վիճակում և, անհրաժեշտության դեպքում, փոխարինվեն: Կենտրոնը պետք է ապահովի կրոնական գրքերի համապատասխան քանակ՝ կացարանում բնակվողների կրոնական ու հոգևոր պահանջմունքները բավարարելու համար: Գրադարանավարը պետք է կապ հաստատի կրոնական հարցերով մենեջերի հետ՝ համոզվելու համար, որ գրականությունը համապատասխանում է կացարանում բնակվողների պահանջմունքներին:

10. Կենտրոնը պետք է ապահովի, որպեսզի գրադարանում մատչելի լինի ներգաղթային օրենսգրքի, ինչպես նաև ներգաղթի հիմքով ձերբակալմանը վերաբերող օրենսդրության պատճենները, ինչպես նաև ներգաղթային իրավունքի վերաբերյալ գրքեր ու այլ հրատարակություններ, որոնք կարող են օգնել կացարանում բնակվողներին իրենց գործերը նախապատրաստելու համար:
11. Գրադարանում պետք է փակցված լինեն տեղեկություններ կրոնական արարողությունների, կացարանում բնակվողների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ու ընկերություն անող խմբերի համար հասանելի հնարավորությունների ու միջոցառումների մասին տեղեկություններ:

Ֆիզիկական կրթությունը՝ մեծահասակները

12. Կենտրոնը պետք է ապահովի ֆիզիկական կրթության շաբաթական առնվազն 30 ժամ, որոնցից յոթ ժամը պետք է լինի երեկոյան (շաբաթվա ընթացքում կամ հանգստյան օրերին) և յոթ ժամ հանգստյան օրերին (ցերեկային ու երեկոյան ժամերին): Մարզման վայրերում պետք է լինեն մի շարք սարքավորումներ: Ծանրությամբ վարչությունները, եթե այդպիսիք կան, պետք է սահմանափակվեն կոնկրետ սարքավորումներով: Մարզագնդերը պետք է արգելվեն: Սրտանոթային վարժությունները պետք է հասանելի լինեն, եթե բացօթյա վարժություններ հնարավոր չէ իրականացնել:
13. Ժամանցային միջոցառումները կարող են ներառել սահմանափակ շփում ենթադրող սպորտաձևեր, ինչպիսիք են՝ ֆուտբոլը, բասկետբոլը, վոլեյբոլը, ինչպես նաև սեղանի խաղեր՝ բիլիարդ և սեղանի թենիս:
14. Ֆիզիկական կրթությունը պետք է հասանելի լինի տարեկան 52 շաբաթ՝ հանած պետական տոները:
15. Կացարանում բնակվողին պետք է խնդրեն, որպեսզի նա հաստատի, թե արդյոք առկա են բժշկական պատճառներ, որոնք կխոչընդոտեն մասնակցությունը ֆիզիկական կրթությանը, և այդ մասին պետք է գրառում կատարել: Երբ ֆիզիկական կրթությունից օգտվելու նրանց հնարավորությունները սահմանափակվում են, դրա պատճառները պետք է գրանցվեն:
16. Կենտրոնը պետք է տրամադրի համապատասխան սպորտային կոշիկներ ու հագուստ ֆիզիկական կրթության համար (տես նաև հագուստի մասով չափանիշները):
17. Կենտրոնը պետք է նաև կացարանում բնակվող՝ իգական սեռի ներկայացուցիչներին առաջարկի նույն սեռի մասնակցությամբ սպորտային պարապմունքներ և այլ ֆիզիկական վարժություններ, որոնք համապատասխանում են նրանց պահանջմունքներին ու հետաքրքրություններին, ինչպես նաև ստուգելու ընտրության գործընթացը՝ ապահովելու համար, որպեսզի ընտրվածները համապատասխանեն պահանջներին (տես նաև իգական սեռի ներկայացուցիչներին վերաբերող չափանիշներ):
18. Ֆիզիկական կրթության ծրագրերը պետք է ներառեն հստակ սահմանված ներածական տվյալներ կացարանում բնակվողների համար, որը վերաբերում է՝
 - Առողջության և անվտանգության վերաբերյալ տեղեկատվությանը,
 - կանոններին և կանոնակարգերին,
 - մեխանիզմների ու սարքավորումների վերաբերյալ ցուցումներին:
19. Ֆիզիկական կրթության միջոցով շեշտը դրվում է՝
 - առողջ ապրելակերպին նպաստելու,
 - ֆիզիկական գործունեության մեջ ներգրավելուն խրախուսելու,



- կացարանում բնակվող՝ արական ու իգական սեռի ներկայացուցիչների համար սպորտային ու ժամանցային կոնկրետ միջոցառումներին նպաստելու վրա՝ հաշվի առնելով կենտրոնում բազմազան բնակվողների պահանջմունքները:

Ժամանցը՝ մեծահասակները

20. Ժամանցային միջոցառումները պետք է հասանելի լինեն ամեն օր, այդ թվում՝ հանգստյան օրերին ու ամեն երեկո:
21. Ծրագրերն ու միջոցառումները պետք է անցկացվեն անվտանգության ու գործունեության վերաբերյալ կենտրոնի ուղեցույցներին համապատասխան, և կարող են սահմանափակվել տնօրենի որոշմամբ, երբ դա արդարացված է կենտրոնում տեղավորված անձանց պաշտպանելու նկատառումներով:
22. Ժամանցային միջոցառումները պետք է նվազագույնը ներառեն արբանյակային հեռուստատեսությունից, երաժշտական սկավառակներից, արտասահմանյան ֆիլմերից և խաղերից, այդ թվում՝ էլեկտրոնային խաղերից օգտվելու հնարավորություն: Կենտրոնի անձնակազմը պետք է վերահսկի բնակվողների կողմից օգտագործվող՝ սենյակներում անցկացվող միջոցառումները՝ ամեն օր բաժանելով խաղեր ու այլ ժամանցային նյութեր: Կացարանում բնակվողները պետք է ընդգրկվեն առանձին ժամանցային միջոցառումներում, ինչպիսիք են՝ սեղանի խաղերը և փոքր խմբերով միջոցառումները, որոնք համահունչ են հաստատության ապահով, անվտանգ ու սահմանված կարգով գործունեությանը:
23. Կենտրոնի տնօրենը պետք է սահմանի բնակվողների կողմից օգտագործվող սենյակներում հեռուստացույց դիտելու քաղաքականություն և հաստատի դիտման ժամանակացույց:
Այն ծրագրերը, որոնք չպետք է դիտել, հետևյալներն են՝
 - անհարկի բռնություններ քարոզող ծրագրերը,
 - ծայրահեղական գաղափարները կամ քարոզչությունը սատարող ծրագրերը,
 - պորնոգրաֆիա պարունակող ծրագրերը,
 - կացարանում մյուս բնակվողներին ենթադրաբար վիրավորող ծրագրերը:
24. Որպես ընդհանուր սկզբունք՝ կացարանում բնակվողներին պետք է տրամադրվի լուսաբացից մինչև մայրամուտ բացօթյա ժամանցային վայրերից անսահմանափակ օգտվելու հնարավորություն:

Եթե անհրաժեշտ է համարվում սահմանափակումներ կիրառել կամ անհատապես կամ կոլեկտիվ, ապա դրա ամբողջական պատճառները պետք է գրանցվեն:

Եթե սահմանափակումները համարվում են անհրաժեշտ, ապա կացարանում բոլոր բնակվողներին պետք է երաշխավորվի առնվազն ամեն օր մեկ ժամ բացօթյա վարժանք: Բացօթյա ժամանցին մասնակցող՝ կացարանում բնակվող բոլոր անձանց պետք է հնարավորություն տրվի օգտվելու խմելու ջրից ու զուգարանի հարմարություններից:

25. Կենտրոնը պետք է փակցնի ժամանցային միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն՝ կենտրոնի բնակչության բազմազանությունն արտացոլող լեզուներով:
26. Կացարանում բնակվողներին պետք է առաջարկել, որպեսզի վերջիններս ներկայացնեն իրենց կարծիքները հնարավոր լրացուցիչ ժամանցային միջոցառումների վերաբերյալ:
27. Ժամանցի վայրերից օգտվելու գործընթացը պետք է երեք ամիս մեկ մոնիթորինգի

Ենթարկվի ու վերանայվի՝ ստանալով որոշակի արձագանքներ կացարանում բնակվողներից, համոզվելու համար, որ կենտրոնում բնակվողների պահանջմունքները բավարարված են:

Կրթության, ֆիզիկական կրթության և խաղերի համար հնարավորությունը՝ ընտանիքները և երեխաները

Կրթական պահանջների, այդ թվում՝ կրթության ժամերի համար տես Գլուխ 11-ը՝ Ընտանիքները և երեխաները

28. Կենտրոնը պետք է ապահովի մի շարք հնարավորություններ (արտացոլելով մինչև և 17 տարեկանը լրացածների կարիքները) տարեկան 52 շաբաթ՝ չհաշված պետական տոները, որը կներառի, բայց չի սահմանափակվի, գրքեր,
- ձևավորման արվեստ ու ձեռագործություն,
 - Էլեկտրոնային խաղեր,
 - երաժշտություն,
 - SS սարքավորումներ,
 - ֆիզիկական կրթություն:
29. Մասնագիտացված սենյակներ պետք է ապահովվեն շատ փոքրերի համար, որտեղ կլինեն այդ տարիքային խմբին համապատասխան խաղալիքներ, խաղեր և տեսասարքավորումներ:
30. Եթե որոշակի այլ միջոցառումներին մասնակցությունը տեղի է ունենում խնամքի տակ գտնվող երեխաների կրթությանը զուգահեռ, ապա ծնողները պետք է հնարավորություն ունենան լինելու իրենց երեխաների հետ նրանց կրթության ընթացքում և քննարկել երեխաների կրթության հետ կապված հարցերը համապատասխան ուսուցիչների հետ:



19. ԿՐՈՆԸ

ՉԱՓԱՆԻՇԸ

Կացարանում բնակվողների կրոնական և հոգևոր կարիքները պետք է հնարավորին չափով բավարարվեն՝ տրամադրելով նրանց աղոթքի, կրոնական ծիսակատարությունների և հովվական խնամատարությունների համար նախատեսված վայրեր:

1. Կենտրոնը պետք է նշանակի կրոնական հարցերով ղեկավար, ով պատասխանատու կլինի կենտրոնում կրոնական հարմարությունների տրամադրման հետ կապված բոլոր հարցերի համար, այդ թվում նաև՝
 - պաշտամունքի համար հարմար տարածք տրամադրելու,
 - կրոնական և նման բազմազան խնդիրների շուրջ անձնակազմին խորհրդատվություն տրամադրելու,
 - հոգևորականների կողմից այցելություններ կազմակերպելու ու վերահսկողություն իրականացնելու,
 - կրոնական տոնակատարությունների հարգալից իրականացումն ապահովելու համար:

Պայմանավորված կացարանում բնակվողների թվով և նրանց կրոնական հետաքրքրությունների բազմազանությամբ՝ կրոնական հարցերով ղեկավարի աշխատանքը կարող է լինել ոչ լրիվ ժամանակով: Այդ գործառույթը կարող է իրականացնել համապատասխան վերապատրաստում անցած և փորձառություն ունեցող աշխատողը կենտրոնում իր ամենօրյա պարտականությունների շրջանակում:

2. Կրոնի մասին գրառում, որին ցանկանում են հետևել կացարանում բնակվողները, պետք է կատարվի նրանց համաձայնության դեպքում, և տեղեկություն տրամադրվի համապատասխան հոգևորականին:
3. Կացարանում բնակվողների ցանկության դեպքում նրանց կարող է այցելել իրենց կրոնի հետևորդ հոգևորականը նրանց ընդունումից հետո գործնականում այդպիսի հնարավորություն առաջանալու դեպքում և դրանից հետո յուրաքանչյուր հնարավորության դեպքում:
4. Երբ կացարանում բնակվողները ներկայացնում են իրենց հոգևորականին տեսնելու խնդրանք, համապատասխան հոգևորականները ծանուցվում են այդ մասին այդպիսի խնդրանք ստանալուց 24 ժամվա ընթացքում, և կատարվում է ծանուցման մանրամասների արձանագրում:
6. Կրոնական տոնակատարությունների (արարողությունների) օրացույցը պետք է հրապարակվի կացարանում բնակվողների տեղեկացվածությունն ապահովելու համար:
7. Եթե կացարանում բնակվողները առանձնացվում են, կրոնական հարցերով ղեկավարը պետք է անհապաղ տեղեկացվի կացարանում բնակվողին այցելություն կազմակերպելու նպատակով, և հնարավորության, ինչպես նաև այդ անձի կողմից նման ցանկության արտահայտման դեպքում, կազմակերպի նրանց հոգևորականի այցելությունը:
9. Կրոնական հարցերով ղեկավարը և կենտրոնի տնօրենը պետք է մշակեն մեխանիզմներ, որոնք պետք է ապահովվեն կոնկրետ ժամանակ տվյալ կրոնի հետևորդ հանդիսացող՝ կացարանում բնակվողների համար հոգևորականների կողմից կրոնական ծիսակատարությունների կատարման համար:
10. Կացարանում բնակվողներին պետք է տրամադրվեն իրենց կրոնի վերաբերյալ կրոնական գրքեր:

20. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇԸ

Կացարանում բնակվողների համար ապահովել անվտանգ միջավայր ահաբեկման, հակասոցիալական վարքագծի, թմրանյութերի և բժշկական զննման հետ կապված ռազմավարությունների միջոցով:

Պահանջները

1. Պետք է հրապարակվեն քաղաքականություններ՝ տվյալ հաստատությունում տարբեր տարիքի ու սեռի անձանց կողմից ահաբեկման, ինքնավնասման և թմրանյութերի չարաշահման դեպքերի տարածվածության, տեսակի և վայրի հետ կապված վերլուծության հիման վրա: Անձնակազմից որոշ աշխատողներ, որոնք պաշտոնապես համարվում են Համայնքի անվտանգության աշխատողներ, պետք է վերապատրաստվեն և պատասխանատվություն ստանձնեն համայնքի անվտանգության հարցերի համակարգման և հետաքննություն իրականացնելու համար: Համայնքի անվտանգության աշխատողները պետք է ուսումնասիրեն տեղեկությունները և վարեն հսկիչ գրանցամատյաններ՝ ցույց տալով, թե ինչ գործողություն է կատարվել հետևյալ ոլորտներում՝
 - նախանշել խնդիրը, որոշել դրա ծանրության աստիճանը (դիտանցել) և վերահսկել,
 - փոխել միջավայրը (մշակույթը),
 - աջակցություն տրամադրել տուժածներին, ինքնավնասում կատարողներին և թմրանյութեր չարաշահող անձանց,
 - պայքարել ահաբեկող վարքագծի դեմ,
 - նախանշել սեփական անձի նկատմամբ ոտնձգության (ինքնավնասման) պատճառները,
 - պետք է հետաքննություն կատարվի կացարանում բնակվողներին հասցված բոլոր վնասվածքների առնչությամբ, և արձանագրվեն ձեռնարկված գործողությունները:

Ահաբեկումը

2. Այլ անձանց նկատմամբ ահաբեկում իրականացնող անձանց և նրանց գործողություններից տուժածների հետ կատարվող ընթացակարգերի մասին տեղեկությունները պետք է ներկայացվեն տարբեր լեզուներով՝ անձնակազմի, կացարանում բնակվողների և այցելուների համար տեսանելի վայրում: Կացարանում բնակվողները պետք է խրախուսվեն այդպիսի վարքագծի մասին զեկուցելու համար, անհրաժեշտության դեպքում՝ գաղտնիության պայմաններում, անկախ այն հանգամանքից՝ դա տեղի է ունեցել իրենց, թե այլ անձանց հետ:
3. Ահաբեկման դեպքերի մասին բոլոր բողոքներին պետք է լուրջ վերաբերել: Միջադեպերը պետք է արձանագրվեն դրանցով զբաղված (կամ բողոքներն ընդունած) աշխատողի կողմից զեկուցման հատուկ ձևերի վրա՝ նշելով իրականացնողներին, տուժածներին, վկաներին և մնացած բոլոր հանգամանքները: Պետք է վարվի միջադեպերի մասին զեկուցման գրանցամատյան, որում պետք է արձանագրվեն բոլոր միջադեպերը, և մանրամասները պետք է մուտքագրվեն իրականացնողների և տուժած անձանց անձնական գործերում:

4. Ահաբեկման միջադեպերին արձագանքը պետք է լինի եռափուլ՝
 - 1-ին փուլ՝ բանավոր նախազգուշացում և իրականացնող անձի նկատմամբ հսկողություն:
 - 2-րդ փուլ՝ առավել խիստ հսկողություն և գրավոր նախազգուշացում՝ պարզաբանելով, որ նման վարքագծի շարունակական դրսևորումը կհանգեցնի առանձնացման:
 - 3-րդ փուլ՝ առանձնացում:
5. Յուրաքանչյուր փուլում ենթադրյալ իրավախախտում իրականացնողները պետք է իրավունքունենան բողոքարկելու որոշումները իրենց գործով զբաղվող աշխատողներից առավել բարձր պաշտոն զբաղեցնող աշխատողներին: Կանոնավոր կերպով պետք է կազմակերպվեն համայնքի անվտանգության հարցերով հանդիպումներ՝ Համայնքի անվտանգության աշխատողի ղեկավարությամբ, որոնց պետք է մասնակցեն թիմի ու միավորի ղեկավարները և առողջապահական հարցերով աշխատողները:
6. Կացարանում բնակվողներին կենտրոնում տեղակայելիս պետք է հաշվի առնվի տվյալ բնակչի վարքագծի պատմությունը և այն, թե ինչպիսի վտանգ է նա ներկայացնում կացարանում բնակվող մյուս անձանց, անձնակազմի ու այցելուների անվտանգությանն ու ապահովությանը:
7. Պետք է մշակվեն անվտանգության ու հսկողության ներքին ցուցիչներ, իսկ հետախուզական տվյալների հավաքման նպատակները պետք է նախանշվեն անվտանգությանը սպառնացող վտանգների հիման վրա: Անձնակազմի բոլոր անդամները պետք է իմանան հետախուզական նպատակներով մշտապես տեղեկություններ հավաքելու անհրաժեշտության մասին և նախանշեն այն անձանց, ովքեր՝
 - իրականացնում են ահաբեկում,
 - ահաբեկումից հավանական կամ փաստացի տուժածներ են,
 - զբաղվում են թմրանյութերի առևտրով և (կամ) օգտագործում են թմրանյութեր,
 - հակված են ինքնավնասման,
 - վտանգում են կարգապահությունն ու կարգուկանոնը անկարգություններ հրահրելով կացարանում բնակվողների շրջանում:

Երախտագիտություն պետք է հայտնել անձնակազմի այն անդամներին, ովքեր տրամադրել են հետախուզական արդյունավետ տեղեկություններ:

8. Ահաբեկման (ինքնավնասման) միջադեպերը պետք է քննարկվեն Ղեկավար կազմի անդամների հանդիպումներում:

Ինքնասպանությունը և ինքնավնասումը

9. Ինքնասպանության կամ ինքնավնասման վտանգի գնահատումը պետք է ընդգրկվի ծանոթանալու փուլում իրականացվող բժշկական զննության գործընթացում, որի նպատակը կլինի նաև նախանշել հոգեկան առողջության խնդիրներն ու ալկոհոլի կամ թմրանյութերի չարաշահման նշանները: Հայտնաբերված բոլոր նման խնդիրների մասին պետք է տեղեկացնել բժշկին, ով կորոշի, թե արդյոք կացարանում բնակվողը պետք է տեղափոխվի բժշկական հաստատություն:
10. Անձնակազմի բոլոր անդամները պետք է վերապատրաստվեն՝ հոգեկան առողջության վատթարացման նշանները հայտնաբերելու և այն անձանց նախանշելու

համար, որոնք կարող են ունենալ ինքնավնասման նախատրամադրվածություն: Մտահոգությունների մասին պետք է անմիջապես տեղեկացնել կառավարչին և Համայնքի անվտանգության աշխատողին, ով կորոշի, թե արդյոք կա բժշկական միջամտության կարիք:

11. Եթե իրավիճակը կարող է վտանգավոր լինել կյանքի համար, ապա պետք է դիմել բժշկական օգնության, ինչպես նաև քննարկել կացարանում բնակվող անձին իր իսկ անվտանգության նկատառումներով առանձնացնելու հարցը: Ռիսկային համարվող՝ կացարանում բնակվողների տեղավորման համար նախատեսված առանձնացման բոլոր սենյակները պետք է ազատված լինեն այնպիսի կահույքից կամ իրերից, որոնք կարող են օգտագործվել որպես ինքնավնասման միջոցներ:
12. Ինքնասպանության և ինքնավնասման հետ կապված հարցերը պետք է քննարկվեն ղեկավարների և համայնքի անվտանգության աշխատողների՝ համայնքի անվտանգությանը նվիրված հանդիպումներում: Անհրաժեշտության դեպքում այդպիսի հանդիպումներ կարող են կազմակերպվել կարճ ժամանակահատվածում, հատկապես եթե անհրաժեշտ է որոշում կայացնել կացարանի որևէ բնակչի հատուկ բժշկական հաստատություն տեղափոխելու մասին:
13. Ռիսկային որակված, սակայն դեռևս ոչ առանձնացման կամ տեղափոխման ենթակա անձանց տվյալները պետք է տրամադրվեն շահագործումն ապահովող անձնակազմին հերթափոխին նախորդող ճեպագրույցների ընթացքում, որպեսզի այդ անձինք լինեն մշտական վերահսկողության տակ:
14. Ճաշարանից ստացված տեղեկությունների հիման վրա գրառումներ պետք է կատարվեն այն անձանց մասին, ովքեր հրաժարվում են սննդից:
15. Շահագործումն ապահովող անձնակազմի անդամները պետք է կրեն կապեր, դանակներ և իմանան անհետաձգելի բժշկական օգնության պայուսակի տեղը:
16. Հաշվի պետք է առնվի նաև վերապատրաստում անցած պաշտպանների կողմից իրավական խորհրդատվություն և (կամ), պահանջի դեպքում, համապատասխան ՀԿ-ի կամ կամավորական կազմակերպության միջոցով այլ պաշտպանություն տրամադրելու հարցը:



21. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇԸ

Անվտանգությունը պետք է ապահովվի կացարանում բնակվողների, ընդհանուր համայնքի, անձնակազմի և այցելուների պաշտպանության համար բավարար սահմանափակումներով: Առաջնային է կարգուկանոնի պահպանումը կենտրոնի համայնքի նկատմամբ արժանապատիվ ու հարգալից վերաբերմունքի դրսևորմամբ:

Պահանջները

Կառավարումը, հետախուզական տեղեկությունների հավաքումը և ընթացակարգերը

1. Կենտրոնը պետք է ունենա Անվտանգության ներքին փաստաթուղթ, որը պետք է համաձայնեցված լինի հաստատության տնօրենի և գլխավոր գրասենյակներում ՄՊԾ ձեռքակալման հարցերով ղեկավարների հետ:
2. Անվտանգության ներքին փաստաթուղթը պետք է ներառի մեխանիզմներ՝
 - հետախուզական տեղեկությունների հավաքման և հետախուզական նպատակների սահմանման համար՝ կապված այնպիսի հանցագործությունների կատարման հետ, ինչպիսիք են օրինակ՝ թրաֆիքինգը և մաքսանենգ ճանապարհով տեղափոխումը,
 - գրառումների կատարման ու վարման համար՝ հետախուզության, տվյալների պաշտպանության և մարդու իրավունքների բնագավառներում կիրառվող օրենսդրությանը համապատասխան,
 - ՄՊԾ հետախուզական համակարգի, հետախուզական տարածքային մարմինների և իրավապահ այլ կառույցների հետ կապի համար,
 - վերապատրաստման նվազագույն մակարդակներին առնչվող միջոցառումների համար,
 - SS անվտանգության համար,
 - հանցագործություն կատարելու մեջ կասկածվող առանձին բնակվողների առնչությամբ ռիսկի գնահատման արդյունքների ստացման ու կառավարման համար,
 - հետախուզական համակարգեր գործարկող անձնակազմին անվտանգության մասով համապատասխան ստուգման ենթարկելու համար,
 - անվտանգությանն առնչվող տեղեկություններ (սյուբեր) գլխավոր գրասենյակ և ձեռքակալման այլ հաստատություններ փոխանցելու համար,
 - միջադեպերի մասին հաղորդումներ ներկայացնելու հետ կապված ցուցումների համար,
 - «ըստ կանչի» սկզբունքով կարգավորումներ կատարելու համար: Կենտրոնի հերթապահ կառավարիչը պետք է հասանելի լինի շուրջօրյա և շաբաթվա բոլոր օրերին: Ներքին հրահանգներում պետք է ներառվեն շուրջօրյա սկզբունքով հերթապահ կառավարիչների ցուցակը և այն հերթապահ կառավարիչի տվյալները, ում հետ հնարավոր է կապ հաստատել, և ով կարող է անմիջապես պատասխանել հեռախոսով կամ անձամբ:
3. Անվտանգության պետք, ով պատասխանատու է հաստատությունում ամենօրյա անվտանգությունն ապահովելու համար, պետք է լինի վերապատրաստված:

4. Անձնակազմի բոլոր նոր անդամների համար պետք է կազմակերպվի վերապատրաստման դասընթացներ և անվտանգության հարցերով ճեպագրույցներ: Վերապատրաստման ընթացքում պետք է հաշվի առնվեն բոլոր ներքին գործոններն ու ներառվեն Անվտանգության ներքին քաղաքականության համապատասխան բոլոր հայեցակետերը: Վերապատրաստման մասին պետք է գրառում կատարվի ամբողջ անձնակազմի համար վարվող վերապատրաստման անհատական գրանցամատյաններում:
5. Անձնակազմի անդամներն անվտանգության սարքավորումների ցանկացած անսարքության մասին պետք է տեղեկացնեն անվտանգության պետին:
6. Անվտանգության հետ կապված բոլոր սարքավորումները պետք է ստուգվեն ընդունված ծրագրի համաձայն և համապատասխան ժամկետներում՝
 - ստուգումները պետք է արձանագրվեն,
 - պետք է իրականացվեն վերանորոգման գործողություններ:
7. Անձնակազմի անդամները պետք է անվտանգության պետին և ՄՊԾ գլխավոր գրասենյակ անմիջապես զեկուցեն՝
 - որևէ բանալու կորստի կամ ենթադրյալ կորստի մասին,
 - որևէ կողպեք, այդ թվում՝ էլեկտրոնային կողպեքներ բացելու փաստացի կամ հավանական փորձի մասին,
 - էլեկտրոնային կողպեքների անսարքության մասին,
 - որևէ կողպեքի կամ բանալու վնասման մասին,
 - ցանկացած լուրջ պատահարի կամ թեթև միջադեպի մասին:
8. Հետաքննություն պետք է իրականացվի պլանների, բանալիների, գործիքների, նյութերի, փոխադրամիջոցների և բանալիների բացման փորձերի մասին բոլոր հաղորդումների առնչությամբ:
9. Հետաքննության մասին զեկույցները պետք է՝
 - պատրաստվեն ամեն ամիս կամ պահանջի դեպքում՝ ավելի հաճախ,
 - ներառեն տեղեկությունների հիման վրա կատարված եզրակացություններ,
 - ներկայացվեն Կենտրոնի տնօրենին, հետաքննության հարցերով աշխատողին, ՄՊԾ գլխավոր գրասենյակ և շենքային միավորի շահագործումն ապահովող ղեկավարներին:
10. Հանցագործության կատարման մեջ կասկածվող կացարանում բնակվողների վերաբերյալ անվտանգությանն առնչվող տեղեկությունները պետք է արձանագրվեն անվտանգությանն առնչվող տեղեկությունների համար հատուկ նախատեսված զեկույցում:
11. Հետախուզական ստորաբաժանումը պետք է հարուցի հետախուզական գործ, եթե կացարանում բնակվողի առնչությամբ առկա է անվտանգությանն առնչվող տեղեկություն հանցագործություն կատարելու մասին: Այդ գործերը պետք է պահվեն ապահով սենյակում, սակայն պետք է հասանելի լինեն նաև անձնակազմի լիազորված անդամների համար, երբ փակ է Անվտանգության վարչությունը:
12. Գաղտնի տեղեկություններից օգտվելու առավել լայն լիազորություն ունեցող հետախուզության հարցերով աշխատողը գնահատում է Անվտանգությանն առնչվող տեղեկությունների մասին զեկույցում ներառված տեղեկատվությունը և արդյունքները գրանցում Անվտանգության գործում:

13. Անվտանգությանն առնչվող տեղեկությունների մասին զեկույցի յուրաքանչյուր ձև՝
 - ունի եզակի նույնականացման համար,
 - նույն կերպ նշվում է կացարանում բնակվողների անվտանգության գործում,
 - հստակ նշվում է առաջին էջի վրա անհապաղ գործողությունների համար, եթե կացարանում բնակվող տվյալ անձը կամ պատահարը գնահատվում է որպես անխուսափելի վտանգ սպառնացող:
14. Միայն հետախուզության հարցերով վերապատրաստված աշխատողները պետք է գործ ունենան հաստատության տարածքում կամ դրանից դուրս գաղտնի տեղեկատվական աղբյուրներ հանդիսացող անձանց (տեղեկություններ հայտնող անձանց) հետ :
15. Հետախուզական նյութերի հետ աշխատելու համար պետք է ներդրվի հատուկ նպատակ հետապնդող տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) համակարգ գործերի թղթային օրինակների հետ մեկտեղ, որից օգտվելու հնարավորություն կարող են ունենալ օգտատերերը՝ ըստ գաղտնի փաստաթղթերից օգտվելու իրենց լիազորության աստիճանի:

Իրավասու անձը պետք է իրականացնի ընթացակարգային անվտանգության ստուգումներ և ապահովի, որ

- համակարգչին միացված չէ համացանցին միանալու համար մոդեմ և ծրագիր,
- օգտագործվում են միայն լիցենզավորված ծրագրեր,
- չկան կամ հասանելի չեն պոռնոգրաֆիկ բնույթի, թմրանյութերի մասին ֆայլեր, ռասիստական կամ այլ անօրինական կամ ոչ ցանկալի նյութեր:

Հաշվետվությունը և հսկողությունը

16. Բոլոր տարածքներում պետք է հերթապահություն իրականացվի կանոնավոր և անկանխատեսելի ընդմիջումներով՝ կացարանում բնակվող բոլոր անձանց նկատմամբ շուրջօրյա վերահսկողություն ապահովելու համար:
17. Անօրինական իրեր գտնելու նպատակով՝ կացարանում բնակվողների փոստերի բացման միջոցառումները սահմանող գրավոր հրահանգներ պետք է լինեն:
18. Պետք է լինեն տեսակցությունների կարգավորման և վերահսկման ներքին ընթացակարգեր ու հրահանգներ: Տե՛ս 7-րդ գլուխը՝ «Հաղորդակցումը»:
19. Կենտրոնը պետք է ապահովված լինի կացարանում բնակվողներին այցելող բոլոր անձանց ինքնությունը ստուգող համակարգով, և թույլ չտա կացարանում բնակվողներին մեկնել այցելուների հետ կամ հանդես գալ որպես այցելուներ: Տե՛ս 7-րդ գլուխը՝ «Հաղորդակցումը»:
20. Անձնակազմի անդամները պետք է ունենան բոլոր բնակելի տարածքները մուտք գործելու հնարավորություն. անձնակազմի կողմից նախաձեռնվող ինքնակամ տեսահսկում չպետք է թույլատրվի:
21. Պետք է գործի այնպիսի համակարգ, որը թույլ կտա, որպեսզի Կենտրոնի ճշգրիտ գրանցամատյանը անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի ձեռք բերել անհրաժեշտ ցանկացած պահի: Հիմնական գրանցամատյանը պետք է վարվի էլեկտրոնային և թղթային եղանակով և թարմացվի յուրաքանչյուր անգամ, երբ կենտրոն մուտք կամ կենտրոնից ելք է կատարվում: Գրանցամատյաններ պետք է վարվեն նաև յուրաքանչյուր բնակելի միավորում և ստուգվեն առնվազն ամեն գիշեր, երբ միավորները փակվում են, և առավոտյան, երբ դրանք բացվում են:

22. Նշանակված ղեկավարը պետք է կատարի համապատասխան փաստաթղթավորումը՝ հաստատելով, որ 24 ժամվա ընթացքում առնվազն երկու անգամ կատարվել է գրանցամատյանի ստուգում: Արձանագրությունը պետք է պահպանվի նվազագույնը մեկ ամիս:
23. Տեղում անվանական ստուգումները, երբ կացարանում բնակվողներից պահանջվում է այդ պահին մնալ իրենց գտնված տեղում, պետք է կատարվեն ամսվա ընթացքում երկու անգամ կամ Կենտրոնի տնօրենի կողմից սահմանված ժամանակահատվածներում:
24. Ղեկավար թիմի որևէ անդամ պետք է ամսվա ընթացքում գիշերային հերթապահության ժամանակ այցելի բոլոր բնակելի տարածքները և արձանագրի այցելությունից ստացված տեղեկությունները:
25. Գիշերային հերթափոխի աշխատողների համար պետք է հասանելի լինեն գիշերվա ընթացքում շահագործման ընթացակարգերը, այդ թվում՝ այն, թե ինչ պետք է անել արտակարգ իրավիճակում:
26. Հերթապահության անցնող անձնակազմի անդամները պետք է ճեպագրույց ունենան հետևյալի վերաբերյալ՝
 - հետախուզական տեղեկությունների,
 - նախորդող 24 ժամվա ընթացքում տեղի ունեցած բոլոր լուրջ պատահարների,
 - կացարանում բնակվող առանձին անձանց առնչվող հատուկ ցուցումների վերաբերյալ:
27. Հսկիչ սենյակի անձնակազմը պետք է լինի վերապատրաստված և ունենա գրավոր ցուցումներ հետևյալի վերաբերյալ՝
 - արագ արձագանքում ահազանգերին, սարքավորումների և ռադիոցանցի ստուգում,
 - ստացված տեղեկությունների ճշգրիտ գրանցում,
 - տեղեկությունների մասին զեկուցում,
 - գործողություններ՝ չնախատեսված իրավիճակների ներքին պլանին համապատասխան,
 - ցուցումներ՝ կոնկրետ պատահարների կամ իրավիճակների արձագանքելու մասին,
 - արտակարգ պատահարի արձագանքման առաջին քայլերի կազմակերպում և հսկողություն,
 - բոլոր ռադիոկայանների տվյալների և դրանց տրամադրված ռադիոընդունիչների գրանցման համարների արձանագրում,
 - կանոնավոր ստուգիչ կանչեր,
 - կայանների և հիմնական կայանի համար ազգային մակարդակում հաստատված կանչի ազդանշանների կիրառում,
 - ստուգիչ կանչին չպատասխանելու առնչությամբ հետաքննություն,
 - ով և ինչ հանգամանքներում ունի հսկիչ սենյակ մուտքի հնարավորություն,
 - մաքրությունն ապահովող անձնակազմի և պայմանագրային հիմունքներով աշխատողների նկատմամբ վերահսկողություն՝ գաղտնի նյութերի հետ նրանց շփումը կանխելու նպատակով,
 - հսկիչ սենյակ մուտք գործող կամ այնտեղից դուրս եկող յուրաքանչյուր անձի հաշվառում,

- Կենտրոնի հերթապահ ղեկավարը պետք է առնվազն ամեն օր այցելի ստուգիչ սենյակ:
28. Ընդունարանի անձնակազմը պետք է հաստատի Կենտրոն մուտք գործող կամ այնտեղից դուրս եկող կացարանում բնակվող բոլոր անձանց ինքնությունը և գրանցամատյանում արձանագրի նրանց ընդհանուր թիվը՝ համաձայնեցնելով այն հսկիչ-անցագրային կետի աշխատողների հետ:
29. Պետք է գործեն մեխանիզմներ՝ կացարանում բնակվողների ինքնության որոշումը դյուրացնելու համար (տես 2-րդ գլուխը՝ «Ընդունումը և արձակումը»), այդ թվում՝
- անձնական գործի,
 - մանրամասն նկարագրի,
 - լուսանկարների,
 - կենսաչափական տվյալների՝ մատնահետքերի միջոցով:

Ուղեկցումը

30. Կենտրոնից դուրս ուղեկցման գործողությունների պլանավորման մեջ ներառված ընթացակարգերը պետք է հստակորեն սահմանվեն և ներառեն հետևյալը՝
- ուղեկցվող բնակվողների համար ռիսկի գնահատում՝ հաշվի առնելով անվտանգության հետախուզական կամ ցանկացած այլ համապատասխան տեղեկատվությունը, ինչպես օրինակ՝ հաստատությունում նրա կողմից դրսևորված վարքագիծը և այլ հիմնական տեղեկություններ,
 - փոխադրամիջոցի անվտանգության և ապահովության ստուգում,
 - ընդմիջումներ կատարելու վերաբերյալ ցուցումներ,
 - նպատակակետի հետ կապված ռիսկի գնահատում,
 - պատահարի դեպքում ձեռնարկվելիք միջոցառումների մասին ցուցումներ,
 - զեկուցման մեխանիզմներն ու արտակարգ իրավիճակների դեպքում կոնտակտային հեռախոսահամարները,
 - ուղևորության ընթացքում զսպման միջոցների (եթե այդպիսիք կիրառվում են) ստուգում,
 - այն հանգամանքների հետ կապված ռիսկի գնահատում, որոնց պարագայում կարող է հաշվի առնվել սահմանափակումների կիրառման միջոցը, ինչպես նաև կիրառման համար թույլատրված սահմանափակումների տեսակների նախանշում:
31. Ընթացակարգերում պետք է հստակորեն սահմանվեն ուղեկցման համար պատասխանատու աշխատողի պարտականությունները:
32. Որպես կանոն, զսպման միջոցների անհրաժեշտություն չպետք է լինի, և դրանք չպետք է կիրառվեն, եթե կացարանում բնակվող անձը վտանգ չի ներկայացնում սեփական անձի, այլ անձանց կամ գույքի համար, կամ եթե լուրջ վտանգ կա, որ նա կարող է փախչել, ինչի մասին նշվել է նրա անձնական գործում: Նախապես պետք է սահմանվեն զսպման այն միջոցների տեսակները, որոնք կարող են կիրառվել: Կարող են կիրառվել միայն ողջամիտ և համաչափ միջոցներ, և դրանց կիրառումը պետք է տևի հնարավորինս կարճ ժամանակահատված: Ուշադրություն պետք է դարձնել, որպեսզի ապահովվի, որ կիրառվող միջոցները չխաթարեն արյան շրջանառությունը կամ չխանգարեն նորմալ շնչառությանը: Որպես պատժամիջոց երբեք չպետք է օգտագործվեն ձեռնաշղթաներ:

33. Ուղեկցող թիմից առնվազն մեկ անդամ պետք է պատկանի կացարանում բնակվող նույն սեռին, իսկ մինչև 18 տարեկան յուրաքանչյուր բնակչի միշտ պետք է ուղեկցի նաև կին աշխատող:
34. Նախքան ուղեկցումը բոլոր բնակվողները պետք է խուզարկվեն (սովորաբար դա անձնական խուզարկություն է, ինչպես նաև մետաղափնտրիչ ձեռքի սարքով ստուգում)՝ անձանց խուզարկության մասին ընդհանուր ցուցումներին համապատասխան:
35. Պետք է սահմանված լինեն մեխանիզմներ նախքան ուղեկցումը խուզարկության ենթարկված անձանց և խուզարկություն չանցած անձանց միջև շփումը կանխելու համար:
36. Նշանակված ղեկավարը պետք է ապահովի, որ՝
 - հաստատվեն կացարանում բնակվողների ինքնությունը,
 - ուղեկցող անձնակազմը գրավոր կերպով տեղեկացված լինի անվտանգությանը կամ առողջապահությանը վերաբերող ցանկացած խնդրի, այդ թվում՝ դեղորայքի հետ կապված խնդիրների մասին,
 - ուղեկցող անձնակազմին տրամադրվեն ուղեկցման և նպատակակետի մասին կոնկրետ տեղեկություններ,
 - ուղևորությանը մասնակցող բոլոր բնակվողներին և անձնակազմի անդամներին տրամադրվեն բավարար քանակությամբ ուտեստներ:
37. Ուղեկցող անձնակազմը պետք է ապահովի, որ փոխադրամիջոցում գույքն ու փաստաթղթերը դրվեն անվտանգ ու ապահով վայրում:
38. Մանկահասակ երեխաները պետք է ապահովվեն երեխաների համար նախատեսված նստատեղով՝ ազգային կանոնակարգերին համապատասխան և տեղավորվեն մայրիկի կամ ընտանիքի այլ չափահաս անդամ կողքին, եթե այլ միջոցառում չի պահանջվում երեխայի գերակա շահն ապահովելու համար:
39. Նախանշված ռիսկի գործոնները պետք է արձանագրվեն ձերբակալման մասին որոշման մեջ և կացարանում բնակվողի մասին փոխանցելի փաստաթղթում:
40. Ուղեկցման ընթացքում անվտանգության և առողջության հետ կապված կամ ցանկացած այլ մտահոգություն պետք է արձանագրվի և փոխանցվի ընդունող հաստատություն անվտանգությանն առնչվող տեղեկությունների մասին զեկույցի միջոցով:
41. Կենտրոնի և տեղի հիվանդանոցների միջև պետք է գոյություն ունենա համաձայնության մասին արձանագրություն կացարանում բնակվողներին՝ կենտրոնից դուրս բժշկական օգնության տրամադրումը դյուրացնելու համար:
42. Պետք է վարվի ստացիոնար բուժում ստացող հիվանդների հերթափոխի մատյան, երբ կացարանում բնակվողը վերահսկողությամբ տեղավորվում է կենտրոնից դուրս հիվանդանոցում:
43. Կացարանում բնակվող՝ ուղեկցվող կամ ստացիոնար բուժում ստացող անձի նկատմամբ պետք է իրականացվի մշտական վերահսկողություն:
44. Ղեկավար անձնակազմը պետք է ապահովի, որ ուղեկցող անձնակազմը կարողանա անընդհատ կապ պահպանել Կենտրոնի հետ և լինի կապի մեջ: Զեկուցման մեխանիզմների մասին ուղեկցող անձնակազմին կտեղեկացվեն նախքան կենտրոնից մեկնելը:
45. Ուղեկցող փոխադրամիջոցն ապահովված կլինի առաջին օգնության դեղարկղով և կրակմարիչով:

Բանալիները և կողպեքները

46. Անվտանգության ներքին ռազմավարությամբ պետք է սահմանվեն ընթացակարգեր բանալիների անվտանգ պահեստավորման, բաշխման, տրամադրման, վերադարձման ու ապահով պահման համար:
47. Անձնակազմի կողմից օգտագործվող բոլոր բանալիները՝ բացառությամբ ձեռնաշղթաների բանալիների, պետք է համարակալվեն և պահվեն բանալիների համար նախատեսված չիրկիզվող պահարանում:
48. Անվտանգության լրացուցիչ բանալիները, այդ թվում՝ ձեռնաշղթաների բանալիները պետք է պահվեն բանալիների առանձին չիրկիզվող պահարանում:
49. Հիմնական բանալիները պետք է պահվեն հիմնական բանալիների համար նախատեսված ապահով չիրկիզվող պահարանում, որից օգտվելու իրավունք կարող են ունենալ հնարավորինս քիչ թվով հատուկ աշխատողներ՝ գերադասելի է միայն տնօրենը և նրա տեղակալները:
50. Բանալիների չիրկիզվող բոլոր պահարանները պետք է կողպված լինեն, երբ չեն օգտագործվում, և դրանցից կարող են օգտվել միայն անձնակազմի լիազորված անդամները:
51. Անվտանգության ներքին ընթացակարգերով պետք է սահմանվեն բանալիների ստուգում իրականացնելու հաճախականությունը և ստուգման տեսակը և այն, թե անձնակազմի որ անդամը պետք է կատարի այդ ստուգումը. այնուամենայնիվ, 24 ժամվա ընթացքում ստուգում պետք է կատարվի նվազագույնը երկու անգամ՝ անձնակազմի հերթափոխի ժամանակ:
52. Բանալի ունենալու լիազորություն ունեցող աշխատողներին պետք է տրվի անհատական համարով հաշվառված տարբերանշան, որը կփոխանակվի իրենց բանալիներով, երբ նրանք գան աշխատանքի և կվերադարձվի իրենց հերթափոխի ավարտին: Տարբերանշանը կպահվի այն բանալու խրցակի վրա, որի դիմաց այն տրվել է:
53. Իրենց հերթափոխի ավարտից 30 րոպե հետո բանալիները չվերադարձրած աշխատողների հետ կապ պետք է հաստատեն հսկիչ սենյակից: Անձնակազմի ելքի հատվածներում տեսանելի վայրում պետք է փակցվեն թերթիկներ աշխատողներին՝ նախքան հեռանալը բանալիները հանձնելու մասին հուշելու համար:
54. Բանալու վրա պետք է նշված լինեն հետևյալ տեղեկությունները՝
 - կենտրոնում առկա բանալիների յուրաքանչյուր տեսակի ընդհանուր քանակը,
 - պահեստում գտնվող բանալիների միջին քանակը,
 - գործածության մեջ գտնվող՝ յուրաքանչյուր տեսակի բանալիների քանակը,
 - տեղեկություն այն մասին, թե ում են տրվել բանալիները:
55. Եռամսյակային կտրվածքով կողպեքների և ծխնիների ստուգումը պետք է ընդգրկվի տեխնիկական սպասարկման պլանավորված կանխարգելիչ ծրագրում:
56. Ոչ ոք չի կարող իրեն տրված բանալիների տրցակին ավելացնել կամ դրանից հանել որևէ բանալի:
57. Կենտրոնի տնօրենը աշխատանքը սկսելուց անմիջապես հետո պետք է կատարի բանալիների համապատասխանության ստուգում և բանալիների գրանցամատյանում ստորագրի որպես ստուգման հավաստում:
58. Միայն բարձրաստիճան պաշտոնյան կարող է թույլ տալ բանալիների հանձնումը տարբերանշան ունեցող անձից բացի այլ անձի, որի դեպքում պետք է կատարվի տրման ու վերադարձման մասին գրառում:

- 59. Բանալիները պետք է բանալիների շղթայի, գոտու և գոտեպայուսակի միջոցով ամրացված լինեն այն անձին, ով պատասխանատու է դրանք կրելու համար:
- 60. Բանալիները պետք է պահվեն հասարակության և կացարանում բնակվողների համար ոչ հասանելի վայրում:
- 61. Եռամսյակային կտրվածքով պետք է կատարվի բանալիների ստուգում ըստ գրանցամատյանի:

Տեխնիկական սպասարկման գործիքներն ու սարքավորումները

- 62. Պետք է կատարվի բոլոր նախանշված գործիքների (իրերի) գույքագրում՝ հետևյալ գրավոր ցուցումների հետ զուգահեռ՝
 - բոլոր գործիքների ու սարքավորումների գրանցամատյանների վարումը,
 - գրանցամատյանների ստուգումները,
 - գրանցամատյանում մուտքագրվող կամ դրանից հանվող իրերի գրանցումը կարգավորելու համար:
- 63. Գործիքների վրա պետք է նշված լինեն՝
 - հաստատության կոդը,
 - գտնվելու վայրի կոդը,
 - գործիքի անհատական համարը,
 - կատարվող նշումները պետք է լինեն չջնջվող:
- 64. Բոլոր գործիքները պետք է պահվեն ապահով պահասենյակում և լինեն կողպված՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք տալիս կամ վերցնում է անձնակազմի անդամը:
- 65. Գործիքների ու սարքավորումների հաշվարկ ու նշում պետք է կատարվի անձնակազմի՝ տարածքի համար պատասխանատու անդամի կողմից համապատասխան ժամանակահատվածի ավարտին, և դրանք պետք է ստուգվեն ամեն տարի:
- 66. Որևէ գործիքի կորստի դեպքում պետք է անմիջապես հաղորդել հերթապահ ղեկավարին և անվտանգությանը:
- 67. Խոհանոցի, աշխատանքների ու տեխնիկական սպասարկման անձնակազմի անդամները պետք է ուշադիր լինեն իրենց գործիքների ու սարքավորումների նկատմամբ և ստուգեն դրանք յուրաքանչյուր օր: Բոլոր գործիքները պետք է ստուգվեն եռամսյակային կտրվածքով:
- 68. Անձնակազմի անդամները չպետք է կենտրոն բերեն իրենց սեփական գործիքները, այդ թվում՝ գրչահատ դանակները և մկրատները:
- 69. Պետք է սահմանվեն ընթացակարգեր վնասված կամ ավելորդ գործիքների ոչնչացման համար, և գրառումներ պետք է կատարվեն ոչնչացման այդ վայրի մասին:
- 70. Հավանական վտանգ պարունակող նյութերն ու ընդհանուր աղբը պետք է ոչնչացվեն առողջության և անվտանգության ուղեցույցներին համապատասխան:
- 71. Կացարանում բնակվող անձանց մուտքի համար մատչելի վայրերում տեղադրված բոլոր աղբատարները պետք է լինեն կողպված, երբ չեն օգտագործվում, իսկ օգտագործման ժամանակ պետք է լինեն անձնակազմի մշտական վերահսկողության տակ:
- 72. Բոլոր աղբատարները պետք է ստուգվեն կենտրոն մուտքի և կենտրոնից ելքի պահին:
- 73. Պետք է սահմանվեն ներքին ցուցումներ բարձր ռիսկայնության փոխադրամիջոցների, ինչպես օրինակ՝ վերամբարձ կռունկների, բուլդոզերների վերահսկողության համար:

74. Պետք է կատարվեն կանոնավոր ստուգումներ՝ անվտանգության միջոցների պահպանումն ապահովելու համար:
75. Պետք է մշակվեն և անձնակազմի բոլոր անդամներին տրվեն ցուցումներ հետևյալ իրերի պահման ու վերահսկողության մասին՝
- սանդուղքների և լաստակների,
 - աղբամանների և աղբարկղերի,
 - փոխադրամիջոցների, ձեռքի սայլակների, վերամբարձ կռունկների ու մեխանիկական փորող գործիքների
 - աղբատարների,
 - մահճակալների կարկասների ու քնելու պարագաների,
 - մարզասարքերի,
 - գործվածքի, կապիչների և ամուր լարերի (պարանների),
 - հրշեջ փողրակների ու մալուխային ցանցի:

Խուզարկությունը

76. Համապատասխան բարձր վարչական մարմնի, նախարարության կամ համապատասխան վարչության համար պետք է տրամադրվեն խուզարկության մասին ստանդարտ ցուցումներ: Ստորև թվարկվածների նկատմամբ հետախուզական նպատակներով խուզարկությունների հաճախականությունը, տեսակն ու մակարդակը պետք է որոշվեն ղեկավարների կողմից և նշվեն կենտրոնի ցուցումներում ներքին պահանջները բավարարելու համար և, հաշվի առնելով այդպիսի կենտրոնի հատուկ բնույթը, որում բնակվում են ոչ թե հանցագործներ, այլ միգրանտներ,
- կացարանում բնակվողներ,
 - տեսակցությունների համար նախատեսված տարածքներ,
 - կենտրոնի և ներգաղթային հարցերով անձնակազմ,
 - միջոցառումների համար նախատեսված վայրեր, հրապարակներ, բնակելի տարածքներ,
 - ներս բերվող և դուրս տարվող ապրանքներ և փոստ:
77. Խուզարկության արձանագրություններն ու գտնված իրերը պետք է ներկայացվեն: Խուզարկության արձանագրությունները պետք է պահվեն նվազագույնը 2 տարի:
78. Խուզարկության լիազորություն ունեցող անձի տվյալները և լիազորության շրջանակը պետք է նշվեն անվտանգության ներքին ցուցումներում: Կենտրոնական հատուկ կացարանի անձնակազմը պետք է բաժանված լինի շահագործումն ապահովող ու վարչական հատվածների: Շահագործումն ապահովող անձնակազմում ընդգրկվում է տեղում անվտանգության ու ապահովության համար պատասխանատու անվտանգության անձնակազմը: Անվտանգություն ապահովող անձնակազմը պետք է անցած լինի գույքի, անձանց և կացարանի խուզարկություն իրականացնելու գծով համապատասխան վերապատրաստում:
79. Անձնակազմի, այցելուների և կացարանում բնակվողների համար պետք է հասանելի դարձնել և նրանց ցույց տալ խուզարկության ընթացակարգերի վերաբերյալ հստակ գրավոր քաղաքականությունը՝ ներառյալ խուզարկության պայմաններին համաձայնությունը:
80. Այցելուների համար պարզ տեսանելի վայրերում պետք է ցուցադրվի այցելուների

- կողմից կենտրոն ներս բերելու համար արգելված իրերի ցանկը:
81. Կատարված հանցագործության կամ հանցագործության կատարման վտանգի դեպքում և որպես վերջին միջոց իրավապահ մարմինների աշխատողները կարող են ուժ կիրառել ողջամտության և համաչափության սահմաններում՝ ապահովելու, որ կացարանում բնակվողները հետևեն խուզարկության պահանջներին հերթապահ բարձրաստիճան պաշտոնյայի հրամանով, որը պետք է արձանագրվի:
 82. Տեսակցության վայրերը պետք է խուզարկվեն նախքան այցելությունները և դրանցից հետո:
 83. Պետք է սահմանվեն խուզարկության ընթացակարգեր:
 84. Խուզարկությունը պետք է կատարվի՝ հնարավորության սահմաններում պահպանելով համապատասխանության և գաղտնիության պայմանները՝ հաշվի առնելով սեռը, կրոնը և մշակութային համոզմունքները, տարիքը, հաշմանդամության և այլ համապատասխան գործոններ:
 85. Կացարանում բնակվողի մերկ խուզարկություն կկատարվի միայն, եթե իրավապահ մարմնի աշխատողը ողջամիտ հիմքեր ունի կասկածելու նրան հանցագործություն կատարելու մեջ:
 86. Մերկ խուզարկություն պետք է կատարվի միայն նույն սեռի անձանց կողմից և կացարանում բնակվող մյուս անձանց համար ոչ տեսանելի վայրում: Կանանց կարող են խուզարկել միայն անձնակազմի կին անդամները:
 87. Ամենօրյա կտրվածքով պետք է կատարվի ֆիզիկական պարամետրերի ամբողջական ստուգում, ինչպես սահմանված է Անվտանգության ռազմավարությամբ (ներքին և արտաքին):
 88. Կացարանում բնակվողները չեն կարող պահել այնպիսի գույք, որը անհամատեղելի է նրանց սենյակներում առկա պահատեղերի ողջամիտ չափերի հետ: Նրանց մոտ պահվող գույքի չափերը պետք է համապատասխանեն անվտանգության ու ապահովության պահպանման պահանջներին:
 89. Խուզարկության ենթակա անձանց պետք է իրենց համար հասկանալի լեզվով տեղեկացվի խուզարկության պատճառների և խուզարկություն կատարող իրավապահ մարմնի աշխատողի օրինական լիազորությունների մասին:
 90. Այցելուների և կացարանում բնակվողների խուզարկության ընթացակարգերը պատկերող նկարները պետք է տեսանելի լինեն նրանց:



22. ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇԸ

Բռնի, ավերիչ վարքագիծ դրսևորող կամ սեփական անձի կամ այլ անձանց համար վտանգ ներկայացնող՝ կացարանում բնակվողների առանձնացման համար պետք է ճիշտ հավասարակշռություն պահպանվի կարգուկանոն պահպանելու և անձի ու կացարանում բնակվող մյուս անձանց իրավունքներն ու անվտանգությունը պաշտպանելու միջև:

Պահանջները

1. Առանձնացման կացարանում աշխատող անձնակազմի անդամները պետք է ընտրվեն այդ գործառույթի համար իրենց ունեցած հմտությունների հիման վրա: Աշխատողները պետք է լիարժեք վերապատրաստված լինեն կենտրոնի վերապատրաստման ծրագրով՝ լրացուցիչ մասնագիտական վերապատրաստում անցնելով սեփական անձի պաշտպանության և զսպման միջոցների վերաբերյալ, լինեն հասուն տարիքի և ունենան միջանձնային հաղորդակցության գերազանց հմտություններ, տեղյակ լինեն մշակութային և մարդու իրավունքներից:
2. Կենտրոնը պետք է ապահովի, որ որևէ սենյակ չօգտագործվի ազատության ժամանակավոր սահմանափակման համար, եթե ՄՊԾ-ի տնօրենը կամ նրա նշանակած տեղակալը չի հաստատել, որ այն չափսերի, լուսավորության, ջեռուցման, օդափոխման և սարքավորումների առումով համապատասխանում է նույն չափանիշներին, ինչ կենտրոնի մյուս բնակելի սենյակները, և դրանում նաև ապահովված է, որ կահույքն ու սարքավորումներն ամրացված լինեն պատերին կամ հատակին, և սենյակում չլինի որևէ իր, որը կարող է օգտագործվել որպես զենք կացարանում բնակվողի կողմից ինքնավնասման համար: Կացարանում բնակվողները պետք է ունենան աշխատողի հետ ցանկացած պահի հաղորդակցվելու միջոց:
3. Առանձնացման բոլոր դեպքերը պետք է արձանագրվեն, իսկ դրանից հետո պետք է արձանագրվեն բոլոր գործողությունները՝ կապված կացարանում բնակվողների հետ տեսակցությունների, կացարանում բնակվող տվյալ անձին բնակելի սենյակից հեռացման հետ և համապատասխան ցանկացած այլ տեղեկություն:
4. Կենտրոնը պետք է ունենա ազատության ժամանակավոր սահմանափակման հրապարակված կարգ, որի մասին պետք է տեղյակ լինեն կացարանում բնակվողները, և որին պետք է հետևի անձնակազմը. դրանում պետք է հաշվի առնվեն անվտանգության ու հսկողության պահանջները և կացարանում բնակվողների՝ օրենքով սահմանված իրավունքներն ու պարտականությունները և կարիքները:
5. Սովորաբար առանձնացումը պետք է կիրառվի միայն՝
 - ավերիչ, սպառնացող և (կամ) բռնի վարքագիծ դրսևորող անձանց նկատմամբ,
 - կացարանում բնակվող՝ կարանտինում գտնվող անձանց կամ նոր ժամանած այնպիսի անձանց նկատմամբ, ում առնչությամբ կասկածներ կան, որ տառապում են վարակիչ հիվանդություններով, երբ բժշկական կենտրոնում տվյալ պահին տեղ չկա,
 - այն անձանց նկատմամբ, ովքեր ինքնավնասման անմիջական վտանգ են ներկայացնում, նախքան բժշկական կենտրոն կամ կենտրոնից դուրս այլ հաստատություն տեղափոխելը:
6. Կացարանում բնակվողների նկատմամբ առանձնացում պետք է կիրառվի միայն հնարավորինս կարճ ժամկետներով: Այդ ժամանակահատվածը չպետք է գերազանցի 72 ժամը, որից հետո պետք է դիտարկել շարունակաբար բռնի վարքագիծ դրսևորող՝ կացարանում բնակվող անձանց նկատմամբ մեղադրանք ներկայացնելու հարցը՝ նրանց քրեակատարողական հաստատությունում պահելու նպատակով:

23. ՈՒԺԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ընդհանուր կանոն է, որ պետք է խուսափել ուժի կիրառումից՝ բացառությամբ բացառիկ հանգամանքների, և եթե դա վերջին միջոցն է: Յուրաքանչյուր դեպքում ուժ կիրառելիս պետք է պատշաճ կերպով հարգվեն անհատի իրավունքները, և ուժի կիրառումը պետք է սահմանափակվի այն նվազագույնով, որն անհրաժեշտ է նպատակն իրականացնելու համար: Ուժի կիրառում ենթադրող միջոցները պետք է իրականացվեն միայն իրավապահ մարմնի աշխատողների, այլ ոչ թե հատուկ կենտրոնական կացարանի անձնակազմի կողմից:

Պահանջները

1. Ուժ կկիրառվի միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է արգելանքի տակ գտնվող, սակայն փախուստի փորձ կատարող՝ կացարանում բնակվող անձին պահելու, կենտրոնի կամ այլ անձանց գույքի վնասումը կանխելու և իրենց հեռացմանը ֆիզիկական ուժով դիմադրող կամ այլ բնակվող անձի օրինական հեռացմանը ֆիզիկական միջամտություն կատարող՝ բնակվող անձանց գործողություններին արձագանքելու համար:
2. Ուժ կկիրառվի միայն որպես վերջին միջոց, և այն պետք է լինի՝
 - համաչափ՝ նպատակն իրականացնելու համար անհրաժեշտ նվազագույնը: Ուժ կիրառող աշխատողները պետք է գիտակցեն իրենց գործողությունների հետևանքները և պատասխանատվություն կրեն դրանց համար: Ուժ կկիրառվի միայն զսպման ընդունված այնպիսի տեխնիկաների գծով վերապատրաստված անձանց կողմից, որոնք բացասական ազդեցություն չեն գործում անհատի արժանապատվության վրա կամ չեն վտանգում ֆիզիկական անձեռնմխելիությունը:
 - օրինական՝ ուժ պետք է կիրառվի միայն, եթե աշխատողն իրականացնում է օրինական գործառնություն՝ համաձայն ներգաղթային իրավունքի կամ ձերբակալման վերաբերյալ այլ օրենսդրության կամ գործող ցանկացած քրեական իրավունքի, այսինքն՝ բռնի գործողության, ծեծկռուտքի, անկարգությունների դեպքում:
 - ստուգման ենթակա՝ ուժի կիրառման յուրաքանչյուր դեպք պետք է արձանագրվի՝ օրինական վիճարկման կամ բողոքարկման նկատառումներով:
 - անհրաժեշտ՝ աշխատողը պետք է ցույց տա, որ ողջամտության սահմաններում ուժի կիրառմանը գործնականում որևէ այլընտրանք չկա:
3. Եթե որպես ուժի կիրառման ևս մի միջոց գործածվում են ձեռնաշղթաներ, ապա դրանք պետք է գործածվեն հնարավորինս կարճ ժամանակ, և պետք է ուշադիր լինել, որպեսզի դրանք չխանգարեն արյան շրջանառությանը: Ձեռնաշղթաները երբեք չպետք է օգտագործվեն որպես պատժամիջոց:
4. Ուժ պետք է կիրառվի միայն իրավապահ մարմնի աշխատողների, այլ ոչ թե հատուկ կենտրոնական կացարանի անձնակազմի կողմից:
5. Ուժի կիրառման դեպքում կենտրոնը պետք է ապահովի, որ կացարանում բնակվողներին հնարավորինս շուտ այցելի առողջապահական թիմի անդամը:
6. Պետք է գործի ուժի կիրառման դեպքերում տեղի ունեցած պատահարների արձանագրման համակարգ, որի միջոցով կապահովվի ուժի այդպիսի կիրառման վերահսկողություն: Եթե նախապես պլանավորվում է ձեռնաշղթաների կիրառում, և կացարանում բնակվողը չի դիմադրում դրան, ապա դա չպետք է արձանագրվի որպես ուժի կիրառում:
7. Բոլոր անհատները պետք է ունենան բողոքարկման առանձին մեխանիզմից օգտվելու հնարավորություն՝ ուժի կիրառման գործողության ընթացքում որևէ չարաշահումից տուժելու մասին հաղորդելու համար:



Միգրացիայի միջազգային կազմակերպություն

Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների համար կացարանով ապահովման հատուկ կենտրոնների վերաբերյալ կարիքների գնահատում

Հրատարակության պատրաստեց՝ ՄՄԿ-ի Հայաստանում ծրագրերի մշակման և իրականացման բաժինը

Հեղինակներ՝

Ադրիան Լոքսթոն
Կատարինա Լուգոնֆեր

Թարգմանվել է՝

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից

Տեխնիկան խմբագիր՝

Շողիկ Գալստյան

Տիտղոսային թերթ

Արամ Ուռուտյան



Ձևավորումը և տպագրությունը՝ ՏՏԻգրան Մեծ | ՓԲԸ

